

**FRIEDRICH  
EBERT   
STIFTUNG**



**International Center for Human Development**

Արևելք-արևմուտք խաչմերուկ.  
Երիտասարդների աչքերով

East-West Crossroad: Young People's View

## **Պատրաստել է տպագրության Մարդակային զարգացման միջազգային կենտրոնը**

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն գրքի ոչ մի հատված (բացառությամբ քննադատական դիտարկումների նկատառումներով արվող մեջբերումների), առանց հրատարակողի գրավոր թույլտվության, չի կարող վերարտադրվել էլեկտրոնային, պատճենահանման, տեսագրման կամ տեղեկությունների որոնման ու հավաքման հայտնի կամ անհայտ եղանակներով:

Գիրքը հրատարակել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ: Գրքում արտահայտված տեսակետները պատկանում են բացառապես հեղինակներին և միշտ չէ, որ արտահայտում են Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի և Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի տեսակետները:

Արևելք-արևմուտք խաչմերուկ. երիտասարդների աչքերով. -  
Երևան.: Մարդակային զարգացման միջազգային կենտրոն.- 232 էջ

### **Prepared for the publication by International Center for Human Development**

All rights are reserved. Parts of this book, except those that are used with references only for the critics, cannot be reproduced through electronic, copying, search or collection of information or any other known and unknown methods without the prior written authorization of the publisher.

The book is published by the International Center for Human Development supported by the Friedrich-Ebert-Stiftung. The author's views expressed in this publication do not necessarily reflect the views of International Center for Human Development or the Friedrich-Ebert-Stiftung.

East-West Crossroad: Young people's views,-  
Yerevan.: International Center for Human Development

Նախաբան.....	5
Բացե՛նք մարդկանց աչքերը.....	6
<i>ՊԱԲԼՈ ՎԵՅՐԱԹ</i>	
...Քանզի ես հավատում եմ ժողովրդավարությանը. Եվրոպայի դերը գլոբալացված աշխարհում.....	10
<i>ԿԱՏԱՐԺԻՆԱ ՌԻՔԿԱ</i>	
ԵՄ գործակցությունը և առաջընթացը Հայաստանում. ԵՅՔ ֆինանսական գործիքի շրջանակներում վերջերս իրականացված նախաձեռնությունները.....	16
<i>ԱՐԵԳ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ</i>	
«Արևելյան գործընկերություն». արդյոք ծրագիրը հակամարտությունների կարգավորման նոր ուղիներ է առաջարկում .....	26
<i>ԱՐՓԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ</i>	
Ճանապարհի դեպի Եվրոպա .....	32
<i>ՎԱՀԱՆ ՀՈՒՆԱՆՅԱՆ</i>	
Ինչպե՛ս կարող են ԵՄ-ին ինտեգրումը և ԵՄ-ին չանդամակցող երկրների հետ գործընկերության հաստատմանն ուղղված նոր ծրագրերը նպաստել անհանդուրժողականության և խտրականության մարտահրավերների հաղթահարմանը.....	40
<i>ԲԱՐՔՐՈՒ ՄԱԼԻԿՈՎԱ</i>	
«Արևելյան գործընկերություն». մարտահրավերներ, հեռանկարներ.....	49
<i>ԼԻՄԱ ՍՂԱԲԵԿՅԱՆ</i>	
Արևելյան գործընկերության ծրագիր. գործողություններ, ընկալումներ, արձագանքներ.....	54
<i>ԳԱՅԱՆԵ ՄԱՆՎԵԼՅԱՆ</i>	
Համայնքների մերձեցումը հանուն կայուն զարգացման և գործընկերության հաստատման. Համայնքների համակցության մոդելը (կոնսոցիալիզմը) որպես հակամարտություններին հաջորդող իրավիճակը կարգավորելու միջոց.....	61
<i>ԵՎԱ ԲԵՐՏՐԱՆ</i>	
<i>ԱԵԼԻՆ ՏՈՒԺԵՂՈՆ</i>	

Գերմանիայում բնակվող մահմեդականների վիճակը. արդյոք վտանգված է բազմամշակութայնությունը .....	69
<i>Կորհուն Կոհեւստ</i>	
Բելառուսներին մուտքի արտոնագիր տրամադրելու ընթացակարգն ընդդեմ Եվրամիության սկզբունքների.....	85
<i>Դաւա Սւաբասյա</i>	
Արևելյան գործընկերություն .....	90
<i>Սոթա Մանուկստ</i>	
Եվրահետգրացիա. նպատակ, թե՛ միջոց .....	98
<i>Արաւ Աստուստ</i>	
Գյուղ կանգնի, գերան կկտորի... ..	103
<i>Տոտի Տոտիստ</i>	
Հայաստանի Հանրապետությունը՝ որպես մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանման երաշխավոր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գնահատումները.....	106
<i>Կորձուկ Արեւստ</i>	
«Սովորել նշանակում է իմանալ և գործել» «Եվրաֆորում» երիտասարդական ցանցի ծրագրերի շրջանակներում մեկնարկել է միջմշակութային ուսումնական գործընթացը .....	111
<i>Ռոստուկ Մարտիսյա-Մանուստ</i>	
Հասարակությունների մերձեցում ընդդեմ կոնֆլիկտի կարգավորման. կայուն զարգացում և համագործակցություն.....	117
<i>Ռոստ Մեհրթաւ</i>	
Վիզաների տրամադրման ազատականացում, ազատ տեղաշարժի իրավունք. ԵՄ ինտեգրման նախապայման, թե՛ հետևանք .....	120
<i>Աննա Ղազարստ</i>	
Արևելյան գործընկերություն .....	124
<i>Պրաբուր Նաշրեթաւ</i>	
Ինչ է պետք խաղաղություն հաստատելու համար .....	126
<i>Կոստանտին Տեր-Նսպաւստ</i>	

# Նախաբան

Կյանքի ընթացքում մենք տարբեր խմբերի կամ միավորումների անդամ ենք՝ ընտանիքից, ակումբներից, աշխատավայրից մինչև ազգ ու պետություն: Նման բոլոր միավորումներում՝ փոքր թե մեծ, ընդունվում են որոշումներ, որոնք անդրադառնում են այս միավորումների վրա: Այդ որոշումներն առնչվում են նպատակներին, կանոններին, ինչպես նաև անդամների միջև պարտավորությունների և շահերի բաշխմանը: Այս գործընթացում հաջողությունն ուղեկցում է նրանց, ովքեր կարողանում են լսել մյուսներին և հարգել յուրաքանչյուրի կարծիքը: Հենց սա է արդյունավետ ժողովրդավարությունը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը ամենօրյա կյանքում:

Ժողովրդավարությունը, այլ խոսքով, ենթադրում է, մի կողմից, հավաքական որոշումների ընդունման նկատմամբ հանրային վերահսկողություն, և մյուս կողմից՝ հավասարություն այդ վերահսկողության իրականացման գործում:

Այս սկզբունքների իրականացման նպատակով Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄՁՄԿ) երիտասարդ վերլուծաբաններին և հետազոտողներին հրավիրել է արտահայտելու իրենց մտքերը և գաղափարները:

ՄՁՄԿ այս նախաձեռնությունը գիտելիքի վրա հիմնված հասարակության ձևավորման քայլ է: Հոդվածների «Արևելք-Արևմուտք խաչմերուկ» ժողովածուն ամփոփում է Եվրաֆորում Արևելք-Արևմուտք ցանցի երկրների՝ Հայաստանի, Բելառուսի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Իսպանիայի, Չեխիայի և Շվեդիայի երիտասարդների արտահայտած մտքերն ու գաղափարները: Հրատարակությունը անդրադառնում է հակամարտությունների կառավարման, մարդու իրավունքների, եվրոպական ինտեգրման և եվրոպական արժեքների տարածման խնդիրներին:

Գրքի հրատարակությունը հնարավոր դարձավ Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ, որը ժողովրդավարական արժեքների տարածման կարևոր դերակատարներից է Հայաստանում:

Թևան Պողոսյան  
ՄՁՄԿ գործադիր տնօրեն

# Բացե՛նք մարդկանց աչքերը

## ՊԱԲԼՈ ՎԵՅՐԱԹ

անկախ լրագրող

Իսպանիա

Երկայուն գործող ժողովրդավարական համակարգը շատ անկայուն է: Գաղտնիք չէ, որ ժողովրդավարությունը չորս տարին մեկ քվեատուփերի լցնումների ապօրինի արարքի է վերածվում՝ իշխանության գլուխ կանգնած պաշտոնյաների դիրքն ամրապնդելու համար: Ժողովրդավարական համակարգի անկայունության հիմնական պատճառն այն է, որ եթե մարդիկ ժողովրդավարական գաղափարախոսությանը չեն հավատում, ապա նման համակարգ ձևավորելու մասին խոսք անգամ չի կարող լինել: Ժողովրդավարության կողմնակիցների բացակայության պայմաններում այդ համակարգը պարզապես չի կարող գոյություն ունենալ:

Ժողովրդավարական համակարգ ձևավորելու միջոցների ընտրությունից անկախ՝ համակարգը նույն գաղափարի վրա է խարսխվում. բոլոր տղամարդիկ և կանայք հավասար իրավունքներ ունեն, և ոչ ոք չի կարող խախտել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված իրավունքները: Այդ իսկ պատճառով մենք պետություն ենք հիմնում, որի միջոցով բոլոր քաղաքացիները կարողանում են, առանց միմյանց վնաս հասցնելու, պաշտպանել իրենց իրավունքները, բավարարել կարիքները և իրականացնել նպատակները:

Այդուհանդերձ, բոլորը շատ լավ գիտեն, որ կյանքը շատ բարդ է, և ամենուր անհավասարություն է տիրում: Ամեն ինչ փոխկապակցված է, և յուրաքանչյուր ոք իր առօրյա գոյությունը պահպանելու համար ստիպված է ամեն օր բանակցել իր հետ առնչվող այլ անձանց կամ իշխանությունների հետ: Շատերը կախման մեջ են իրենց աշխատանքի դիմաց վճարող գործատուներից: Ոմանք էլ հաջողության են հասնում այդ բանակցություններում կամ իրենց սոցիալական միջավայրում, ինչի արդյունքում մեծ ազդեցություն են գործում ինչպես մեր կյանքի, այնպես էլ մեր իրավունքները պաշտպանելու նպատակով հիմնած պետության վրա: Ինչպես գիտենք, իշխանությունը փչացնում է մարդկանց, իսկ մեր կառավարությունները մարդկանցից են կազմված, ուստի և նույնպես խոցելի են այս տեսանկյունից:

Ավելին, նման ազդեցիկ մարդկանց հետ մեր հարաբերությունները, որպես կանոն, միակողմանի են: Մենք անձամբ ենք դիմում մեր տնօրենին կամ պետական պաշտոնյային և այլ ազդեցիկ մարդկանց հետ խոսելիս սովորաբար ինքներս ենք ներկայացնում մեր շահերը: Ուստի, մենք շատ խոցելի ենք դառնում: Մեր իրավունքներից անկախ՝ արդարադատությունն իրականացնում է պետությունը, որը

կազմող մարդկանց, անհրաժեշտության դեպքում, պետք է համոզել համապատասխան միջոցներ ձեռնարկել: Մեզ հետ դեմ առ դեմ առնչվող իշխանավորների մեջ կարող է մեր իրավունքները ոտնահարելու մեծ ցանկություն առաջանալ:

Իշխանությունները միայն իրենցից ավելի հզոր ուժից են վախենում: Իսկ մեր հասարակության առավել հզոր ուժը ժողովուրդն է: Պետությունը վախենում է զանգվածներից, խոշոր ընկերությունները վախենում են սպառողներից, և լավ կլիներ, եթե վախենային նաև պետությունից, հանցագործները վախենում են ինչպես պետությունից, այնպես էլ ժողովրդից: Նման իրավիճակում շատ է կարևորվում ժողովրդի աչքերը, ականջները և ձայնը համարվող ազատ մամուլի դերը:

Ազատ մամուլն օգնում է հաղթահարելու իշխանությունների հետ առնչվելիս մեզ մեջ առաջացող անօգնականության զգացումը: Ժողովրդի շահերը ներկայացնող մամուլը լսում է ժողովրդի ձայնը, հետևում է պետության գործունեությանը և հարցականի տակ առնում հասարակությունում ձևավորվող ցանկացած իշխանության օրինականությունը: Մամուլն իշխանություններին ստիպում է հաշվետու լինել իրենց արարքների համար: Մամուլը հավասար է վերաբերվում ինչպես ազդեցիկ, այնպես էլ հասարակ քաղաքացիներին և հանրության դատին է հանձնում նրանց:

Ամեն օր լրագիր կարդացող քաղաքացին տեղյակ է պետության աշխատանքի մասին. նա գիտի՝ ով ինչ գործառույթներ է կատարում, ինչպես և ինչ նպատակով է կատարում դրանք: Մեր շուրջը տեղի ունեցող իրադարձությունների մասին պարբերական իրազեկումը հնարավորություն է տալիս հարցականի տակ առնելու գործող վարչակարգը և հիմնավոր փաստարկներով հաստատելու մեր կարծիքը: Իշխանությունների հետ մեր առջյառ առնչության մասին պատմությունները հիմք են ծառայելու քաղաքացիական կրթության ուսումնական ծրագրի համար: Այդ հիմքի առանցքն էր ոչ թե գաղափարախոսական բնույթի տեսության մեջ, այլ իրական կյանքում ժողովրդավարական սկզբունքների կիրառման դեպքերի ուսումնասիրությունն է: Ահա այսպիսին է ժողովրդավարության կայացման գործում անկախ, ազնիվ, վստահելի և համարձակ ազատ մամուլի կարևոր ներդրումը: Իսկ ազատ քվեարկությունը հնարավոր է երաշխավորել միայն այն պարագայում, եթե ընտրողները հաստատ իմանան՝ ինչ պայմաններում և իրականում ում կողմ են քվեարկում:

Իշխանավորները, ինչպես նաև պետական գործիչները, խոշոր ընկերությունների սեփականատերերը կամ այլ ազդեցիկ անձինք ամենաշատը վախենում են բարերում, տներում, աշխատանքի վայրերում, զբոսայգիներում կամ ճաշասենյակներում մտքեր փոխանակող մարդկանցից: Ուստի թաքցնելու բան ունեցող նման ազդեցիկ մարդկանց համար մամուլն առաջնային թիրախի է վերածվում:

Մամուլի բնականոն աշխատանքը խափանելու համար գոյություն ունեն բազում միջոցներ: Լրագրողների հնարավորությունները սահմանափակելու համար ծայրահեղ միջոցների փոխարեն, ինչպիսիք են լրագրողներին սպառնալը կամ վնաս հասցնելը, որպես կանոն, ավելի մեղմ միջոցներ են կիրառվում: Մարդկանց՝ իրենց

պետությունում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկացված լինելու իրավունքը սահմանափակելու համար կիրառում են տնտեսական վերահսկողության միջոցներ, ինչպես նաև լրատվական աղբյուրների գաղտնիությունը խախտելու կամ գրպարտության մասին խիստ օրենքներ: Այս ամենը շատ վտանգավոր վերջնական նպատակ է հետապնդում, այն է՝ հանրության աչքերում նսեմացնել լրատվամիջոցների դերը:

Այն լրագրերը կամ հեռուստաալիքները, որոնց հետ համագործակցող լրագրողներն ի վիճակի չեն լուսաբանել, պետական պաշտոնյաների կամ մասնավոր խոշոր ընկերությունների սեփականատերերի գործունեությունը և վախենում են «սխալ» հարց տալ այս կամ այն անձին կամ «սխալ» բառ գրել այս կամ այն անձի անվան կողքին, ոչ միայն ծանծրալի են դառնում, այլև՝ աննպատակ և ի վերջո իշխանությունների ձեռքում խաղալիք են դառնում: Մարդու համարձակությունն անսահման չէ, և իշխանավորների հետ առնչվելիս լրագրողը նույնպես կարող է իրեն միայնակ և անօգնական զգալ: Իշխանությունների մեղադրանքներից պաշտպանվելու համար լրատվամիջոցները կարող են իրենց լուսաբանած պատմություններում հասարակ մարդկանց ներգրավել:

Ներկայումս մեր առջև ծառայած է մարդու իրավունքները պաշտպանելու և լրատվամիջոցները հասարակական վերահսկողության գործուն միջոցի վերածելու խնդիրը: Քանի որ ինձ խնդրել են այս ակնարկում շարադրել երիտասարդ անհատի տեսակետը, ապա պետք է առանձնացնեմ կրթության դերը: Կցանկանայի առանձնացնել այն երկու առարկաները, որոնք պետք է ներմուծել բոլոր դպրոցներին և համալսարանների ուսումնական ծրագրերում.

1. «Քաղաքացիական կրթություն» առարկա, որի շրջանակներում երիտասարդներին կներկայացվեն պետության գործառույթները, ինչպես նաև պետության ընդհանուր աշխատանքում դատարանների, քաղաքական կուսակցությունների և այլ պետական ինստիտուտների դերը, ինչի արդյունքում երիտասարդներն ավելի մեծ հետաքրքրություն կտածեն իրենց երկրի նկատմամբ: Յուրաքանչյուր ոք պետք է որոշ չափով տեղյակ լինի իր երկրում պետական մակարդակով տեղի ունեցող իրադարձությունների մասին և իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև իրավունքները պաշտպանելու միջոցները:

Քաղաքացիական կրթությունը ոչ միայն գիտելիքներ, այլև պետական կառույցների մասին իրազեկության մակարդակի բարձրացում է ենթադրում: Հաշվի առնելով, որ ժողովրդավարական պետության նպատակը հակասությունների կարգավորման գործում բոլոր պետական ինստիտուտներն ընդգրկվելն է, շատ կարևոր է նպաստել ապագա քաղաքացիների՝ բանակցություններ վարելու հմտությունների ձևավորմանը: Երեխաների՝ ներդաշնակորեն զարգանալու, ինքնուրույն մտածելու և հիմնավորված եզրակացություններ անելու կարողությունները զարգացնելու համար նրանց պետք է հարգանք ներշնչել ինչպես իրենց, այնպես էլ այլոց իրավունքների նկատմամբ: Քաղաքացիական կրթություն ստացած մարդիկ երբեք չեն հանդուրժի իրենց երկրում անարդարության որևէ դրսևորում:



2. «Լրագրության ներածություն» առարկա, որի շրջանակներում երիտասարդները հաճույք կստանան լրագրեր հրատարակելուց և ռադիոծրագրեր պատրաստելուց: Երիտասարդները միայն այդ դեպքում կարող են գնահատել խոսքի ազատությունը: Դպրոցներում և համալսարաններում ուսանող երիտասարդների համար պետք է հատուկ սեմինարներ անցկացնել, որպեսզի նրանք կարողանան ճիշտ ընկալել լրագրերում տեղ գտած տեղեկությունները, տարբերակել երկիմաստ հայտարարությունները և մշակել սեփական չափորոշիչները: Երիտասարդները պետք է ընթերցեն իրենց իսկ կողմից ընտրված նորություններ, իսկ այնուհետև դրանք քննարկեն խմբերով, ինչը նրանց հնարավորություն կտա վեր հանելու իրականության և մամուլում տեղ գտած նորությունների միջև անմիջական կապը: Ի վերջո, այս ամենի արդյունքում երիտասարդների մեջ լրատվամիջոցները վերահսկելու ցանկություն կառաջանա. նրանք կսկսեն պաշտպանել խոսքի ազատությունը և լրագրողներից ավելի բարձրորակ աշխատանք ակնկալել:

Ի լրումն կցանկանայի նշել, որ լրատվամիջոցների ներկա վիճակը բարելավելու և ազատ արտահայտվելու իրավունքը պաշտպանելու համար վերջերս նոր հնարավորություններ են ստեղծվել: Համացանցի, թվային լուսանկարչական սարքերի, ձայնագրիչների և համակարգիչների արագ տարածումը նպաստել է այսպես կոչված քաղաքացիական լրագրության զարգացմանը: Ամեն անգամ, երբ ավանդական լրատվամիջոցներն անկարող են պաշտպանել մարդկանց՝ տեղեկացված լինելու իրավունքը, սիրողական լրագրողները լուսաբանում են իրենց շրջապատող աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները դրանց մասին այլոց տեղեկացնելու նպատակով: Թեև ավանդական լրատվամիջոցները խոցելի են իշխանությունների սպառնալիքների նկատմամբ, այդուհանդերձ, դրանք շատ լավ են հասկանում ժողովրդի կարիքները և կարող են բացել նրա աչքերը և այդպիսով նպաստել լրագրողների աշխատանքի գնահատմանը և պաշտպանությանը:

Իշխանավորների նման, բոլոր քաղաքացիները նույնպես իրենց երկրի տերն ու տիրակալն են համարվում և նույն իրավունքներից ու հիմնարար ազատություններից են օգտվում, ուստի և ունեն իրենց երկրում պետական մակարդակով տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկացված լինելու և դրանց շուրջ իրենց կարծիքն արտահայտելու իրավունք: Յուրաքանչյուր ոք, ով փորձում է խախտել այդ իրավունքը կամ խոչընդոտում է քաղաքացիներին այն իրացնելու գործում, ձգտում է լռեցնել հասարակության ձայնը, հետևաբար թաքցնելու բան ունի: Նման դեպքերում իշխանավորները, որպես կանոն, ստորացնում և կեղեքում են իրենց ժողովրդին: Միայն քաղաքացիական բաց հասարակության ձևավորումը կարող է փրկել վախի և ստորության մթնոլորտում ապրող մարդկանց, որոնք իրենց իրավունքները պաշտպանելու համար պետք է բացեն իրենց աչքերը և ականջները և բարձրաձայնեն իրենց մտահոգությունները, և այդ ամենի հիմքում պետք է ընկած լինի առողջ մտեցումը:

# ...Քանզի ես հավատում եմ ժողովրդավարությանը. Եվրոպայի դերը գլոբալացված աշխարհում

## ԿԱՏԱՐԺԻՆԱ ՌԻԲԿԱ

«Երվրաֆորում Պոլսկա» միջմշակութային երկխոսության ասոցիացիա  
Լեհաստան

Որպես սույն ակնարկի վերնագիր ընտրել եմ «Երվրաֆորում Պոլսկա» միջմշակութային երկխոսության ասոցիացիայի վեբկայքի իմ պրոֆիլում տեղ գտած նախադասություններից մեկը: Անձամբ ես կարծում եմ, որ ժողովրդավարական կառավարման ձևի նկատմամբ հավատի մասին հայտնելը հույժ կարևոր է և պարտադիր ժողովրդավարության նկատմամբ որոշակի վերաբերմունք ձևավորելու համար: Այդ հավատն արտացոլում է իմ աշխարհայացքը և վարքագիծը: «Ժողովրդավարությունն» առանցքային հասկացություն է և հիմնարար գաղափար: Առանց ժողովրդավարության չեմ կարողանում պատկերացնել Եվրոպա աշխարհամասի, իմ հայրենիքի և իմ ապագան:

Չէի ցանկանա կարծրացած կաղապարներով մտածել և արտահայտվել: Չեմ կարծում, որ վաղ թե ուշ կգա ժամանակ, երբ բոլոր հնարավոր սննդային պաշարները սպառելուց հետո «կսկսենք միմյանց ուտել»: Խնդիրը ոչ թե Եվրոպայի համար փայլուն հեռանկարների բացակայությունն է, այլ Եվրոպայի առջև կանգնած երկընտրանքը, այն է՝ որոշումների կայացման գործընթացի արդյունավետ ռազմավարությունների բացակայություն ենթադրող քառտիկ իրավիճակում հայտնվել, թե՞ աղքատների և փոքրամասնությունների հիմնախնդիրներն անտեսող ավտորիտար վարչակարգ հաստատել: Ես արմատականության և ճակատագրապաշտության կողմնակից չեմ, սակայն հավատում եմ միմյանցից շատ տարբերվող գաղափարների:

Ինչու՞ է ինձ դուր գալիս ժողովրդավարական համակարգը: Այս հարցի շուրջ մտածելիս պարզ, նույնիսկ պարզունակ մտքեր են առաջանում: Ես պարզապես գնահատում եմ ընտրության հնարավորությունը, որն ինձ հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշելու՝ ինչ կինոնկար դիտել ազատ կիրակի օրերին կամ իր թեկնածուի օգտին քվեարկել: Ամենևին էլ անհեթեթ չի լինի պնդել, որ ավելի լայն իմաստով ազատ ընտրություն կատարելու իրավունքը (բացառությամբ ամենուր մեծ տարածում գտած գովազդների և մարկետինգային արշավների) լեի ժողովրդի կարևորագույն չգերազնահատված ձեռքբերումն է, որը, սակայն, որոշակի հետևանքներ է ունեցել: Ես շատ ուրախ եմ լեհական հասարակական կազմակերպու-

յունների պորտալների համար, քանի որ միշտ հետաքրքիր և արդիական տեղեկություններ են գտնում այդտեղ: Այսպիսով, իմ երկրի երրորդ սեկտորն օրեցօր զարգանում է: Շատ ուրախ եմ, որ ես էլ կարող եմ այդ զարգացման գործում իմ լուման ներդնել, թեև դա ընդհանուր զարգացմանը շատ քիչ է նպաստում: Այդուհանդերձ, ես ավելի շատ եմ գնահատում Լեհաստանի լավագույն բուհում ուսանելու, ինչպես նաև երազանքներիս քաղաքում՝ Լոնդոնում, կրթությունս շարունակելու հնարավորությունը:

Այսպիսով, այս հարցի շուրջ իմ մեջ առաջացած մտքերն այնքան էլ պարզունակ չեն, և ժողովրդավարական համակարգն ինձ դուր է գալիս մի շարք պատճառներով: Սակայն ռո՛րն է հիմնականը: Պատասխանը Եվրոպային բնորոշ «բազմազանությունն» է՝ բազմազգությունը, բազմամշակութայնությունը, բազմակրոնությունը և այլ «բազմազանությունները», որոնք այնքան շատ են Եվրոպայում: Դա մեծ առավելություն է Եվրոպայի համար, ինչը նրան հնարավորություն է ընձեռում կարևոր դեր խաղալու ներկայիս աշխարհում:

Եվրոպան (ինչպես նաև եվրոպացիները) սովոր են աշխարհի ուշադրության կենտրոնում լինել: Դա պայմանավորված է Եվրոպայի՝ մի քանի հազարամյակներ հաշվվող պատմությամբ. բաբելոնյան ժամանակների պատմությունն առհասարակ ջնջվել է եվրոպացիների հիշողությունից: Մեզանից քչերն են տեղյակ Եվրոպայի անկյունաքարը կազմող հունական մշակույթի վրա բաբելոնյան քաղաքակրթության գործած ազդեցության մասին: Ուստի և շատերը գերադասում են Եվրոպայի հիմքը համարել հունական և հռոմեական քաղաքակրթությունները:

Պատմության շուրջ խորհրդածություններից բացի առաջարկում եմ ուշադրություն դարձնել ներկա և ապագա զարգացումներին: Աշխարհի կենտրոնն Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային մասից դեպի հաղաղ օվկիանոս է տեղափոխվել: Թեև Միացյալ Նահանգներին հաջողվում է պահպանել աշխարհի առաջնորդի դերը, Եվրոպան թերևս խնդիրներ ունի այս ոլորտում. «Ասիայի վագրեր» անվամբ հայտնի երկրներն օրեցօր ավելի ազդեցիկ են դառնում: Հնդկաստանը, Բրազիլիան և Նիգերիան նույնպես ծայնի իրավունք են պահանջում Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդում: Հիմնարար փոփոխությունների մասին է վկայում նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դերի բարձրացումը: Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան և այլ եվրոպական երկրներ վաղ թե ուշ կորցնելու են միջազգային տնտեսական և քաղաքական հարաբերություններում իրենց զբաղեցրած գերիշխող դիրքը: Ներկայումս մի շարք պետություններ համախմբող Եվրոպայի դերն ու նշանակությունը կասկածների տեղիք է տալիս, քանի որ այն այլևս միջազգային հարաբերությունների ազդեցիկ կառույց չի հանդիսանում և աշխարհի ուշադրության կենտրոնում չէ:

Սույն ակնարկում չէի ցանկանա անդրադառնալ առանձին եվրոպական պետություններին, նույնիսկ՝ Գերմանիայի և Ֆրանսիայի նման հզոր (դեռևս հզոր են, սակայն որքան ժամանակ կպահպանեն իրենց դիրքերը) երկրներին: Փոխարենը, այդ երկրները կդիտարկեմ ամբողջ Եվրոպա աշխարհամասի առանձնահատկությու-

յան և ապագայի համատեքստում: Իրականում Եվրոպան աշխարհի փոքր մասն է կազմում և փոքրաթիվ բնակչություն ունի: Ոմանց կարծիքով, Եվրոպան կարևոր դեր է կատարել պատմության մեջ, քանի որ այստեղ են գտնվում ազատության և ժողովրդավարության ակունքները (այդ կապակցությամբ հարկ է հաշվի առնել Հյուսիսային Ամերիկայում ծավալված գործընթացները): Հիզմունդ Բաումանը գրել է, որ եվրոպական ուսմունքի համաձայն՝ «ժողովրդավարության հիմքում ընկած է քաղաքացիների ազատությունը, քաղաքացիները գիտակցում են ազատության նշանակությունը և իրենց քաղաք-պետություններում ժողովրդավարության սկզբունքներն անտեսելու համար անհրաժեշտ խիզախությունը: Ազատությունը և ժողովրդավարությունը փոխկապակցված հասկացություններ են»:

Մարդկության ամենանշանակալի նվաճումը հազարամյակների ընթացքում ձևավորված փիլիսոփայական, քաղաքական և իրավական մտքի զարգացումն է, ինչի բացակայության դեպքում եվրոպական և այլ քաղաքակրթության մասին խոսք անգամ չէր կարող լինել: Ճիշտ է՝ Չինաստանի դեպքում ժողովրդավարության կամ խոսքի ազատության մասին դժվար է խոսել, սակայն այդ երկրի տնտեսությունը ավելի ու ավելի արագ է զարգանում: Իսկ ի՞նչ քայլեր են ձեռնարկվել «մեր» աշխարհը համարվող Եվրոպայում տեխնիկական և տնտեսական զարգացման (գյուտեր, նոր տեսություններ և այլն) ոլորտում: Արդյոք այս հարցը եսասիրական բնոյթ է կրում: Թերևս այո, սակայն կարծում եմ, որ դա արդարացված է:

Քաղաքականության մեջ իր ունեցած դերի տեսանկյունից Եվրոպան զարգացման կարևորագույն փուլում է: Հիզմունդ Բաումանը կարծում է, որ կատարելապաշտությունը (պերֆեկցիոնիզմը) շարունակում է մնալ եվրոպական նույնականության առանցքային բաղադրատարրերից մեկը: Եվրոպացիները եսասեր չեն դառնում և շարունակում են իրենց անկատար համարել: Թեև Իմանուել Կանտի երազած հավիտենական խաղաղությունը հաստատելու համար դեռևս շատ անելիքներ կան, այդուհանդերձ, աշխարհը պետք է եվրոպացիներից ընդօրինակի «պատմական հակասությունները և հակամարտությունները խաղաղ ճանապարհով կարգավորելու» և «բազմամշակութային միջավայրում խաղաղ ապրելու միջոցները», ընդ որում նշված միջավայրը չի կարելի ժամանակավոր անհարմարություն համարել: Ժամանակակից աշխարհը եվրոպական փորձի կարիքն ունի» (Հիզմունդ Բաուման): Ներկայումս Եվրոպայում այդ ուղղությամբ գործուն քայլեր են ձեռնարկվում: «Surgeons» շարժումն առաջին անգամ է նման նախաձեռնության ձեռնամուխ եղել, որը շատ նման է գլոբալացման գործընթացին: Թեև ազգային պետությունները ձևավորվել և զարգացում են ապրել Եվրոպայում, այդուհանդերձ, այժմ հենց Եվրոպայում է աստիճանաբար վերանում տարածքային ինքնավարության գաղափարը:

Իմ կարծիքով, ազգային պետականության կուռ համակարգը մեր քաղաքակրթության ձևավորման փուլերից էր: Փաստորեն, մենք դեռևս կատարելության ենք ձգտում, իսկ եվրոպական աշխարհամասում և ընդհանրապես ամբողջ աշխարհում ձևավորված իրավիճակը մեր նպատակների իրականացմանն ամենևին էլ չի

նպաստում: Ստեղծված իրավիճակի նկատմամբ հոռետեսական վերաբերմունքից անկախ՝ մենք շարունակում ենք աստիճանաբար կատարելագործվել: Մեր քաղաքակրթությունն ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ ունի, սակայն առավելություններն արտացոլող կորագիծը գնալով աճում է: Այդ ամենը նշանակում է, որ եթե նույնիսկ ներկայումս հակամարտությունների փուլում ենք հայտնվել և շփոթված ենք մեզ զգում, այդուհանդերձ, նման իրավիճակից դասեր ենք քաղում զարգացման ճանապարհը հաղթահարելու համար: Օրինակ՝ եվրոպացիներն ի վերջո հասկացել են, որ «արդարադատության երաշխիքը ոչ թե ուժն է, այլ՝ օրենքը և համաձայնության հասնելու ձգտումը, որը փոխարինելու է եկել բռնությանը» (մեջբերում Ինոզենցի, Կուզնեցովայի և Կազանի հեղինակած աշխատությունից): Դա բավական մեծ ձեռքբերում է, սակայն անհանդուրժողականության, պատերազմների, բնաջնջման և ամբողջատիրական վարչակարգի քանի՜ - քանի՜ դարեր են անցել, մինչև կարողացել ենք հասկանալ այս ամենը:

Ներկայումս մեր առջև ծառայած խնդիրն այն է, որ անորոշ և բազմաբնույթ փոխկախվածության պայմաններում մեկ վայրում խաղաղություն հաստատելը գրեթե անհնար է, եթե այլ վայրերում խաղաղություն չի տիրում: Եթե մենք ընդունում ենք արդարության և խաղաղության եվրոպական գաղափարները, ապա պետք է փորձենք բոլորին համոզել ընդունել դրանք: Այդ նպատակը հնարավոր չէ լիովին իրականացնել, իսկ հակառակ կարծիքն անիրատեսական է: Ամբողջ պատմության ընթացքում նոր գաղափարները «կրակի ու սրի» միջոցով են տարածվել: Փաստորեն, Եվրոպան ձգտել է ոչ թե փրկել, այլ զավթել աշխարհը: Սակայն արդարության գաղափարը, ինչպես նաև դրա հիմքում ընկած խաղաղություն հաստատելու գաղափարը նման եղանակով տարածել չի կարելի: Այսպիսով, մենք շատ բարդ առաքելություն ենք ստանձնել:

Այդպիսի կարծիք է արտահայտել Զիգմունդ Բաումանը իր «Europe: the unfinished adventure» («Եվրոպա. անավարտ արկած») գրքում: Նա համարում է, որ Եվրոպայի գոյության և կոչման հիմքում ընկած է առաքելությունը: Եվրոպական նույնականությունը յուրահատուկ գաղափարախոսության վրա է խարսխված. «Եվրոպան ոչ ոքի կողմից հայտնաբերվելու կարիք չունի: Եվրոպան առաքելություն, հիմք և զարգացում է ենթադրում: Նշված առաքելությունն իրականացնելու համար պետք է շատ ճարտարամիտ, հաստատական և աշխատասեր լինել: Նման առաքելությունը կարող է Սիզիփոսի անվերջանալի աշխատանքի կամ անհաղթահարելի մարտահրավերի վերածվել»: Բաումանը մեջբերում է Դենիզ դե Ռուժմոնի խոսքերը. «Եվրոպայի գոյության հիմքում ընկած է «անծայրածիր» գաղափարների անվերջանալի փնտրտուքը, որը ես արկած եմ անվանում»:

Շատ կարևոր հարց է առաջանում՝ ի՞նչ է խաղաղասիրական գաղափարներ տարածելու նպատակը, եթե ամենուր վախի և վտանգի մթնոլորտ է տիրում: Արդյոք նպատակահարմար է նման գաղափարներ տարածել ահաբեկիչների և ընդունող երկրների կարգուկանոնը խախտող ներգաղթյալների դեմ պայքարով հայտնի դարձած դարաշրջանում: Խաղաղասիրական գաղափարները, անշուշտ, առանց-

քային նշանակություն ունեն: Մեր արժանիքը համարվող բազմամշակութայնության բացասական հետևանքներն անհանդուրժելի են: Բենջամին Ռ. Բարբերը զգուշացնում է, որ հասարակության տարբեր խմբերի համակեցությունը չպետք է անիշխանության հանգեցնի: Գերմանիայի ճակատագիրը, որը Գյունթեր Գրասի կարծիքով, այժմ ավելի է մասնատված, քան մինչև 1990 թվականին մեզ չի սպառնում: Մենք գնահատում ենք բազմազանությունը:

Իմ կարծիքով, եվրոպացիների հիմնական պարտավորությունը հասարակության տարբեր խմբերի համակեցությունը սովորական և դրական երևույթի վերածելն է: Չիզմուռն Բաունանը մեջբերում է Հանս-Գեորգ Գադամերի խոսքերը, որը Եվրոպայի «հիմնական առանձնահատկությունն է համարում տարբեր խմբերի հետ համակեցության կանոնները սովորելու հնարավորությունը, եթե նույնիսկ վերջիններս այդ կանոնները չգիտեն»:

Ակնհայտ է, որ բազմամշակութային էթնիկական կազմ ունեցող աշխարհամասում բնակվելը մեր առավելությունն է: Ակնհայտ է, որ մենք կարող ենք դասեր քաղել անցյալի սխալներից և կատարելագործման ձգտել՝ քաջատեղյակ լինելով դրա անհնարինության մասին, ինչն ինքնին մեր առավելության առանցքային բաղադրիչն է: Բացի այդ, եվրոպացիներն իրենք էլ են փոխվում՝ այսպես կոչված այլոց նմանվելու համար: Եվրոպացիներն այլևս զավթիչներ ու առավել զարգացած քաղաքակրթության ներկայացուցիչներ չեն համարվում, այլ՝ «այլոց» են նմանվում և երբեք նախկինի նման չեն փորձի իրենց վրա հրավիրել ամբողջ աշխարհի ուշադրությունը: Այժմ Ռիչարդ Կապուլչինսկուն տեսնելիս աֆրիկացի երեխաները հավանաբար նրա ետևից չեն վազի և նրան «Ferenci! Ferenci!» (թարգմ.՝ օտար) չեն անվանի: Սպիտակամորթ եվրոպացիներն այլևս զարմանք չեն առաջացնում, ուստի այժմ պետք է փորձենք գրավել «այլոց» ուշադրությունը: Այսպիսով, մենք ևս մի գրեթե անիրագործելի առաքելություն ենք ստանձնելու, սակայն այդպիսին է Եվրոպայի ճակատագիրը:

Այս առաքելության իրագործումը եվրոպացիներից մեծ ջանքեր է պահանջում: Սույն ակնարկի վերնագրին անդրադառնալով՝ հիշեցնենք, որ ժողովրդավարությունն առանցքային հասկացություն է: Միայն նման կառավարման համակարգն է մարդկանց խրախուսում հոգ տանել և իրենց հնարավորության սահմաններում ամեն ինչ անել հասարակության համար: Ըստ Բենջամին Ռ. Բարբերի՝ եվրոպացիները պետք է իրենց աշխարհամասը Արևմուտքի (գլոբալացում) և Արևելքի (ջիհադ) սահմանագծին կամ դրանցից դուրս դիտարկեն: Սակայն դա անհնար է, քանի որ Եվրոպան ունի ինչպես Արևմուտքին, այնպես էլ Արևելքին բնորոշ առանձնահատկություններ: Մենք պետք է պաշտպանվենք ինչպես շուկայի անողոք մրցակցությունից (գլոբալացում), այնպես էլ արմատականությունից (ջիհադ): Հարկ է նշել, որ այս երկու հակոսնյա բևեռները խուսափում են իրենց գաղափարախոսությունների հիմնարար և ողջամիտ վերլուծությունից: Ուստի յուրաքանչյուր եվրոպացի պետք է ընդունի մարտահրավերը և նպաստի ժողովրդավարության կայացմանը: Միայն այդպես է հնարավոր կառուցել մի հասարակություն, որի ներ-

կայացուցիչները նվիրված կլինեն խաղաղության գաղափարին և ի վիճակի կլինեն այլընտրանքներ գտնելու՝ անողջամիտ և բռնի միջոցներից խուսափելու համար: Քանի որ մենք վախի մթնոլորտում ենք ապրում, մեր միակ իրական հույսը կատարելագործվելու նպատակին համահունչ մեծ նվաճումների հետ է կապված:

# **ԵՄ գործակցությունը և առաջընթացը Հայաստանում. ԵՀՔ ֆինանսական գործիքի շրջանակներում վերջերս իրականացված նախաձեռնությունները**

## **ԱՐԵԳ ԲԱՂԱՍԱՐՅԱԼ**

*Հայաստան*

**Խ**որհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը պահպանել է Ռուսաստանի հետ իր ունեցած սերտ կապերը և միաժամանակ քաղաքական, տնտեսական և սոցիալական համագործակցության եզրեր է գտել Եվրոպայի հետ: Եվրամիության և Հայաստանի միջև ձևավորված փոխհարաբերությունները կարգավորում է 1996 թ. ստորագրված և 1999 թ. ուժի մեջ մտած «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագիրը: ԵՄ սահմանների շարունակական ընդլայնման հետ մեկտեղ Եվրամիությունը ներկայացրել է Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) ֆինանսական գործիքը, որի շրջանակներում Հայաստանն ընդգրկվել է 2004թ.: Մասնավորապես, 2006 թ. նոյեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանություն է տվել ԵՀՔ Գործողությունների ծրագրին: Հայաստանի հավանությանն է արժանացել նաև 2007-2010 թթ. Ազգային ինդիկատիվ ծրագիրը (ԱԻԾ), որի շրջանակներում Հայաստանին ընդհանուր առմամբ 98,4 միլիոն եվրո է հատկացվել:

ԵՀՔ Ազգային ծրագրից բացի՝ Հայաստանը ԵՀՔ տարածաշրջանային և միջտարածաշրջանային ծրագրերի, ինչպես նաև Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքի (ԺՄԻԵԳ) նման այլ թեմատիկ ծրագրերի շահառուն է հանդիսանում:

Սակայն մինչ քաղաքական կամքի ձևավորման և պետական մարմիններին ու ՀԿ-ներին օգնության տրամադրման տեսանկյունից նշված ԵՄ ծրագրերի և նախաձեռնությունների նշանակությունը վերլուծելը շատ կարևոր է վերլուծել ներկայումս Հայաստանում տիրող իրավիճակը: Մասնավորապես, ԵՄ հետ ԵՀԳԳ, ԺՄԻԵԳ և ԱԻԾ-ի շրջանակներում հաստատված համագործակցության արդյունավետության աստիճանը պարզելու համար անհրաժեշտ է պարզել, թե Հայաստանում Ժողովրդավարության և (կամ) օրենքի գերակայության սկզբունքը, մարդու իրավունքների պաշտպանությունը և քաղաքացիական հասարակության ինստիտուտը զարգացման ինչ փուլում են:

Ժողովրդավարության կայացման և օրենքի գերակայության սկզբունքն ապահովելու նպատակով Հայաստանը քաղաքացիական ծառայության, դատական



համակարգը բարեփոխելու և կոռուպցիայի դեմ պայքարելու միջոցով վերջերս ձեռնամուխ է եղել նշված սկզբունքն ապահովող հաստատությունների աշխատանքի կայունության ու արդյունավետության երաշխավորմանը: 2007 թ. իրականացվել են 2005 թ. ընդունված սահմանադրական բարեփոխումները, ինչը նպաստել է իրավակարգի ամրապնդման, ի թիվս այլոց, իշխանության տարանջատման սկզբունքի (ներառյալ՝ Ազգային ժողովի լիազորությունների ընդլայնում և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի բարելավում) ապահովման, դատական համակարգի անկախության, մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) ինստիտուտի հաստատման, ինչպես նաև լրատվամիջոցների ազատության երաշխավորմանը: Նոր օրենքներն արդյունավետ կիրառման կարիք ունեն, և նոր սահմանադրությամբ ամրագրված պահանջները բավարարելու համար հարկավոր է օրենսդրական բարեփոխումներ իրականացնել:՝ Տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի բարեփոխմանն է նվիրված նաև 2007 թ. դեկտեմբերի սկզբին հավանության արժանացած «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մասին» օրինագիծը, որը սահմանում է Երևանի քաղաքապետի անուղակի ընտրության կարգը:

2007 թ. մայիսյան խորհրդարանական ընտրությունները համապատասխանել են ԵԱՀԿ առջև Հայաստանի ստանձնած պարտավորություններին և ընդունված ժողովրդավարական չափանիշներին: 2008 թ. փետրվարյան նախագահական ընտրությունները հիմնականում համապատասխանել են միջազգային չափանիշներին (ըստ ԵԱՀԿ-ի), այդուհանդերձ, ընտրակեղծիքների, ինչպես նաև թեկնածուների նկատմամբ անհավասար վերաբերմունքի մասին որոշ ընտրողների հայտարարությունների հիման վրա հանրությունը շարունակում է մտահոգություն արտահայտել ընտրական գործընթացի վերաբերյալ: Ընտրություններից հետո սպանության ութ դեպք է արձանագրվել, և Երևանում՝ քսանօրյա արտակարգ դրություն հայտարարվել, որի ընթացքում հարցաքննվել են որոշ անձինք: Այս ամենն առժամանակ սասանել է Եվրոպական հանձնաժողովի հավատը Հայաստանում վերջերս արձանագրված ժողովրդավարական ձեռքբերումների նկատմամբ:

Տնտեսական և սոցիալական բարեփոխումների տեսանկյունից 2007-2008 թթ. ընթացքում Հայաստանի մակրոտնտեսական վիճակը կայուն էր: Ընդհանուր առմամբ, վեց տարիների ընթացքում երկնիշ տնտեսական աճ է արձանագրվել, որի շարժիչ ուժը հիմնականում շինարարության և ծառայությունների հատվածներն էին, ինչպես նաև՝ արտասահմանից ուղարկվող գումարները: 2007 թ. վերջերին տնտեսական աճը, ընդհանուր առմամբ, կազմել է 13.7%<sup>2</sup>. Հայաստանի Կենտրոնական բանկի կանխատեսմամբ՝ 2008 թ. երկրորդ կեսում՝ 3-րդ և 4-րդ եռամսյակներում, տնտեսական աճը, ընդհանուր առմամբ, 10-13% կկազմի: Մասնավորապես, 2008 թ. երկրորդ կեսում շինարարական հատվածում կանխատեսվող 16-17% աճը կարելի է վերագրել տրանսպորտի, հաղորդակցության, էներ-

1 Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացում, ընթացիկ զեկույց, 2007 թ.:

2 Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացում, ընթացիկ զեկույց, 2007 թ.:

գետիկայի, մետաղագործության և քիմիական արդյունաբերության ոլորտներում ակնկալվող ներդրումներին: Կանխատեսումների համաձայն՝ 2009 թ. առաջին կիսամյակում Հայաստանում, ընդհանուր առմամբ, 8-11% տնտեսական աճ է սպասվում: 2009 թ. առաջին կիսամյակում շինարարության հատվածում ակնկալվում է 12-14% աճ, իսկ ծառայությունների հատվածում, ամբողջ 2008 թ. կտրվածքով, 10-12% աճ: 2008 թ. հունվարից հունիսն ընկած ժամանակաշրջանում ծառայությունների հատվածում արձանագրված աճը 10,7% է կազմել, իսկ 2009 թ. առաջին կեսում այն 11,5%-13% է կազմելու: Եվ, վերջապես, 2008 թ. առաջին կեսում Հայաստանում արդյունաբերության ավելացված արժեքի իրական աճը 2,7% է կազմել: Տնտեսական աճը հիմնականում պայմանավորված էր ոգելից խմիչքների և շինանյութերի արտադրության մեջ գրանցված մեծ աճով, ինչպես նաև էներգետիկ արդյունաբերության ոլորտում վերջերս արձանագրված աճի միտումներով: Սակայն հիշեցնենք, որ արդյունաբերությունը շատ է զիջում է Հայաստանի տնտեսական աճի իսկական շարժիչ ուժը հանդիսացող շինարարությանը, ծառայություններին և արտասահմանյան ներդրումներին և (կամ) դրամական փոխանցումներին: Այն հանգամանքը, որ տնտեսական աճն ավելի շատ շինարարության, ոչ թե արդյունաբերության վրա է խարսխված, մեծ մտահոգության տեղիք է տվել՝ հատկապես հաշվի առնելով վերջերս շինարարական հատվածում արձանագրված աճի հարաբերական նվազումը: Հայաստանի տնտեսության լուրջ խնդիրներից է նաև հայկական դրամի արժեզրկումը, ԱՄՆ դոլարի արժեզրկումը և Միացյալ Նահանգներում անշարժ գույքի ճգնաժամի հետևանքով աշխարհի վարկային շուկաների հիմքերի ընդհանուր թուլացումը:

Հարկաբյուջետային և դրամավարկային ընդհանուր քաղաքականության շրջանակներում Կենտրոնական բանկը կրկնակի բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, և բյուջեի ավելցուկը 1% է կազմել: 2007 թ. տվյալներով, գործազրկության մակարդակը կազմել է աշխատուժի 7%-ը: Հարկ է նաև նշել, որ գյուղական համայնքներում նոր աշխատատեղեր բացելու և գյուղատնտեսական հատվածը զարգացնելու նպատակով բազում միջազգային դոնորների աջակցության ծրագրերը Հայաստանի գյուղատնտեսական հատվածում են իրականացվում: Այդուհանդերձ, նախորդ տարիների համեմատ՝ 2007 թ. այս հատվածում ստացված եկամուտը ՀՆԱ-ի ավելի փոքր մաս է կազմել: Եվ, վերջապես, Հայաստանում աղքատության մակարդակը նվազել է. աղքատության շեմից ցածր պայմաններում ապրող բնակչության թիվը 2007 թ. աստիճանաբար նվազել է մինչև 29%-ով, իսկ ծայրահեղ աղքատության մեջ ապրող մարդկանց թիվը բնակչության ընդհանուր թվի ընդամենը 6,5%-ն է կազմում:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում վերջերս Հայաստանի նպատակն էր ապահովել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքը և լրատվամիջոցների անկախությունը: Նշված նպատակն իրականացնելու համար ամրապնդվել են հանրային և մասնավոր հեռարձակող կազմակերպությունների աշխատանքը կարգավորող անկախ մարմ-

նի գործառույթները, խթանվել է հավաքներ անցկացնելու ազատության իրավունքը, ինչպես նաև հանրային և տնտեսական կյանքում տղամարդկանց և կանանց իրավահավասարությունը: Օրինակ՝ 2007 թ. փետրվարին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» փոփոխված օրենքով նախատեսվում է հավասարակշռության բերել Հեռուստատեսության և ռադիոյի ազգային կոմիտեի կազմում ընդգրկված կանանց և տղամարդկանց ընդհանուր թիվը: 2007 թ. ապրիլին Քրեական օրենսգրքում ներմուծված նոր իրավական դրույթների նպատակն է լրագրողների աշխատանքի խոչընդոտումը սահմանել որպես քրեորեն պատժելի արարք: Թեև կառավարությունը մեծ ջանքեր է գործադրել հավաքներ անցկացնելու ազատության իրավունքը պաշտպանելու ուղղությամբ, այդուհանդերձ, 2008 թ. նախագահական ընտրություններին նախորդող քարոզարշավի ընթացքում իշխանություններն ընդդիմության բազում հանրահավաքները չեն արտոնել, իսկ ոստիկանները խոչընդոտել են դրանց անցկացումը: Փաստորեն, «Հանրահավաքների անցկացման մասին» վերջերս փոփոխված ՀՀ օրենքը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս<sup>1</sup>: «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում 2008 թ. մարտի 17-ին կատարված փոփոխությունները քննարկվել են ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) հավաքների ազատության հարցերով փորձագիտական խմբի և Վենետիկի հանձնաժողովի կողմից՝ Հայաստանի խորհրդարանի խոսնակի առաջարկությամբ:

«Նախնական գնահատականի հիման վրա Վենետիկի հանձնաժողովն ու ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հավաքների ազատության հարցերով փորձագիտական խումբը չեն կարծում, որ արված փոփոխություններն ընդունելի են, քանի որ դրանք էականորեն ավելի են սահմանափակում հավաքների ազատությունը», - ասված է ընդհանուր կարծիքում<sup>2</sup>:

Վերջերս ընդունված փոփոխությունները վտանգում են խոսքի ազատությունը, քանի որ դրանք խստացնում են ինքնաբերական հավաքներին վերաբերող դրույթները, այդ թվում՝ փոքր ժողովներն ավելի մեծ հավաքների վերածելու հնարավորություն ընձեռող դրույթը: Այդուհանդերձ, 2008 թ. մարտի 28-ին Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն անհամաձայնություն են հայտնել Հայաստանի Ազգային ժողովին: Հուսանք, որ պետությունը միջոցներ կձեռնարկի հավաքների ազատության իրացումն ավելի դյուրին և քիչ սահմանափակումներ ենթադրող գործընթացի վերածելու ուղղությամբ:

Կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվում է «Կանանց վիճակի բարելավման և հասարակությունում նրանց դերի բարձրացման (2004-2010) ազգային ծրագիրը», քանի որ երկրի քաղաքական կյանքին մասնակցող կանայք տղամարդկանց համեմատ շարունակում են փոքր թիվ կազմել<sup>3</sup>:

<sup>1</sup> ԵԱՀԿ, Եվրոպայի խորհուրդ. «Հանրահավաքների մասին» Հայաստանի օրենքում արված փոփոխությունները լուրջ մտահոգությունների տեղիք են տալիս»:

<sup>2</sup> նույն տեղում

<sup>3</sup> Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացում, ընթացիկ զեկույց, 2007 թ.:

Ներկայումս Հայաստանում տիրող սոցիալական և քաղաքական իրավիճակին անդրադառնալուց հետո կարելի է դիտարկել ԵՀԲԳ-ի և ԺՄԻԵԳ-ի նման զանազան ծրագրերի իրականացման արդյունավետության հարցը:

Հայաստանում ԵՀԲԳ-ն ներկայումս իրականացվում է երեք հիմնական ուղղություններով՝ աջակցություն ժողովրդավարական կառույցներին և կառավարման արդյունավետությանը, աջակցություն կարգավորիչ բարեփոխումների անցկացմանը և կարողությունների զարգացմանը, աջակցություն աղքատության հաղթահարմանն ուղղված միջոցների մշակման գործում: ԵՀԲԳ-ն առնչվում է նաև Հայաստանի առջև ծառայած մի քանի առաջնահերթ խնդիրների, որոնց հետևանքները տարածվում են ամբողջ Կովկասյան տարածաշրջանում:

Հայաստանում ԵՀԲԳ-ի ծրագրերն իրականացնող ինստիտուտների զարգացած կարողությունների և քաղաքական կամքի մասին են վկայում բազում փաստեր: Այսպես, նոր գործիքակազմի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ԵՀԲԳ-ի 5 թեմատիկ ծրագիր՝ Պարենի ապահովում, Միգրացիա և ապաստարան, Ներդրումներ մարդկային ռեսուրսների զարգացման համար, Զարգացման տեղական գործոններ, Ռեսուրսների, այդ թվում՝ էներգակիր ռեսուրսների կայուն կառավարում: Նախատեսվում է նաև ճգնաժամի հաղթահարմանն ուղղված հետևողական ճկուն միջոցներ ամրագրող կայունության գործիք մշակել: Լեռնային Ղարաբաղի քաղաքական հակամարտությունը կարգավորելու տեսանկյունից Հայաստանի համար հատկապես մեծ նշանակություն ունի կայունության գործիքը: Հակամարտությունը փակուղի է մտել զինադադարի հայտարարման արդյունքում, և իրականում կայուն խաղաղություն այդպես էլ չի հաստատվել: Այսպիսով, կայունության գործիքը կարող է նպաստել ներկայումս ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցությունների արդյունավետության բարձրացմանը: Կայունության գործիքը կնպաստի նաև քաղաքացիական հասարակության ձևավորմանը և Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն ուղղված արդիական «անմիջական» նախաձեռնությունների, ներառյալ՝ Երևանի և Բաքվի ազգային մամլո ակումբների համատեղ ծրագրերի զարգացմանը:

«ԵՄ-Հայաստան գործողությունների ծրագրում» ավելի են մասնավորեցվում Եվրոպական համայնքի աջակցության ծրագրի առաջնահերթությունները, որոնք հիմնականում հետևյալ ոլորտներին են առչվում. ժողովրդավարական կառույցների բարեփոխում և արդյունավետ կառավարում, կարգավորիչ բարեփոխումներ և կարողությունների զարգացում, աջակցություն աղքատության դեմ պայքարի գործում: Ներկայումս նշված յուրահատուկ առաջնահերթությունների շարքն են դասվում նաև իրավական պետության ժողովրդավարական կառույցների ամրապնդումը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ապահովումը, հետագա տնտեսական զարգացման խթանումը և (կամ) աղքատության հաղթահարման արդյունավետ միջոցների մշակումը և սոցիալական համախմբվածության ապահովումը, ներդրումային կլիմայի հետագա բարելավումը, մասնավոր հատվածի զարգացմամբ պայմանավորված տնտե-

սական աճի խթանումը, ԵՄ վարչական կարողությունների ձևավորման փորձին տնտեսական օրենսդրության հետագա համապատասխանեցումը, էներգետիկ ռազմավարության մշակումը, այդ թվում՝ որքան հնարավոր է շուտ Մեծամորի ատոմակայանի փակումը, դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը և տարածաշրջանում սերտ համագործակցության հաստատումը: Աջակցության այս առաջնահերթ ղորտներն ընդգրկված են Հայաստանի համար նախատեսված ԵՄ բոլոր գործիքներում և ծրագրերում<sup>1</sup>:

Թեև Հայաստանում ԵՀԳԳ ծրագրերի մեծ մասի իրականացման փուլն ընդգրկում է 2007–2013 թթ. Ժամանակահատվածը, այդուհանդերձ, որոշ ղորտներում արդեն նշանակալի առաջընթաց է նկատվել: ԵՀԲ գործողությունների ծրագրի իրականացման տեսանկյունից բավականին մեծ առաջընթաց է արձանագրվել դատական բարեփոխումների, ընտրությունների անցկացման և օմբուդսմենի ինստիտուտի կայացման ղորտներում: Բացի այդ, նշանակալի առաջընթաց է արձանագրվել նաև հակամարտությունների կանխման և ճգնաժամի կառավարման ղորտում: Հայաստանը որոշել է վերսկսել Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության վավերացման գործընթացը: Բացի այդ, Հայաստանը շարունակում է ահաբեկչությանն առնչվող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն փոխանակելու ղորտում ՄԱԿ-ի Հակահաբեկչական կոմիտեի գործադիր տնօրինության երևանյան գրասենյակի գնահատման խմբի միջոցով համագործակցել ՄԱԿ-ի և ՆԱՏՕ-ի հետ:

Կրթական բարեփոխումների ղորտում Հայաստանը շարունակում է Բոլոնյան գործընթացին համապատասխան արդիականացնել ուսումնական ծրագրերը և բարեփոխել համալսարանների վարչական և կազմակերպչական կարողությունները: Հայաստանը կազմել է նաև 2008–2010 թթ. մասնագիտական կրթության արդիականացման գործողությունների ծրագիր՝ կրթական գործընթացի կարգավորման համակարգը և ֆինանսավորման պայմանները բարելավելու, ինչպես նաև արժանիքների վրա հիմնված չափանիշների և կրթության որակի մշտադիտարկման (մոնիթորինգի) հասկացությունները ներմուծելու համար:

Վերոնշյալ տվյալների և ծրագրի առաջին տարվա ընթացքում իրականացված ԵՀԲ գործողությունների ծրագրի վերաբերյալ 2008 թ. ապրիլին Եվրոպական հանձնաժողովի ներկայացրած ընթացիկ զեկույցի համաձայն՝ Հայաստանում շատ բարեփոխումներ են հաստատվել և իրականացվել: Այդուհանդերձ, քաղաքացիական հասարակության հայ անկախ փորձագետներից շատերը համոզված են, որ նշված բարեփոխումների վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի զեկույցն իրականությանը չի համապատասխանում և գերազնահատում է ծրագրի առաջին տարվա ձեռքբերումները: Փորձագետները նույնպես զեկույցներ են կազմել իրենց հայտնաբերած անհամապատասխանությունների մասին: Տարածայնությունների տեղիք տված հարցերը հիմնականում վերաբերել են հետևյալ ղորտներին.

<sup>1</sup> Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք, Հայաստան, Երկրի ռազմավարական փաստաթուղթ, (2007 – 2013թթ.):

ժողովրդավարություն և օրենքի գերակայություն, մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ, տնտեսական և սոցիալական բարեփոխումներ, շուկայական և կարգավորիչ բարեփոխումներ և, վերջապես, տրանսպորտի, էներգետիկայի և շրջակա միջավայրի պահպանման ոլորտի բարեփոխումներ:

Եվրոպական հանձնաժողովի զեկույցի՝ ժողովրդավարության և օրենքի գերակայության ոլորտում իրականացված բարեփոխումներին նվիրված հատվածում նշվել է, որ ինչպես 2007 թ. մայիսյան խորհրդարանական ընտրությունները, այնպես էլ 2008 թ. փետրվարյան նախագահական ընտրությունները համապատասխանել են ԵԱՀԿ չափանիշներին: Այնուհանդերձ, քաղաքացիական հասարակության փորձագետները պնդում են, որ «միջազգային դիտորդական առաքելություններն ընտրակաշառքին, վարչական, զանգվածային լրատվամիջոցների, մարդկային և այլ ռեսուրսների օգտագործմանը պատշաճ ուշադրություն չեն դարձրել և ընտրական գործընթացին ճիշտ գնահատական չեն տվել»: Բացի այդ, փորձագետները նաև այն կարծիքն են արտահայտել, որ «ԵԱՀԿ գնահատականը անօրինական ընտրություններն օրինականացնելու փորձ էր, որը խիստ քննադատության է արժանացել»<sup>1</sup>:

Տնտեսական և սոցիալական բարեփոխումներին անդրադառնալիս Եվրոպական հանձնաժողովը նշել է, որ Հայաստանի գործարար միջավայրը բարելավվել է, սակայն քաղաքացիական հասարակության փորձագետները պնդում են, որ 2007 թ. հարկային մարմինները և այլ պետական տեսչությունները ճնշում են գործադրել «Ռոյալ Արմենիա», «Ռադիո հայ» և այլ ընկերությունների և լրատվամիջոցների վրա պետական պաշտոնյաների վերահսկողությանը չենթարկվելու համար: Քաղաքացիական հասարակության փորձագետները քննադատում են նաև նախքան հարկային վարկի ժամկետի ավարտը հարկերը հավաքելու պրակտիկան և փոքր ու միջին բիզնեսի համար սահմանված հարկման չափորոշիչները, որոնք կառավարության հետ սերտ կապեր ունեցող մեծ բիզնեսի ներկայացուցիչների վրա չեն տարածվում:

Տրանսպորտի, էներգետիկայի և շրջակա միջավայրի պահպանման ոլորտում իրականացվող բարեփոխումներին անդրադառնալով՝ ԵՄ հանձնաժողովը նշում է. «Օրիուսի կոնվենցիայի դրույթները կյանքի կոչելու համար անհրաժեշտ ազգային գործողությունների ծրագիրը մշակման փուլում է, և Հայաստանում արդեն գործում է ինը Օրիուս կենտրոն»: Սակայն քաղաքացիական հասարակության փորձագետները հակառակն են պնդում, ասել է թե՛ Հայաստանի կառավարությունը Օրիուսի կոնվենցիայի դրույթների պահպանումն ապահովող կոմիտեի առջև 2006 թ. մարտին ստանձնած պարտավորությունները չի կատարում<sup>2</sup>: Ի վերջո, Երևանի մամուլի ակումբի և «Թրանսփերենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի նման տարբեր կազմակերպությունների քաղաքացիական հասարակության

<sup>1</sup> «2007 թ. Եվրոպական հարևանության իրականացում» Հայաստանի վերաբերյալ ընթացիկ զեկույցին քաղաքացիական հասարակության փորձագետների կողմից տված գնահատական: Գործընկերություն հանուն բաց հասարակության:

<sup>2</sup> Նույն տեղում:

վորձագետները համակարծիք են այն հարցի շուրջ, որ ԵՀԳԳ շրջանակներում Հայաստանում իրականացվող բարեփոխումներից շատերն ավելի հետևողական մոտեցման կարիք ունեն:

2003 թ. ԺՄԻԵԳ (Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիք) շրջանակներում մեկնարկել է Հայաստանում գործող ՀԿ-ների աջակցության ծրագիրը: Նախաձեռնությունը նպաստել է 11 ծրագրերի հաջող իրականացմանը: Նշված ծրագրերը քննարկման ներկայացրած 48 ծրագրերից են ընտրվել, և դրանց իրականացման համար ընդհանուր առմամբ 498 033 եվրոյի չափով դրամաշնորհ է հատկացվել: Այսպիսով, ընտրվել են հետևյալ 11 ծրագրերը՝

1. «Կոռուպցիայի դեմ պայքարի արշավ և (կամ) Հայաստանում բարենպաստ իրավական դաշտի և սոցիալական իրավիճակի ձևավորում» (Հակասահաբեկչական աջակցության կենտրոն) ,

2. «Հավասար իրավունքներից դեպի հավասար հնարավորություններ» («Հավատ» ՀԿ),

3. «Հայաստանի օրենսդրության մեջ «Տեղական ինքնակառավարման մասին» եվրոպական խարտիայի ներմուծումը որպես տեղական ինքնակառավարման մարմինների ժողովրդականացման և զարգացման հիմք» (Համայնքների ֆինանսիստների միավորում),

4. «Հայաստանը և Ադրբեջանը պատերազմի և խաղաղության խաչմերուկում. ինչպե՞ս կտրտել կարծրատիպերը» (Հայաստանի հետաքննող լրագրողների ընկերակցություն),

5. «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» («Երիտասարդական նվաճումներ» ՀԿ),

6. «Հայաստանում իրավական պետություն կառուցելու գործում լրատվամիջոցների դերի բարձրացում» («Ֆեմիդա» ՀԿ),

7. «Դեպի նոր առաջնորդություն. խմբային շահերի համաձայնեցմանը նպաստող խաղաղ միջոցներ» (Մարդկային զարգացման միջազգային կենտրոն),

8. «Մարդու իրավունքներ թեմայով ռադիոծրագրերի լսաշար» (Էլեկտրոնային գանգվածային լրատվամիջոցներին աջակցող «Անտենա» ՀԿ),

9. «Հաշվետվություն հանրության առջև» (Տեղական ինքնակառավարման զարգացման աջակցող տեղեկատվական-ուսուցողական կենտրոն),

10. «Հայաստանի Հանրապետության տնտեսական դատարանի առցանց տեղեկատվական կենտրոնի ստեղծում» (Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիա),

11. «Մարդու իրավունքները և գիտելիքները կյանքի կոչելը» (Հայաստանի հելսինկյան կոմիտե):

2003 թ. մեկնարկած ԺՄԻԵԳ ծրագրերը բավականին լավ են իրականացվել, ուստի և դրանք շարունակվելու են առնվազն 2007-2010 թթ. Ժամանակահատվածում՝ համալրվելով նոր ավելի արդյունավետ ռազմավարությամբ: Նշված ռազմավարության միջոցով ծրագրերը շարունակելու են նպաստել մարդու իրա-

վունքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ճնաձևորմանը, հատկապես այն-  
պիսի երկրներում, որտեղ այդ իրավունքների պաշտպանությունը վտանգված է:  
Շարունակվելու են նաև քաղաքացիական հասարակության զարգացմանը, խոշ-  
տանգումների և մահապատժի վերացմանն ուղղված ծրագրերը: Բացի այդ, 2007  
– 2010 թթ. Ժամանակահատվածի համար մշակված նոր ռազմավարությունը ընտ-  
րությունների դիտարկման միջոցով կնպաստի ժողովրդավարական ընտրական  
գործընթացների թափանցիկության մակարդակի բարձրացմանը:

Ինչ վերաբերում է ՀԿ-ներին, ապա ԺՄԻԵԳ-ը հստակ առավելություն ունի,  
քանի որ ՀԿ-ներին աջակցություն ցուցաբերելու համար այն պետության հա-  
մաձայնության կարիքը չունի: Նշված առավելությունը մասնավորապես ժողովր-  
դավարության և մարդու իրավունքների պաշտպանության նրբին հարցերի շուրջ  
քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ ազգային մա-  
կարդակով հաստատված համագործակցության առանցքային առանձնահատ-  
կություններից է<sup>1</sup>: Բացի այդ, ի տարբերություն ԺՄԻԵԳ-ի այսպես կոչված աշ-  
խարհագրական ծրագրերին բնորոշ երկարաժամկետ ծրագրման մոտեցման,  
փոփոխվող պայմաններին արձագանքելու և նորարարությունների ընդունմանը  
նպաստելու տեսակետից նոր ռազմավարությունը շատ ավելի ճկուն է:

Սակայն ՀԿ-ների տեսանկյունից ԺՄԻԵԳ-ի թերություններից մեկն այն է, որ  
այն եզակի միջոցներից է, որոնց օգնությամբ ՀԿ-ները կարող են մասնակցել ԵՄ  
կողմից ֆինանսավորվող ծրագրերին: Շատերը հույս են հայտնել, որ ապագայում  
կմշակվեն նաև այլ քաղաքական գործիքներ, որոնք ՀԿ-ներին ԵՄ ծրագրերին  
ավելի լիարժեքորեն մասնակցելու հնարավորություն կտան:

Ամփոփելով հարկ է նշել, որ Հայաստանում Եվրամիության կողմից իրակա-  
նացվող կամ մոտ ապագայում իրականացվելիք նախաձեռնությունների մեծ  
մասի հաջող ընթացքը նախորդող ծրագրերի հաջողությամբ է պայմանավոր-  
ված: Տնտեսական զարգացման, ժողովրդավարության, մարդու իրավունքների  
պաշտպանության և ցանկացած այլ ոլորտում ԵՀԲԳ շրջանակներում իրակա-  
նացվող ԵՄ նախաձեռնությունների արդյունավետությունը բարձրացնելու համար  
Հայաստանի պետությունը և ժողովուրդը պետք է ողջամտորեն ծախսեն դրական  
փոփոխությունների իրականացումն ապահովելու նպատակով իրենց հատկաց-  
րած գումարները և ռեսուրսները: Նախաձեռնությունների իրականացման ձևերի  
հետ մեկտեղ հույժ կարևոր է նաև այդ նախաձեռնությունների իրական արդյունք-  
ների անկողմնակալ վերլուծությունը և լրացուցիչ բարեփոխումների անհրաժեշ-  
տությունը որոշելու կարողությունը: Հայաստանի Հանրապետությունն ապացուցել  
է ԵՀԲԳ որոշ նախաձեռնություններ հաջողությամբ իրականացնելու իր կարողու-  
թյունը, ուստի և ԵՄ հետագա համագործակցության շրջանակներում Հայաստանի  
սոցիալական և տնտեսական համակարգերի ողջ ներուժը բացահայտելու համար,

<sup>1</sup> Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիք (ԺՄԻԵԳ), Ռազմավարական  
փաստաթուղթ (2007 – 2010թթ.):



անշուշտ, հարկավոր է լրացուցիչ ուսումնասիրել նշված նախաձեռնությունների հաջողության երաշխիքները:

# «Արևելյան գործընկերություն». արդյոք ծրագիրը հակամարտությունների կարգավորման նոր ուղին է առաջարկում

## Արփևե Մարտիրոսյան

*Ուկրաինայի համալսարան, Ճվեդիա*

*Գրոնինգենի համալսարան, Նիդեռլանդներ*

Հաշվի առնելով վերջերս Եվրամիության սահմանների ընդլայնումը և հետագայում «ԵՄ ընտանիք» նոր երկրներ ընդունելու հնարավորությունը՝ նոր հարևաններ ձեռք բերած ԵՄ-ն իր կայունությունն ապահովելու համար մշակել է Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ) և որոշ ժամանակ անց դրա շրջանակներում ընդգրկել է նաև Հարավային Կովկասը: Մի շարք ձգձգված հակամարտություններ ունեցող Հարավային Կովկասի տարածաշրջանը նշանակալի վտանգ է ներկայացնում ԵՄ կայունության համար: Հարևան երկրների անկայունությունն ուղղակիորեն կազդի ինչպես ԵՄ տնտեսության, այնպես էլ քաղաքականության վրա: Հակամարտության կարգավորումը ԵՀՔ օրակարգում ընդգրկված կարևոր խնդիր էր, սակայն այն իր նպատակին լիարժեք ներուժով չի ծառայում: Այն հանգամանքը, որ Եվրամիությանը չի հաջողվում պահպանել «մեկ ձայնով և դեմքով հանդես գալու» իր նշանաբանը, այլևս զարմանալի չէ: Անակնկալ նորություն չէ նաև այն փաստը, որ չափից շատ ինստիտուտներ ունեցող ԵՄ համակարգը համախմբվածությունից և համակարգումից զուրկ է: Այս ամենը Եվրամիությանը խանգարում է իրականացնել իր առաքելությունը, այսինքն՝ հակամարտությունները կանխելու և կարգավորելու իր հիմնական նպատակը: Այլ հարց է, թե արդյոք պատճառը կամքի, թե միջոցների բացակայությունն է: Ամեն դեպքում՝ շատ բան է կախված այն տարածաշրջանից, որտեղ Եվրամիությունը փորձում է իրականացնել նշված նպատակը: Հարավային Կովկասի հակամարտություններում, հատկապես՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության պարագայում, Եվրամիությունն աննշան դեր է խաղում:

Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների պլանները (անգլ՝ ENP AP) հակամարտության կարգավորման ուղիների վերաբերյալ քիչ առաջարկներ են պարունակում: Ավելին, հակամարտության կարգավորումը տարբեր աստիճանի կարևորություն ունեցող խնդիրների շարքում դասակարգելը Եվրամիության չհամակարգված գործողությունների մասին է վկայում: Բացի այդ, գործողությունների պլաններում հակամարտության կողմերը տարբեր եզրույթներով են բնորոշվում, ինչը հակասական և անհետևողական մոտեցման հետևանք է:

Հարավային Կովկասում հնարավոր հակամարտությունները կանխելու և կարգավորելու առնչությամբ ԵՄ կողմից գործածվող «մեղմ» քաղաքականություն եզրույթը թերևս «հարմար» մոտեցում է ԵՄ-ի համար: Տարածաշրջանում ներկայացուցչություն ունենալով հանդերձ՝ Եվրամիությունն աննկատ է մնում՝ Ռուսաստանին կամ Միացյալ Նահանգներին չխանգարելու համար, իսկ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման պարագայում ԵԱՀԿ Մինսկի խմբին ցուցաբերվող աջակցությամբ է սահմանափակվում: Նման հայտարարությունների բազմակի կրկնության հետևանքով Եվրամիությունը ոչ թե ենթագիտակցաբար, այլ թերևս գիտակցաբար խուսափում է հակամարտության կարգավորման գործում ավելի մեծ դեր ստանձնելուց: Երբեմն Եվրամիությունը նույնիսկ հեգնական հայտարարություններ է անում, թե ո՞չ Հայաստանը, ո՞չ էլ Ադրբեջանն իրեն չեն խնդրել ավելի ակտիվ մասնակցել հակամարտության կարգավորման գործընթացին: Սխալ կլիներ կարծել, որ Եվրամիությունն իսկապես պաշտոնական հրավերի է սպասում: Վրաստանը բազմիցս խնդրել է Եվրամիությանն ավելի ակտիվ մասնակցել Հարավային Օսիայի հակամարտության կարգավորման գործընթացին, սակայն Եվրամիությունը կարծես նման պատրաստակամություն չի հայտնել: Դա պայմանավորված է մի շարք պատճառներով, որոնցից հիմնականը ռուսական գործոնն է:

2009 թ. մեկնարկած «Արևելյան գործընկերություն» ծրագիրը հավանաբար Եվրոպական հարևանության քաղաքականությունը շարունակող նախաձեռնություն է: «Արևելյան գործընկերությունը» ներառում է համագործակցության վրա հիմնված մի շարք ծրագրեր, որոնք միտված են ԵՄ արևելյան գործընկեր երկրների համար ինտեգրման ավելի լավ մոդելի մշակմանը: Միայն լավատեսները կարող են կարծել, որ կոռումպացված զարգացող երկրների վերափոխմանը և վերակառուցմանը նպաստող միջոցներ ձեռնարկելիս Եվրամիությունը միայն մեծահոգությամբ է առաջնորդվում: Նմանապես, միամտություն կլիներ կարծել, որ Եվրոպական հարևանության քաղաքականության և «Արևելյան գործընկերություն» ծրագրերի շրջանակներում ԵՄ-ի հետ համագործակցող երկրների միակ նպատակն ավելի ժողովրդավարական կամ եվրոպական չափանիշները բավարարող երկրների վերածվելն է: Իրականում այդ համագործակցությունը փոխաշահավետ համաձայնություն է, որի շրջանակներում Եվրամիությունն ավելի հաճախ ոչ թե պարտավորեցնող, այլ շահագրգռող միջոցների է դիմում, իսկ գործընկեր պետություններն ընդունում են իրենց հարմար պայմանները՝ մերժելով մնացածները:

«Արևելյան գործընկերություն» ծրագիրը կարող էր հակամարտությունների կարգավորման հարցում Եվրոպական հարևանության քաղաքականության բացերը լրացնելու հիանալի հնարավորության վերածվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խաղաղության և կայունության բացակայության պայմաններում Եվրամիության և գործընկերների, ինչպես նաև միայն գործընկերների միջև առևտրի կամ տնտեսական համագործակցության մասին խոսք անգամ չի կարող լինել,

ԵՄ արտաքին քաղաքականությունը պետք է մեծ լրջությամբ վերաբերեր տարածաշրջանում հնարավոր հակամարտությունների կանխմանը և կարգավորմանը: Թեև Եվրամիությունը բազմիցս նշել է, որ հակամարտությունների կանխումը և կարգավորումն իր արտաքին քաղաքականության առանցքն է, սակայն գործնականում, հատկապես՝ ղարաբաղյան հակամարտության պարագայում, նման հայտարարությունները կյանքի կոչելու համար քիչ քայլեր են ձեռնարկվել: Պրահայում կայացած «Արևելյան գործընկերություն» գագաթնաժողովին ընդունված համատեղ հռչակագրում այս հարցին համառոտ և անուղղակի անդրադարձ է եղել: Ղարաբաղյան հակամարտությանն առնչվող ԵՄ բոլոր հայտարարություններն անորոշ և խաբուսիկ տպավորություն են թողնում: Ակնկալվող տևական համագործակցության պարագայում անհնար է կանխատեսել, թե ղարաբաղյան հակամարտության վերսկսման դեպքում Եվրամիությունն ինչպիսի քայլեր կձեռնարկի: Նա դանդաղ է արձագանքում կամ ընդհանրապես անտարբեր է Ադրբեյջանի նախագահի՝ հակամարտությունն ուժի գործադրմամբ կարգավորելու ռազմատեսչ հայտարարությունների նկատմամբ: Նախագահ Ալիևի սպառնալից հայտարարություններին կամ ԵՄ արժեքներին հակասող այլ հարցերին կարգով արձագանքելու փոխարեն Եվրամիությունը նախապատվություն է տալիս Ադրբեյջանի հետ ունեցած տնտեսական կապերին՝ դրանով իսկ խաբիսելով իր՝ որպես չեզոք միջազգային լուրջ քաղաքական կառույցի դերը:

Հավանաբար շատ բարդ կլինի ասել՝ արդյոք խաղաղությունը զարգացմամբ է պայմանավորված, թե՞ զարգացումը՝ խաղաղությամբ: Դեռ իր բարդությամբ շատ նման է հետևյալ հարցին՝ ռոն է առաջինը՝ կյանքը, թե՞ գիտակցությունը: Ամեն դեպքում խաղաղությունը և զարգացումը փոխկապակցված են, ուստի և Եվրամիությունը պետք է այս երկու գործոններին հավասարապես վերաբերվի, և այդ վերաբերմունքը հաստատի ոչ միայն իր հայտարարություններով, այլև՝ գործով: «Արևելյան գործընկերություն» այնպիսի նախաձեռնություն է, որը միտված է ոչ միայն գործընկերների հետ Եվրամիության համագործակցության ամրապնդմանը, այլև՝ գործընկերների միջև համագործակցության զարգացմանը: «Արևելյան գործընկերության» ծրագրի առանցքային կետերից մեկը գործընկեր երկրների քաղաքացիների համար ԵՄ գոտի մուտքի արտոնագրեր ստանալու ընթացակարգերի պարզեցումն է: Սակայն Եվրամիությունն անտեսում է այն փաստը, որ ինչպես հայաստանաբնակ հայերը, այնպես էլ այլ երկրների քաղաքացի հանդիսացող սփյուռքահայերը գործնականում Ադրբեյջան մեկնել չեն կարող: Հաշվի առնելով նման հարցերի անտեսումը՝ Եվրամիության՝ գործընկերների միջև համագործակցության խրախուսումը կասկածներ է հարուցում: Դեռ բնավ չի նշանակում, որ Եվրամիությունն ընդհանրապես ոչինչ չի անում տարածաշրջանում տիրող իրավիճակը բարելավելու համար, դա նշանակում է, որ Եվրամիությունը չի ցանկանում այդ ուղղությամբ անել այն ամենը, ինչ կարող է:

ԵՄ խաղաղարար դիվանագիտության արդյունավետությունն ապացուցող օրինակների շարքում կարելի է վկայակոչել տնտեսական գործընկերության միջոցով

վաղեմի թշնամիներ Գերմանիայի և Ֆրանսիայի միջև խաղաղություն հաստատելու գործում Եվրամիության հաջողությունը: Ճիշտ է, Եվրամիությանը հաջողվել է գրեթե զրոյի հասցնել անդամ պետությունների միջև պատերազմական գործողությունների հնարավորությունը, սակայն դա չի նշանակում, որ ուրույն պատմություն, էթնիկական կազմ, կրոնական հայացքներ և լեզվական տարբերություններ ունեցող տարածաշրջաններում կարելի է կիրառել նույն ռազմավարությունը: Այնուհանդերձ, այս ամենը բնավ չի նշանակում, որ Եվրամիության և Ադրբեջանի կամ Հայաստանի և Ադրբեջանի միջև տնտեսական կապերի կամ համագործակցության զարգացումն անպայման կնպաստի դարաբաղյան հակամարտության կարգավորմանը: Բոլորին հայտնի է, որ ադրբեջանցիները և հայերը ներկայումս առևտուր են անում Սադախլոյի շուկայում, և Հայաստանը նույնիսկ ավելի ամուր ուղղակի կամ անուղղակի առևտրական կապեր ունի Թուրքիայի հետ: Սակայն այդ կապերը երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, տարածքային վեճերի լուծմանը կամ ցեղասպանության ճանաչմանը որևէ կերպ չեն նպաստել, հետևաբար տարածաշրջանում խաղաղություն հաստատելու համար՝ հարկ է կարևորել նաև այլ խնդիրները, և Եվրոպական հարևանության քաղաքականության համեմատ ավելի զարգացած «Արևելյան գործընկերության» ծրագիրը կարող է մեծապես նպաստել այդ խնդիրների լուծմանը: Դժբախտաբար, «Արևելյան գործընկերության» ծրագրում դարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ նոր դրույթներ չեն ավելացվել, և հստակ չի նշվել հակամարտության կարգավորման գործընթացին Եվրամիության ակտիվ մասնակցության մասին: Թեև Եվրամիությունն իր տրամադրության տակ ունի հակամարտությունների կարգավորման անհրաժեշտ բոլոր գործիքները, սակայն հավանական հակամարտության ազդանշանները վերացնելու համար դրանք չի կիրառում՝ դրանով իսկ խոչընդոտելով ինտեգրման և համագործակցության ծրագրերի իրականացումը: Միջազգային ճգնաժամային խումբը, Փոքրամասնությունների հարցերով եվրոպական կենտրոնը, Եվրոպայի խորհուրդը և այլ միջազգային կազմակերպություններ իրենց զեկույցներում և հայեցակարգերում արժարժում են Վրաստանի ազգային փոքրամասնությունների խնդիրները: Եվրամիությունը, անկասկած, քաջատեղյակ է լեզվական և կրոնական տարբերությունների, կրթության և այլ հարցերի շուրջ Վրաստանի կառավարության և ջավախահայության միջև առկա լարվածության մասին: Անխուսափելի ճգնաժամի բոլոր ակնհայտ հատկանիշների առկայության դեպքում անգամ Եվրամիությունը որևէ կանխիչ միջոցառումներ չի ձեռնարկում: Ուրեմն հրն է հնարավոր ճգնաժամը կանխելու համար միջոցներ մշակելու նպատակը, եթե Եվրամիությունը դրանք չի կիրառում: Ճիշտ է, Ջավախքում տիրող իրավիճակը հեռու է Հարավային Օսիայի կամ Աբխազիայի ճգնաժամից, սակայն որևէ երաշխիք չկա, որ այդ իրավիճակը ավելի մեծ խնդրի չի վերածվի:

Հարավային Կովկասի՝ «Արևելյան գործընկերության» ծրագրում ընդգրկված բոլոր երկրների շարքում առավել արևմտամետ երկիրը Վրաստանն է: Ուստի, տարածաշրջանի կայունությունը և իր արժեքների կիրառումն ապահովելու նպատա-

կով Եվրամիությունն այդ երկրում ճգնաժամը հարթելու համար ավելի շատ քաղաքական լծակներ ունի: Սակայն, Եվրամիությունը կարծես լիովին անտեսում է ջավախահայության խնդիրը և հայ փոքրամասնության նկատմամբ Վրաստանի քաղաքականությունը մեղմելու ուղղությամբ գործնականում որևէ քայլ չի ձեռնարկում: Այդ իսկ պատճառով շատ դժվար է հասկանալ Հարավային Կովկասում Եվրամիության կողմից հետապնդվող նպատակները: Միանգամայն հստակ կարելի է ասել, որ անկայունությունը ձեռնտու չէ Եվրամիությանը, և նա հակամարտություններ չի սադրում: Հարավային Կովկասի նկատմամբ Եվրամիության հետաքրքրությունը մի շարք գործոններով է պայմանավորված: Ինչևէ, Եվրամիությունը չպետք է խուսափի տարածաշրջանային հակամարտությունների կարգավորմանը մասնակցելուց, քանի որ կայունությունը նախ և առաջ իր շահերից է բխում: Եվրամիությունը պետք է մի կողմ դնի իրավիճակը փոխելու և բարելավելու իր ունակությունը, քաղաքական ոլորտում իր մեծ դերն ապացուցելու ներքին ձգտումները և իր իսկ կայունությունն ապահովելու համար կատարի ԵՄ արտաքին քաղաքականության նպատակներն իրագործելու համար ստանձնած պարտավորությունները: Եվրամիության կողմից խրախուսվող տնտեսական համագործակցությունը, առևտրական պայմանագրերը, ժողովրդավարության եվրոպական արժեքները և օրենքի գերակայության սկզբունքը, էներգետիկ անվտանգության մասին համաձայնագրերը հոյժ կարևոր նշանակություն ունեն, սակայն այդ ամենը դարաբաղյան հակամարտության նման ձգձգված հակամարտությունները կարգավորելու համար բավարար չէ:

Եվրամիությունն դարաբաղյան հակամարտության կարգավորմանը նպաստելու համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսներն ունի: Արցախը նույնպես պետք է ընդգրկել տարածաշրջանային համագործակցության որոշ ծրագրերում, ինչը չէր ենթադրի Եվրամիության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչում, սակայն մեծապես կաջակցել հակամարտությունից առավելագույնս տուժած բնակչությանը: Լեռնային Ղարաբաղի բնակչության խնդիրներն անտեսելով և Ղարաբաղը տարածաշրջանային համագործակցության որևէ ծրագրի մեջ չընդգրկելով՝ Եվրամիությունը խաղալիք է դառնում Ադրբեյջանի ձեռքում: Հակամարտությունը կարգավորելու համար հարկ է բոլոր խնդիրները քննարկել անմիջականորեն հակամարտության կողմերի հետ: Լեռնային Ղարաբաղում անհրաժեշտ ենթակառուցվածքի և պայմանների բացակայության պարագայում Հարավային Կովկասի տարածաշրջանը հազիվ թե կարողանա ընդունել եվրոպական արժեհամակարգը: Հակամարտության կարգավորման հետաձգումը կամ այդ գործընթացին ԵՄ աննշան մասնակցությունն ավելի են խորացնում հիմնախնդիրը: Փաստորեն, հակամարտության կողմերն ավելի շատ են դժվարանում համագործակցության և խաղաղ գոյատևելու շուրջ համաձայնության հասնելու հարցում:

Որպես համեմատաբար նոր ծրագիր՝ «Արևելյան գործընկերությունը» դեռևս կարող է հակամարտության կարգավորման ուղղությամբ ավելի լուրջ վերաբերմունք և նվիրվածություն ցուցաբերել, քանի որ ամուր առևտրական կապերի և

գարգացման երաշխիքը խաղաղությունն է: Ուստի Եվրամիությունը պետք է վերանայի Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իր մոտեցումը և այն ներառի տարածաշրջանային մակարդակով իրականացվող որոշ տնտեսական ծրագրերում՝ կանխելով Ղարաբաղի բնակչության մեկուսացումը և իրականացնելով որպես չեզոք միջնորդ հանդես գալու իր առաքելությունը:

# Ճանապարհ դեպի Եվրոպա

## ՎԱՐՍԱԵ ԶՈՒՄԱՅՍԱԸ

Հայաստան

### Ներածություն

**XXI** դարի սկզբին Եվրոպան հանդես է գալիս որպես ազատ և ստություն ունի, հանդիսանում է ազատ առևտրի մեծագույն գոտի և ժամանակակից աշխարհի հիմնական ներդրումային կենտրոնը, հավասարակշռված սոցիալական քաղաքականության օրինակ է, անգնահատելի դեր է խաղում միջազգային հարաբերություններում, իսկ այստեղ ստեղծվող նոր աժեքները և գաղափարները կարող են փոխել քաղաքակրթության դեմքը: Միավորվող Եվրոպայի հաջողությունները հիմք են տալիս ենթադրելու, որ նոր դարաշրջանում Հին աշխարհի պետությունները բոլոր հնարավորություններն ունեն դառնալու համաշխարհային տնտեսական և սոցիալական առաջընթացի լիդերները: Մեր երկիրը եվրաինտեգրումը հայտարարել է արտաքին քաղաքական գերակայություն: Եվրամիության հետ Գործընկերության և համագործակցության համաձայնագրի կնքումը (1999 թ.), հետագայում Եվրոպական հարևանության քաղաքականության (2004 թ.) և Արևելյան գործընկերության (2008 թ.) մեջ ընդգրկվելը մեծ հնարավորություններ է ստեղծում Հայաստանի համար եվրոպական արժեքներով առաջնորդվող և եվրոպական չափանիշներին համապատասխանող երկիր կառուցելու և հետագայում Եվրամիությանն անդամակցելու տեսանկյունից:

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի եվրաինտեգրման գործընթացի մի քանի առանցքային հարցերի:

### Ունե՞նք արդյոք այլընտրանք Եվրոպային

Կարևորագույն հարցերից մեկը, որի պատասխանը պետք է տրվի, այն է, թե արդյոք եվրոպական կողմնորոշումը իրական այլընտրանք ունի Հայաստանի համար: Այդ առնչությամբ քննարկենք մի քանի աշխարհաքաղաքական ուղղություններ, որոնք հավանական զարգացման հեռանկար կարող են տալ Հայաստանին: Եթե դիտարկենք դեպի հարավ տանող ուղին, ապա Հայաստանի կարևորագույն գործընկերը Իրանն է: Բարիդրացիական հարաբերությունները Իրանի հետ կենսականորեն կարևոր են եղել շրջափակումը հաղթա-



հարելու և թուրք-ադրբեջանական դաշինքը հակակշռելու հարցում: Սակայն ԱՄՆ-Իրան սառը հարաբերությունները, արժեհամակարգային մեծ տարբերությունները անհնար են դարձնում հարաբերությունների հետագա սերտացումը:

Հայաստանը դեպի արևելք կողմնորոշվելու որևէ մշակութային կապ կամ քաղաքական առավելություն չունի, որտեղ պետությունները զարգանում են՝ հիմնվելով ավտորիտար կառավարման մոդելի վրա, բացի այդ, որոշ պետություններ անկայուն են, պառակտված ներքին քաղաքական և կրոնական հակասությունների հետևանքով:

Դաշնակցային հարաբերությունները Ռուսաստանի հետ տարիների ընթացքում անվտանգության երաշխիք են համարվել Հայաստանի համար: Սակայն Ռուսաստանի նման հզոր պետության հետ հարաբերությունների հետագա խորացումը անխուսափելիորեն հանգեցնելու է Հայաստանի վերածմանը կախյալ պետության, ինչի նախանշաններն այսօր իսկ կարող ենք տեսնել, բացի այդ, Ռուսաստանը, բնավ չհանդիսանալով ժողովրդավարական պետություն, չի կարող զարգացման նման ճանապարհ առաջարկել մեզ:

Այսպիսով, պարզ է դառնում, որ զարգացման ուղին տանում է դեպի արևմուտք: Եվ ահա հարց է առաջանում՝ դեպի ԱՄՆ, թե՛ Եվրոպա: Սակայն հաշվի առնելով, որ Հայաստանն ազգային պետություն է, իսկ Եվրոպան՝ ազգային պետությունների համախումբ (ի տարբերություն ԱՄՆ-ի, որը նոր ազգություն է ստեղծում), միանգամայն տրամաբանական է, որ մեզ համար ավելի հոգեհարազատ և ցանկալի կլինի կողմնորոշումը դեպի Եվրոպա:

Իրականում անկախությունից ի վեր հայերիս համար շատ կարևոր է հասկանալ և գիտակցել, թե որն է մեր ինքնությունը աշխարհում: Հայաստանի աշխարհագրական դիրքը Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում, քրիստոնյա և մահմեդական աշխարհների միջև, ինչպես նաև հայերի ունեցած ազգային կենսափորձը դարերի ընթացքում հնարավորություն չեն տալիս միանգամից որևէ բան պնդելու: Մինչև այժմ էլ քննարկումները շարունակվում են՝ ասիացի ենք, թե՛ եվրոպացի: Այո, հայերը բավական երկար ժամանակ եղել են ասիական քաղաքակրթությունների ազդեցության և գերիշխանության տակ, ինչի հետևանքով նրանց որոշ ավանդույթներ, բարքեր և նորմեր նստվածք են տվել հայ ինքնության վրա, սակայն այժմյան Հայաստանն ավելի շուտ եվրոպական, քան այլ տիպի պետություն է:

Զմոռանանք, որ եվրոպական արժեհամակարգը և քրիստոնեությունը շատ սերտ կապեր ունեն: Հիշենք նաև, որ «եվրոպացիներ» հասկացությունն առաջին անգամ հիշատակվել է VIII դարի ժամանակագրություններում՝ կապված Եվրոպա ներխուժած մահմեդական արաբներին դիմակայող քրիստոնյաների հետ: Հայերի համար, որոնք հանդիսանում են աշխարհում առաջինը քրիստոնեությունը պետականորեն ընդունած ազգը, ընդհանուր առմամբ, ընդունելի են արդարության, ազատության, հանդուրժողականության, ռացիոնալիզմի, մարդու իրավունքների, ժողովրդավարության համընդհանուր եվրոպական արժեքները:

Ինչո՞ւ գնալ դեպի Եվրոպա: Որովհետև Հայաստանի համար, որը հալածվելու դառը փորձ ունի և այժմ էլ գտնվում է էթնիկ կոնֆլիկտներով պառակտված տարածաշրջանում, Եվրոպան մի օրինակելի մոդել է, ժողովրդավարության, մարդու իրավունքների, օրենքի գերակայության հիմնարար արժեքների վրա խարսխված համագոյակցման տիրույթ, որը ժամանակի ընթացքում ապացուցել է իր կենսունակությունը:

Միայն Եվրոպան է առաջարկում պատմական կապերի, ժողովրդավարական կայունության և տնտեսական հզորության համակցություն:

## **Եվրոպականացման ուղին**

Բավական մեծ ճանապարհ պետք է անցնենք եվրոպականացման ճանապարհին և կարող ենք փաստել, որ այսօր մեր հասարակությունը բավականին հեռու է Եվրոպայից և եվրոպական արժեքներից: Առավել կարևոր հանգամանքը, որ կցանկանայինք շեշտադրել, այն է, որ եվրոպականացման ճանապարհին պետք է փոխվեն հասարակությունում գերակշռող արժեքները և մարդկանց մտածելակերպը, այսինքն՝ խոսքը ոչ միայն օրենսդրության կամ տնտեսական չափանիշների համապատասխանեցման և ուրիշ բարեփոխումների մասին է, որոնք, անկասկած, շատ կարևոր են, այլև եվրոպացի լինելու և այդպես ապրելու փիլիսոփայության մասին, առանց որի իրական և լուրջ արդյունքների չենք հասնի: Նշենք մի քանի մտածելակերպային և արժեհամակարգային բացասական երևույթներ, որոնք պետք է հաղթահարվեն.

- Հասարակության մեջ զգալի են անազնվությունը, անհավասար իրավունքները, հովանավորչությունը և կաշառակերությունը: Զարմանալին այն է, որ այդ երևույթները քննադատում է գրեթե յուրաքանչյուր քաղաքացի, սակայն հենց նույն քաղաքացին, երբ պահանջում են իր շահերը, դիմում է և՛ կաշառքի, և՛ անազնիվ մեթոդների:

- Անհատական, ընտանեկան կամ կլանային շահերը վեր են ընդհանուր բարեկեցության գաղափարից: Նպատակին հասնելու համար Հայաստանում գրեթե ամեն կարգի անմաքուր մեթոդ կարող է արդարացվել, եթե դա արվում է հանուն ընտանիքի կամ կլանի շահերի:

- Հասարակությունը դիտում է պետությունը որպես իրենից անջատ և օտար մարմին՝ հրաժարվելով պատասխանատվություն կրելուց պետությանն առնչվող գործերում և ձախողումների ամբողջ մեղքը բարդում է նրա վրա: Հետևանքն այն է, որ այսօր ունենք պետական շատ թույլ գիտակցություն ունեցող քաղաքացիներ:

- Մարդկանց ընկալումներում իրավական և բարոյական նորմերի զգալի տարբերություն կա: Օրինակ՝ եթե մարդասպանությունը դատապարտելի է թե՛ քրեական, թե՛ բարոյական տեսանկյունից, ապա բավական հանդուրժողական մոտեցում կա պաշտոնեական հանցագործությունների, լիազորությունների գերազանցման, կոռուպցիայի առնչությամբ: Կամ, օրինակ, որևէ վեճ հարթելու համար

մարդիկ գնում են «բարիշելու» զանազան մեթոդների, մինչդեռ ընդունված չէ այդ նպատակի համար ստեղծված կառույցներ (դատարաններ) դիմելը:

- Ազգայնականության տարածումը և պատմական անցյալով ապրելը: Հայ հասարակության մի զգալի մասին կարելի է բնորոշել որպես անցյալի դափնիների վրա ննջած մարդիկ, որոնք չեն տեսնում իրենց ներկան և չեն կառուցում ապագան:

- Հայ մարդիկ իրենց երկրում ինքնավստահություն չունեն և չեն հավատում իրենց և իրենց ընտանիքների կյանքը բարելավելու կարողությանը: Կոմունիստական վարչակարգի օրոք ձևավորվել էր տարբեր սոցիալական արտոնություններին սովոր և հույսը միայն պետական աջակցության վրա դնող, մյուս կողմից՝ իշխանությունների կազմավորման գործում դերակատարում ունենալուն չհավատացող մարդկանց տիպ: Այս մտածելակերպը իներցիայով շարունակում է վերարտադրվել և մնալ գերակշռող նորանկախ Հայաստանի հասարակությունում: Հենց նման մտածելակերպի պատճառով մարդիկ միտված են կարծելու, թե անհատը ոչինչ չի կարող փոխել, ամեն ինչ նրա փոխարեն որոշված է (այս փաստն առավել ցայտուն է դրսևորվում ընտրությունների ժամանակ):

- Հայերը ցանկանում են ամեն ինչ ստանալ հենց հիմա, հենց այս պահին՝ համարյա ոչինչ չանելով դրա համար: Այսպես, մի կողմից՝ ցանկանում ենք եվրոպացու նման ապահովված, բարեկեցիկ, հարմարավետ ապրել, սակայն երբ անհրաժեշտ է սկզբունքային լինել, պահպանել կանոնները, դա չի արվում: Մինչդեռ Եվրոպան սկսվում է փողոցը կանաչ լույսի տակ անցնելուց և լուսամուտից աղբ չթափելուց մինչև ընտրությունների ժամանակ կաշառք չվերցնելը, և ընդհանրապես սեփական պետության համար պատասխանատվություն ստանձնելը:

Այս ամենը միևնույն փակ շրջայի օղակներն են: Կարծում ենք, կյանքի ընկալման նման հարացույցներ ունենալով, ոչ միայն անհնար է դառնալ Եվրոպայի մի մասը, այլև երբևէ կենսունակ պետություն կառուցել: Մտածելակերպը փոխելու համար հսկայական ջանքեր են պետք, մի քանի սերունդ պետք է անցնի, որպեսզի մարդկանց գլխում քարացած «կահույքը» տեղաշարժվի: Խնդիրն այն է, որ ավագ սերնդի մտածելակերպը և արժեքները ինքնաբերաբար արտապատկերվում են կրտսեր սերնդի գիտակցության մեջ:

Վիճակը շտկելու հարցում առանցքային դեր ունի կրթությունը: Նոր սերնդին դեռևս մանկապարտեզից պետք է կրթել առողջ արժեքներով, դաստիարակել որպես իրենց պետականությունը հարգող և նրա համար պատասխանատվություն կրող քաղաքացիներ: Բացի այդ, դրական օրինակներ են պետք, որոնք ցույց կտան ճիշտ ուղին և կոզևորեն մարդկանց: Այս քայլերի շնորհիվ քայլ առ քայլ կմոտենանք Եվրոպային, նրա արժեքային համակարգին: Շատ կարևոր է նաև, որ արժեքային փոփոխությունների հետ կարողանանք կրթել ու պատրաստել առաջադեմ երիտասարդ առաջնորդների, որոնք կվայելեն հասարակության վստահությունը և կառաջնորդեն Հայաստանը դեպի Եվրոպա:

Այս փոխակերպումը մեզնից տարիներ կխլի, սակայն պետք է սկսել հենց այսօր: Վաղը գուցե ուշ լինի:

Իսկ ինչ պետք է անենք ներկայումս այս նպատակներին հասնելու համար: Արդեն իսկ այսօր պետք է հասարակական լայն քննարկումներ սկսել եվրախնտեզրման տարբեր խնդիրների շուրջ: Նախևառաջ մի շատ պարզ հարցի պատասխան պետք է տրվի՝ ինչու՞ ենք գնում Եվրոպա: Միթե միայն նրա համար, որ ֆինանսապես ապահոված լինենք: Շատերը Եվրոպան համարում են առատության եղջյուր. միայն այն պատճառով, որ մենք ավելի աղքատ ենք և նրա միջոցով ցանկանում ենք լավ ապրել, դրական ենք վերաբերվում Եվրամիությանը: Եվ այդպես են մտածում կարկանդակ ծախողից մինչև ԱԺ պատգամավորը: Տպավորություն է ստեղծվում, որ եթե, օրինակ, «Իսլամական կոնֆերանս» կազմակերպությունն ավելի կայացած լիներ և լայն ֆինանսական հնարավորություններ առաջարկեր Հայաստանին, մենք կորոշեինք միանալ այդ կառույցին: Հստակ պետք է բացատրվի, որ Եվրամիությունը Եվրոպայի հոգևոր-մշակութային ժառանգության վրա հիմնված միություն է, նախևառաջ արժեքների միություն: Եվրոպայի հարցը Հայաստանի համար վերաբերմունքի, ինքնության, աշխարհում մեր ունեցած դիրքի և մեզ ինչպիսին տեսնելու հարց է: Զուգահեռ անհրաժեշտ է տեղեկատվական լայն քարոզարշավ սկսել Եվրոպայի, Եվրոպական արժեքների մասին: Ճիշտ մատուցված տեղեկությունը բավական մեծ դեր է խաղում մարդկանց մտածողության փոփոխության հարցում: Հասարակ քաղաքացին համապատասխան տեղեկություններ չունի Եվրոպայի, Եվրոպական արժեքների և եվրախնտեզրման մասին (այս խնդիրն առավել արդիական է մարզերում), իսկ ունեցածն էլ հաճախ խեղաթյուրված է: Այս ամենի հետևանքով ունենք սխալ պատկերացումների մի ամբողջ համակարգ:

Բերենք մի քանի օրինակ: Տարածված պատկերացում կա, թե իբր եվրոպական ինտեզրման արդյունքում հայկական արժեքները և ավանդույթները կկորսվեն, ազգային ինքնությունը հարցականի տակ կդրվի: Սա սկզբունքային հարց է հայերի համար, քանի որ դարերի ընթացքում պայքար ենք մղել մեր էթնիկ և մշակութային ինքնությունը պահպանելու համար, և ոչ մի քաղաքական կամ տնտեսական առավելություն չի ստիպի մեզ միանալ մի միության, որն այս կամ այն չափով կասկածի տակ կդնի ազգային ինքնությունը: Այս առումով պարզապես պետք է հիշել Եվրամիության ճարտարապետների կարգախոսը՝ «Միություն բազմազանության մեջ»: Շառլ դը Գոլը նկատել է, որ Միավորված Եվրոպան կարող է լինել միայն ազգային պետությունների Եվրոպա: Իրականում Եվրամիությունն ավելի փոքր ազգերին հնարավորություն է ընձեռում պահպանելու իրենց ինքնությունը և բարգավաճելու, ինչի վառ օրինակ կարող են ծառայել կատալոնցիները, բերտոնցիները, վալիացիները, որոնք նույնիսկ սեփական ազգային պետություն չունեն:

Տարածված է նաև այն մտավախությունը, թե եվրախնտեզրման արդյունքում Հայաստանը կկորցնի իր ինքնիշխանությունը: Ներկա գլոբալացվող աշխարհում առնվազն անիմաստ է խոսել պետական ինքնիշխանության մասին՝ իր դասա-

կան սահմանման իմաստով, բացի այդ, փոքր պետությունների ինքնիշխանությունը միշտ էլ սահմանափակ է եղել մեծ տերություններից կախվածության պատճառով: Նույնիսկ Մեծ Բրիտանիայի պես պահպանողական և դարերով «փայլուն մեկուսացվածության» քաղաքականություն վարող պետությունը, անդամակցելով ԵՄ-ին, զիջել է իր ինքնիշխանության որոշ մասը՝ լավ հասկանալով, որ դա է պահանջում Եվրոպայում համընդհանուր անվտանգության և բարեկցության հաստատման նպատակը:

Մարդկանց հուզող այս և բազմաթիվ այլ հարցեր պետք է տարբեր հասարակական քննարկումների, հանդիպումների, հեռուստատեսային հաղորդումների միջոցով հասանելի դարձնել հասարակության լայն շրջաններին:

Հարց է ծագում, թե ով պետք է զբաղվի այս ամենի նախագծմամբ, համակարգմամբ, իրականացմամբ: Եվրախնտեզրման նախագծի նախաձեռնողը և իրականացնողը կառավարությունն է, և տրամաբանական կլիներ, որ նա էլ զբաղվեր այս կարևոր հարցերի լուծմամբ: Սակայն տարիների ընթացքում եվրախնտեզրման գործընթացում իշխանությունների ցուցաբերած վարքագծի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս գործողությունները կառավարության կողմից նախաձեռնվելու դեպքում կունենանք անլուրջ մոտեցում և կիսատ-պռատ գործեր: Պատճառն այն է, որ եվրոպական կառավարման համակարգը ենթադրում է կառավարող էլիտաների փոփոխելիություն ազատ և արդար ընտրությունների միջոցով, հետևաբար եվրոպական խաղի կանոնների ընդունումը կարող է վտանգել կառավարող վերնախավի իշխանությունը և խանգարել վերարտադրմանը: Հայաստանում ստեղծվել է մի համակարգ, որը կարողանում է դեպի եվրոպական չափանիշներ ունեցած նվազագույն առաջընթացի դիմաց Եվրոպայից ստանալ հնարավորինս շատ ֆինանսական և ինստիտուցիոնալ ռեսուրսներ: Ստեղծված համակարգը արտաքննապես ընդունում է բարեփոխումները, ներդնում է համապատասխան ինստիտուտները և օրենսդրությունը, սակայն իրականում դրանք երկրում որևէ էական ազդեցություն չեն ունենում և չեն իրականացվում: Այս ամենը հնարավորություն է տալիս խոսելու տեղի ունեցող եվրաբարեփոխումների «իմիտացիոն» բնույթի մասին:

Ետևաբար, կարծում ենք, Հայաստանում եվրախնտեզրման գործընթացում կարևոր դեր պետք է կատարի կազմակերպված քաղաքացիական հասարակությունը. նրա ակտիվ գործունեության շնորհիվ, «ներքևից վերև» ճնշման միջոցով հնարավոր կլինի սայլը տեղից շարժել: Մեր երկրում բարեփոխումների կարելի է հասնել միայն իշխանությունների վրա անընդհատ ճնշում գործադրելով, որպեսզի նրանք կատարեն իրենց աշխատանքը: Մինչև հիմա եվրակառույցները հիմնականում աշխատել են կառավարության հետ (պատճառը հավանաբար այն է, որ ի սկզբանե ԵՄ-ն ավելի շուտ քաղաքական վերնախավերի, ոչ թե հասարակությունների դաշինք է): Քաղաքացիական հասարակության ինստիտուտները պետք է կարողանան ակտիվ լրբբինգ անել և հասնել նրան, որ եվրակառույցները շատ ավելի մեծ ուշադրություն դարձնեն իրենց հետ գործակցությանը

և գործընթացներում իրենց ներգրավվածությանը: Նշենք, որ այս հարցում մենք զգալի առաջընթաց ունենք, քանի որ համեմատաբար վերջերս մեկնարկած «Արևելյան գործընկերության» շրջանակներում ինստիտուցիոնալ մակարդակով լուրջ դերակատարություն է վերապահվում քաղաքացիական հասարակության մասնակցությանը, և արդեն ձևավորվել է քաղաքացիական հասարակության Ազգային պատֆորմ, որտեղ քաղաքացիական կազմակերպությունները, գործելով չորս աշխատանքային խմբերով (Ժողովրդավարության և մարդու իրավունքների, բնապահպանական և էներգետիկ անվտանգության, տնտեսական ինտեգրացիայի, միջանձնային շփումների)՝ պետք է ներկայացնեն Եվրամիության և տվյալ գործընկեր երկրի միջև գործակցության առաջարկներ: Բացի այդ, այս ձևաչափի շնորհիվ քաղաքացիական հասարակության տարբեր խմբեր կարող են արտահայտել իրենց տեսակետները տարբեր իրադարձությունների, երկրի տարբեր զարգացումների վերաբերյալ, իրենց առաջարկները և դիտողությունները ներկայացնել կառավարությանը՝ միտված Ժողովրդավարական բարեփոխումների առաջընթացին: Ժամանակի ընթացքում, երբ երկիրն անշրջելիորեն կգնա դեպի ԵՄ անդամակցություն, կարևոր կլինի հասարակության և վերնախավի կոնսենսուսի վրա հիմնված երկարաժամկետ հեռանկարով ազգային ռազմավարության ստեղծումը, որը հաշվի կառնի այս հարցում Հայաստանի ուժեղ և թույլ կողմերը: Այսօրվա դրությամբ ուժեղ կողմերն են.

- մեծաթիվ եվրոպական Սփյուռքի առկայությունը,
- ԵՄ առաջատար պետությունների հետ լավ հարաբերությունները,
- եվրոպական քաղաքակրթության մաս կազմելը,
- ԵՄ համար կենսականորեն կարևոր տարածաշրջանում գտնվելը,
- Եվրաինտեգրման նկատմամբ դրական վերաբերմունքը:

Թույլ կողմերն են.

- ԵՄ մասին հասարակության իրազեկության ցածր աստիճանը,
- Ռուսաստանից տնտեսական և քաղաքական կախվածությունը,
- Ժողովրդավարական բարեփոխումների դանդաղ ընթացքը,
- Թույլ տնտեսական համակարգը,
- Հարևանի հետ չլուծված կոնֆլիկտի առկայությունը:

Ռազմավարությունը պետք է օգտագործի ուժեղ կողմերը և միջոցներ ձեռնարկի թույլ կողմերը չեզոքացնելու ուղղությամբ: Նրանում սահմանված պետք է լինեն նաև գործընթացի ընձեռած հնարավորությունները, ինչպես նաև հավանական վտանգները:

## **Վերջաբան**

Եվրոպային հասնելու համար մեզ բոլորիս հարկավոր է անցնել երկար ու բարդ ճանապարհ: Շատ կարևոր է հասկանալ, որ դեպի Եվրոպա ենք շարժվում՝ ելնելով մեր իսկ շահերից, կատարելով մեր ինքնուրույն ընտրությունը: Եվրաինտեգրումը

պետք է լինի մեր հասարակության զարգացման ներքին պահանջը: Եվրոպային հնտեգրվելու գործընթացը չպետք է լինի դրսից պարտադրված ինչ-որ մի բան, երբ մեզ ուղղակի ասեն, որ այս պարտավորությունները և գործողությունները պետք է կատարեք, և մենք էլ ստիպված կատարենք: Այսինքն՝ այն օրենքները, որոնք մենք ընդունում ենք, այն գործողությունները, որոնք կատարում ենք, պետք է լինեն մեր գիտակցված ընտրության արդյունք, և պետք է հասկանանք, որ դա անում ենք մեզ համար, ոչ թե եվրոպական կառույցներին հաճոյանալու:

Հայաստանի եվրաճանապարհը երկու ոտքերով եվրոպական արժեքների վրա հենված ամենօրյա ծանր և հետևողական աշխատանքի ճանապարհ է, հանրային նպատակադրման և ձգտումների, ուժերի համախմբման և վերափոխվելու կամքի դրսևորման ճանապարհ, որի ընթացքում պետք է հանդես գանք ոչ թե որպես սպառող, այլ արժանի գործընկերոջ կարգավիճակով մեր ներդրումն ունենանք Եվրամիության կերտման մեջ: Այս գաղափարախոսությամբ առաջնորդվելու դեպքում է միայն հնարավոր Հայաստանի մուտքը անվտանգ և բարեկեցիկ եվրոպական մեծ ընտանիք:

# հնչա՛ն կարող են ԵՄ-ին ինտեգրումը և ԵՄ-ին չանդամակցող երկրների հետ գործընկերության հաստատմանն ուղղված նոր ծրագրերը նպաստել անհանդուրժողականության և խտրականության մարտահրավերների հաղթահարմանը

## ԲԱՐՔՐՈՒ ՄԱԼԿՈՎԱ

*Միջազգային հարաբերությունների բաժնի բակալավրիատի ուսանողուհի,  
Չեխիայի Հանրապետություն*

Անդուրժողականության սկզբունքների հռչակագրում ասվում է, որ հանդուրժողական լինել նշանակում է «ընդունել, հարգել և գնահատել բոլոր մշակույթների, մարդկանց առանձնահատկությունների և արտահայտման ձևերի հարուստ բազմազանությունը» (հոդված 1, կետ 1, Միավորված ազգերի կազմակերպության Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն, 1995 թ.): Նշված հռչակագրի նպատակն է օգնել մարդկանց հասկանալու, որ յուրաքանչյուր ոք ունի իր առանձնահատկությունները, որոնք պետք է հարգել: Բացի այդ, հռչակագրում նշվում է, որ հասարակության որոշակի խմբերի անտեսումը, սոցիալական և քաղաքական կյանքին նրանց մասնակցության սահմանափակումը կամ նրանց նկատմամբ խտրականությունը անհանդուրժողականության դրսևորում է համարվում (հոդված 2, կետ 4, Միավորված ազգերի կազմակերպության Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն, 1995 թ.): Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը դատապարտում է խտրականության բոլոր ձևերը և սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում նշված բոլոր իրավունքներն ու և ազատությունները՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային, դասային և այլ կարգավիճակից» (հոդված 2, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 1948 թ.): Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում «ռասայական խտրականությունը» սահմանվում է որպես «ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որն ունի քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանք ճանաչելու,



օգտագործելու կամ իրականացնելու հնարավորությունը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում է նման հետևանքների» (հոդված 1, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 1965 թ.): Թեև ռասայական խտրականությունը և անհանդուրժողականությունը դատապարտող մի շարք փաստաթղթեր են կազմվել և վավերացվել, այդուհանդերձ, աշխարհի շատ երկրներում տակավին հանդիպում են խտրականության դրսևորումներ:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի կարծիքով, Եվրոպայում հիմնականում հանդուրժողականություն և խաղաղություն է տիրում (Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2009: 7): Այդ կապակցությամբ հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Եվրամիությունը (ԵՄ) մի շարք ծրագրեր է մեկնարկել անդամ պետություններում և արտասահմանում խտրականության դրսևորումների դեմ պայքարելու նպատակով: Այնուամենայնիվ, սխալ կլիներ կարծել, որ անհանդուրժողականությունը և խտրականությունը վերացել են Եվրոպայում: Եվրոպական հանձնաժողովի ստորաբաժանումներից մեկի ղեկավար Բելինդա Փայքը հայտարարել է, որ Եվրամիությունն իր տրամադրության տակ ունի աշխարհի կտրվածքով առավել արդյունավետ օրենքներ՝ բոլոր մարդկանց խտրականության բոլոր ձևերից պաշտպանելու համար (Եվրոպական հանձնաժողով, 2008: 3): Մյուս կողմից՝ հարց է ծագում՝ արդյո՞ք «արդյունավետ օրենքները», առանձին վերցրած, կարող են հիմնովին վերացնել անհանդուրժողականությունը: Օրենսդրական բարեփոխումները կարող են թեթևացնել խտրական վերաբերմունքի արժանացող անձանց վիճակը, սակայն անհանդուրժողականության բուն պատճառները, որպես կանոն, հասարակության մեջ են արմատավորված: Սույն ակնարկում կփորձենք ապացուցել, որ խտրականության և անհանդուրժողականության դրսևորումները կանխելու համար մարդկանց պետք է սովորեցնել հանդուրժողական լինել, ուստի խտրականության և անհանդուրժողականության ներկա մարտահրավերներին արձագանքելու համար պետք է կրթական բարեփոխումներ կատարել: Անհանդուրժողականության դեմ պայքարում Եվրոպական ինտեգրման և ԵՄ-ի նոր ծրագրերի, օրինակ՝ «Արևելյան գործընկերության» դերը որոշելու համար հարկավոր է գտնել այդ սոցիալական երևույթի հիմքում ընկած խնդիրները և դրանք հաղթահարելու միջոցները, ինչպես նաև գնահատել Եվրամիությանը չանդամակցող երկրների հետ գործընկերության հաստատմանն ուղղված նոր ծրագրերի կարողությունները:

Մարդու իրավունքների և ժողովրդավարության զարգացման ոլորտում ԵՄ գործունեության զեկույցի (2008 թ. հուլիս - 2009 թ. դեկտեմբեր) համաձայն՝ «ԵՄ սահմանների ընդլայնման քաղաքականությունը Եվրամիության՝ Եվրոպայում մարդու իրավունքների պաշտպանությանը և խթանմանն ուղղված թերևս առավել արդյունավետ ծրագիրն է»: Նշված կարծիքի հիմքում ընկած է այն փաստարկը, որ Եվրամիությանն անդամակցելու համար պետությունները պետք է ընդունեն ԵՄ օրենսդրությունը և բավարարեն կոպենհագենյան չափանիշները, ուստի և ԵՄ սահ-

մանների ընդլայնումը նպաստում է մարդու իրավունքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորմանը և փոքրամասնությունների պաշտպանությանը (Եվրամիություն, 2010: 9): Թեև ԵՄ սահմանների ընդլայնումը կարող է խտրականության դեմ ուղղված օրենքների ընդունումը խրախուսող միջոց համարվել, այդուհանդերձ, աշխարհագրական տեսանկյունից այդ միջոցի կիրառումը սահմանափակ է: Այդ իսկ պատճառով Եվրամիությունը շատ է կարևորում քաղաքական երկխոսությունը որպես ԵՄ-ին չանդամակցող երկրներում մարդու իրավունքների նկատմամբ հարգալից վերաբերմունք խթանող միջոց (2010: 10): Հարավային Կովկասի տարածաշրջանում Եվրամիությունը ԵՄ-Հայաստան, ԵՄ-Ադրբեջան և ԵՄ-Վրաստան համագործակցության կոմիտեների և համագործակցության խորհուրդների միջոցով Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի հետ քաղաքական երկխոսություն է հաստատել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Բացի այդ, Եվրամիությունը նպաստել է մարդու իրավունքների ոլորտում Հայաստանի և Վրաստանի միջև քաղաքական երկխոսության հաստատմանը (Եվրամիություն, 2010: 110): Եվրոպական հարևանության ծրագրի մասնակից երկրներում մարդու իրավունքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորման գործում մեծ դեր են կատարել Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) գործողությունների ծրագրերը: Եվրամիությունը հանդգլած է, որ նշված գործողությունների պլանները կնպաստեն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանն ուղղված օրենքների լրամշակմանը (Եվրամիություն, 2010: 27): ԵՀՔ գործողությունների պլանները վավերացրած մասնակից պետությունները պարտավորվել են պայքարել անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի դեմ (Եվրամիություն, 2010: 81): Այդուհանդերձ, նշված գործողությունների պլանների արդյունավետության աստիճանը կասկածներ է հարուցում: Ուկրաինայում Եվրոպական ծրագրի շրջանակներում միջազգային վերածննդի հիմնադրամի գրասենյակի գլխավոր տնօրեն Դմիտրո Շուլցայի կարծիքով. «Արևելյան գործընկերություն» ծրագրի ներմուծումը կարելի է դիտարկել որպես գործընկեր երկրներում բարեփոխումներ կատարելու հարցում Եվրոպական հարևանության քաղաքականության ձախողման անուղղակի ընդունում (Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2009: 19): Ռալֆևի հանդամամբ Հարավային Կովկասի տարածաշրջանի ժողովրդավարականացմանը միտված ծրագրերի անարդյունավետության պատճառը խրախուսական միջոցների և «Եվրամիությանն անդամակցելու հեռանկարների» բացակայությունն է (Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2009: 40): Ակնհայտ է, որ Եվրոպական հարևանության ծրագրի մասնակից երկրներում մարդու իրավունքների պաշտպանությունը խրախուսելու նկատառումով Եվրամիությունը փորձել է նպաստել այդ երկրներում օրենսդրական բարեփոխումների անցկացմանը, սակայն այդ երկրները նման բարեփոխումներ անցկացնելու համար թերևս որևէ խթան չեն ունեցել, քանի որ Եվրամիությանն անդամակցելու ուղղակի առաջարկ չեն ստացել:

Ինքնընտանիքային հասկանալի է, որ խտրականությունը վերացնելու համար խոցելի խմբերի իրավունքները պետք է պաշտպանված լինեն օրենքով, սակայն հարկավոր է պարզել նման օրենքների արդյունավետության աստիճանը: «Ռասայական և տնտեսական խտրականության վերացում. արդի քաղաքականության հետևանքները» զեկույցում նշվում է, որ «միայն օրենսդրական բարեփոխումների միջոցով անհնար է վերացնել խնդրի հիմքում ընկած պատճառները» (Արչեր և այլք, 2001: 1): Ձեկույցում անհանդուրժողականության մի քանի պատճառ է առանձնացվում: Այսպես, համապատասխան օրենքների բացակայության հետ մեկտեղ որոշումների կայացման գործընթացին խտրականության ենթակա խմբերի ներկայացուցիչների թվի սահմանափակումը, ինչպես նաև ընդունված չափանիշները բավարարող կրթություն ստանալու, բժշկական ծառայություններից օգտվելու և կացարան ունենալու հնարավորության բացակայությունը նույնպես հանգեցնում են հասարակության տարբեր խմբերի միջև անհավասարության և խտրականության խորացման (Արչեր և այլք, 2001: 25-27): Ձեկույցի համաձայն՝ «Հույժ կարևոր է պայմաններ ստեղծել, որպեսզի նման խմբերը ներկայացված լինեն պետական հաստատություններում, ներկայացուցիչները հաշվետու լինեն իրենց լիազորած համայնքներին և ի վիճակի լինեն արդյունավետորեն ներկայացնելու նրանց շահերը» (Արչեր և այլք, 2001: 25): Բացի այդ, խտրականությունը վերացնելու համար պետք է ներդրումներ անել կրթության և առողջապահության ոլորտներում և բարելավել խտրական վերաբերմունքի արժանացած խմբերի կենսապայմանները: Հարկ է կարևորել այն հանգամանքը, որ նախքան Եվրամիությանն անդամակցելը «Արևելյան գործընկերություն» ծրագրի մասնակից երկրներին ֆինանսական օգնություն է հատկացվում փոքրամասնություն կազմող խմբերի կենսապայմանների բարելավմանն ուղղված անհրաժեշտ քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ անցկացնելու համար: Ֆինանսական աջակցության մյուս նպատակը գործընկեր երկրների կրթական համակարգը բարեփոխելու միջոցով խտրական վերաբերմունքի արժանացած անձանց տվյալ երկրի հասարակությանն ինտեգրման նպաստելն է (Եվրամիություն, 2010: 82): Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնության ծրագրի (EIDHR) միջոցով Եվրամիությունն աջակցում է քաղաքացիական հասարակության կազմակերպություններին խտրականության դեմ պայքարելու և փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց և տղամարդկանց համար սոցիալական, տնտեսական և քաղաքական ոլորտներում հավասար հնարավորություններ ստեղծելու գործում (Եվրամիություն, 2010: 83): Հարկ է նշել, որ Եվրամիությունը ներդրումներ է կատարում գործընկեր երկրներում խտրականությանը հանգեցնող ինստիտուցիոնալ արգելքները վերացնելու համար:

Անհանդուրժողականության մեկ այլ աղբյուր են համարվում հասարակությունում տարածված մոտեցումներն ու ընկալումները (Արչեր և այլք, 2001: 28): «Ռասայական և տնտեսական խտրականության վերացում. արդի քաղաքականության հետևանքները» զեկույցի համաձայն՝ «ռասայական խտրականության

տարածման և մնայուն ազդեցության հիմքում ընկած է հասարակական վերաբերմունքը և դրա սերնդեսերունդ փոխանցումը (Արչեր և այլք, 2001: 1)»: Իրավական պատժամիջոցները կարող են նվազեցնել անհանդուրժողականության դրսևորումների թիվը, սակայն անզոր են փոխել հասարակական կարծիքը: Ուստի, մարդկանց խտրականությունից պաշտպանելու համար արդյունավետ օրենքներ ընդունելու հետ մեկտեղ Եվրամիությունը պետք է նաև մշակի այնպիսի ռազմավարություններ, որոնք հասարակությունը կազատեն անհանդուրժողականության դրսևորումներից և կկանխեն դրա փոխանցումը հաջորդ սերունդներին: Ձեկույցում ասվում է, որ անհանդուրժողականությունն արմատախիլ անելու համար անհրաժեշտ է կրթության միջոցով հանդուրժողականություն տարածել: Հանդուրժողականության սկզբունքների հռչակագրի համաձայն՝ «անհանդուրժողականությունը կանխելու առավել արդյունավետ միջոցը կրթությունն է» (հոդված 4, կետ 1, Միավորված ազգերի կազմակերպության Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն, 1995 թ.): Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ասվում է, որ կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատականության լիակատար զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի խորացմանը: Կրթությունը պետք է նպաստի բոլոր ժողովուրդների, ռասայական և կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանը և բարեկամությանը և աջակցի Միավորված ազգերի՝ խաղաղության պահպանմանն ուղղված գործունեությանը (հոդված 26, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 1948 թ.):

Կրթության նշանակությունը կարևորվում է նաև «Ռասայական և տնտեսական խտրականության վերացում. արդի քաղաքականության հետևանքները» գեկույցում և պետական ու այլ ինստիտուտներին խորհուրդ է տրվում այնպիսի կրթական ծրագրեր իրականացնել, որոնք կնպաստեն ռասիստական կամ խտրական վերաբերմունքի վերացմանը (Արչեր և այլք, 2001: 28): Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայում նույնպես ասվում է, որ պետությունները պարտավորվում են կրթության միջոցով պայքարել ռասայական խտրականության հանգեցնող նախապաշարմունքների դեմ և խրախուսել փոխըմբռնումը և հանդուրժողականությունը (հոդված 7, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 1965 թ.): Թեև խտրականությունը կանխելու գործում կրթության դերը շատերն են ընդունել, սակայն հանդուրժողականության հաստատման համար անհրաժեշտ կրթական ծրագրեր մշակելու ուղղությամբ շատ քիչ քայլեր են ձեռնարկվել: Եվրամիությունը գերազանցիկ ուսանողներին հնարավորություն է ընձեռել մարդու իրավունքների և ժողովրդավարականացման ոլորտում մագիստրոսի կրթական ծրագրերով սովորելու Վենետիկում, Պրետորիայում, Սարայևոյում, Սիդնեյում և Բուենոս Այրեսում (Եվրոպական հանձնաժողով, 2010: 16): Այդուհանդերձ, այս նախաձեռնությունը հավանաբար շատ քիչ շահառուների համար է նախատեսված, մինչդեռ մարդու իրավունքների և հանդուրժողականության մասին

ընդհանուր կրթությունը պետք է մատչելի լինի բոլոր երիտասարդներին ուսումնառության սկզբնական փուլում: Այդ կապակցությամբ կարելի է օրինակ բերել Շվեդիայում մեկնարկած «Equality in Reality» («Իրական հավասարություն») ծրագիրը, որի հիմնական նպատակն է բարձրացնել անխտրականության սկզբունքների և մարդու իրավունքների վերաբերյալ աշակերտների, ուսուցիչների և լայն հանրության իրազեկության մակարդակը: Ուսուցիչներին «խտրականություն ենթադրող երկընտրանք» երևույթը բնութագրող տեղեկատվական նյութեր են բաժանել և հորդորել աշակերտների հետ քննարկել այդ հարցերը: Ակնկալվում է, որ այդ նյութերի հիման վրա ուսուցիչների և 13-19 տարեկան երիտասարդների միջև համակողմանի քննարկումներ կծավալվեն (Եվրոպական հանձնաժողով, 2008: 20): Նշված ծրագիրը նախատեսվում է սկսել բոլոր ԵՄ անդամ պետություններում և այլ երկրներում Եվրոպական ինգոնգրման միջոցով:

Եթե երիտասարդներն ուսումնասիրեն նաև այլ ժողովուրդների պատմությունն ու մշակույթը, կրթությունը կարող է նպաստել նաև միջազգային հանդուրժողականության հաստատմանը: Քուլին ընդգծում է, որ ԵՄ անդամ պետությունների քաղաքացիների մեծ մասն Արևելյան գործընկերության ծրագրի մասնակից երկրների մասին որևէ գիտելիքներ չունի: Նրա կարծիքով պետք է փոխվի Եվրոպայի պատմության դասավանդման կարգը: Ազգային առանձնահատկության և պատմական անցքերի փոխարեն պետք է շեշտադրել ընդհանուր արժեքներն ու պատմական անցքերը (Coulie, 2009թ.: 59- 60): Երիտասարդները կարող են ծանոթանալ այլ մշակույթներին փոխանակման ծրագրերի միջոցով: Սակայն շատ կարևոր է, որ այդ ծրագրերը լայնատարած լինեն, ուսանողները մեկնեն տարբեր երկրներ, ոչ միայն Արևմտյան Եվրոպա, ինչպես մեր ժամանակներում է ընդունված: Եթե ուսանողների փոխանակման ծրագրերը միտված են փոխըմբռնման հաստատմանը, ապա Արևմտյան Եվրոպայի երկրներում բնակվող ուսանողներին պետք է հորդորել մասնակցել Արևելյան Եվրոպայի համալսարանների փոխանակման ծրագրերին: Եվրոպական հանձնաժողովի համաձայն՝ ուսանողների փոխանակման ծրագրերը և Եվրոպայի ընդհանուր պատմության դասավանդումը կարող է խտրականության և անհանդուրժողականության դեմ պայքարելու արդյունավետ միջոց դառնա:

ԵՄ-ին Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Բելառուսի ինտեգրման խորացմանը մեծապես նպաստել է Արևելյան գործընկերության ծրագիրը (Օստապենկո, 2009 թ.): Իզնատավիչիուսի կարծիքով, Արևելյան գործընկերության ծրագիրն արտացոլում է նշված երկրների՝ Եվրամիությանն ինտեգրվելու շահը և Եվրամիության՝ իր արևելյան սահմաններում կայունություն և տնտեսական զարգացում ապահովելու շահը (Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2009: 15): Արևելյան գործընկերության ծրագիրը միտված է ազատ առևտրի գոտու ստեղծմանը, իսկ որպես հեռահար նպատակ՝ մուտքի արտոնագրի տրամադրման ընթացակարգերի ազատականացմանը և էներգետիկ անվտանգության ոլորտում համագործակցությանը: Առաջին հայացքից կարող է թվալ,

որ Արևելյան գործընկերության ծրագիրն ուղղված է միայն մուտքի արտոնագրի տրամադրման ընթացակարգերի և առևտրի ազատականացմանը, սակայն դա այդպես չէ: Իգնատավիչիուը շեշտել է, որ ԵՄ նշված ծրագիրը հորդորում է գործընկեր երկրներին ընդունել Եվրոպական սկզբունքները, օրինակ՝ ժողովրդավարությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը (Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2009: 17): Հարկ է հաշվի առնել այն փաստը, որ Արևելյան գործընկերությունը նաև ուսանողների փոխանակման ծրագրեր է ընդգրկում (Օստապենկո, 2009թ.):

Արևելյան գործընկերությունը կարող է կարևոր դեր ունենալ կրթական բարեփոխումները խրախուսելու գործում: Քուլին կարծում է, որ «մինչ այժմ կրթական բարեփոխումները հաջորդել են անդամակցությանը, այսինքն՝ տվյալ երկիրը պետք է նախ անդամակցի Եվրամիությանը, իսկ հետո միայն ԵՄ-ի հետ քննարկի կրթությանն առնչվող հարցերը» (Քուլի, 2009: 61): Նրա կարծիքով, նման հարցերը պետք է քննարկվեն Եվրամիությանն անդամակցելուց առաջ, որպեսզի «անդամակցությանը հաջորդող համագործակցությունը փոխըմբռնման վրա հիմնվի» (Քուլի, 2009: 61): Ակնհայտ է, որ Արևելյան գործընկերության ծրագրի օրակարգի առանցքում են հայտնվել տնտեսական և քաղաքական հարցերը, այդուհանդերձ, երկու կողմերն էլ պետք է երաշխավորեն, որ չանտեսվեն կրթության, ուսանողների փոխանակման ծրագրերին և այլ ոլորտներին առնչվող հարցերը, որոնք կարող են կարևոր դեր խաղալ խտրականության և անհանդուրժողականության մարտահրավերներին դիմադրելու գործում:

Շատերն են դատապարտում խտրականության դրսևորումները, սակայն դա չի նշանակում, որ անհանդուրժողականության խնդիրը կարող է լուծված համարվել: Մեծ տարածում է գտել այն տեսակետը, որ Եվրոպայում տիրում է հանդուրժողականություն, իսկ մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները պաշտպանված են օրենքով: Ուստի Եվրամիության սահմանների ընդլայնումը մարդու իրավունքները պաշտպանելու և դրանց նկատմամբ հարգալից վերաբերմունք ձևավորելու գործում արդյունավետ միջոց է համարվում: Եվրամիությունը փորձում է նաև քաղաքական երկխոսություն ծավալելու և սոցիալական անհավասարության վերացմանն ուղղված ծրագրերը ֆինանսավորելու միջոցով խթանել մարդու իրավունքների պաշտպանությունը նաև ԵՄ անդամ չհանդիսացող երկրներում: Այդուհանդերձ, որոշ փաստեր վկայում են, որ քաղաքական երկխոսության արդյունավետության երաշխիքը խթանն է: Կարելի է ասել, որ խտրականության դրսևորման դեմ պայքարում Եվրամիության ամբողջ ներուժը չի սպառվել: Անհանդուրժողականության հիմնական աղբյուրներից մեկը հասարակական կարծիքն է, որը հաճախ է անտեսվում, թեև այն կարելի է փոխել համապատասխան կրթական ծրագրի մշակելու միջոցով: Այսպիսով, անհանդուրժողականության և խտրականության դրսևորումները կարելի է կանխել երկու արդյունավետ միջոցներով: Եվրամիության անդամ պետություններում և Արևելյան գործընկերության մասնակից երկրներում հարկավոր է մարդկային արժանապատվության

և հանդուրժողականության դասընթաց ներմուծել: Բացի այդ, պատմության դասերի ընթացքում ազգային առանձնահատկությունները շեշտադրելու փոխարեն հարկավոր է ներկայացնել այլ երկրների պատմությունը և ընդհանուր պատմական անցքերը: Ավելին, երիտասարդներին տարբեր մշակույթներին ծանոթացնելու համար նրանց պետք է խրախուսել մասնակցել ուսանողների փոխանակման ծրագրերին: Նման միջոցառումները կարող են նպաստել փոխըմբռնմանը և հանդուրժողականությանը: Հարկ է հասկանալ, որ եվրոպական ինտեգրումը ոչ միայն միջպետական համագործակցության ձև է, այլև՝ տարբեր ժողովուրդներին համախմբելու միջոց: Թեև Եվրամիության և Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի մասնակից երկրների կառավարությունների բանակցություններն առանցքային նշանակություն ունեն, սակայն Եվրամիությունը և գործընկեր երկրները պետք է ապահովեն նաև իրենց ժողովուրդների անմիջական հաղորդակցումը: Արևելյան գործընկերության ծրագիրը կարող է միմյանց ավելի լավ ճանաչելու հնարավորության վերածվել:

## **Գրականություն**

1. Archer, Robert; Mohamedou, Mohammad-Mahmoud; International Council on Human Rights Policy (2001) Racial and Economic Exclusion: Policy Implications, International Council on Human Rights Policy, Versoix, Switzerland, available at: [http://www.ichrp.org/files/reports/23/113\\_report\\_en.pdf](http://www.ichrp.org/files/reports/23/113_report_en.pdf) [accessed 13 July 2010]
2. Coulie B., "Armenia and the EU: Challenges and Opportunities for Both Parts" in International Centre for Human Development, Eastern Partnership: The Next Stage in European Integration? International Conference, October 29- 30, 2009, Yerevan, Armenia
3. European Commission, (2008) Communicating Equality and non-discrimination in the European union, Luxembourg: Office for Official Publications of the European Communities, available at: [http://ec.europa.eu/employment\\_social/fdad/cms/stopdiscrimination/resources/eu\\_publications/?langid=en](http://ec.europa.eu/employment_social/fdad/cms/stopdiscrimination/resources/eu_publications/?langid=en) [accessed 12 July]
4. European Union (2010) Human rights and democracy in the world: Report on EU action, July 2008 to December 2009, available at: [http://ec.europa.eu/external\\_relations/human\\_rights/docs/hr\\_report\\_2010\\_en.pdf](http://ec.europa.eu/external_relations/human_rights/docs/hr_report_2010_en.pdf) [accessed 13 July 2010]
5. International Centre for Human Development, Eastern Partnership: The Next Stage in European Integration? International Conference, October 29- 30, 2009, Yerevan, Armenia

6. Ostapenko E. "European Union - Eastern Partnership Pa Enhances Ties with EU Eastern Partners: European Parliament Representative", Trend News, Thursday 21 May 2009, available at: <http://en.trend.az/news/important/exclusive/1473610.html> [accessed 14 July 2010]
7. UN General Assembly, International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination, 21 December 1965, United Nations, Treaty Series, vol. 660, p. 195, available at: <http://www.unhcr.org/refworld/docid/3ae6b3940.html> [accessed 12 July 2010]
8. UN General Assembly, Universal Declaration of Human Rights, 10 December 1948, 217 A (III), available at: <http://www.unhcr.org/refworld/docid/3ae6b3712c.html> [accessed 12 July 2010]
9. United Nations Educational, Scientific and Cultural Organization, Declaration of Principles on Tolerance, 16 November 1995, available at: [http://portal.unesco.org/en/ev.php-URL\\_ID=13175&URL\\_DO=DO\\_TOPIC&URL\\_SECTION=201.html](http://portal.unesco.org/en/ev.php-URL_ID=13175&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html) [accessed 12 July 2010].



# «Արևելյան գործընկերություն». մարտահրավերներ, հեռանկարներ

## ԼԻԱՆ ԱՂԱԲԵԿՅԱՆ

«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» 34  
Հայաստան

Եվրոպական Միության ընդլայնումից հետո նոր հարևանների կայունության, տնտեսական զարգացման, ինչպես նաև խաղաղության և անվտանգության ապահովման խնդիրները հատուկ կարևորություն ստացան ԵՄ համար, քանի որ այս երկրներում անկայունությունը էներգետիկ, հաղորդակցության և այլ ոլորտներում, սոցիալական վատ վիճակը, ժողովրդավարական արժեքների բացակայությունն ու մարդու իրավունքների խախտումները դեպի Եվրամիության անդամ երկրներ միգրացիոն հոսքերի պատճառ են դառնում: Բացի այդ, հարևան տարածաշրջանի ճգնաժամերն ու պատերազմները բացասաբար են ազդում ԵՄ տնտեսության վրա, քանի որ, պատերազմի բազմաթիվ բացասական հետևանքներից բացի, ԵՄ-ն ստիպված է լինում հսկայական գումարներ հատկացնել ավերված երկրների վերականգնման համար:

Այս մարտահրավերներին դիմակայելու համար 2008 թ. Լեհաստանն ու Շվեդիան առաջարկեցին «Արևելյան գործընկերության» (ԱԳ) ծրագիրը, որը հաստատվեց 2009 թ. և ուղղված է հետխորհրդային վեց երկրների (Բելառուս, Ուկրաինա, Մոլդովա, Հայաստան, Վրաստան և Ադրբեջան) հետ Եվրամիության հարաբերությունների ամրապնդմանն ու զարգացմանը:

Նախատեսվում է նախաձեռնությունն իրականացնել մի քանի ռազմավարական ուղղություններով՝ ժողովրդավարության, արդյունավետ կառավարման և կայունության, տնտեսական ինտեգրման և ԵՄ քաղաքականություններին համապատասխանեցման, էներգետիկ անվտանգության, ինչպես նաև մարդկանց միջև կապերի ձևավորման, որոնք կնպաստեն գործընկեր երկրների բարեփոխումների իրականացմանը<sup>1</sup>: Այլ կերպ ասած՝ Եվրամիության արևելյան սահմանի կայունության և անվտանգության մակարդակի բարձրացումը միտված է իրականացնելու քաղաքական ասիմիլյացիայի և տնտեսական ինտեգրման միջոցով:

ԵՄ-ն հայտարարել է, որ այս ծրագրի միջոցով նպատակադրվել է իր սահմանները դարձնել համագործակցության և բարգավաճման գոտի, ոչ թե անջրպետ հարուստ և աղքատ Եվրոպայի միջև: Նախատեսվում է ազատ առևտրի գոտի ստեղծել ԱԳ երկրների և ԵՄ միջև, մուտք ստանալ դեպի նրանց էներգետիկ ռե-

<sup>1</sup> <http://www.mineconomy.am/am/94/>

սուրսները և սկսել դրանց իրացումը, իսկ հաղորդակցության խնդիրները լուծելու համար կաահմանվի վիզայի ազատ ռեժիմ: Սակայն այս վեց երկրների մի մասին հրապարտում է ոչ միայն ազատ առևտրի և ազատ տեղաշարժի հեռանկարը, այլև իրական ժողովրդավարական առաջընթացը: Եվրամիությունը դիտվում է որպես խոստումնալից այլընտրանք զարգացման այլ ուղիներին: ԱԳ անդամ երկրներից շատերում առկա ներքաղաքական ճգնաժամն էլ վկայում է, որ հետխորհրդային երկրների քաղաքացիներն ուզում են ավելին, քան տնտեսական բարեկեցությունն է, և այս հարցում մեծ հույսեր են կապում հենց Եվրոպայի հետ:

Սահմանների անվտանգության, կայունության ապահովմանն ուղղված այս նախաձեռնությունը հղացվել է ռուս-վրացական պատերազմից ավելի վաղ, սակայն վրացական օգոստոսյան իրադարձությունները և պարբերաբար կրկնվող ռուս-ուկրաինական ճգնաժամերը՝ կապված գազի մատակարարման հետ, խթան դարձան ԱԳ ծրագիրն ավելի արագ մշակելու և կյանքի կոչելու համար:

ԱԳ ծրագրով ԵՄ-ն հետապնդում է նաև էներգետիկ անվտանգության ապահովման նպատակ: Բրյուսելում հույս ունեն, որ Հարավային Կովկասի երկրների օգնությամբ հնարավոր կլինի Կենտրոնական Ասիայից այլընտրանքային նավթամուղներ և գազամուղներ անցկացնել դեպի Եվրոպա: Եվրամիությունը հստակ գիտակցում է (ընդ որում՝ ոչ միայն Վրաստանի և Ռուսաստան-Ուկրաինա գազային ճգնաժամերի պատճառով), որ Եվրոպայում անվտանգությունն ու բարեկեցությունը կախված են նաև հարևան երկրների կայունությունից: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա նրա մեկուսացման խնդիրը պետք է մտահոգի ոչ միայն իրեն, այլև Եվրոպային՝ իր իսկ անվտանգության տեսանկյունից: Մյուս կողմից՝ Եվրամիության հետ Հայաստանի հարաբերություններն ապացուցում են, որ ԵՄ-ն համաձայն չէ և չի ընդունում Ադրբեյջանի հայտարարություններն այն մասին, որ Հայաստանն ագրեսոր երկիր է դարաբաղյան հակամարտության համատեքստում: Ավելին, վիզաների հեշտացման, ազատ առևտրի գոտի ստեղծելու և կովկասյան տարածաշրջանում Եվրոպական ներդրումների շնորհիվ ԵՄ-ն ավելի հետևողական կլինի դարաբաղյան հակամարտության կարգավորման, ինչպես նաև հնարավոր պատերազմները կանխելու հարցում:

Այսօր Եվրոպայի համար լուրջ մարտահրավեր է նաև տնտեսական ճգնաժամը: Այդ իսկ պատճառով ԵՄ-ի ներսում կան ծրագրի հակառակորդներ, և նրանց դիմադրությունը հավանաբար ապագայում կխոչընդոտի «Արևելյան գործընկերության» ծրագրի լիարժեք իրականացումը: ԱԳ նախագիծը առաջարկվել էր տնտեսական ճգնաժամից առաջ, իսկ ճգնաժամն սկսվելուց հետո արդեն ուշ էր ծրագրից հրաժարվել: Իսկ մի շարք ԵՄ երկրներ էլ խուսափում են նախագծի այս վեց երկրներին «Եվրոպական» անվանել, քանի որ դա նրանց հետագայում անդամակցության հայտ ներկայացնելու հիմք կտա, որին պատրաստ չեն: Մյուս կողմից՝ ԱԳ երկրների զարգացման ծրագրերը կնպաստեն այս երկրներում կենսական պայմանների բարելավմանը և կարող են նվազեցնել միգրացիոն հոսքերը դեպի ԵՄ, որը, բացի ֆինանսական դժվարություններից, առաջացնում է նաև այլ

խնդիրներ, ինչպես, օրինակ՝ միգրանտների ինտեգրման հետ կապված բարդությունները, տեղացիների անբարյացակամությունը նորեկների նկատմամբ, այլատյացությունը, հանցագործությունները և այլն:

Բացի վերոնշյալից, «Արևելյան գործընկերություն» ուրիշ խոչընդոտներ ու թերություններ էլ ունի: Նախ՝ Եվրամիությունը ծրագրի վերջնական նպատակները դեռևս չի հստակեցրել, բայց միաժամանակ չի ցանկանում հետխորհրդային տարածքի երկրներին դուրս թողնել իր ազդեցության ոլորտից: Գործընկերություն անդամ երկրներին ԵՄ-ին անդամակցելու հեռանկարներ չի առաջարկում, բայց և ֆինանսական ճգնաժամի առաջացրած խնդիրների հետևանքով Բրյուսելն այս տարածաշրջանում իր ազդեցությունը լիարժեք ծավալելու հնարավորություններ չունի: Բացի այդ, նախագծի մասնակից երկրները համակարծիք չեն նախագծին վերաբերող հարցերում: Այսպես, այս երկրներին ոգևորել է առանց վիզայի (կամ հեշտացված ռեժիմով) մուտքը ԵՄ, ու երկրների մի մասը ուշադրությունը սևեռել է այս կետին, որին մի շարք անդամ երկրներ կտրականապես դեմ են: Ինչ վերաբերում է բազմակողմանի հարաբերություններին, ապա կողմերը դրան դեռևս պատրաստ չեն: Գործընկերության շրջանակներում վեց երկրների միջև համագործակցություն և եվրոպական ինտեգրման ուղղությամբ համատեղ գործողություններ չկան: Միայն ԵՄ-ի հետ երկկողմանի հարաբերություններում են (ԵՄ – Հայաստան, ԵՄ- Վրաստան և այլն) նկատելի արդյունավետ համագործակցության տարրեր:

Սկզբում ԱԳ ծրագիրը նախատեսում էր ներառել նաև Ռուսաստանին, որը, սակայն, հրաժարվեց մասնակցությունից: Լեհաստանն առաջարկել է ստեղծել «Արևելյան գործընկերության» ընկերների խումբ, որում կարող են ընդգրկվել դոնոր պետությունները՝ ԱՄՆ-ն, Ճապոնիան, ինչպես նաև կարող են հրավիրել Ռուսաստանին<sup>1</sup>: Իհարկե, ծրագրի նախաձեռնողները պնդում են, թե ԱԳ-ն Ռուսաստանին հակադրվելու նպատակ չունի<sup>2</sup>, այդուհանդերձ անդամ երկրներն այն Ռուսաստանի դեմ որպես լծակ օգտագործելու կամ ԱՄՆ-ի, ԵՄ-ի և Ռուսաստանի միջև խուսանավելու և հավասարակշռությունը պահելու միտումներ են նշմարում: Իսկ Վրաստանի համար Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) կազմից դուրս գալուց և օգոստոսյան պատերազմից հետո ԵՄ-ն մնում է որպես հուսալի գործընկեր և «Արևելյան գործընկերության» պետությունների հետ համագործակցության հարթակ: Բացի այդ, ծրագրի շրջանակներում ԱԳ անդամ երկրների միջև հնարավոր բազմակողմանի համագործակցության արդյունավետության դեպքում ԱՊՀ-ն ինչ-որ չափով կկորցնի իր իմաստը: Հաշվի առնելով Հայաստանի ռազմավարական նպատակները եվրոպական քաղաքական և տնտեսական հարթության վրա՝ կարելի է ասել, որ նրա համար «Արևելյան գործընկերության» ծրագիրը, ինչպես նախկինում ԵՀԲ ծրագրի ընդունումը, սկզբունքորեն կարևոր է, քանի որ կայուն տարածաշրջանային զարգացման հիմք է եթադրում:

1 <http://www.inosmi.ru/europe/20100602/160338259.html>

2 <http://ar.newsarmenia.ru/arm/%009020%2019709.html>

Ինչ վերաբերում է ԵՄ-ին, այն տարածվում է բոլոր չորս կողմերով՝ առանց մտածելու ներքին կայունության և համախմբվածության մասին: Սրա կարիքը, մասնավորապես, զգալի է հունական ճգնաժամից և ավելի վաղ արևելաեվրոպական երկրների ընդգրկվելուց հետո, երբ ներքին ներդաշնակության անհրաժեշտությունն ավելի ակնառու դարձավ: Այսինքն՝ վերոհիշյալ արժեքների համակարգի ձեռքբերման և կիրառման կարիքը զգացվում է հենց ԵՄ ներսում, որն իրականացնելու դեպքում ներքին հզորությունն ինքնըստինքյան կտանի էքսպանսիայի: Մյուս կողմից՝ ԵՄ-ն փորձում է, առանց ժամանակ կորցնելու, իր ազդեցությունը տարածել հարևան տարածաշրջանում: Նույնը կարելի է ասել նաև Ռուսաստանի մասին. ներքին բարեփոխումներ իրականացնելու և ներքին կայունություն ապահովելու փոխարեն Կրեմլն առաջնայնությունը տվել է «երկրորդական» նշանակություն ունեցող հարցերի՝ տպավորություն թողնելով, թե իր գործունեության առաջնային նպատակը հեղինակության բարձրացումն է: Չնայած, ճիշտ է, առաջին հայացքից Կովկասը Ռուսաստանի համար կարող է գլխացավանք թվալ (պատերազմ, ֆինանսների ավելորդ կլանում, ԵՄ և ողջ քաղաքակիրթ աշխարհի հետ վեճեր Կովկասի համար), այդուհանդերձ այս տարածաշրջանը ԵՄ-ի համար Եվրոպայից դեպի Մերձավոր Արևելք Ռուսաստանը շրջանցող ճանապարհ է: Այս տարածաշրջանով են նաև անցնում գործող և ապագայում կառուցվելիք խողովակաշարերը: Սրանով է բացատրվում ԵՄ-ի և Ռուսաստանի հետաքրքրությունը ԱԳ երկրների նկատմամբ:

Ավելին՝ Ռուսաստանին՝ որպես էներգառեսուրսների ամենամեծ արտահանողի, գործընկերության նախաձեռնության իրականացումը սպառնում է այս ոլորտում ազդեցության կորստով: Բացի այդ, Ռուսաստանը հազիվ էր հասցնում հակակշիռ ստեղծել ՆԱՏՕ-ին, իսկ այժմ պետք է քաղաքականություն մշակի ԱԳ-ի ուղղությամբ, քանի որ ԵՄ-ի կողմից Ռուսաստանի հարևանների գրավումը դեպի իրեն լավ բան չի խոստանում Կրեմլին, չնայած նա պնդում է, որ գնում է արդիականացման ճանապարհով և իր հարևանների նման ընթացքն իրեն չի խանգարում: Ինչ վերաբերում է ԱԳ անդամ երկրներին, ապա ակնառու է, որ հետխորհրդային այս երկրների համար ԵՄ-ի հետ հարաբերություններն ինքնանպատակ չեն, ավելի շուտ միջոց՝ լուծելու բազում տնտեսական և քաղաքական խնդիրներ: ԵՄ-ն խոստանում է շուրջ 600 մլն եվրոյի օգնություն ԱԳ-ի անդամ վեց երկրներին՝ «Արևելյան գործընկերության» ծրագիրը այս երկրներում օգտագործելով որպես ներդրումների մեխանիզմ: Այն փաստը, որ օրինակ՝ հարավկովկասյան երկրների արտադրանքը մրցունակ ու պահանջված չէ Եվրոպայում, վկայում է, որ ԵՄ-ի կողմից տարածաշրջանը դիտարկվում է որպես շուկա և ազդեցության տարածման գոտի: Այնուհանդերձ, անցումը ԵՄ-ի հետ առանց վիզայի ռեժիմի համագործակցության, ազատ տնտեսական գոտու ստեղծման, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկ նախագծերի հեռանկարները գրավիչ և խոստումնալից են, որոնց պատշաճ իրականացման դեպքում դրական արդյունք է ակնկալվում:

Այսինքն՝ հենց միայն այն փաստը, որ ԱԳ անդամ երկրներն արդեն հակվում են դեպի Արևմուտք և ոչ թե Արևելք, կարող է Կրեմլին մտորելու տեղիք տալ Եվրոպայում և առհասարակ աշխարհում Ռուսաստանի ունեցած դերի և այն մասին, թե որքանով է ռուսական մոդելը համապատասխանում ժամանակակից աշխարհի զարգացման մոդելի պահանջներին:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, այս սցենարը կարծես ձեռնտու է նրան, քանի որ ԵՄ-ի և Ռուսաստանի միջև տարածաշրջանային հակասություններ առաջանալու դեպքում ԱՄՆ-ն կարող է հանդես գալ միջնորդի, կարգավորողի ու հովանավորողի դերում և որոշ օգուտ քաղել իրավիճակից:

## **Աղբյուրները**

1. <http://www.mineconomy.am/am/94/>
2. <http://www.inosmi.ru/europe/20100602/160338259.html>
3. <http://ar.newsarmenia.ru/arm1/20090203/42019709.html>

# Արևելյան գործընկերության ծրագիր, գործողություններ, ընկալումներ, արձագանքներ

## ԳԱՅԱԼԵ ՄԱՆՎԵԼՅԱԼ

*Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան, Եվրոպագիտության գծով մագիստրոս*

*Յայաստան*

Դեպի արևելք Եվրամիության ընդլայնման արդյունքում հարավկովկասյան երկրները, ինչպես նաև Բելառուսը, Մոլդովան և Ուկրաինան դարձել են ԵՄ հարևանները: Ուստի նշված երկրների կայունությունը, զարգացումը և ժողովրդավարականացումը սերտորեն փոխկապակցված է ԵՄ անվտանգության ապահովման հետ: 2003 թ. Եվրամիությունը սկսել է Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ), որը միտված է նպաստելու Եվրամիությանն ինչ դեպի արևելք և Միջերկրականի ափերին գտնվող երկրներում կայունության և արդյունավետ կառավարման հաստատմանը: Մոլդովայի և Ուկրաինայի հետ մեկտեղ հարավկովկասյան երկրները՝ որպես ԵՄ գործընկերներ, ընդգրկված են ԵՀՔ շրջանակներում: Ի դեպ, Բելառուսը չի ընդգրկվել երկրում առաջացած ժողովրդավարության ճգնաժամի պատճառով: ԵՄ արտաքին քաղաքականությունը, որպես կանոն, այսպես կոչված հստակ հարթությունների է բաժանվում, օրինակ՝ Միջերկրածովյան միություն, Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերություն, Սևծովյան ավազանի երկրների համագործակցություն, ԵՄ քաղաքականության հյուսիսային ուղղություն և Կենտրոնական Ասիայում ԵՄ ռազմավարություն: ԵՄ արտաքին քաղաքականության նշված ուղղությունների շարքում թերևս բացակայել է Լեհաստանի և Շվեդիայի կողմից առաջարկված Արևելյան գործընկերության նախաձեռնությունը, որը ԵՄ անդամ պետությունների արտաքին գործերի նախարարներին է ներկայացվել 2008 թ.: Արևելյան գործընկերության ներկայացումից մեկ ամիս անց այն Եվրոպական խորհուրդի հավանությանն է արժանացել և վերջապես հաստատվել է 2009 թ. մայիսի 7-ին Պրահայում կայացած գագաթնաժողովի ժամանակ: Արևելյան գործընկերության նպատակն է արևելյան վեց հարևանների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ Եվրամիության հարաբերությունները նոր հարթություն տեղափոխել և սերտացնել նշված երկրների երկկողմ և բազմակողմ համագործակցությունը: Համագործակցության հիմնական ոլորտներն են՝ ժողովրդավարությունը, արդյունավետ կառավարումը և կայունությունը, տնտեսական ինտեգրումը և ԵՄ ոլորտային ռազմավարությունների զուգամիտումը (կոնվեր-

գենցիա), էներգետիկ անվտանգությունը և ժողովուրդների միջև շփումների խթանումը: Գործընկերության հիմքում ընկած առանցքային արժեքներն են՝ օրենքի գերակայությունը, ժողովրդավարությունը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը, շուկայական տնտեսությունը, կայուն զարգացումը և արդյունավետ կառավարումը: Արևելյան գործընկերության շրջանակներում Եվրամիությունը գործընկեր երկրներին առաջարկում է ստորագրել Գործընկերության պայմանագրին փոխարինելու եկած Ասոցացման համաձայնագիրը, որը կարգավորելու է առևտրային և արտաքին հարաբերությունները, ԵՄ չափանիշներին յուրաքանչյուր գործընկեր երկրի օրենսդրական դաշտի համապատասխանեցումը և Ինստիտուցիոնալ զարգացման համապարփակ ծրագրի իրականացումը: Արդյունքում երկրները կկարողանան կատարել համապարփակ ազատ առևտրի գոտիների ստեղծմանը, վիզաների տրամադրման ընթացակարգերի պարզեցմանը և մի շարք ոլորտներում տեխնիկական աջակցությանը նպաստող նշված պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Արևելյան գործընկերության ծրագրով նախատեսվում է զարգացնել գործընկեր երկրների հետ երկկողմ հարաբերությունները, որոնց հիման վրա է կազմվելու ԵՄ և նշված երկրներից յուրաքանչյուրի միջև ստորագրվելիք Ասոցացման համաձայնագիրը: Այդ նոր պայմանագիրը կնպաստի համապարփակ ազատ առևտրի գոտիների ստեղծմանը, քաղաքական համագործակցությանը, ազատ տեղաշարժմանը և էներգետիկ անվտանգության ոլորտում համագործակցությանը: Նշված ոլորտը շատ մեծ նշանակություն ունի Եվրամիության համար, ուստի և մեծ ուշադրության է արժանանում նաև գործընկերների հետ բազմակողմ համագործակցության շրջանակներում: Գործընկերները շահագրգռված են Արևելյան գործընկերության ևս մեկ նպատակի իրագործմամբ, այն է՝ վիզաների տրամադրման ընթացակարգերի պարզեցումը, որը ծրագրում սահմանված է որպես տարբեր դեպքերում տարբեր կերպ իրագործվող հեռահար նպատակ, որի նախապայմանն «անվտանգ տեղաշարժման և կարգուկանոնի ապահովումն է»<sup>1</sup>: Բազմակողմ համագործակցությունն ընդգրկում է հետևյալ չորս ոլորտները՝ ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում և կայունություն, տնտեսական ինտեգրում և ԵՄ ոլորտային ռազմավարությունների զուգամիտում, էներգետիկ անվտանգություն և ժողովուրդների միջև շփումների խթանում:

Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ գործընկերներն ավելի են կարևորում Արևելյան գործընկերության շրջանակներում Եվրամիության հետ երկկողմ հարաբերությունների զարգացումը. թեև նախկինում այդ երկրները միավորված էին ԽՍՀՄ-ում, այդուհանդերձ, ներկայումս նրանք տարբեր շահեր են հետապնդում, չհաշված որոշ երկրների միջև առկա տարածքային վեճերը: Այդուհանդերձ, գործընկեր երկրների ենթակառուցվածքների զարգացումը և միջսահմանային ծրագրերը կարող են

1 Պրահայի Արևելյան գործընկերության գազաթնաժողովի համատեղ հոշակագիր, Պրահա, 7 մայիսի, 2009 թ., Բյուրոյել, 7 մայիսի 2009 թ., 8435/09 (Presse 78):

նպաստել տարածաշրջանում համագործակցության հաստատմանը: Արևելյան գործընկերության շրջանակներում ներկայացվել է Ինստիտուցիոնալ զարգացման համապարփակ նորարար ծրագիրը, որը միտված է գործընկեր երկրների կարողությունների զարգացմանը, ինչը հնարավորություն կտա իրագործելու գործընկերության բոլոր ծրագրերը: Այսպիսով, Եվրոպական հարևանության քաղաքականության համեմատ՝ Արևելյան գործընկերությունը որոշ չափով ավելի կատարյալ է: Ավելին, Արևելյան գործընկերության շրջանակներում առաջարկվել և իրագործվել է Արևելյան խորհրդարանական վեհաժողովի («Euronest») գաղափարը, ինչը Եվրամիության և գործընկեր երկրների միջև հարաբերությունների նոր հարթության տեղափոխման մասին է վկայում: Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության հիմնական տարբերությունը քաղաքացիական հասարակության ֆորումն է: Ֆորումին մասնակցելու են ԵՄ և Արևելյան գործընկերության երկրներում գործող մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Ֆորումի շրջանակներում կազմակերպվելու են տարեկան հանդիպումներ, կազմվելու են աշխատանքային խմբեր Արևելյան գործընկերության բազմակողմ համագործակցության ուղղություններին առնչվող հատուկ հարցերը կարգավորելու համար: Նշված ուղղություններն են՝ 1) Ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում և կայունություն, 2) տնտեսական ինտեգրում և ԵՄ ոլորտային ռազմավարությունների զուգամիտում, 3) շրջակա միջավայրի պահպանում, կլիմայի փոփոխություն և էներգետիկ անվտանգություն, 4) Ժողովուրդների միջև շփումների խթանում: Ակնկալվում է, որ Արևելյան գործընկերության շրջանակներում անցկացվող Քաղաքացիական հասարակության ֆորումը գործընկերության բազմակողմ բաղադրիչի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու, գիտելիքների և փորձի փոխանակման նպատակով կապեր հաստատելու և տարածաշրջանային հակամարտությունները կարգավորելու համար մասնակից երկրների կարողությունները և վստահությունը զարգացնելու միջոցով մեծապես կնպաստի Արևելյան գործընկերության նպատակների իրագործմանը:

Ակնհայտ է, որ հաջող անցկացրած քաղաքացիական հասարակության ֆորումն Արևելյան գործընկերության հերթական առավելության կվերաձվի, քանի որ ֆորումը կնպաստի Արևելյան գործընկերության շրջանակներում իրականացվող գործունեության մասին ծրագրի մասնակից երկրների բնակչության իրազեկության մակարդակի բարձրացմանը և ստանձնած պարտավորությունները կատարելու ուղղությամբ քաղաքացիական հասարակության՝ պաշտոնյաների ձեռնարկած միջոցները վերահսկելու հնարավորությունների հզորացմանը:

Արևելյան գործընկերությունը ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի դրամաշնորհներով, գործընկեր երկրների համաֆինանսավորմամբ, մասնավոր հատվածի ներդրումներով և միջազգային ֆինանսական հաստատությունների (Եվրոպական ներդրումային բանկ, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ, Համաշխարհային բանկ) միջոցներով: 2010-2013 թթ. Ժամանակահատվածի համար ծրագրին 600 միլիոն եվրո է հատկացվել: Սակայն, ակնհայտ է, որ Արևել-



յան գործընկերության բոլոր նպատակներն իրագործելու համար Եվրամիությունն ավելի մեծ գումարի կարիք ունի: Լրացուցիչ միջոցներ կարելի է հայթայթել ԵՄ բյուջեից կամ արտաքին ֆինանսավորման աղբյուրներից: Հաշվի առնելով ԵՄ անդամ պետություններում տիրող բարդ ֆինանսական վիճակը՝ առաջին տարբերակը թերևս անիրատեսական է: Բացի այդ, ակնհայտ է, որ ԵՄ պետությունները տարբեր տարածաշրջաններում տարբեր շահեր են հետապնդում: Այսպես, Շվեդիան և Լեհաստանը կողմնակից են ԵՄ արտաքին քաղաքականության արևելյան ուղղության զարգացմանը, մինչդեռ Ֆրանսիան ավելի շատ է շահագրգռված Միջերկրական տարածաշրջանում երկրների միջև համագործակցության զարգացմանը, ուստի, շատ հնարավոր է, որ Ֆրանսիան Արևելյան գործընկերության համար ԵՄ բյուջեից մեծ հատկացումներ կատարելու առաջարկին դեմ արտահայտվի: Ակնհայտ է, որ բավարար ֆինանսավորման բացակայության դեպքում Արևելյան գործընկերությունը բացարձակապես անիմաստ կառույցի կվերածվի: Ուստի, եթե ԵՄ-ն ցանկանում է, որ գործընկերությունը հաջողվի, ապա պետք է խրախուսի արտասահմանյան ներդրողների, ինչպես նաև գործընկեր երկրների ներդրումը:

Այդ նպատակով Արևելյան գործընկերությունը պետք է ապացուցի գործընկեր երկրների ակնկալիքներն իրագործելու համար անհրաժեշտ ներուժի առկայությունը: Այդուհանդերձ, որոշ երկրներ արդեն իսկ արտահայտել են իրենց դժգոհությունը: Եվրամիության հետ երկրների հարաբերությունների, ինչպես նաև այդ երկրների ձգտումների ու ակնկալիքների միջև էական տարբերությունների առկայության պայմաններում հատկապես դժվար է կյանքի կոչել Արևելյան գործընկերության ծրագիրը:

Մոլդովան արդեն հայտարարել է, որ ԵՄ-ի հետ հաստատված հարաբերությունների տեսանկյունից իր կարգավիճակը տարբերվելու է մնացած հինգ գործընկերների կարգավիճակներից, քանի որ ինքը համեմատաբար ավելի սերտ հարաբերություններ է հաստատել ԵՄ-ի հետ:

Նման մոտեցումը մեծ տարածում է գտել նաև Ուկրաինայում, որը համոզված է, որ Արևելյան գործընկերությունն «Ուկրաինայի և ԵՄ-ի միջև հաստատված հարաբերությունների մակարդակին չի համապատասխանում»<sup>1</sup>: Խնդիրն այն է, որ Ուկրաինան մեծ հույսեր է կապել նարնջագույն հեղափոխության հետ, որը, նրա կարծիքով, պետք է նպաստեր ԵՄ ինտեգրմանը: Սակայն ներկայումս պարզ է դարձել, որ Ուկրաինայի եվրոպական երազանքի իրականացման համար դեռևս շատ ժամանակ կպահանջվի: Ուկրաինայի հույսերին հակառակ՝ Եվրամիությունն Ուկրաինային վիզաների ռեժիմի վերացում և ԵՄ անդամակցություն չի առաջարկում: Բացի այդ, Արևելյան գործընկերության շրջանակներում տրամադրվող ֆինանսական օգնության գումարը հաշվի առնելով՝ Ուկրաինան կարծում է, որ գործընկերության ծրագիրը միտված է ոչ թե անդամակցության գործընթացի խթանմանը, այլ՝ հետաձգմանը:

<sup>1</sup> Վեբլայք՝ <http://eurodialogue.org/node/1478>:

Վրաստանը նույնպես փոքր-ինչ հիասթափվել է, քանի որ ակնկալում էր, որ Եվրամիությունը նոր առաջարկներով հանդես կգա, ուստի և Վրաստանին այլ տարբերակ չի մնում, քան ընդունել ԵՄ ցանկացած առաջարկը: Սահակաշվիլու խոսքերով, օգոստոսյան պատերազմից և ԱՊՀ-ից դուրս գալուց հետո Վրաստանը «բառիս բուն իմաստով, օղի մեջ է մնացել»<sup>1</sup>: Իսկ այժմ, երբ Վրաստանը կարող է հույս դնել Արևելյան գործընկերության շրջանակներում ԵՄ կողմից տրամադրվող քաղաքական և տնտեսական աջակցության վրա, ցանկացած դժգոհության արտահայտությունը թերևս անտեղի է:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նա գնահատում է Արևելյան գործընկերության տնտեսական հայեցակետը: Ադրբեջանի կառավարությունը ցանկացած բարեփոխում անցկացնելու համար ԵՄ դրամական հատկացումների կարիքը չունի, ուստի և անտեսում է Արևելյան գործընկերության հիմքում ընկած ժողովրդավարության և արդյունավետ կառավարման պայմանները: Այդուհանդերձ, քաղաքացիական հասարակության հատվածը զարգացնելու համար Ադրբեջանը դեռ կզգա Եվրամիության ֆինանսական աջակցության կարիքը:

Հայաստանը կարծես գոհ է ԵՄ առաջարկած բոլոր պայմաններից և Արևելյան գործընկերության շրջանակներում ակնկալվող ֆինանսական և տեխնիկական աջակցությունը բավարար է համարում: Հաշվի առնելով, որ Հայաստանի անվտանգության շահերի պաշտպանության հիմնական երաշխիքը Ռուսաստանի հետ ռազմավարական համագործակցությունն է, և տարածաշրջանում անվտանգությունն ապահովելու ոլորտում Արևելյան գործընկերությունը բավականին անորոշ նպատակներ է հետապնդում, Եվրամիությունից Հայաստանի ակնկալիքները նվազել են:

Հատկանշական է, որ ծրագրին է միացել նաև Բելառուսը: Եվրամիությունը վերանայել է «Եվրոպայի վերջին բռնապետի նկատմամբ իր վերաբերմունքը»: Լուկաշենկոյի վրա դրված ԵՄ տարածք մուտք գործելու արգելքը հանվել է, և նա այլ գործընկեր երկրների ղեկավարների նման Պրահայի գագաթնաժողովին մասնակցելու հրավեր է ստացել: Թեև Լուկաշենկոն Պրահա չմեկնեց, այդուհանդերձ, Բելառուսը շատ է կարևորում Եվրամիության հետ հարաբերությունները: Նախ և առաջ, այդ հարաբերությունների զարգացումը հնարավորություն կտա միջազգային մակարդակով վերականգնելու խաթարված հեղինակությունը և միանալու միջազգային քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում իրականացվող ծրագրերին: Ամեն դեպքում, այն փաստը, որ Բելառուսն Արևելյան գործընկերության խորհրդարանական վեհաժողովին չի մասնակցել (Լուկաշենկոն մերժել է պաշտոնական Բոյոսելի<sup>2</sup> Եվրանեստին ընդդիմության և կառավարության հնգական ներկայացուցիչների կազմով մասնակցելու առաջարկը) հարցականի տակ է դնում Արևելյան գործընկերության շրջանակներում Լուկաշենկոյի ձգտումները: Բելառուսն Ադրբեջանի նման անտեսում է Արևելյան գործընկերության հիմքում ընկած ժողովրդավարության և արդյունավետ կառա-

<sup>1</sup> Վեբկայք՝ <http://www.cdi.org/russia/johnson/2009-86-35.cfm>:

վարման պայմանը և շարունակում է Եվրամիությունից պահանջել իր նկատմամբ հավասար վերաբերմունք ցուցաբերել:

Արևելյան գործընկերության շրջանակներում ԵՄ-ի հետ գործընկերների երկկողմ հարաբերությունների արդյունավետությունը կարող է վտանգվել առկա պատրանքների և մոլորությունների հետևանքով, իսկ տարածաշրջանային մակարդակում համագործակցության հաստատման փորձերը երբեմն դաժան իրականության հետ են բախվում: Այսպես, Բելառուսին և Ուկրաինային հաջողվել է կարգավորել սահմանագծման հարցը, մինչդեռ Մոլդովան և Ուկրաինան դեռևս չեն լուծել Մերձդնեստրի խնդիրը: Շատ ավելի բարդ են Հայաստանի և Ադրբեջանի միջև ձևավորված հարաբերությունները, որոնք էապես խոչընդոտում են Արևելյան գործընկերության շրջանակներում երկու երկրների համագործակցությունը: Թեև Արևելյան գործընկերությունը տարածաշրջանային մակարդակում հավանարտությունները կարգավորելու գործիքաշար չունի, այդուհանդերձ, ծրագրի մասնակիցները պետք է հիշեն, որ եվրաինտեգրման նպատակ հետապնդելու դեպքում նրանք պետք է խաղաղություն պահպանեն իրենց հարևանների հետ՝ նպաստելով տարածաշրջանի կայունությանը և բարգավաճմանը: Եվրաինտեգրումն արդեն վաղուց է վերածվել Եվրամիության արտաքին քաղաքականության՝ եվրոպական երկրներում և առանձին տարածաշրջաններում խաղաղություն, կայունություն և բարգավաճում ապահովող միջոցի: ԵՄ բոլոր անդամ պետությունների թեկնածությունը քննարկելիս առաջնային կարևորություն է տրվում Եվրոպայում խաղաղության և համագործակցության հաստատմանը: Առանց տեղական և միջազգային համագործակցության՝ անհնար է պատկերացնել ներկայիս գլոբալացված աշխարհի առաջընթացն ու զարգացումը: Այսպիսով, Արևելյան գործընկերությունը կարող է ծրագրի մասնակից երկրների և Եվրամիության միջև վստահության հաստատման հիանալի հնարավորության վերածվել, որպեսզի խաղաղության և զարգացման հաստատմանը միտված սերտ համագործակցության միջոցով այդ երկրները կկարողանան ցուցաբերել ոչ միայն Եվրամիությանը միանալու իրենց պատրաստակամությունը, այլև՝ պատրաստակամությունը: Հարկ է նաև նշել, որ Եվրաինտեգրումը, առանձին վերցրած, չի կարող ընկալվել որպես տարածաշրջանային հակամարտությունների համադարման, քանի որ նման հակամարտություններն իրենց բնույթով և նախապատմությամբ խիստ տարբեր են: Թեև եվրաինտեգրման միջոցով հաջողվել է հաշտեցնել Ֆրանսիային և Գերմանիային, այդուհանդերձ, Իռլանդիայի, Կորսիկայի, ինչպես նաև Բասկերի երկրի հարցերի կարգավորման պարագայում եվրաինտեգրումն անզոր է: Եվրամիությունը դրամական ներդրումներով, սոցիալական և մշակութային բազմազանությամբ հարստացնելուց բացի, նոր անդամ պետությունները նաև բերում են իրենց խնդիրները, որոնք ամբողջ միության համար ընդհանուր խնդիրների են վերածվում: Եվրաինտեգրմանը ձգտող գործընկերները պետք է հիշեն հետևյալը. որքան քիչ են առկախ խնդիրները և որքան մեծ է առկա խնդիրները լուծելու պատրաստակամությունը, այնքան մեծ է Եվրամիությանն ինտեգրվելու հավանականությունը: ԵՄ ինտեգրու-

մը ոչ մի դեպքում տարածաշրջանի մյուս երկրներից մեկուսացում չի ենթադրում, անկախ նրանից՝ թե այդ երկրները մասնակցում են ինտեգրման գործընթացին, թե ոչ: ԵՄ այլ անդամ պետությունների հետ սերտ հարաբերություններ պահպանելու համար անհրաժեշտ է խթանել տարածաշրջանային երկրների գործընկերության ցանցերի, ենթակառուցվածքների և արդյունավետ համագործակցության զարգացումը: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ Եվրամիությանը դեռևս չի հաջողվել լուծել էներգետիկայի ոլորտում ենթակառուցվածքների պակասի և մի քանի անդամ պետությունների միջև համագործակցության զարգացման խնդիրը: Ուստի Եվրամիությունը միջոցներ և ջանք չի խնայում այս հարցը հնարավորինս շուտ կարգավորելու համար: Այսպիսով, Եվրաինտեգրման ապագան թերևս տարածաշրջանային զարգացման հետ է կապված, որի հեռահար նպատակն առանձին պետությունների և պետությունների խմբերի ԵՄ անդամակցությունն է: Թեև ինստիտուցիոնալ ու ֆինանսական ճգնաժամի պայմաններում «սահմանների ընդլայնումից հոգնած» Եվրամիությունը մոտ ապագայում թերևս ի վիճակի չի լինի քննարկելու նոր թեկնածությունների հարցը, այդուհանդերձ, անշուշտ, կշարունակի զարգացնել վերոնշյալ վեց երկրների հետ իր հարաբերությունները:

Ներկա պայմաններում Արևելյան գործընկերությունը թերևս ամենամեծ հնարավորությունն է, որը Եվրամիությունը կարող է առաջարկել իր վեց գործընկերներին: Ի դեպ, այս ծրագիրը կարող է մեծապես նպաստել երկրների ժողովրդավարականացմանը, շուկայի ազատականացմանը և ԵՄ օրենքների և չափանիշների ընդունմանը, ինչը, ըստ էության, ավելի կարևոր է քան Եվրամիությանն անդամակցելու անհազ ձգտումը: Ահա թե ինչպիսին է գործընկերության ներուժը, որը կարող է բացահայտվել նշված ծրագրից ԵՄ գործընկերների ավելի իրատեսական ակնկալիքների դեպքում: Եթե գործընկերները չմեղմացնեն իրենց ձգտումները, ապա Եվրամիության առաջարկած և Արևելյան գործընկերության ծրագրից որոշ երկրների կողմից ակնկալվող հնարավորությունների անհամապատասխանությունը կարող է խաթարել Եվրամիության՝ վստահելի գործընկերոջ հեղինակությունը: Միաժամանակ, «եվրոպական երազանքը կենդանի պահելու համար» Եվրամիությունը պետք է կատարի վիզաների տրամադրման ընթացակարգերի պարզեցման և համապարփակ ազատ առևտրի խթանման մասին Արևելյան գործընկերության ծրագրի առավել հրապուրիչ խոստումները: Գործընկեր երկրների Եվրաինտեգրման ձգտումը ժողովրդավարության զարգացման և արդյունավետ կառավարման ամուր կռիվն է: Այդ իսկ պատճառով Եվրամիությունը պետք է նաև վեց գործընկերներից առավել եվրոպամետների համար Եվրաինտեգրման իրատեսական պայմաններ ստեղծի, ինչը կնպաստի այդ երկրներում շուկայի ազատականացմանը, արդյունավետ կառավարմանը, օրենքի գերակայության սկզբունքի պահպանմանը և ժողովրդավարության զարգացմանը: Ի դեպ, Եվրաինտեգրման հնարավորությունների բացակայության դեպքում այդ երկրները թերևս հետընթաց կապրեն:

# Համայնքների մերձեցումը հանուն կայուն զարգացման և գործընկերության հաստատման. Համայնքների համակեցության մոդելը (կոնսոցիալիզմը) որպես հակամարտություններին հաջորդող իրավիճակը կարգավորելու միջոց

## ԵՎԱ ԲԵՐՏՐԱԼ

*Միջազգային հարաբերությունների դոկտորանտուրայի ուսանողուհի,  
Սեանս-պո Փարիզ  
Ֆրանսիա*

## ՍԵԼԻՆ ՏՈՒԺԵՂՈՒ

*Ինժեներ և Եվրոպական ծրագրերի մենեջեր  
Բոյուսել*

1945 թվականից ի վեր ներքին հակամարտությունները վերլուծելու գործում մեծ դեր է կատարել ինքնորոշման սկզբունքը: Այնուհանդերձ, նման հակամարտությունների թվի աճը հանգեցրել է կարգավորման այլընտրանքային միջոցների ավելացմանը, մասնավորապես՝ այնպիսի իրավիճակներում, երբ մարդիկ ցանկանում են «կողք կողքի ապրել խաղաղության մեջ» առանց իրենց երկրների տարածքային ամբողջականությունը խախտող կտրուկ միջոցների, օրինակ՝ անջատման, բաժանման կամ միացման հարևան երկրին: Այս դեպքում հարց է ծագում՝ ինչպե՞ս կարգավորել ներպետական հակամարտությունները:

Որպես կանոն, միջպետական հակամարտությունները կարգավորելու համար բավական է դադարեցնել նրանց միջև ընթացող ռազմական գործողությունները, իսկ ներքին հակամարտությունները կարգավորելու համար հարկավոր է վերացնել դրանց հիմքում ընկած պատճառները, այսինքն՝ փոխըմբռնում հաստատել հակամարտության կողմերի միջև: Ըստ Արենդ Լիջֆարթի՝ «Համայնքների համակեցության մոդելը վերնախավի մակարդակով բազմակողմանի համագործակցության վրա հիմնված համակարգ է, որը միտված է տվյալ հասարակության մեջ փոքրամասնության ինտեգրումը խոչընդոտող գործոնների հաղթահարմանը»:

Ինչպե՞ս է համակեցության (համասոցիալական) մոդելը ծառայում ներպետական հակամարտությունների կարգավորմանը: Ինչ նշանակություն ունի նշված մոդելը ներպետական հակամարտությունների կարգավորմանը հաջորդող փուլում: Համայնքների համակեցության մոդելը երեք հիմնական նպատակ է հետապնդում՝

խուսափել բռնության գործադրումից, բարելավել պետական ինստիտուտների աշխատանքը և կայուն զարգացում ապահովել: Հաշվի առնելով նշված նպատակները՝ առաջարկում ենք վերլուծել մոդելը համակեցության մոդելի առավելությունները և թերությունները համեմատելու, հակամարտության գործոնները վեր հանելու, պետական ինստիտուտների աշխատանքի բարելավմանը և վերջապես մոդելի կայունությանն առնչվող հարցերը քննարկելու միջոցով:

## I Հակամարտության կողմերը

Հակամարտության կարգավորման ռազմավարությունը կյանքի կոչելու համար՝ հակամարտության կողմերը պետք է փոխադարձ համաձայնությամբ բանակցություններ վարեն միմյանց հետ: Նրանք պետք է հաղթահարեն ոչ միայն հակամարտության իրավիճակով պայմանավորված հոգեբանական անջրպետը, այլև այսպես կոչված առավելություններից օգտվելու ցանկությունը, որոնք անհատները կամ խմբերը կարող են գտնել նման իրավիճակում: Այսպիսով, կողմերի առաջնորդներն իրենք էլ հակամարտությունների կարիք ունեն:

Որպես կանոն, համակեցության հայեցակարգը նմանեցնում են իշխանության բաշխման սկզբունքի վրա հիմնված քաղաքական համակարգին և գործածում են մի քանի տարբեր խմբերից (օրինակ՝ ազգային պատկանելության, կրոնական հայացքների կամ լեզվական տարբերությունների սկզբունքով առանձնացվող խմբեր) կազմված բնակչություն ունեցող պետություններում: Նման դեպքերում որևէ խումբ իր անդամների քանակությամբ չի կարող մեծամասնություն կազմել: Այնուհանդերձ, տարբեր համայնքների վերնախավում կարևոր դեր ունեցող անձինք, ովքեր քաջատեղյակ են միմյանց հետ չհամագործակցելու հետևանքների մասին, կամավոր որոշում են բանակցություններ սկսել: Քաղաքական մարմիններում այս կամ այն խմբի ներկայացուցիչների թիվը որոշվում է երկրի բնակչության ընդհանուր թվի համեմատ տվյալ խմբի անդամների թվով: Այսպիսով, պետության ինստիտուտներում (օրինակ՝ ոստիկանությունում) տվյալ խմբի ներկայացուցիչների՝ տոկոսային հարաբերությամբ արտահայտված թիվը համընկնում է երկրի բնակչության ընդհանուր թվի համեմատ տվյալ խմբի անդամների՝ տոկոսային հարաբերությամբ արտահայտված թվին: Համակեցության հայեցակարգի շրջանակներում ընդունվող բոլոր որոշումների հիմքում ընկած է փոխզիջումը: Այսպիսով, ակնկալվում է, որ փոխզիջման միջոցով պետությունն ի վիճակի կլինի արագացնելու բանակցային գործընթացը և յուրաքանչյուր քաղաքացու շահերը խաղաղ ճանապարհով պաշտպանելու սկզբունքով նպաստելու ռազմական գործողությունների դադարեցմանը:

Այս մոդելը շատ պարզ է, սակայն սահմանափակող բնույթ ունի: Այն ենթադրում է, որ բանակցությունների յուրաքանչյուր կողմի ներկայացուցիչներն ունեն նույն նպատակներն ու ակնկալիքները: Այնուհանդերձ, նման ենթադրությունը միշտ չէ համապատասխանում իրականությանը, քանի որ կողմերի ներկայացու-

ցիչները կարող են առանձին խմբեր կազմել և տարբեր առաջնահերթ նպատակներ հետապնդել: Այսպիսով, յուրաքանչյուր կողմի համախմբվածությունը կարող է թվացյալ լինել: Հակամարտության կողմերը թերևս չեն համաձայնվի բանակցել ազգային նշանակություն ունեցող կարևոր խնդիրների շուրջ, և նման դեպքերում համակեցության մոդելի կիրառումն ապարդյուն է:

### *Բելգիայի դեպքը*

Բելգիայում գործում է համակեցության ժողովրդավարական մոդելը, որը այլ մոդելների հետ համեմատած՝ ավելի դժվար է ձևավորել և պահպանել: Բելգիայում այդ համակարգը գործում է այնպիսի հասարակության պայմաններում, որը բաժանվում է ոչ թե կրոնական հայացքների, այլ լեզվական տարբերությունների սկզբունքով: Այսպիսով, առանձնացվում են հետևյալ երեք խմբերը՝ ֆլամանդական համայնք (հոլանդախոս), վալոնական համայնք (ֆրանսախոս) և գերմանախոս համայնք: Հաշվի առնելով Բելգիայի բարդ դաշնային համակարգը և համայնքների մեծ մասի տարածքային սկզբունքով բաժանումը՝ ներկայումս Բելգիայի առջև ծառայած ամենալուրջ խնդիրը քաղաքական տարածայնությունների վերացումն է և տարբեր համայնքների ներկայացուցիչների շրջանում երկրի ապագայի ու տեղական մակարդակով իրենց իրավասության շրջանակի վերաբերյալ նույն հայացքների ձևավորումը: Այսպիսով, համակեցության մոդելի թերություններից մեկը կողմերի հայացքների և պահանջների հետևանքով առաջացող բարդություններով է պայմանավորված:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները որոշումների կայացման գործընթացին չեն մասնակցում:

Համակեցության համակարգի հիմքում ընկած սկզբունքների կիրառումը հիմնականում պայմանավորված է վերնախավի ներկայացուցիչների կայացրած որոշումներով և նրանց խաղաղասիրությամբ: Կառավարման համակարգում հասարակության տարբեր խմբերի ներկայացուցիչների թիվը որոշելու համամասնական կարգը նույնպես սահմանափակում է խմբերի՝ մեծ դաշինք կազմելու հնարավորությունը, հետևաբար որոշումների կայացման գործում ընտրական գործընթացների նշանակությունը չնչին է: Ուստի քաղաքացիներն ի վիճակի չեն ակտիվ մասնակցելու երկրի քաղաքական կյանքին: Յան Լուստիքը դատապարտում է միայն վերնախավի ներկայացուցիչներ ներառող «Համակեցության վարչակարգը», որով քաղաքացիները կորցնում են վիճարկելի հարցերի լուծմանը մասնակցելու հնարավորությունը և ընդհանրապես ժողովրդավարական այս համակարգի նկատմամբ հավատը: Այնուհանդերձ, հարկ է հիշել, որ հակամարտությունները կարելի է կարգավորվել միայն ամբողջ բնակչության մասնակցության դեպքում:

## *Հյուսիսային Իռլանդիայի դեպքը*

Հյուսիսային Իռլանդիայի դեպքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր հանելու համակարգի մյուս թերությունը: 1998 թվականի «Սուրբ ուրբաթ օրը ստորագրված համաձայնագրով» (անգլ. Good Friday agreement) նախատեսվել է Հյուսիսային Իռլանդիայի խորհրդարանի բացումը, ինչը միտված էր ունիոնիստ բողոքականների և ազգայնական կաթոլիկների համայնքների միջև իշխանությունը բաժանելու միջոցով երկրում տիրող իրավիճակի կայունացմանը: Սակայն խորհրդարանը բացվեց միայն 2006 թ. Սեն Էնդրյու քաղաքում կնքված համաձայնագրից հետո: Այսպիսով, Հյուսիսային Իռլանդիայում օրենսդիր մարմին հիմնելու համար ութ տարի պահանջվեց:

Ներքին հակամարտությունների պարագայում համակեցության մոդելը կարող է նպաստել բանակցային գործընթացին՝ մղելով կողմերին քննարկել զինադադար հայտարարելու տարբերակը: Այդուհանդերձ, բանակցող կողմերի մասնակցության կարգը սահմանելու, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համեմատ վերնախավի նախապատվության տեսանկյունից այս մոդելը թերի է:

## **II Պետական ինստիտուտների աշխատանքի բարելավում**

Բանակցային գործընթացի մասնակիցներին հաստատելուց բացի, ներպետական հակամարտությունները կարգավորելու համար անհրաժեշտ է նաև բարելավել պետական ինստիտուտների աշխատանքը: Ինստիտուցիոնալ և կառուցվածքային փոփոխությունները կարևորող համակեցության մոդելը հատկապես արդյունավետ է հակամարտության կարգավորման երկրորդ փուլում:

### *Ինստիտուցիոնալ փոփոխությունները կարևորող քաղաքական մոդել*

Ըստ Արենդ Լիջֆարթի՝ համակեցության մոդելի հիմքում ընկած են հետևյալ չորս կազմակերպչական սկզբունքները՝ գործադիր իշխանության հավասար բաշխում, որոշակի ոլորտներում հակամարտության կողմերի ինքնուրույնություն, էթնիկական խմբերի վետոյի իրավունք և հասարակության բոլոր խմբերի ներկայացուցիչների նույն թվի համամասնություն: Հաջողված համակեցության մոդելի այս բաղադրատարրերը միտված են հակամարտությանը հաջորդող իրավիճակում քաղաքական և ինստիտուցիոնալ կարգի պահպանմանը:

### *Բելգիայի համակեցության մոդելը*

Բելգիայի համակեցության մոդելը լիովին արտացոլում է բնակչության տարբեր խմբերի միջև իշխանության բաշխվածությունը: Բելգիայի քաղաքական իշխանությունը փաստորեն բաշխվում է երկրի քաղաքական և մշակութային բաժանման



համապատասխան, այսինքն՝ երկու հիմնական ֆլամանդական և վալունական լեզվական համայնքների միջև: Նշված համայնքներից յուրաքանչյուրը ընդհանուր առմամբ տասնհինգ նախարարներից բաղկացած կառավարությունում ներկայացնում են յոթ նախարարներ:

### *«Ընդհանուր ինքնավարություն»*

Համակեցության մոդելը ներկայանում է որպես քաղաքական բանակցությունների պրագմատիկ տեսլական, որը կարող է վերականգնել հակամարտության արդյունքում մասնատված պետության ինստիտուցիոնալ համակարգը: Նման մոդելը նպաստում է այնպիսի իրավակարգի հաստատմանը, որը հնարավորություն է տալիս պաշտպանելու հակամարտության բոլոր կողմերի շահերը: Այսպիսին է «ընդհանուր ինքնավարության» գաղափարի էությունը: Այս գաղափարը համապատասխանում է խմբերի՝ որոշակի ոլորտում ունեցած ինքնավարության սկզբունքին, այսինքն՝ հակամարտության կողմերը ոչ թե մեկ ընդհանուր, այլ առանձին որոշումներ են կայացնում: Այս տարբերակը նախատեսված է այն դեպքերի համար, երբ կողմերը բանակցություններ վարելու և խնդիրը միասին քննարկելու հնարավորություն չունեն: Համակեցության մոդելը միտված է ներկա պետության ամբողջականության և կայուն իրավիճակի պահպանմանը: Ավելին, ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխմանը նպաստող միջոցառումների հիմքում ընկած է ոչ թե բռնությունը, այլ՝ փոխզիջումը:

### *Հարավային Տիրոլի հակամարտության կարգավորումը*

Կարելի է դիտարկել Հարավային Տիրոլի հակամարտության օրինակը, որտեղ մինչ 1969 թ. գերմանախոս և իտալախոս համայնքները շատ լարված փոխհարաբերությունների մեջ էին: 1969 թ. ի վեր գերմանախոս համայնքը որոշակի ինքնավարություն է ստացել, քայլեր են ձեռնարկվել պետական կառույցներում հավասար թվով ներկայացուցիչներ առաջադրելու երկու համայնքների իրավունքի և նրանց միջև իշխանությունը հավասարապես բաշխելու ուղղությամբ: Արդյունքում լարվածությունն էապես թուլացել է:

### *Համակեցության մոդելի թերությունները*

Այնուհանդերձ, համակեցության մոդելի յուրահատուկ բնույթի պատճառով այն անհնար է կիրառել բոլոր երկրներում: Մասնավորապես, այս մոդելի կիրառման համար անհրաժեշտ են որոշակի նախապայմաններ, օրինակ՝ քաղաքական, ինստիտուցիոնալ և կառուցվածքային հատուկ պայմանների առկայություն, բավական մեծ մշակութային խմբեր, բազմակուսակցական քաղաքական համակարգ, նոսր բնակչություն, խոր հավատ ընդհանուր արժեքների նկատմամբ, սոցիալական

և մշակութային լուրջ տարբերությունների բացակայություն, քաղաքական փոխ-գիջման և հասարակությունների խմբերի առանձնահատկություններն ընդունելու ավանդույթ: Այս չափորոշիչները գրեթե բացառում են զանազան երկրներում համակեցության մոդելը կիրառելու հնարավորությունը: Այսպիսով, մոդելի արդյունավետությունը մեծապես կախված է հակամարտությանը նախորդող ժամանակահատվածում տվյալ երկրում կիրառվող իշխանության բաշխման սկզբունքից, որը կարող է փոքրացնել նման մոդելն այլ երկրներ ներմուծելու հնարավորությունը, ուստի և համակեցության մոդելը հակամարտությունների կարգավորման ոչ լիարժեք միջոցի է վերածվում:

### **III Արդյոք այս համակարգն արդյունավետ է երկարաժամկետ կտրվածքով**

Ի վերջո, հարց է ծագում՝ արդյո՞ք հակամարտությունների կարգավորման համակեցության մոդելը կարող է անհրաժեշտության դեպքում երկարաժամկետ կտրվածքով արդյունավետություն ապահովել:

*Էթնիկական խմբերը հասարակությանն ինտեգրելու քաղաքական մոդել*

Ժամանակի ընթացքում համակեցության մոդելի հիման վրա ձևավորված պետական համակարգի աշխատանքը դիտարկելիս կարելի է մի շարք բացթողումներ վեր հանել: Բավականին հաճախ է քննադատվում այս մոդելի հիմքում ընկած այն մոտեցումը, որն ուղղված է ազգային և մշակութային տարբերություններն օրինականացնելու միջոցով հակամարտությունների սառեցմանը: Թվում է, թե հակամարտությունը կարգավորելու նպատակով համակեցության մոդելը կիրառող պետությունները փորձում են անտեսել հակամարտության պատճառները: Փաստորեն, համակեցության մոդելի հիման վրա ձևավորված համակարգ ունեցող երկրում քաղաքական կյանքի կենտրոնում էթնիկական խմբերն են: Այս կառուցվածքային բացթողումը երկրում գործող ողջ համակարգի աշխատանքի վրա է անդրադառնում: Տարբեր էթնիկ խմբերի օրինականացումը կարող է փակուղի տանել առօրյա ինստիտուցիոնալ բնույթի խնդիրները: Քանի որ նշված յուրաքանչյուր խումբը վետոյի իրավունք է ստացել, ապա որոշումների կայացման գործընթացը կարող է հեշտությամբ խափանվել:

Հյուսիսային Իռլանդիայում առաջացած իրավիճակը համակեցության մոդելի թերությունների դրսևորման լավ օրինակ է: Փաստորեն, հակամարտության կողմերի միջև փոխգիջման բացակայության պատճառով ութ ամիս շարունակ այդ երկրի պետական ինստիտուտների աշխատանքը խափանված էր:

1970 թ. Բելգիայում անցկացրած սահմանադրական բարեփոխումների շնորհիվ համայնքներն իրենց շահերին հակասող օրենքների վրա վետո դնելու իրավունք ստացան:

## *Արդյունքների կարճաժամկետ բնույթը*

Համակեցության մոդելը թերևս երկարաժամկետ կտրվածքով արդյունավետ չէ: Այն կարելի է բնութագրել որպես ժամանակավոր կամ անարդյունավետ լուծում, որին պետք է հաջորդի դասական ժողովրդավարության մոդելը, որտեղ էթնիկական, կրոնական կամ սոցիալական խմբերն այլևս չեն տարբերակվում:

## *Բելգիայի օրինակը*

Այդ կապակցությամբ հետաքրքրական է Բելգիայի օրինակը: Թեև երկու լեզվական համայնքների միջև մեծ լարվածություն կա, XIX դարում Բելգիայում համակեցության համակարգ կազմավորման պատճառն այլ էր: Այդ ժամանակ հասարակության խմբերի միջև քաղաքական տարբերություններ կային, այդ իսկ պատճառով երեք հիմնական քաղաքական կուսակցությունների մասնակցությամբ միասնական քաղաքական համակարգ է ձևավորվել: 1960-ական թթ. առաջին անգամ ներկայացվել են լեզվական բնույթի պահանջներ, որոնք 1970-ական թթ. հանգեցրել են ինստիտուցիոնալ համակարգի վերանայմանը:

## *Անհամապատասխան մոդել*

Կարելի է եզրակացնել, որ համակեցության մոդելի կարճատև արդյունքներ տալու պատճառն այն է, որ այդ մոդելը, առանձին վերցրած, բավարար չէ հակամարտությունները կարգավորելու համար: Բոլոր հակամարտությունները բազմակողմանի են: Ներկա համակեցության մոդելը նպաստում է միայն քաղաքական և ինստիտուցիոնալ կարգավորմանը, իսկ հակամարտությունները կարգավորելու համար անհրաժեշտ է մի քանի խնդիր հաղթահարել, օրինակ՝ լուծել ապառազմականացման արդյունքում փախստականների և բանտարկյալների վերաձված մարդկանց խնդիրները և այլն:

## *Հյուսիսային Իռլանդիայի օրինակը*

Տվյալ համատեքստում շատ ուշագրավ է Հյուսիսային Իռլանդիայի օրինակը, քանի որ Իռլանդիայի հանրապետական բանակի զինաթափումը և Շին Ֆեյն կուսակցության հետ դրա կապերը բավականին ուշացրել են տարբեր կրոններին և կուսակցություններին պատկանող ներկայացուցիչներ ունեցող խորհրդարանի բացումը: Ձինված հակամարտության հետևանքով ծագած բոլոր խնդիրները լուծելու համար համակեցության մոտեցման շրջանակը չափազանց փոքր է:

Ամփոփելով հարկ է հավելել, որ համակեցության մոդելը ներպետական հակամարտությունները խաղաղ ճանապարհով կարգավորելու միջոց է համարվում: Փաստորեն, համակեցության մոդելը առանց բռնության դիմելու երկրի ամբողջա-

կանության պահպանմանը միտված միջոց է: Ավելին, համակեցության հնարքները նպաստում են նախկին հակամարտության կողմերի միջև երկխոսությանը և բանակցային գործընթացին: Այնուհանդերձ, այս մոդելը, առանձին վերցրած, երկարաժամկետ կտրվածքով չի կարող կայունություն ապահովել: Այն նպաստում է հակամարտության արագ քաղաքական կարգավորմանը, սակայն այդ կարգավորումն ինստիտուցիոնալ բնույթ ունի և չի կարող վերացնել հակամարտության հիմքում ընկած մնացած պատճառները: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ համակեցության մոդելը հակամարտությունը կարգավորող միջոց է և նույնիսկ շատ արդյունավետ միջոց, բայց ոչ՝ հակամարտության համակողմանի կարգավորման համակարգ:

# Գերմանիայում բնակվող մահմեդականների վիճակը: արդյոք վտանգված է բազմամշակութայնությունը

## ԿՈՐԻՆԱ ԿՈՒԼԵԿԱՄ

*Քաղաքական փիլիսոփայության, քաղաքական գիտությունների մագիստրատուրայի ուսանողուհի*

*Մասնագիտացում՝ քաղաքականության և կրոնի կապը  
Գերմանիա*

Եվրոպական երկրներում բնակվող սևամորթների մեծ մասը մահմեդական է: Եվրոպայում բնակվող բոլոր մահմեդականների թիվը գերազանցում է Ֆինլանդիայի, Դանիայի և Իռլանդիայի բնակչության ընդհանուր թիվը: Այսպիսով, ըստ Թարիք Մոդուդի՝ «մահմեդականները հայտնվել են Արևմտյան Եվրոպայի բազմամշակութային հանրային քաղաքականության բարենպաստ և թերի ուղղությունների կիզակետում»<sup>1</sup>: Այդուհանդերձ Եվրոպայում ներգաղթի և ինտեգրման քաղաքականության շուրջ ծավալվող հանրային քննարկումները հաճախ սոցիալական խտրականությամբ են ուղեկցվում: Բիելֆելդի համալսարանի Հակամարտության և բռնության դրսևորումների միջառարկայական հետազոտությունների ինստիտուտի վերջերս անցկացրած ուսումնասիրությունն ամբողջ Եվրոպայում հակամահմեդական տրամադրությունների տարածման մասին է վկայում<sup>2</sup>: Ուսումնասիրությունն անցկացվել է ութ երկրում՝ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Նիդեռլանդներ, Իտալիա, Պորտուգալիա, Լեհաստան և Հունգարիա: Նշված երկրներում մահմեդականների նկատմամբ ակնհայտ նախապաշարումների դրսևորումներ են արձանագրվել: Թեև մնացած եվրոպական երկրների բնակչության շրջանում հանդիպող նախապաշարումները և դրանց արմատները փոքր-ինչ տարբեր են, այդուհանդերձ ֆոկուս խումբն առանձնացրել է բոլոր երկրներում արձանագրվող նախապաշարումների հիմքում ընկած «անհավասարության գաղափարախոսությունը»: Եվրոպացի հարցվածների 54,4 տոկոսը կարծում է, որ «իսլամը անհանդուրժողականություն քարոզող կրոն է»: Այս կարծիքն արտացոլում է իսլամի մասին տարածված բացասական հանրային ընկալումը: Հետաքրքրական

1 Թարիք Մոդուդի՝ «Multiculturalism», Քեմբրիջ, 2007 թ., էջ 4:

2 Անդրեաս Ջիք, Քյուփեր, Բեաթե, Հիննա և Վոլֆ՝ «European Conditions. Findings of a study on Group-focused Enmity in Europe, Գերմանիայի Բիելֆելդի համալսարանի Հակամարտության և բռնության միջառարկայական հետազոտությունների ինստիտուտ: Հետազոտության արդյունքները կարելի է բեռնել հետևյալ վեբկայքից՝ <http://www.euro-islam.info/2009/11/18/study-reveals-prejudices-against-islam-all-over-europe/>:

է, որ եվրոպական երկրների բնակչության գրեթե նույնքան հաստվածը՝ 50,4 տոկոսը, կողմ է մահմեդական ներգաղթյալների նկատմամբ երկիր մուտք գործելու ընդհանուր արգելքի սահմանմանը: Գերմանիան, որը մահմեդական բնակչության թվի տեսանկյունից Ֆրանսիայից հետո Արևմտյան Եվրոպայի երկրորդ մեծ երկիրն է, նախապաշարունների տարածվածության սանդղակում միջին տեղ է զբաղեցնում:

Երբ փորձում ենք հասկանալ Գերմանիայում բնակվող մահմեդականների ներկայիս վիճակը, որոնց 70 տոկոսը թուրքական ծագում ունի<sup>1</sup>, հույժ կարևոր է ըմբռնել ներգաղթի վերաբերյալ տարածված բացասական կարծիքների և ընդհանուր առմամբ որպես իսլամ<sup>2</sup> ընկալվող երևույթի նկատմամբ վախի կապը, քանի որ Գերմանիայում բնակվող մահմեդականները երկիր են մուտք գործել 1960-ական և 1970-ական թվականների ներգաղթի ավիքի արդյունքում: Հիմնականում թուրք արտասահմանցի աշխատողները (գերմ. «Gastarbeiter») Գերմանիա են բերվել որպես ժամանակավոր ներգաղթյալներ, ովքեր, ըստ նախատեսվածի, պետք է երկրից հեռանային, սակայն, ի վերջո, «փաստացի ներգաղթյալների» են վերածվել<sup>3</sup>: Այսպիսով, ինտեգրման երկարաժամկետ քաղաքականության բացակայությունը և Գերմանիայի՝ միայն վերջերս ուրվագծված «ներգաղթյալների երկիր» ինքնապատկերը առաջ են բերել այնպիսի թերություններ, որոնք մահմեդական ներգաղթյալներին, նրանց երեխաներին և թոռներին զգալի վնաս են պատճառում: Ինչու՞ ենք նման իրավիճակում հայտնվել: Սույն ակնարկում կփորձեն ապացուցել, որ պատճառը Գերմանիայում բազմամշակութայնության գաղափարի տարածված սխալ ընկալումն է: Նախ՝ ներկայացնեն բազմամշակութայնության համառոտ սահմանումը և տեսությունը: Ի դեպ, բազմամշակութայնության տարրերն են բազմազանության ընկալումը և հավասար վերաբերմունքը:

1990-ական թվականների վերջերին Գերմանիան սկսվեց մտորել իր բազմամշակութային քաղաքականության շուրջ՝ ուշադրություն դարձնելով միայն թուրք փոքրամասնությանը հանրային կյանքին ինտեգրելու նպատակով այդ

1 Դեվիդ Մորթոնի «Country Profile Germany», տե՛ս՝ <http://www.euro-islam.info/country-profiles/germany/#Z> վեբկայքի «News and Analysis on Islam in Europe and North America» բաժինը:

2 Նման իրավիճակները գիտնականները հաճախ նկարագրում են «իսլամատյացույթուն» եզրույթով՝ նշելով Արևմտյան Եվրոպայի երկրների վախը իրենց հասարակությանը մահմեդականների ինտեգրելու, հետևաբար նաև մահմեդականների արժեքներն ընդունելու նկատմամբ: Այնուհանդերձ, «իսլամատյացույթուն» եզրույթը թյուրիմացության տեղիք է տալիս, քանի որ այն ենթադրում է, որ Արևմտյան Եվրոպայի երկրների բնակչությունը հենց իսլամից է վախենում: Իրականում նրանք մերժում են ոչ թե կրոնական ուսմունքը՝ չսփափոր իսլամը, այլ քաղաքական ուղղության վերածված իսլամի ծայրահեղ դրսևորումները՝ ահաբեկչությունը և արևմտյան արժեքների անտեսումը: «Իսլամատյացույթուն» եզրույթը նշանակում է, որ մարդիկ վախենում են իսլամից, ուստի դրա գործածումը միայն ավելի է խորացնում իսլամ դավանողների մասին «այլք» պատկերացումը (Լիզ Ֆեբթեթ «A Suitable Enemy: Racism, Migration and Islamophobia in Europe», Նյու Յորք, 2009, էջ 57): Այդ իսկ պատճառով նշված եզրույթը սույն ակնարկում չի գործածվում:

3 Վիլ Կոմիչկա «Multicultural Citizenship», Նյու Յորք, 1995, էջ 17: Մահմեդականների՝ Գերմանիա ներգաղթելու պատմության ավելի մանրամասն շարադրանքը տե՛ս՝ Ֆեթթեթ, Ջոն Է., Սոփեր և Քրիսթոֆեր Ջ.՝ «Muslims and the State in Britain, France, and Germany», Քենթրիջ, 2005, էջ 99-102: Տե՛ս նաև Յուրգեն Հաբերմաս՝ «Struggles for Recognition in the Democratic Constitutional State, in: Multiculturalism. Examining the Politics of Recognition», Էմի Գուլթմանի խմբագրությամբ, Փրինստոն, 1994, էջ 110:

փոքրամասնությունը ճանաչելու հարցին: Իրականում փոքրամասնությունը երկրի հանրային կյանքին չի ինտեգրվել, ընդհակառակը՝ կառավարության գործողությունները հանգեցրել են զուգահեռ հասարակությունների ձևավորմանը: Ավելին, Գերմանիայի պատմական բեռի հետևանքով մեկ այլ խնդիր է ծագել, որը Գերմանիան մինչ օրս չի լուծել: Խոսքը վերաբերում է այն միջոցներին, որոնք ազատական ժողովրդավարական հասարակությունը պետք է ձեռնարկի փոքրամասնությունների ներկայացուցիչների ոչ ազատական պահանջներին արձագանքելու համար: Ազատական տեսաբանների մեծամասնությունը համամիտ է ազատական հասարակության՝ նման ոչ ազատական պահանջներն ազատականության տեսանկյունից դիտարկելու պարտականության շուրջ: Սակայն փոխարենը՝ Գերմանիայում ականատես ենք դառնում հասարակության՝ երկու ծայրահեղ դրսևորումներ ունեցող մոտեցմանը՝ առհասարակ փոքրամասնությունների կողմից ներկայացված որևէ պահանջի համառ մերժում կամ նույնիսկ ոչ ազատական պահանջի ընդունում: Որպես այս ամենի օրինակ՝ համառոտ կներկայացնեմ վերջերս դատարանում քննված գործերը և հանրության արձագանքը:

## **Բազմամշակութայնության տեսությունը և նման ռազմավարությանը բնորոշ լարվածությունը**

Անցյալ դարը և հատկապես ներկա XXI դարը հայտնի են որպես «ներգաղթի դարեր»<sup>1</sup>, որոնք Արևմտյան Եվրոպայի բազում երկրների առջև «մշակութային բազմազանության հիման վրա նոր քաղաքականություն» մշակելու խնդիր են դրել: Թեև Կանադան և Միացյալ Նահանգներն արդեն 1960-ական և 1970-ական թթ. են ձեռնամուկ եղել նման փոփոխությունների գործին, սակայն Եվրոպական երկրները՝ Բրիտանիայի, Նիդեռլանդների և Շվեդիայի գլխավորությամբ, միայն տասնամյակներ անց հետևեցին նրանց օրինակին: Անգամ այսօր, Եվրոպայի համեմատ, Կանադայում և Միացյալ Նահանգներում բազմամշակութայնությունն ավելի շատ է կարևորվում<sup>2</sup>: Մոդուլը բազմամշակութայնությունը սահմանում է որպես «այլ վայրերից Արևմտյան Եվրոպայի բարգավաճող երկրներ ներգաղթած անձանցից կազմված փոքրամասնությունների քաղաքական դաշինք»<sup>3</sup>: Այդուհանդերձ, Եվրոպայում և մասնավորապես Գերմանիայում բնակվող մահմեդականների վիճակը գնահատելիս շատ կարևոր է ավելի լայն իմաստով ընկալել բազմամշակութայնության գաղափարը, քանի որ այդ գաղափարը ճիշտ հասկանալու միջոցով է միայն հնարավոր պարզել Գերմանիայում բազմամշակութային քաղաքականության ձախողման պատճառները:

1 Վիլ Կիմլիշկա «Multicultural Citizenship», Նյու Յորք, 1995, էջ 193:

2 Թարիք Մոդուլ «Multiculturalism», Քեմբրիջ, 2007, էջ 2:

3 Թարիք Մոդուլ «Multiculturalism», Քեմբրիջ, 2007, էջ 5:

## Լարվածություն տարբերությունները ճանաչելու և հավասար վերաբերմունք ցուցաբերելու սկզբունքների միջև

«The Politics of Recognition» («Ճանաչման քաղաքականություն») ակնարկում հայտնի փիլիսոփա Չարլզ Թեյլորը երկու հիմնական բաղադրատարրերով է բնորոշում բազմամշակութային քաղաքականությունը: Առաջինը տարբերությունները ճանաչող քաղաքականությունն է, որի նպատակն է ճանաչել անհատի կամ խմբի «յուրահատկությունը», հետևաբար՝ նրա «տարբերությունը բոլոր այլ անձանցից կամ խմբերից»<sup>1</sup>: Երկրորդ բաղադրատարրը իրավահավասարության քաղաքականությունն է, որը հիմնված է յուրաքանչյուրի արժանապատվության իրավունքի փիլիսոփայական հայեցակարգի վրա և ազատական ժողովրդավարական երկրներում բոլոր քաղաքացիների նկատմամբ հավասար վերաբերմունք է ենթադրում:

Ի տարբերություն Մոդուդի վերոնշյալ ավելի խիստ սահմանման՝ այս բազմամշակութային քաղաքականության երկու ուղղությունների շրջանակը ներգաղթյալ խմբերի կամ հասարակության ենթախմբերի վրա չի տարածվում: Տարբերությունների ընդունման և բոլորի նկատմամբ հավասար վերաբերմունքի քաղաքականություն վարելու դեպքում այդ երկու ուղղությունների միջև լարվածություն է առաջանում, օրինակ՝ այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ազգային փոքրամասնություններին որոշ պարտավորություններից ազատելու մասին, ովքեր նման պահանջներ են ներկայացնում տարբերություններն ընդունելու քաղաքականության հիման վրա: Այս խնդրին կանդիդատանք ակնարկի հաջորդ մասերում Գերմանիայում բնակվող մահմեդականների վիճակը դիտարկելիս: Թեյլորը նույնպես քաջատեղյակ է «նշված նպատակներն իրականացնելու հետ կապված լարվածության և դժվարությունների» մասին<sup>2</sup>, այդուհանդերձ, դրանց իրականացումը հնարավոր է համարում: Ըստ նրա՝ հենց այդ պատճառով է բազմամշակութային քաղաքականությունը վերածվում այնպիսի կատարյալ քաղաքականության, որի պարագայում «բոլորս ընդունում ենք տարբեր մշակույթների հավասարությունը և ոչ միայն պայմաններ ենք ստեղծում դրանք պահպանելու համար, այլև գիտակցում ենք դրանց արժանիքները»<sup>3</sup>: Նման քաղաքականություն վարելու ընթացքում հույժ կարևոր է երկխոսություն ծավալել անձի՝ իր անհատական արժանիքները

1 Չարլզ Թեյլոր «The Politics of Recognition, in: Multiculturalism. Examining the Politics of Recognition», Էմի Գուբմանի խմբագրությամբ, Փրինստոն, 1994, էջ 38: Տես նաև Բլումի սահմանումը՝ «Ճանաչել անհատի և մշակութային խմբին նշանակում է գիտակցել նրա, սովյալ դեպքում, մշակութային առանձնահատկությունները» (Լորենս Բլում: «Recognition, Value, and Equality: A Critique of Charles Taylor's and Nancy Fraser's Accounts of Multiculturalism» in: Theorizing Multiculturalism. A Guide to the Current Debate» Սինթա Ուիլեթի խմբագրությամբ, Մելբեռն 1998, էջ 79:

2 Չարլզ Թեյլոր «The Politics of Recognition, in: Multiculturalism. Examining the Politics of Recognition», Էմի Գուբմանի խմբագրությամբ, Փրինստոն, 1994, էջ 59: Նույն գրքում տես նաև «Habermas' Critique of Taylor's approach», էջ 111:

3 Չարլզ Թեյլոր «The Politics of Recognition, in: Multiculturalism. Examining the Politics of Recognition», Էմի Գուբմանի խմբագրությամբ, Փրինստոն, 1994, էջ 64:



գնահատելու և անհատականությունը զարգացնելու համար:<sup>1</sup> Անհատական արժանիքներին առնչվող հարցերն արդիական են նաև հասարակության տարբեր ենթախմբերի համար: Այստեղից կարելի է եզրակացնել, որ բազմամշակութային հասարակությունը պետք է ազգային փոքրամասնություններ ներառի և երկխոսության միջոցով անմիջականորեն հաղորդակցվի նրանց հետ: Հետագայում նման մոտեցումը ենթադրում է փոքրամասնությունների անհատականությունը ձևավորելու և դրա վրա ազդելու հնարավորությունը: Թեև մշակույթների ամբողջական ծուլումը «կատարյալ յուրօրինակության դեմ գործած հնարավոր մեղքերից ծանրագույնն է»<sup>2</sup>, սակայն ամբողջ բազմամշակութային հասարակության՝ նոր գաղափարներ ընդունելու պատրաստակամության պարագայում տարբերությունների ճանաչման և երկխոսության վրա հիմնված փոխազդեցությունը հնարավորություն կտա պահպանելու հասարակության մեծամասնությունը կազմող խմբի մշակույթը՝ չանտեսելով փոքրամասնությունը: Այնուամենայնիվ, բազմամշակութային քաղաքականության առջև ներկայումս ծառայած ամենալուրջ խնդիրը մնում է անորոշ հայեցակարգը, որը նման քաղաքականություն վարելու համար որևէ հստակ միջոց չի սահմանում: Այս քննադատությունը մասնավորապես, վերաբերում է Գերմանիայում առաջացած իրավիճակին: Նման հարցերում անորոշությունը ոչ միայն բազմաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս, այլև մեծամասնության և փոքրամասնությունների մշակույթների նկատմամբ պետության չեզոք մոտեցման տեսանկյունից վիճելի է դարձնում բազմամշակութային հասարակության իդեալը:

## **Փոքրամասնությունների իրավունքներն ու դրանց սահմանափակումները**

Փոքրամասնությունների տարբերությունների ճանաչում և նրանց նկատմամբ հավասար վերաբերմունք քարոզող քաղաքականության նախապայմանը բնակչության տարբեր ենթախմբերի նկատմամբ պետության չեզոք մոտեցումն է, քանի որ միայն նման մոտեցմամբ է հնարավոր ճանաչել և ընդունել այդ ենթախմբերի տարբերությունները: Այսպես, բազմամշակութային հասարակություն ունեցող և չեզոք մոտեցում դրսևորող ազատական պետությունը պետք է պատրաստ լինի «բազմաէթնիկական իրավունքներ»<sup>3</sup> սահմանելու իր փոքրամասնությունների համար, ովքեր Գերմանիայի պարագայում, օրինակ, տարբեր ազգերի ներկայացուցիչներ են ներառում: Այդ իսկ պատճառով Թեյլորի գաղափարախոսությունը քննարկելիս Յուրգեն Հաբերմասը ճիշտ է նշում, որ «բազմամշակութային հասարակության

1 Չարլզ Թեյլոր «The Politics of Recognition, in: Multiculturalism. Examining the Politics of Recognition», Էմի Գուլմանի խմբագրությամբ, Փրինստոն, 1994, էջ 66:

2 Չարլզ Թեյլոր «The Politics of Recognition, in: Multiculturalism. Examining the Politics of Recognition», Էմի Գուլմանի խմբագրությամբ, Փրինստոն, 1994, էջ 38:

3 Յուրգեն Հաբերմաս «Struggles for Recognition in the Democratic Constitutional State, in: Multiculturalism. Examining the Politics of Recognition», Էմի Գուլմանի խմբագրությամբ, Փրինստոն, 1994, էջ 110:

րակության պայմաններում ծագող առաջնային խնդիրն առնչվում է էթնկայի տեսանկյունից չեզոք օրենքին և քաղաքականությանը»<sup>1</sup>: Սակայն Գերմանիայի նման ազատական ժողովրդավարական սահմանադրական պետությունները պետք է գտնեն հետևյալ հարցի պատասխանը՝ ինչպե՞ս պետք է պետությունն արձագանքի փոքրամասնությունների տարբերությունների ճանաչում քարոզող քաղաքականության հիման վրա փոքրամասնությունների կողմից ներկայացվող ոչ ազատական պահանջներին<sup>2</sup>: Ճիշտ է արդյոք փոքրամասնությունների տարբերությունների ճանաչում քարոզող քաղաքականության շրջանակներում ներկայացվող ոչ ազատական պահանջների հիման վրա իրավունքներ տալ նրանց: Միզուցե պետությունը պետք է սահմանափակի նման ոչ ազատական պահանջներ ներկայացնելու իրավունքը: Ազատական և կոմունիստար ուղղությունների քաղաքական տեսաբանները, այդ թվում՝ Կիմիչկան և Մայքլ Վոլցերը համամիտ են նման իրավունքների սահմանափակմանը՝ իրենց կարծիքը հիմնավորելով այն փաստով, որ շատ դեպքերում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն իրենց կամքով են արտագաղթել իրենց ծագման երկրից»<sup>3</sup>: Ահա ինչու Կիմիչկան եզրակացնում է, որ փոքրամասնությունների պահանջների օրինականությունը հիմնականում նրանց՝ նպատակակետ երկիր ներգաղթելու մասին կամավոր որոշումից է կախված:

Ուստի նույնիսկ մշակութային փոխազդեցությունը խրախուսող երկիրը, տարբերությունների ճանաչման քաղաքականությունից անկախ, պետք է հարցականի տակ առնի յուրաքանչյուր ներգաղթյալի ոչ ազատական բնույթի տարբեր պահանջները. «...Ազատականության սկզբունքով առաջնորդվող երկիրն օտար ծագում ունեցող փոքրամասնությունների պահանջները կուրորեն ընդունել չի կարող»<sup>4</sup>: Այս մոտեցումն իսկապես շատ կարևոր է, քանի որ ոչ ազատական պահանջները բավարարելու դեպքում փոքրամասնություններն ավելի ազատական չեն դառնա, փոխարենը՝ նրանց ընդունող ազատական երկրի հիմնարար սկզբունքները հարցականի տակ կառնվեն: Այս կապակցությամբ Կիմիչկան ասել է հետևյալը. «Որոշ երկրների ժողովուրդն ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավունք չունի, սակայն յուրաքանչյուրը որոշակի պարտականություններ և դերեր ունի, որոնք կատարելու անհրաժեշտությունը նա կասկածի տակ անգամ չի առնում: Այլ երկր-

1 Ներգաղթյալ խմբերին իրենց մշակութային առանձնահատկությունները պահպանելու համար իրավունքներ և միջոցներ տալու հարցի մանրամասն քննարկումը տես Վիլ Կիմիչկա «Multicultural Citizenship», Նյու Յորք, 1995, էջ 75-76:

2 Վիլ Կիմիչկա «Multicultural Citizenship», Նյու Յորք, 1995, էջ 63:

3 Վիլ Կիմիչկա «Multicultural Citizenship», Նյու Յորք, 1995, էջ 94:

4 Ինչպես արդեն նշվել է, ըստ Կիմիչկայի՝ ազատական պետությունը չի կարող անգամ հուսալ, որ փոքրամասնությունները լիովին կձուլվեն տեղի բնակչության հետ: Իսկ Հաբերմասը բազմամշակութայնության գերմանական հայեցակարգի շրջանակներում ծուլման երկու աստիճան է առանձնացնում: Առաջինը բնութագրվում է սահմանադրության դրույթների ընդունմամբ, իսկ երկրորդը՝ տվյալ երկրի մշակույթին հաղորդակից լինելու պատրաստականությամբ (Յուրգեն Հաբերմաս՝ «Struggles for Recognition in the Democratic Constitutional State (Multiculturalism. Examining the Politics of Recognition)» Էմի Գուլթմանի խմբագրությամբ, Փրինստոն, 1994, էջ 110): «Սահմանադրական հայրենասիրություն» եզրույթի ընդհանուր սահմանումը տես Յուրգեն Հաբերմաս «Staatsbürgerschaft und nationale Identität» («Faktizität und Geltung»), Ֆրանկֆուրտ, 1992, և Դոլֆ Շտերնբուրգեր «Verfassungspatriotismus» Ֆրանկֆուրտ, 1990:

ներում ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավունք ունեն միայն հասարակության որոշակի խմբերը, մինչդեռ այլ խմբերը, օրինակ՝ կանայք, հասարակության ավելի ցածր խավերը կամ փոքրամասնությունները նման իրավունքից զուրկ են»։ Այդուհանդերձ, շատ կարևոր է հաշվի առնել, որ վերոնշյալ տեսաբաններից ոչ ոք հասարակության տարբերությունները չճանաչող մոտեցումները կամ ուժացման քաղաքականությունը չի պաշտպանում։ Ընդհակառակը, Թեյլորի երկխոսության մասին մոտեցման վրա հիմնված նրանց տեսությունները ենթադրում են երկխոսություն ծավալելու և հասարակության նման ոչ ազատական ենթախմբերի ազատականացմանը նպաստելու անհրաժեշտությունը։

Գերմանացի փիլիսոփաներ Հաբերմասը և Շտերնբերգերն առաջինն են գործածել «Verfassungspatriotismus» (թարգմ. սահմանադրական հայրենասիրություն) եզրույթը<sup>1</sup>՝ սահմանադրական դրոյթների վրա հիմնված օրինական պահանջները սահմանադրությանը հակասող անօրինական պահանջներից տարբերելու համար։ Վերոնշյալ տեսություններն ամփոփելով՝ կարելի է ասել, որ բազմամշակութային քաղաքականությունը հաջողված է համարվում այն դեպքում, եթե տվյալ երկրին հաջողվում է իր հասարակության մեջ ներգրավել ներգաղթյալներին՝ նրանց հնարավորություն տալով պահպանել սեփական մշակույթը<sup>2</sup>։ Հաշվի առնելով եվրոպական երկրներում բնակվող կրոնական փոքրամասնությունների, այդ թվում՝ մահմեդականների կողմից ներկայացվող ազատական և երբեմն ոչ ազատական դատական հայցերի թվի շարունակական աճը՝ ներգաղթի և ներգաղթյալների ինտեգրման շուրջ բազմամշակութային քաղաքականությանն առնչվող հարցերն ամբողջ եվրոպայում ծավալվող քննարկումների առարկա են դարձել։ Նման դատական հայցեր ներկայացվել են նաև Գերմանիայում և շարիաթի կամ նման օրենքների հիման վրա ներկայացված այլ պահանջների շուրջ թե՛ժ հանրային քննարկումների պատճառ են դարձել։ Նման հայցերը մեծ մասամբ ամուսնական հարաբերությունների մասին մահմեդական օրենքներին են առնչվում։

## **Արդյո՞ք Գերմանիայում բնակվող մահմեդականների նկատմամբ բազմամշակութային մոտեցում ցուցաբերվում է**

Փոքրամասնությունների տարբերությունների ճանաչման և նրանց նկատմամբ հավասար վերաբերմունք քարոզող քաղաքականության ուղղությունները զուգորդող երկիրն իր տարածքում բնակվող փոքրամասնությունների համար կարող է իդեալական արդյունք ապահովել, եթե հաջողվի նրանց այսպես կոչված մշակութային երկքաղաքացիություն առաջարկել, ինչը ներգաղթյալներին

1 Յուրգեն Հաբերմաս «Struggles for Recognition in the Democratic Constitutional State (Multiculturalism. Examining the Politics of Recognition)» Էփի Գութմանի խմբագրությամբ, Փրինստոն, 1994, էջ 139: Տես նաև Վիլ Կմիլիչկա «Multicultural Citizenship», Նյու Յորք, 1995, էջ 96 և Ստիվեն Դիջքստրա, Քարին Գոյցեն և Արի դե Ռուիստեր «Multiculturalism and Social Integration in Europe», International Political Science Review ամսագիր, հատոր 22, թիվ 1, 2001, էջ 55-83:

2 Թարիք Մոդուլ «Multiculturalism», Քեմբրիջ, 2007, էջ 49:

հնարավորություն կտա իրենց ընդունող երկրի մշակույթին հաղորդակից լինելով՝ պահպանել իրենց ծագման երկրի մշակույթը: Ներգաղթյալները չպետք է բախվեն երկու տարբեր մշակույթների միջև ընտրություն կատարելու խնդրին: Ընդհակառակը, նրանց պետք է հորդորել ընդունել ինչպես իրենց ծագման երկրի, այնպես էլ ընդունող երկրի ազգային պատկանելությունը կամ կրոնական հայացքները<sup>1</sup>: Հիմնականում բազամամշակութային երկիր հանդիսացող Կանադայում, ինչպես նաև Միացյալ Նահանգներում, ազգային և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները սովորաբար իրենց բնորոշում են հին և նոր ազգային կամ կրոնական պատկանելությունը նշող արտահայտություններով, օրինակ՝ կանադաբնակ իրեաներ, ամերիկաբնակ հայեր, ամերիկաբնակ մահմեդականներ<sup>2</sup> կամ ընդունող երկրում նրանց տարբերվող կրոնական հայացքները կամ ազգային և էթնիկական պատկանելությունը նշող ցանկացած այլ անվանումներով: Գերմանիայում բնակվող մահմեդականների կրոնական առանձնահատկությունը համապատասխանաբար նշվում է «գերմանաբնակ մահմեդականներ» բառակապակցությամբ: Սակայն Եվրոպայի փոքրամասնությունների առջև ծառայած խնդիրներն ավելի ակնհայտ են դրսևորվում Գերմանիայում: Ի տարբերություն Կանադայի և Միացյալ Նահանգների բնակչության, Եվրոպացիները դեռևս պատրաստ չեն ընդունելու իրենց կրոնական հայացքները և ազգային պատկանելությունը մեկ բառակապակցությամբ արտահայտող մահմեդականներին: Այդպիսի եզրակացության է հանգել Եվրոպայում բնակվող մահմեդականների վիճակը նկարագրող աշխատության հեղինակ Լիզ Ֆեքթթեն<sup>3</sup>: Նոր հասարակությանը հաջողությամբ ինտեգրվելու համար Եվրոպական երկրներում բնակվող մահմեդականները պետք է առաջնորդվեն Եվրոպական ազատական և մեծ մասամբ աշխարհիկ չափանիշներով, որոնք, մահմեդական հավատացյալների մեծամասնության կարծիքով, հակասում են մահմեդականի անհատականության բուն էությանը:

Ուստի Եվրոպական հասարակությանն ինտեգրվելու համար մահմեդականները ստիպված են հրաժարվել իրենց կրոնի որոշ սկզբունքներից: Նման տեսակետը հաստատվում է նաև Բիելֆելդի համալսարանի՝ Եվրոպայում արձանագրված հակամահմեդական տրամադրությունների աճին նվիրված ուսումնասիրությամբ: Այսպես, գերմանացիների 46 տոկոսը կցանկանար, որ մահմեդականներն ավելի ցածր թիվ կազմեին իրենց երկրում, իսկ 54,1 տոկոսը կարծում է, որ Գերմանիայում բնակվող մահմեդականները շատ «պահանջկոտ» են: Հարցված գերմանացիների

1 Ամերիկաբնակ մահմեդականների ինքնորոշման և սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո նրանց դրության մասին տես տվյալների շտեմարանի հիման վրա կատարված հետևյալ օգտակար վերլուծությունը Լուիզ Ս. Չայնթար «Homland Insecurity: The Arab American and Muslim Experience After 9/11», Նյու Յորք, 2009:

2 Լիզ Ֆեքթթե «A Suitable Enemy: Racism, Migration and Islamophobia in Europe», Նյու Յորք, 2009:

3 Անդրեա Չիք, Քյուփեր, Բեաթե, Հիննա և Վոլֆ՝ «European Conditions. Findings of a study on Group-focused Enmity in Europe», Գերմանիայի Բիելֆելդի համալսարանի Հակամարտության և բռնության միջառարկայական հետազոտությունների ինստիտուտ: Հետազոտության արդյունքները կարելի է բեռնել հետևյալ վեբկայքից՝ <http://www.euro-islam.info/2009/11/18/study-reveals-prejudices-against-islam-all-over-europe/>:

յուրաքանչյուր երկրորդը (52,5 տոկոս), իսկ երբեմն նաև գրեթե բոլոր հարցվածները իսլամն անհանդուրժողականություն սերմանող կրոն են համարում<sup>1</sup>: Գրեթե նույն թվերն են արձանագրվել նաև եվրոպական այլ երկրներում անցկացված հարցումների արդյունքում: Այնուհանդերձ, Գերմանիայում բնակվող մահմեդականների առջև ծառայած ամենալուրջ խնդիրն այն է, որ գերմանական հասարակությանն ինտեգրվելու համար անձը պետք է ծագումով գերմանացի լինի. գերմանական մշակույթին հաղորդակից լինելը բավարար չէ: Թեև 2001 թ. հունվարի 1-ի «Գերմանիայի քաղաքացիություն ստանալու մասին» փոփոխված օրենքով քաղաքացիություն շնորհելու ընթացակարգերը զգալիորեն պարզեցվել են, և այժմ Գերմանիայում ծնված արտասահմանցիները որոշ դեպքերում կարող են Գերմանիայի քաղաքացիություն ստանալ<sup>2</sup>, այնուհանդերձ գերմանացիների մեծամասնությունը շարունակում է թերահավատորեն վերաբերվել այլ ծագում ունեցող գերմանացիներին: Նման վերաբերմունքը հնարավորություն է տալիս բացատրելու Գերմանիայում մեծ թիվ կազմող փոքրամասնություններին, մասնավորապես՝ թուրքերին իրենց մշակույթին հաղորդակից դարձնելու հարցում գերմանացիներին հանդիպող դժվարությունները: Բացի այդ, գերմանական հասարակությանը մահմեդականների հաջող ինտեգրման ձախողման մասին խոսելիս գերմանացի ազգագրագետ Վերներ Շիֆաուերը երկու պատճառ է առանձնացնում. «Առաջին պատճառը արևելյան երկրներում արմատացած իսլամի ընկալումն է որպես բոլոր այլ կրոնների հիմքը: Ներկայումս նման ընկալումը ենթադրում է, որ իսլամն իր բազում հակահիշներով հակասում է գերմանացիների իդեալին...: Երկրորդ պատճառն, անշուշտ, իսլամական ահաբեկչությունն է»<sup>3</sup>:

Փոքրամասնությունների տարբերությունների ճանաչման և նրանց նկատմամբ հավասար վերաբերմունքի քաղաքականության անհրաժեշտությունը կարևորող բազմամշակութայնության տեսության հիման վրա կարելի է պարզել Գերմանիայում բազմամշակութային քաղաքականության ձախողման հիմնական պատճառը: Գերմանացիներն իրենց հայրենիքը սկսել են ներգաղթի երկիր համարել բոլորովին վերջերս: Բացի այդ, 1990-ական թվականների վերջերին փոքրամասնություններին իր մշակույթին հաղորդակից դարձնելու ուղղությամբ աստիճանաբար քայլեր ձեռնարկելիս Գերմանիան ուշադրություն էր դարձնում միայն վերոնշյալ քաղաքականության առաջին ուղղությանը, այսինքն՝ փոքրամասնությունների տարբերությունների ճանաչման ուղղությանը: Նույնիսկ այսօր հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, օրինակ՝ Գերմանիայի կառավարության գլխավորած իսլամական խորհրդաժողովներում<sup>3</sup> կամ գերմանաբնակ մահմեդա-

1 «Քաղաքակցիություն ստանալու մասին» օրենքի ամբողջական մեկնաբանությունը տե՛ս Գերմանիայի Դաշնության կառավարության վեբկայքը 2009 թ. Հուլիսի 12 –ի դրությամբ՝ <http://www.bundesregierung.de/Webs/Breg/DE/Bundesregierung/BeauftragtefuerIntegration/Einbuergderung/einbuergderung.html>:

2 Վերներ Շիֆաուեր «Enemies within the gates. The debate about citizenship of Muslims in Germany», (Թարիք Մոդոլդի, Աննա Տրյանդաֆիլիդոյի և Ռիկարդ Զապատա-Բարերոյի խմբագրությամբ՝ «Multiculturalism, Muslims and Citizenship. A European Approach»), Նյու Յորք, 2006, էջ 111:

3 Գերմանիայի ներքին գործերի նախարարի նախաձեռնությամբ և Գերմանիայում գործող որոշ մահմեդական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվող իսլամական

կանների կողմից ներկայացվող դատական հայցերին հաջորդող հանրության արձագանքում, կարելի է տեսնել այս հարցի շուրջ վարվող նման միակողմանի քաղաքականության արդյունքը՝ մեր և «նրանց» միջև շարունակական տարբերակումը:

## **Գերմանիայի՝ բազմամշակութային քաղաքականության ձախողումը և վտանգը**

Վերը ներկայացրեցինք բազմամշակութային քաղաքականության կատարյալ հայեցակարգը և Գերմանիայում տիրող իրավիճակը, որն ունի մի քանի պատճառ: Առաջին՝ դեռևս «Ժամանակավոր ներգաղթյալ աշխատողներ ընդունելուց հետո» Գերմանիայի՝ նշված բազմազգ ենթախմբերի ներկայացուցիչներին իր հասարակությանը լիարժեքորեն ինտեգրելու ջանքերն ապարդյուն են անցել: Երկրորդ՝ երբ Գերմանիան վերջապես աստիճանաբար գիտակցեց իր փաստացի երկարաժամկետ ներգաղթյալ աշխատողներին և նրանց երեխաներին հասարակությանը ինտեգրելու անհրաժեշտությունը, ընդունեց բազմամշակութային հայեցակարգի երկու որոշիչ մոտեցումներից միայն մեկը. Գերմանիան ճանաչել է թուրք փոքրամասնության տարբերությունները, սակայն այդ ներգաղթյալներին և նրանց ընտանիքներին երկրի լիարժեք քաղաքացիների նման հասարակությանն ինտեգրելու ուղղությամբ որևէ հստակ ռազմավարություն չի մշակել<sup>2</sup>: Այս հարցում Գերմանիայի ձախողումը կարող ենք բացատրել երկու պատճառով: Առաջին պատճառը, ինչպես արդեն նշվել է, գերմանական հասարակությանն ինտեգրվելու առանձնահատկություններից մեկը համարվող գերմանական ծագումն է: Նոր ներգաղթյալների ազգային և մշակութային տարբերություններն ընդունելու մոտեցման հետ զուգորդված՝ այդ առանձնահատկությունը բնական վախ է ներշնչում հատկապես ակնհայտ տարբերություններ, օրինակ՝ գլխաշոր կրող մահմեդական կին տեսնելու պարագայում<sup>3</sup>: Ազգային և մշակութային տարբերությունների նկատմամբ նման ընդհանուր վախը միշտ չէ որ ռասիզմով կամ այլատյացությամբ է պայ-

---

խորհրդածողովների մասին տե՛ս այդ կոնֆերանսների պաշտոնական վեբկայքը՝ [http://www.deutsche-islam-konferenz.de/cln\\_101/sid\\_360EA0B04F7BB5DCD878B147D48D865A/SubSites/DIK/DE/Startseite/home-node.html?\\_nnn=true](http://www.deutsche-islam-konferenz.de/cln_101/sid_360EA0B04F7BB5DCD878B147D48D865A/SubSites/DIK/DE/Startseite/home-node.html?_nnn=true), վեբկայքի անգլերեն տարբերակը տեսնելու համար՝ այցելեք՝ [http://www.en.bmi.bund.de/cln\\_012/nn\\_1026710/Internet/Navigation/EN/Topics/German\\_\\_Islam\\_\\_Conference/German\\_\\_Islam\\_\\_Conference\\_\\_node.html\\_\\_nnn=true](http://www.en.bmi.bund.de/cln_012/nn_1026710/Internet/Navigation/EN/Topics/German__Islam__Conference/German__Islam__Conference__node.html__nnn=true):

1 Վերներ Շիֆաներ «Enemies within the gates. The debate about citizenship of Muslims in Germany», (Թարիք Մոհուդի, Աննա Տրյանդաֆիլիդիս և Ռիկարդ Զապատա-Բարերոյի խմբագրությամբ՝ «Multiculturalism, Muslims and Citizenship. A European Approach»), Նյու Յորք, 2006, էջ 103:

2 Վեդաթ Ացիբայոզ «Immigration and Germany. From Foreign Worker to Citizen», (գերմաներենից անգլերեն է թարգմանել Ռոն Ուոքերը): «Դոյչե վելե» ռադիոկայանի կողմից պատրաստված անցանց տարբերակը տե՛ս հետևյալ վեբկայքում՝ [http://www.qantara.de/webcom/show\\_article.php?wc\\_c=757&wc\\_id=18&wc\\_p=1](http://www.qantara.de/webcom/show_article.php?wc_c=757&wc_id=18&wc_p=1):

3 Ֆեբթե՛ն ընդգծում է, որ գլուխը ծածկելու համար գործածվող տարբեր միջոցները մահմեդական կանանց ռասայական հատկանիշն են համարվում: Այսպիսով, Արևմտյան Եվրոպայի երկրներում, գլխաշորը «մշակութային տարբերության հատկանիշ» է վերածվել: Տե՛ս Լիզ Ֆեբթե «A Suitable Enemy: Racism, Migration and Islamophobia in Europe», Նյու Յորք, 2009, էջ 57:

մանավորված: Ընդհակառակը, Թաջֆերը և Թերներն իրենց սոցիալական նույնության տեսությամբ ապացուցել են, որ նման վախը բոլորին է բնորոշ<sup>1</sup>:

Այնուամենայնիվ, Գերմանիայի պարագայում գերմանացիների և ներգաղթյալների՝ «նրանց» միջև երկխոսության բացակայության պատճառով այդ վախն ավելի է խորացել: Այլ երկրներում, օրինակ՝ Կանադայում և Միացյալ Նահանգներում, տարբերությունների նկատմամբ բնական վախը կարելի է հաղթահարել ներգաղթյալներին տվյալ երկրի հասարակությանն ինտեգրելու միջոցով, մինչդեռ «այդ մահմեդականներին» քաղաքացիության շնորհումը գերմանական հասարակության կողմից արդեն իսկ մեծ խնդիր է համարվում<sup>2</sup>: Այդ իսկ պատճառով Գերմանիայում փոքրամասնությունների տարբերությունները ճանաչելու մոտեցումը մինչ օրս հեռու է Թեյլորի նկարագրված մոտեցումից, այսինքն՝ այլոց մշակույթը որպես արժանիք ընդունելուց: Փաստորեն, Գերմանիայում դրսևորվող մոտեցման արդյունքում թուրք փոքրամասնության ճանաչումը ենթադրում է պարզապես դրա գոյության հանդուրժում, ոչ թե ինտեգրում երկրում մեծամասնության կազմող հասարակությանը: Նման իրավիճակից բխում է Գերմանիայում փոքրամասնությունների տարբերությունների և հավասարության ճանաչման քաղաքականության ծախսողման երկրորդ պատճառը: Գերմանիայում ընդունված մոտեցման հետևանքով ձևավորվել է այսպես կոչված «զուգահեռ հասարակություններ» իրողությունը: Մահմեդական և գերմանական բնակչության ներկայացուցիչների միջև երկխոսության բացակայության հետևանքով այս զուգահեռ հասարակությունների ներսում առաջացել են ենթախմբեր, որոնք իրենց հետ չհաղորդակցվող և իրենց բուն էությունը չզիտակցող մեծամասնության կողմից աննկատ են մնացել:

Նման իրավիճակը և դրա հետևանքները կանխատեսել են դեռևս 1980-ական թվականներին: Այնուհանդերձ, չպետք է անտեսել այն փաստը, որ փոքրամասնություն կազմող ներգաղթյալներին նույնպես դուր է գալիս իրենց ազգային մեկուսացումը: Ընդունող երկրի հիմնական բնակչությունից մեկուսանալու նրանց ցանկությունը նույն մեդալի մյուս կողմն է<sup>3</sup>: Սեպտեմբերի 11-ի ահաբեկության արդյունքում տեղի ունեցած փոփոխությունները հանգեցրել են զուգահեռ հասարակությունների ձևավորմանը, որոնց ներկայացուցիչները «պատվաբեր» սպանության կամ իրենց կանանց ծեծի ենթարկելու համատեքստում շատ հաճախ էին հիշատակվում դեղին մամուլում: Այս հանգամանքը նույնպես խորացրել է գերմանացիների վախը մահմեդական ներգաղթյալներին Գերմանիայի հիմնա-

1 Նրանց կարծիքով, նույն խմբին պատկանող բոլոր անձինք ունեն նույն նախապաշարումները: Սա նշանակում է, որ նրանք անմիջապես նախապատվություն են տալիս իրենց խմբին, այլ ոչ թե՛ որևէ այլ խմբերին: Հենրի Թաջֆել և Ջոն Յ. Թերներ «The social identity theory of intergroup behavior» (Ս. Ուորթլեյ և Վ. Գ. Օուսթին «Psychology of Intergroup Relations»), Չիկագո, 1986, էջ 7-24:

2 Վերներ Շիֆաուեր՝ «Enemies within the gates. The debate about citizenship of Muslims in Germany», (Թարիք Մողոդի, Աննա Տրյանդաֆիլդոփ և Ռիկարդ Զապատա-Բարերոյի խմբագրությամբ՝ «Multiculturalism, Muslims and Citizenship. A European Approach»), Նյու Յորք, 2006, էջ 96:

3 Մաքս Վինգեն «Immigration to the Federal Republic of Germany as a Demographic and Social Problem», «International Migration Review» ամսագիր, հատոր 29, թիվ 3, Նյու Յորք, 1995, էջ 710-721: Մասնավորապես, ուշադրություն դարձրեք էջ 715:

կան հասարակությանն ինտեգրելու նկատմամբ: 2006թ. գերմանացի քաղաքական գործիչներն առաջին անգամ բախվեցին մահմեդականների նկատմամբ գերմանական հասարակության վերոնշյալ թերահավատ վերաբերմունքի հետևանքով առաջացած լուրջ խնդիրներին և փորձեցին Գերմանիայում իսլամական մի շարք խորհրդատուներին (գերմ՝ DIK) ընթացքում ծավալվող երկխոսությունների միջոցով լուծել դրանք: Գերմանիայի Դաշնության ներքին գործերի ներկա նախարարը Գերմանիայում գործող համապատասխան մահմեդական կազմակերպությունների ներկայացուցիչներին պարբերաբար հրավիրում է մասնակցելու մահմեդականների ինտեգրմանը նպաստող քննարկումների: Հետաքրքրականն այն է, որ նման քննարկումներին հրավիրվում են միայն Գերմանիայի աշխարհիկ և ազատական պետության հասարակությանը ինտեգրված կազմակերպությունների ներկայացուցիչներին: «Միլի Գյորուս» («Milli Görüs») պահպանողական և բավականին ծայրահեղ հայացքներ ունեցող մահմեդական կազմակերպությանը մերժում են մասնակցել խորհրդատուներին<sup>1</sup>: Նման դեպքերում ևս ականատես ենք լինում բազմամշակութային մոտեցման մասին Թեյլորի տեսության դրույթների անտեսմանը: Ի դեպ, հիշեցնենք, որ նշված տեսության հիմքում ընկած է երկխոսություն ծավալելու գաղափարը և «Միլի Գյորուսի» նման կազմակերպությունների վրա ազդեցություն գործելու և նույնիսկ դրանք ազատականացնելու հնարավորությունը: Այսպիսով, Գերմանիայի հիմնական բնակչության և ազգային ու կրոնական փոքրամասնությունների միջև երկխոսության ծավալման ընդհանուր նախաձեռնությունն ամենևին էլ չի նպաստել նախապաշարումներից հասարակական կարծիքի ձեռքբազատմանը: Իսկ Գերմանիայի քաղաքական գործիչները ներքին գործերի նախկին նախարարի՝ դոկտոր Վոլֆգանգ Շյոբլեի գլխավորությամբ շարունակում են նպաստել զուգահեռ հասարակությունների ձևավորմանը, առնվազն՝ ոչ ազատական մոտեցումներ դրսևորող խմբերում: Փաստորեն, հակամահմեդական տրամադրությունները նույնիսկ աճում են:

## **Գերմանիայում բնակվող մահմեդականների ներկայացրած դատական հայցերը**

Թեև հարցվածների մեծ մասը իսլամի կրոնին թերահավատորեն է վերաբերվում և մահմեդականներին որոշակի պարտավորություններից ազատելու նախաձեռնության դեմ է արտահայտվում, այնուհանդերձ քաղաքական և իրավական դաշտում մահմեդականների նկատմամբ մոտեցումը երկու ծայրահեղություններով

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Լիզ Ֆեթթե «A Suitable Enemy: Racism, Migration and Islamophobia in Europe», Նյու Յորք, 2009, էջ 121-123, տե՛ս նաև Թարիք Մոդուդ՝ «Multiculturalism», Քեմբրիջ, 2007, էջ 97-100: Ի տարբերություն Թեյլորի և Կիլիկայի նման նույնիսկ ծայրահեղական կազմակերպությունների հետ երկխոսություն խրախուսող Ֆեթթեի՝ Մոդուդը կարծում է, որ «հարկավոր է շատ զգույշ լինել, քանի որ հարձակումն ավելի վտանգավոր է, քան պարզապես անարդարացի վերաբերմունքը» (էջ 100): Այսպիսով, Մոդուդն անտեսում է այն ենթադրությունը, որ մեկուսացումը կարող է ավելի ծայրահեղ քայլերի հանգեցնել, մինչդեռ երկխոսությունը տալիս է փոքրամասնությունների վրա ազդեցություն գործելու և, ի վերջո, նրանց ազատական դարձնելու հնարավորություն:



է դրսևորվում: Կցանկանայի ասածս հաստատել հանրային թեժ վիճաբանությունների պատճառ դարձած երկու դատական գործերով: Դրանցից մեկի հիմքում ընկած է «ազատական» հայց, իսկ մյուսի հիմքում՝ ակնհայտորեն «ոչ ազատական» հայց: Հետաքրքրական է, որ երկու դեպքերում դատարանը մասամբ բավարարել է հայցերը, իսկ հանրությունը քննադատել է նման որոշումները: Հարկ է նշել, որ մահմեդական փոքրամասնության ներկայացրած հայցերը քննադատում և մերժում են ինչպես աջ, այնպես էլ ձախ հայացքների տեր անձինք<sup>1</sup>:

Վերոնշյալ հայցերից առաջինը Գերմանիայի դաշնային հանրապետության սահմանադրական դատարան (գերագույն դատարան) է ներկայացվել 2003 թ. և բարձրացրել է այն հարցը, թե արդյոք պետական դպրոցներում աշխատող մահմեդական ուսուցչուհիներին կարելի է թույլատրել գլխաշոր կրել դպրոցում, թե՛ ոչ: Գերմանիայում պետական դպրոցների ուսուցիչները պետական ծառայող (գերմ. «Beamte») են համարվում, ուստի և պարտավոր են պահպանել պետության չեզոք դիրքորոշումը: Տվյալ դեպքում հայցվոր հանդիսացող Ֆերեշթա Լուդինը վիճարկել է իր գործատուի՝ դպրոցում գլխաշոր չկրելու պահանջը: Դպրոցի տնօրինությունը պնդել է, որ դպրոցում գլխաշոր կրելով՝ ուսուցչուհին խախտել է պետության չեզոք դիրքորոշումը: Գերագույն դատարանի կայացրած վճռում, սակայն, ասվում է, որ «միայն գլխաշոր կրելով՝ ուսուցչուհին Գերմանիայի սահմանադրությունը չի խախտում, իսկ գործող օրենքների համաձայն՝ գլխաշոր չկրելու պահանջ ներկայացնելն արգելված է»<sup>2</sup>: Այնուհանդերձ, հարկ է հաշվի առնել, որ Գերմանիայում կրթության մասին օրենքները հաստատվում են ոչ թե դաշնային կառավարության, այլ երկրամասերի պետական մարմինների կողմից: Փաստորեն, գերագույն դատարանը տեղական մարմինների հայեցողությանն է թողնում ուսուցիչներին կրոնական զգեստ կրելու արգելող կամ թույլատրող լրացուցիչ օրենքներ ընդունելու իրավունքը: Թեև դաշնային մակարդակով Լուդինը և նրան սատարող մահմեդական կազմակերպությունները շահել են գործը, այնուհանդերձ այս դատական գործը ոչ միայն գլխաշորի՝ որպես անհանդուրժողականության խորհրդանիշի շուրջ թեժ վիճաբանությունների տեղիք է տվել, այլև Լուդինի դեմ լրատվամիջոցների կողմից կազմակերպված քարոզարշավի հանգեցրել<sup>3</sup>: Եթե բազմամշակութային ամուր համակարգ ունեցող երկրներում մահմեդականները վկայակոչում են երկ-

1 Վերներ Շիֆաուեր «Enemies within the gates. The debate about citizenship of Muslims in Germany», (Թարիք Մոդուդի, Աննա Տրյանդաֆիլիդուի և Ռիկարդ Զապատա-Բարերոյի խմբագրությամբ «Multiculturalism, Muslims and Citizenship. A European Approach»), Լյու Յորք, 2006, էջ 102-107:

2 Վերներ Շիֆաուեր «Enemies within the gates. The debate about citizenship of Muslims in Germany» (Թարիք Մոդուդի, Աննա Տրյանդաֆիլիդուի և Ռիկարդ Զապատա-Բարերոյի խմբագրությամբ «Multiculturalism, Muslims and Citizenship. A European Approach»), Լյու Յորք, 2006, էջ 103: Գերագույն դատարանի կողմից գերմաներեն լեզվով կայացրած որոշումը տես՝ Գերմանիայի դաշնության սահմանադրական դատարանի որոշում, 2 BvR 1436/02 առ 3.6.2003, Absatz-Nr. (1 - 140), [http://www.bverfg.de/entscheidungen/rs20030924\\_2bvr143602.htm](http://www.bverfg.de/entscheidungen/rs20030924_2bvr143602.htm):

3 Շիֆաուերը շարունակում է Ալի Շվարցերի սկսած արշավը, Վերներ Շիֆաուեր «Enemies within the gates. The debate about citizenship of Muslims in Germany» (Թարիք Մոդուդի, Աննա Տրյանդաֆիլիդուի և Ռիկարդ Զապատա-Բարերոյի խմբագրությամբ «Multiculturalism, Muslims and Citizenship. A European Approach»), Լյու Յորք, 2006, էջ 104-107:

րի սահմանադրությունը և պաշտպանում իրենց կրոնի ազատության իրավունքը (Գերմանիայի սահմանադրություն, հոդված 4), ապա մահմեդականների ինտեգրումը հաջողված է համարվում: Սակայն, ինչպես երևում է, Գերմանիայում այս հայցը մահմեդականների և ոչ մահմեդականների հարաբերությունների համար կործանարար հետևանքներ է ունեցել<sup>1</sup>: Այս ամենի պատճառը կրկին Թեյլորի փոքրամասնությունների հավասարությունը ճանաչող քաղաքականության բացակայությունն է: Թեև Լուդինի հայցն ազատական մոտեցման և սահմանադրական դրույթների վրա է հիմնված, այնուհանդերձ, նրա նկատմամբ դրսևորված վերաբերմունքը խիստ տարբերվել է, օրինակ, հագուստի տակ խաչ կրող քրիստոնյա ուսուցչի նկատմամբ հնարավոր վերաբերմունքից: Տեսանելի տարբերությունների նկատմամբ վախ՛ն ավելի ուժեղ է, քան հասարակությունում մահմեդական ուսուցչուհու կրոնական տարբերությունները ներառելու ձգտումը:

Մյուս հայցը, որը ներկայացվել է Ֆրանկֆուրտի քաղաքային դատարան, ավելի է խորացրել վիճաբանությունը: 2007 թ. ծագումով մարոկկացի 26-ամյա մահմեդական կինը, որը Գերմանիայի քաղաքացի է, ծնվել և ապրում է այդ երկրում, խնդրել է ընթացք տալ իր ամուսնալուծության հայցին նախքան ամուսնալուծությանը նախորդող տասներկու ամիս տևող պարտադիր ժամկետի ավարտը: Գերմանիայի ընտանեկան օրենսգրքի համաձայն՝ ամուսինները պետք է նախքան ամուսնալուծվելը մի ամբողջ տարի ապրեն առանձին: Սակայն անհաղթահարելի հանգամանքների դեպքում նրանք կարող են ամուսնալուծվել նախքան նշված ժամկետի լրանալը: Քանի որ հայցվոր կնոջ ամուսինը, որը նույնպես ծագումով մարոկկացի է, մի քանի անգամ բռնություն է գործադրել նրա նկատմամբ, կինը դիմել է դատարան՝ վկայակոչելով անհաղթահարելի հանգամանքները: Ինչպես Լուդինի պարագայում, այս դեպքում նույնպես խոսքը մահմեդական մի կնոջ մասին է, ով, որպես Գերմանիայի լիարժեք քաղաքացի, պաշտպանում է իր՝ Գերմանիայի սահմանադրությամբ ամրագրված իրավունքները: Գործը քննող գերմանուհի դատավորը պարտադիր ժամկետի ընթացքում ամուսնալուծվելու հայցը չի բավարարել: Վկայակոչելով ղուրանի չորրորդ սուրահի 34-րդ տողը՝ դատավորը պնդել է, որ ղուրանը մահմեդականին թույլ է տալիս մարմնական պատժամիջոցներ կիրառել իր կնոջ նկատմամբ: Քանի որ երկու ամուսիններն էլ ծագմամբ մարոկկացի էին, կնոջ նկատմամբ բռնության գործադրումը անհաղթահարելի հանգամանք չի համարվել<sup>2</sup>: Դատավորը խիստ քննադատության է արժանացել և հեռացվել է գործի

<sup>1</sup> Ինտեգրման գործընթացի իրավական տեսակետից այս գործը լայն տարածում է գտել: Տե՛ս, օրինակ՝ «Human Rights Watch» իրավապաշտպան կազմակերպության գեկույցը, որում քննադատվում է պետության չեզոք դիրքորոշումը խախտելու պատրվակով ուսուցչուհիներին ներկայացված գլխաշոր կրելու արգելքը «Human Rights Watch» իրավապաշտպան կազմակերպության նշված գեկույցը (Diskriminierung im Namen der Neutralität Kopftuchverbote für Lehrkräfte und Beamte in Deutschland) տպագրվել է 2009 թ. փետրվարի 26-ին: Տե՛ս վեբկայքը՝ <http://www.hrw.org/en/reports/2009/02/26/diskriminierung-im-namen-der-neutralit-t>: <sup>2</sup> Գիզելա Կիրշտեյն «Gewalt in der Ehe. RichterIn verweist auf Züchtigungsrecht im Koran», տպագրվել է 2007 թ. մարտի 21-ին «Die Welt Online»-ի կողմից, վեբկայք՝ [http://www.welt.de/politik/article772111/RichterIn\\_verweist\\_auf\\_Zuechtigungsrecht\\_im\\_Koran.html](http://www.welt.de/politik/article772111/RichterIn_verweist_auf_Zuechtigungsrecht_im_Koran.html):

վարույթից: Գերմանիայում այս գործն աննախադեպ էր, քանի որ առաջին անգամ գերմանական դատարանը ղուրանի օրենքներով է առաջնորդվել:

Այդուհանդերձ, այս դեպքը վկայում է Գերմանիայի՝ իր բազմազգ բնակչության կարիքներին իր քաղաքականությունը համապատասխանեցնելու խնդրի գոյության մասին: Վճիռ կայացնելիս դատավորը ձգտում էր հաշվի առնել ամուսինների ազգային և մշակութային առանձնահատկությունները: Սակայն, ինչպես երևում է, անորոշ է մնում այն հարցը, թե ինչպես կարելի է այնպիսի բազմամշակութային մոտեցում ցուցաբերել, որը համապատասխանի տվյալ ազգության առանձնահատկություններին և Գերմանիայի՝ պետական մակարդակով ընդունված ազատական և ժողովրդավարական սկզբունքներին: Այս դեպքը ոչ թե ինտեգրման հաջողված գործընթացի կամ ազգային մշակույթի պահպանման փորձի, այլ բարձիթողի վիճակի է նմանվում: Եվ մեկ անգամ հավասարության սկզբունքի խախտման ականատես ենք դարձել, քանի որ մահմեդական կինը ոչ մահմեդական կնոջ նկատմամբ նման դեպքերում ցուցաբերվող վերաբերմունքի չի արժանացել:

## Վերջաբան

«Գերմանիան ներգաղթի, ուստի և բազմամշակութային երկիր է»<sup>1</sup>: Ինչպես ապացուցվել է տվյալ ակնարկում, Գերմանիան բազմազգ երկիր է, որի բնակչության մեծ մասը ծագումով թուրք մահմեդականներ են: Ուստի Գերմանիան պետք է նաև բազմամշակութային երկիր լինի, սակայն ինչպիսին է այն իրականում: Ինչպես տեսանք, Գերմանիան բազմամշակութային է այն առումով, որ ճանաչում է իր բնակչության որոշակի ենթախմբերի առանձնահատկությունները: Ի վերջո, գերմանացիներն իրենց երկիրը բնորոշել են որպես ներգաղթի երկիր: Ի դեպ, Գերմանիան տարիներ շարունակ է այսպես բնորոշվել: Ուստի, հատկանշական է, որ Գերմանիայի քաղաքական գործիչները ձեռնամուխ են եղել երկրի բնակչության մեծամասնության և թուրք փոքրամասնության միջև երկխոսության զարգացմանը: Այնուհանդերձ, անելիքները դեռևս շատ են: Ներգաղթյալներին հասարակությանը ինտեգրելու գործում հաջողության հասնելու համար Գերմանիան պետք է ոչ թե ընտրի երկխոսության և քննարկումների մասնակիցներին, այլ բանակցի երկրում արդեն բնակվող բոլոր ներգաղթյալների հետ: Սա է ինչպես մեծամասնության, այնպես էլ փոքրամասնության բևեռացման հետևանքները մեղմելու միակ միջոցը: Միայն երկխոսության միջոցով է հնարավոր օգնել ոչ մահմեդական մեծամասնությանը ավելի լավ հասկանալու մահմեդական փոքրամասնությանը: Եվ վերջապես, միայն երկխոսության միջոցով է հնարավոր մղել մահմեդական ներգաղթյալներին հաղորդակից լինել իրենց նոր հայրենիքի մշակույթին: 1960-ական և 1970-ական թվականների ընթացքում արձանագրված փորձը վկայում է, որ սխալ է սպասել, մինչև ներգաղթյալները հեռանան երկրից: Գերմանիան չպետք

1 Բրեթ Քլոփ «German Multiculturalism. Immigrant Integration and the Transformation of Citizenship», Վեստպորտ, 2002, էջ 7:

է կրկնի անցյալի սխալները, այլ հարցականի տակ առնի և բարեփոխի իր՝ իսկական բազմամշակութային երկրներին բնորոշ ռազմավարական մոտեցումը: Սա ոչ մի դեպքում չի նշանակում, որ երկիրը պետք է կասկածի տակ դնի իր ազատական սկզբունքներից որևէ մեկը կամ հրաժարվի դրանցից: Սա նշանանակում է, որ հասարակությունը պետք է առաջնորդվի նշված սկզբունքներով և խելամիտ քայլեր ձեռնարկի, ինչպես նաև նման սկզբունքները կիրառելիս հավասար վերաբերմունք ցուցաբերի իր բոլոր քաղաքացիների՝ ինչպես մահմեդականություն, այնպես էլ հուդայականություն, քրիստոնեություն դավանող կամ առհասարակ կրոնական հայացքներ չունեցող քաղաքացիների նկատմամբ: Փաստորեն, Գերմանիան բազմամշակութային երկիր է, սակայն պատշաճ բազմամշակութային քաղաքականություն չի վարում:

# Բելառուսներին մուտքի արտոնագիր տրամադրելու ընթացակարգն ընդդեմ Եվրամիության սկզբունքների

## ԴԱՃԱ ՍԼԱԲՉԱՆԿԱ

«Հանուն ազատության» շարժում

Բելառուս

Կոմունիզմի փլուզումից հետո նախկին Հարավսլավիայի տարածքում ձևավորված իրավիճակի նկարագրությամբ հայտնի խորվաթ գրող Սլավենկա Դրակովիչի «Café Europa» («Եվրոպա» սրճարան») գրքի գլուխներից մեկը՝ նվիրված է Խորվաթիայի՝ հարևան երկրների, մասնավորապես Ավստրիայի հետ սահմանային անցակետերում տեղ գտած հիմնախնդիրներին, քաղաքացիների բոլոր ստուգումներին, նրանց իրավունքների սահմանափակումներին, վախերին, միջադեպերին և նույնիսկ ստորացումներին: Գրքի վերոնշյալ հատվածն առաջին անգամ տպագրվել է 1996 թ.: դրանից հետո սահմանային անցակետերում տիրող իրավիճակը շատ է փոխվել, քանի որ Խորվաթիան, հուսանք, շուտով կանդամակցի Եվրամիությանը: Այնուհանդերձ, նշված գլխում արծարծված խնդիրներն արդիական են մնում Եվրամիության քաղաքացիություն չունեցող անձանց համար: Վերջերս վրացի ընկերոջս հետ Վիեննայից գնացքով մեկնեցի Զագրեբ: Մեր անձնագրերն առաջ սահմանապահների ակնհայտ բացասական արձագանքը՝ «Օ՛, ո՛չ, վրացի», ինչին հաջորդեց ընկերոջս ամբողջ ուղեբեռի՝ բոլոր պայուսակների ստուգումը: Բելառուսի անձնագիր տեսնելով՝ սահմանապահները նույն կերպ արձագանքեցին և մանրագնին ստուգեցին ամբողջ ուղեբեռը: Մենք միակ ուղևորներն էինք, ում բեռն այդչափ ուշադիր էր ստուգվում: «Կարծես խորհրդային ժամանակները վերադարձել են...», - ասաց Ավստրիայի քաղաքացի հանդիսացող մի տարեց կին: Նրան միայն խնդրեցին ցույց տալ իր անձը հաստատող փաստաթուղթը: Այնուամենայնիվ, նման վերաբերմունքն ինձ ամենևին չի զարմացնում, քանի որ Խորվաթիան փորձում է վերացնել իր և Եվրամիության միջև առկա բոլոր անջրպետները և ամեն ինչ անել՝ ապացուցելու, որ ինքը կարող է պաշտպանել ընդլայնված Եվրամիության նոր սահմանները:

Սահմանների մասին խոսելիս կցանկանայի ներկայացնել Բելառուսի քաղաքացու տեսակետը. Բելառուս, մի երկիր, որ Եվրոպայի աշխարհագրական կենտրոնում է գտնվում և սահմանակից է հինգ երկրների, որոնցից մեկը հսկայածավալ

1 Սլավենկա Դրակովիչ՝ «Buying a Vacuum Cleaner» գլուխ, «Café Europa» գիրք (Աբակուս, Լոնդոն, 2008), էջ 109-117:

Ռուսաստանն է: 2004 թ. Եվրամիության սահմանների ընդլայնման արդյունքում էականորեն փոխվել են Բելառուսի սահմանները. այժմ մեր հարևաններից երեքը ԵՄ անդամ երկիր են: Ինչ է նշանակում սահմանների ընդլայնումը Եվրամիության համար: Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) ռազմավարական փաստաթղթի համաձայն՝ Եվրամիության ընդլայնումը ենթադրում է ինչպես մարտահրավերներ, այնպես էլ նոր հնարավորություններ<sup>1</sup>: Իսկ ինչ է դա նշանակում Բելառուսի քաղաքացիների համար: Խնդիրներ, առնվազն հյուպատոսությունների աշխատակիցների հետ: Այդպիսին է մեր իրականությունը:

Մինչ 2004 թ., ավելի ճիշտ՝ Եվրամիության սահմանների ընդլայնումը, Բելառուսի քաղաքացիներն ավելի մեծ հնարավորություններ են ունեցել այցելելու Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներ, հատկապես՝ Լեհաստան, Լիտվա, Լատվիա և Չեխիայի Հանրապետություն: Մեր երկրների պատմությունները սերտորեն փոխկապակցված են, մենք ժառանգել ենք բազում հայտնի պատմական դեմքեր և վայրեր: Իսկ մեր ընդհանուր պատմությունն ինքնին ապացուցում է, որ Բելառուսը եվրոպական ընտանիքի լիարժեք անդամ է: Սակայն շենգենյան մուտքի արտոնագրերի ներմուծման արդյունքում այս երկրները միմյանցից հեռացվել են:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը և մասնավորապես «Արևելյան գործընկերություն» ծրագիրը նոր հնարավորություններ են նախատեսում: Եվրոպայի միակ բռնապետական երկրում՝ Բելառուսում տիրող քաղաքական իրավիճակի պատճառով քաղաքացիները չեն կարող օգտվել այդ հնարավորություններից: Իրականում, Բելառուսը ԵՀՔ ծրագրերում ամենևին էլ ընդգրկված չէ: Սկզբնական շրջանում, թվում էր, որ «Արևելյան գործընկերությունը» թերևս կարող է նպաստավոր պայմաններ ապահովել՝ իրավիճակը որոշ չափով բարելավելու համար: Տեսականորեն այդ բարելավումները ենթադրում են մուտքի արտոնագրի տրամադրման ազատականացման հարցի քննարկում, իսկ որպես երկարաժամկետ նպատակ՝ առանց մուտքի արտոնագրի ազատ տեղաշարժվելու հնարավորություն և կացության թույլտվություն չունեցող անձանց հետընդունման միասնական պայմանների սահմանում<sup>2</sup>: Սակայն հարկ է նշել, որ «Արևելյան գործընկերություն» ծրագրի մասնակից երկրների շարքում Բելառուսն «ամենահեռավոր» երկիրն է՝ որպես Եվրամիության հետ որևէ պարտավորեցնող հարաբերություններ չապահովող միակ երկիր:

Մուտքի արտոնագրի տրամադրման ընթացակարգերի ազատականացման հետ կապված հարցերը միշտ օգտագործվել են որպես ԵՄ ազդեցության միջոցների զինանոցում պահվող գործիք: 2002 թ. Բելառուսի բարձրաստիճան պաշտոնյաներին, այդ թվում՝ նախագահ Լուկաշենկոյին, արգելվել է մուտք գործել ԵՄ անդամ երկրներ: 2008 թ. արգելքի կասեցումն օգտագործվել է որպես խայժ՝ ժո-

<sup>1</sup> Եվրոպական հարևանության քաղաքականության հանձնաժողովի ուղերձ, Ռազմավարական փաստաթուղթ, Բրյուսել, 12.5.2004 թ., (COM (2004) 373 final):

<sup>2</sup> Եվրախորհրդարանի և Եվրոպայի խորհրդի հանձնաժողովի ուղերձ, «Արևելյան գործընկերություն», Բրյուսել, դեկտեմբերի 3, 2008թ., (COM(2008)823 final):

ղովրդավարական փոփոխություններ խրախուսելու համար: Միաժամանակ մուտքի արտոնագրեր ազատ ստանալու հարցում աջակցությունը միշտ եղել է որպես ընդդիմության և հասարակական կազմակերպությունների ակտիվիստներին սատարելու միջոց: Իրականում, սակայն, այս մոտեցումն ապարդյուն է:

Մի կողմից՝ վերջերս հայտնի է դարձել, որ արգելքի ուժի մեջ լինելու ընթացքում նախագահ Լուկաշենկոյին հաջողվել է մեկնել Ավստրիա<sup>1</sup>: Մյուս կողմից՝ հասարակության որոշակի խմբերին տրամադրվող աջակցությունը անջրպետ է ստեղծում նույն հասարակության անդամների միջև և ոչ արտոնյալ խմբերի նկատմամբ խտրականության դրսևորումների է հանգեցնում<sup>2</sup>: Բացի այդ, նման իրավիճակներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ մուտքի արտոնագիր ստանալու հնարավորությունը կախված է դեսպանների և հյուպատոսների հետ նրանց ունեցած անձնական հարաբերություններից: Հետևաբար, մուտքի արտոնագրեր տրամադրելու մասին որոշումների կայացման գործընթացը թափանցիկ չէ: Այնուհանդերձ, մուտքի արտոնագրերի տրամադրման ընթացակարգերի պարզեցումը, անշուշտ, մեծապես նպաստում է քաղաքացիական հասարակության կայացմանը: Անձամբ ես այն արտոնյալ քաղաքացիներից եմ, ովքեր շենգենյան մուտքի արտոնագիր ունեն, և խուճապի եմ մատնվում ամեն անգամ, երբ դրավավերության ժամկետն ավարտին է մոտենում: Պարզապես պետք է զգամ, որ անձնագրիս մեջ նման արտոնագիր ունեմ և ամեն պահի կարող եմ մեկնել արտասահման՝ երեկոյաների, համաժողովների մասնակցելու կամ պարզապես ընկերներիս տեսակցելու համար: Սակայն կցանկանայի, որ այս արտոնությունից օգտվեին նաև իմ ընտանիքի անդամները, հարևանները, ընկերները, բոլոր բելառուսները: Ամեն անգամ, երբ վերադառնում և պատասխանում եմ Եվրոպայի կյանքի մասին հարցերին, ինձ մի քիչ մեղավոր եմ զգում: Ես արդեն սովորել եմ եվրոպական կյանքին, իսկ այն մարդիկ, ովքեր իրենց ողջ կյանքում երազում են տեսնել Փարիզը կամ Բարսելոնը, ինձ շատ շփացած են համարում:

Իրականում խնդիրը ոչ թե մուտքի արտոնագրի՝ որպես միջոցի անարդյունավետությունն է, այլ՝ այդ միջոցի սխալ կիրառումը: Շատ կարևոր է, որ մուտքի արտոնագրի տրամադրման ընթացակարգերի պարզեցումը և (կամ) ազատականացումը ժողովրդավարության նախապայման չլինի: Այն պետք է դիտվի որպես Բելառուսում ժողովրդավարության հաստատմանը նպաստելու առավել արդյունավետ միջոց, ոչ թե խայծ:

Բելառուսի ներկայիս իրավիճակը մասամբ պայմանավորված է տարիներ շարունակ տևող մեկուսացմամբ: Բելառուսները պարզապես չգիտեն որևէ այլ չափանիշ, որի հետ կարելի է համեմատել իրենց կյանքը, իսկ հյուպատոսություններում բելառուսների նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը հաստատում

1 «Skandalny adpachinak Lukashenki u Austrii» («Լուկաշենկոյի սկանդալային արձակուրդն Ավստրիայում»), վեբկայք՝ <http://nn.by/?c=ar&i=37886>:

2 Բոհդանա Դիմիտրովկա «Remarking Europe's Borders Through the European Neighborhood Policy», Եվրոպական քաղաքականության ուսումնասիրությունների կենտրոն, աշխատանքային փաստաթուղթ, թիվ 327, մարտ, 2010թ., կայք՝ <http://www.ceps.be/ceps/download/3045>:

է Լուկաշենկոյի «նշանաբանը»՝ «Եվրոպայում ձեզ ոչ ոք չի կարոտել և չի սպասում, այնպես որ երախտապանրտ եղեք այն ամենի համար, ինչ ունեք այստեղ»: Բելառուսների՝ Եվրոպայում ազատ տեղաշարժվելու հնարավորությունն իսկական վտանգ է բռնապետության համար: Այսպիսով, բռնապետությանը սպառնում է ոչ թե Եվրամիության կողմից համապատասխան բանաձևերի ընդունումը, այլ մուտքի արտոնագրերի տրամադրման ընթացակարգերի պարզեցումը:

Բացի այդ, մեծ տարածում է գտել այն սխալ կարծիքը, որ մուտքի արտոնագրի տրամադրման ընթացակարգերի պարզեցման պարագայում Եվրամիության երկրներ մուտք գործող բոլոր բելառուսները՝ որպես անօրինական միգրանտներ, կմնան այդտեղ: Մենք արտերկրում տեղեկատվության աղբյուրներ և ընկերներ ունենք, ում միջոցով պարզել ենք, որ կյանքն այդնտեղ նույնպես հեռու է կատարյալից, և լավ ապրելու համար պետք է շատ աշխատել: Հնարավոր է, որ ոմանք կմնան, սակայն մյուսները կվերադառնան և կփորձեն հայրենիքում գտնել որոշ հարցերի պատասխանները: Նրանք կպահանջեն իրենց համար արժանի կենսամակարդակ ապահովել: Ես նույնպես վերադարձա հայրենիք: Թեև կարող էի ստանալ Կանադայի անձնագիր, ինչն ինքնին արդեն մեծ հաջողություն է՝ չհաշված ազատ տեղաշարժվելու հնարավորությունը և այլ առավելությունները: Սակայն ես ցանկանում էի փոխել ոչ թե անձնագիրս, այլ դրա նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը:

Իմ ծանոթներից շատերն են վերադառնում և, եվրոպական իրականությամբ ոգեշնչված, փոքր խանութներ կամ սրճարաններ բացում, որոնք, անկախ իրենց սեփականատերերին հանդիպած դժվարություններից, ցանկացած այլ եվրոպական երկրում գործող նման հաստատությունների տպավորություն են թողնում: Անգամ եթե որոշ բելառուսներ չվերադառնան, ինչն է խնդիրը: Ընդունող երկրի կարգուկանոնը պահպանող աշխատասեր, խելացի և արագ հարմարվող մարդկանց ներհոսքը պետք է ողջունելի լինի Եվրամիության երկրների համար, որտեղ բնակչության թիվը հետզհետե նվազում է:

Կցանկանայի ներկայացնել ևս մի տեսակետ: Իմ խորին համոզմամբ, Բելառուսում կհաղթանակի ժողովրդավարությունը: Դա է մեր ճակատագիրը, և մենք, անշուշտ, վերստին կբռնենք ժողովրդավարության ուղին: Հուսով եմ, որ ես ինչ-որ չափով նպաստում եմ այդ շրջադարձային պահի մոտեցմանը: Դա իմ փոքր ներդրումն է այս մեծ գործում: Սակայն ես գիտեմ՝ ինչ են ժողովրդավարությունը և առօրյա կյանքում հանդիպող եվրոպական արժեքները նշանակում գործնականում: Եվրամիությունից Բելառուսի մեկուսացումը ժողովրդավարության սխալ ընկալմանն է հանգեցնում, այսինքն՝ առարկայական մտածողությանը: Յուրաքանչյուրն իր իսկ փորձից պետք է հասկանա, որ ժողովրդավարությունը ոչ թե կատարյալ տարբերակ է, այլ պարզապես առկա տարբերակներից լավագույնը:

Ինչ վերաբերում է ԵՄ ինստիտուտների կողմից որոշումների կայացման գործընթացի ամբողջականությանը, ապա մուտքի արտոնագրի տրամադրման ընթացակարգերի պարզեցումը պետության առաջընթացից սահմանազատելու,



նման պարզեցման՝ պայմանական վերահսկման միջոցի դերը վերացնելու պահանջն իրատեսական չէ: Սակայն մենք շարունակելու ենք վճարները կրճատելու մեր փորձերը. բելառուսները շենգենյան մուտքի արտոնագրի համար վճարում են 60, իսկ ռուսները՝ 35 եվրո: Բոլորս քաջատեղյակ ենք մարդու իրավունքների և ժողովրդավարության սկզբունքների պահպանման տեսանկյունից Ռուսաստանում արձանագրված ցածր ցուցանիշների մասին: Բացի այդ, Ռուսաստանը Եվրոպական հարևանության քաղաքականության և «Արևելյան գործընկերության» մասնակից չի հանդիսանում, այդուհանդերձ, Ռուսաստանի քաղաքացիների՝ Եվրամիության տարածքում առանց վիզաների տեղաշարժվելու հնարավորությունն գոնե քննարկվել է Ռոստովում Ռուսաստանի և Եվրամիության երկրների միջև կայացած գագաթնաժողովի ընթացքում<sup>1</sup>:

Խնդրո առարկա ոլորտում կոնկրետ առաջարկության օրինակ կարող է ծառայել Եվրամիության երկրներում բարձրագույն կրթություն ստացած անձանց համար մուտքի արտոնագրի տրամադրման ընթացակարգերի պարզեցումը (օրինակ՝ վճարների կիսով չափ կրճատումը և հրավերի անհրաժեշտության բացակայությունը): Նրանք բազում ընկերներ ունեն արտասահմանում և պետք է հնարավորություն ստանան այսուհետև էլ անձամբ հաղորդակցվելու նրանց հետ և մասնակցելու այն երկրների սոցիալական և մշակութային կյանքին, որտեղ նրանք անցկացրել են իրենց կյանքի լավագույն ուսանողական տարիները:

Նման օրինակների ցանկը շարունակելի է: Այդուհանդերձ, մուտքի արտոնագրերի տրամադրման առումով որոշ կատեգորիաներին պատկանող քաղաքացիներ շարունակում են խտրական վերաբերմունքի արժանանալ: Այժմ առկա միակ տարբերակը հնարավորինս շատ մարդկանց ազատ տեղաշարժվելու հնարավորության ընձեռումն է:

1989 թ. վերացավ երկաթյա վարագույրը, այդուհանդերձ, միատարր Եվրոպայում դեռևս սահմաններ գոյություն ունեն: Այդպես էլ պետք է լինի, սակայն այդ սահմանների անառիկությունը<sup>2</sup> միայն մեզանից է կախված: Սահմանները ոչ միայն «ֆիզիկական չափման միավորներ» են, այլև՝ երևակայական անտեսանելի բաժանարար գծեր: Բելառուսի համար առավել արդյունավետ քաղաքականություն վարելու համար Եվրամիությունը պետք է ջնջի նման գծերը:

1 Վեբկայք՝ <http://www.vesti.ru/doc.html?id=364748>:

2 ժան դը Բարդելեբենի խմբագրությամբ՝ «Soft or Hard Borders? Managing the Divide in an Enlarged Europe» (Մեծ Բրիտանիա, Էշգեյթ, 2005):

# Արևելյան գործընկերություն

## ՍՈՏՏԱ ՄԱՆՈՒԿՅԱԼ

*Լեզվաբանության և հաղորդակցության մագիստրատուրայի ուսանողուհի  
Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն, Եվրոպագիտություն  
Յայաստան*

## Նախաբան

Սույն ակնարկը նվիրված է Եվրամիության կողմից համեմատաբար վերջերս մեկնարկած Արևելյան գործընկերության ծրագրի վերաբերյալ Հայաստանի տեսակետի ներկայացմանը:

Կանդիդատանք նաև Հայաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման վրա ծրագրի թողած ազդեցությանը:

Ներածությունում հակիրճ նկարագրված է Արևելյան գործընկերության հաստատման փուլը, իսկ ակնարկի հիմնական մասում ներկայացվում է Հայաստանի տեսակետը ծրագրի առավելությունների և թերությունների մասին: Սույն ակնարկում տեղ են գտել որոշ գաղափարներ, որոնք միտված են պարզելու, թե արդյոք Հայաստանն Արևելյան գործընկերությունը Եվրամիության հետ իր փոխհարաբերությունները ինտեգրման միջոցով սերտացնելու նոր հնարավորություն, թե՛ պարզապես ֆինանսական աջակցության աղբյուր է համարում:

Ակնարկի վերջում ներկայացվում են հեղինակի եզրակացությունները:

## Ներածություն

2008 թ. մայիսի 26-ին Բրյուսելում կայացած Եվրամիության Ընդհանուր գործերի և արտաքին հարաբերությունների խորհրդի հանդիպման ժամանակ Լեհաստանի և Շվեդիայի արտաքին գործերի նախարարներ Ռադոսլավ Սիկորսկին և Կարլ Բիլդթը պաշտոնապես ներկայացրել են Արևելյան գործընկերություն կոչվող նոր ծրագիրը: Հաջորդ ամիս՝ հունիսի 20-ին Եվրոպական խորհուրդը հաստատել է ծրագիրը և Եվրոպական հանձնաժողովին հանձնարարել երկկողմ և բազմակողմ համագործակցության հաստատմանն ուղղված հետագա քայլերի առաջարկներ պատրաստել: Ծրագրի մեկնարկի մասին պաշտոնապես հայտարարվել է արդեն 2009 թ. մայիսի 7-ին Պրահայում կայացած Արևելյան գործընկերության առաջին գագաթաժողովին, որի ընթացքում ընդունվել է Համատեղ հռչակագիրը՝ Արևելյան

գործընկերությունը Եվրամիության արտաքին քաղաքականության անբաժանելի բաղադրիչը դարձնելու համար:

Ծրագիրը միտված է ԵՄ-ին կամ Հյուսիսատլանտյան դաշինքին (ՆԱՏՈ) չանդամակցող եվրոպական և նախկին ԽՍՀՄ հարավկովկասյան երկրների, այսինքն՝ Մոլդովայի, Բելառուսի, Ուկրաինայի, Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի եվրաինտեգրմանը<sup>1</sup>:

Ծրագրի հիմքում ընկած են երկկողմ հարաբերությունները, որոնք ենթադրում են արդյունավետ քաղաքական երկխոսության և համապարփակ ազատ առևտրի մասին նոր համագործակցության պայմանագրերի կնքում, և բազմակողմ հարաբերությունները, որոնք ենթադրում են էներգետիկ քաղաքականության և ենթակառուցվածքների զարգացման ոլորտում համատեղ ծրագրերի իրականացում: Երկկողմ հարաբերությունների հաստատման և պահպանման համար պատասխանատու են համագործակցության խորհուրդները և կոմիտեները, ինչպես նաև՝ համագործակցության պայմանագրերը մշակող աշխատանքային խմբերը և մշտադիտարկում (մոնիթորինգ) իրականացնող կոմիտեները: Այդ մարմինները կազմում են կառավարման կառույցը: Բազմակողմ հարաբերությունների ուղղության զարգացման համար անհրաժեշտ է կառավարման նոր կառույցներ ստեղծել: Քանի որ վերոնշյալ միջոցառումների և այլ ծրագրերի իրականացման համար ԵՄ-ից բավականին մեծ ֆինանսական աջակցություն է պահանջվում, ակնկալվում է, որ 2008 թ. դրությամբ 450 միլիոն եվրո կազմող այդ աջակցության շրջանակներում հատկացվող գումարը 2013 թ. կաճի մինչև 785 միլիոն եվրո: Սա նշանակում է, որ 2010-2013 թթ. Ժամանակահատվածում ծրագրի այս ուղղության իրականացման համար հատկացրած գումարին անհրաժեշտ է ավելացնել ևս 350 միլիոն եվրո<sup>2</sup>:

Վերոնշյալ հարցերը քննարկելու համար կազմակերպվել է Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումը, որին մասնակցել են Արևելյան գործընկերության և ԵՄ անդամ երկրների քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Նրանք հնարավորություն են ունեցել իրենց մեկնաբանությունները և առաջարկները ներկայացնելու Արևելյան գործընկերության շրջանակներում ստորագրվող պայմանագրերի վերաբերյալ: Բացի այդ, ֆորումը ինչպես ծրագրի թիրախ երկրներում, այնպես էլ ԵՄ անդամ պետություններում գործող ՀԿ-ներին՝ ծրագրի իրականացման գործընթացին մասնակցելու և պետական մարմինների հետ գործակցելու հնարավորություն է ընձեռնում<sup>3</sup>:

Այնուամենայնիվ, նոր նախաձեռնությունները, որպես կանոն, քննադատության են արժանանում: Բացառություն չէ նաև Արևելյան գործընկերությունը, որը

1 Լեհաստանի հանրապետության արտաքին գործերի նախարարության Արևելյան գործընկերության պաշտոնական վեբկայք, 2009 թ.:

2 «The Eastern Partnership– something new or window-dressing» Սասեքսի եվրոպական ինստիտուտի գեկույց, թիվ 109, հունվար 2009 թ.:

3 Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորում, Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության, փետրվար, 2010 թ.:

քննադատել են ծրագրի մեկնարկի սկզբից ևեթ: Ի դեպ, քննադատողներից առաջինը Ռուսաստանն էր: Եվրոպական հարևանության քաղաքականությունը գրեթե չնկատող Ռուսաստանի իշխանությունները սկսել են շատ ուշադիր հետևել Արևելյան գործընկերության զարգացումներին: Պաշտոնական Մոսկվային ավելի ու ավելի է «նյարդայնացնում» նախկին ԽՍՀՄ տարածքում իրականացվող ԵՄ նախաձեռնությունը, և պատճառն ամենևին էլ այն չէ, որ Մոսկվան սկսել է լուրջ վերաբերվել Արևելյան գործընկերությանը, այլ այն է, որ Մոսկվան նախկին ԽՍՀՄ տարածքում բավական ազդեցիկ դերակատար է համարում Եվրամիությունը: Ուստի Ռուսաստանի արտաքին քաղաքականության գործիչները Եվրամիությունը Մոսկվայի մրցակիցն են համարում վերջինիս ավանդական ազդեցության ոլորտում<sup>1</sup>:

Մասնավորապես, Հարավային Կովկասում Ռուսաստանի ավանդական ազդեցությանն անդրադառնալիս հարկ է նշել, որ հատկապես Վրաստանում 2008 թ. օգոստոսյան հակամարտությունից հետո Հայաստանը տարածաշրջանում Ռուսաստանի առավել կայուն գործընկերն է դարձել, մինչդեռ Եվրոպային էներգակիր ռեսուրսներ մատակարարող Ադրբեյջանը հակառակորդի է վերածվել: Ուստի և Հայաստանի տնտեսության մեջ ավելի շատ միջոցներ ներդնելու և արդյունաբերության բազում ճյուղերի բաժնետոմսերի մեծ մասը բերելու միջոցով Ռուսաստանը փորձում է իրենից ավելի մեծ կախման մեջ դնել Հայաստանը: Ահա թե ինչու է Ռուսաստանը մինչև 2044 թ. երկարացրել Հայաստանի տարածքում իր ռազմակայանի տեղակայման ժամկետը: Այս ամենի հետևանքով Հայաստանը մեծ կախման մեջ է ընկնում Ռուսաստանից, որը ձգտում է բարձրացնել տարածաշրջանում իր տնտեսական և ռազմական դերը:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ Հայաստանը ձգտում է, ինչպես Ռուսաստանի, այնպես էլ ԵՄ և այլ գերտերությունների ու կազմակերպությունների հետ համագործակցելով, հավասարակշռել արտաքին քաղաքական ազդեցությունը: Ուստի, Արևելյան գործընկերության ծրագրում ընդգրկվելը շատ կարևոր էր Հայաստանի համար: Այդուհանդերձ, Արևելյան գործընկերության մեկնարկային փուլում այն քննադատել են ծրագրի թիրախ երկրներ հանդիսացող Ուկրաինան և Մոլդովան: Թեև ծրագրի մասնակիցների մեծ մասը, ներառյալ Հայաստանը, ողջունել է Շվեդիայի և Լեհաստանի համատեղ նախաձեռնությունը, այնուամենայնիվ, Մոլդովայի նախագահ Վլադիմիր Վոլոդինը, որն այժմ արդեն պաշտոնից հեռացել է, Արևելյան գործընկերությունն ընկալում է որպես Ռուսաստանի և ԱՊՀ երկրների դեմ ուղղված ԵՄ քաղաքականության հերթական դրսևորում: Ուկրաինայի իշխանություններն Արևելյան գործընկերության վերաբերյալ իրենց արտահայտած քննադատական դիրքորոշումը հիմնականում այն իրողությամբ են պատճառաբանում, որ ծրագրի շրջանակներում Ուկրաինան եվրաինտեգրման տեսանկյունից շատ ավելի հետադիմական երկրների շարքն է դասվել: Եվրամիության հետ համեմատա-

<sup>1</sup> «EU Eastern Partnership - a Misunderstood Offer of Cooperation, DGAP Standpunkt», թիվ 7, սեպտեմբեր 2009 թ.:

բար սերտ հարաբերություններ ունեցող պաշտոնական Կիևն իրեն տարածաշրջանի առավել ազդեցիկ գործիչն է համարում, ուստի և ցանկանալով պահպանել Արևելյան գործընկերության ծրագրի մյուս մասնակիցների նկատմամբ իր ունեցած առավելությունը՝ հատուկ վերաբերմունք է պահանջում<sup>1</sup>:

## **Արևելյան գործընկերության ծրագիրը Հայաստանի տեսանկյունից**

Հայաստանի վրա Արևելյան գործընկերության ծրագրի ազդեցության մասին խոսելիս հարկ է նշել, որ Հայաստանում Արևելյան գործընկերության հիմնական նպատակը քաղաքական մասնակցության, ինչպես նաև՝ համագործակցության նոր պայմանագրերի, ԵՄ տնտեսական ինտեգրման, ԵՄ երկրներ մեկնելու ընթացակարգերի պարզեցման և քաղաքացիների անվտանգության ապահովման, էներգետիկ անվտանգության վերաբերյալ բոլոր շահագրգիռ կողմերին ձեռնտու պայմանավորվածության և նշանակալի ֆինանսական աջակցության խթանումն է: Սակայն նշված բոլոր նպատակներն իրագործելու համար Հայաստանը զարգացման երկար ուղի պետք է անցնի: Արևելյան գործընկերության ծրագրին մասնակցելու համար Հայաստանին առաջադրված հիմնական նախապայմաններն են՝ Ժողովրդավարացումը, մարդու իրավունքների պաշտպանությունը և օրենքի գերակայությունը: Հայաստանի այլ պարտավորություններն են՝ կոռուպցիայի դեմ պայքարը, դատական համակարգի անկախության ապահովումը և արդյունավետ կառավարումը: Համապատասխան բարեփոխումներ իրականացնելու գործում Հայաստանի իշխանություններին աջակցելու համար Եվրոպական հանձնաժողովը Հայաստան է գործուղել ԵՄ խորհրդատվական խմբի որակյալ փորձագետներին: Բարեփոխումներն առանցքային նշանակություն ունեն, քանի որ միայն դրանք իրականացնելուց հետո կարող է Հայաստանը զգալ ԵՄ-ի հետ սերտ փոխհարաբերություններ հաստատելու առավելությունները:

Արևելյան գործընկերության շրջանակներում ընդգրկված երկրների, մասնավորապես հարավկովկասյան երկրների կողմից Եվրամիությանը ներկայացվող պահանջները և ԵՄ առաջարկները հստակեցվել են այդ երկրների արտաքին գործերի նախարարների և ԵՄ պաշտոնյաների հանդիպման ժամանակ: Այսպես, ԵՄ-ն հստակ նշել է, որ կարող է առաջարկել ազատ առևտրի գոտու ստեղծում, վիզաների տրամադրման ընթացակարգերի պարզեցում, իսկ հետագայում նաև՝ վիզաների ռեժիմի վերացում և լրացուցիչ ֆինանսական աջակցություն, այսինքն՝ 2008 թ. դրությամբ 450 միլիոն եվրո կազմող գումարը 2013 թ. կհասնի 785 միլիոն եվրոյի և 350 միլիոն եվրոյով կգերազանցի 2010-2013 թթ. ժամանակահատվածի համար հատկացրած գումարը: Հարավկովկասյան պետությունների պահանջները կարելի է ամփոփել հետևյալ կերպ: Վրաստանի և Ադրբեջանի պահանջների հա-

<sup>1</sup> «EU Eastern Partnership - a Misunderstood Offer of Cooperation, DGAP Standpunkt», թիվ 7, սեպտեմբեր 2009 թ.:

մեմատ՝ Հայաստանն Արևելյան գործընկերության ծրագրից թերևս շատ համեստ ակնկալիքներ ունի, ինչի հիմնական պատճառը Ռուսաստանի ազդեցությունից ազատվելու պատրաստակամության կամ կարողության բացակայությունն է: Մինչ Հայաստանը ֆինանսական աջակցություն և վիզաների տրամադրման ընթացակարգերի պարզեցում է ակնկալում, Ադրբեջանն իր էներգետիկ ծրագրերը խաղաղ պայմաններում իրականացնելու համար հույս ունի Արևելյան գործընկերության միջոցով դարաբաղյան հակամարտության տարածքներից հեռացնել Հայաստանի գործերը: Իսկ Վրաստանը ԵՄ օգնությունն է խնդրում Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հակամարտություններում Ռուսաստանի ազդեցությունը նվազեցնելու համար<sup>1</sup>:

Հարց է առաջանում. իսկ ինչ շահ ունի Եվրամիությունը Արևելյան գործընկերությունից: Գործընկերությունը փոխշահավետություն է ենթադրում: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար պարոն Նալբանդյանի կարծիքով. «...Սույն ծրագրի վերջնական շահառուները Հայաստանի և ԵՄ անդամ պետությունների ժողովուրդներն են՝ միավորված իրենց բազմազանությամբ: Թեև այդ ժողովուրդների ավանդույթները, պատմությունն ու լեզուն տարբեր են, սակայն Եվրոպայի վերաբերյալ նրանց տեսլականը նույնն է, այն է՝ համագործակցության, խաղաղության և բարգավաճման վրա հիմնված Եվրոպա: Մեր ժողովուրդներն ուզում են առևտուր անել միմյանց հետ և ավելի լավ հասկանալ միմյանց մշակույթը: Այդ իսկ պատճառով, մեր ընդհանուր առաջնահերթություններից մեկը վիզաների տրամադրման ընթացակարգերի պարզեցումն է՝ մեր ժողովուրդների միջև անմիջական շփումը խոչընդոտող խնդիրները վերացնելու համար»<sup>2</sup>:

Այդ կապակցությամբ ևս մեկ հարց է առաջանում. մի՞թե Արևելյան գործընկերությունից Եվրամիության ակնկալիքները միջմշակութային շփումներ հաստատելու և տարբեր արժեքներ տարածելու հնարավորությամբ են սահմանափակվում: Ինչևէ, ակնհայտ է, որ Եվրամիությունը ձգտում է իրեն շրջապատել զարգացած ժողովրդավարություն և տնտեսություն ունեցող ապահով հարևաններով: Ուստի տարբեր ոլորտներում բարեփոխումներ իրականացնելուց բացի, հարավկովկասյան երկրները ձեռնամուխ կլինեն նաև այլ հարցերի կարգավորմանը:

Ղարաբաղյան հակամարտությունն առանձնապես բարդ խնդիր է Արևելյան գործընկերության երկու մասնակիցների համար: Երբևէ Եվրամիության անդամի թեկնածու համարվելու համար երկու երկրներն էլ պետք է լուծեն այս խնդիրը: Վիճարկելի տարածքների շուրջ ծագած հակամարտությունն արդեն մեկ անգամ՝ 1991 թ., պատերազմի պատճառ է դարձել, որն ավարտվել է 1994 թ. զինադադարի մասին համաձայնագրով: Արդյունքում Լեռնային Ղարաբաղն իրեն անկախ է հռչակել, իսկ Հայաստանը որոշ ղարաբաղյան տարածքներ է ազատագրել: Թեև երկու կողմերն էլ հակամարտության կարգավորմամբ շատ են շահագրգռված,

1 «Без визы в Европу: в обмен на что?», «Հայաստան» հայկական ֆորում, 28 նոյեմբերի, 2009 թ.:

2 «Three questions to Armenian Foreign Minister on the Eastern Partnership», Շվեդիայի կառավարություն, 8 դեկտեմբերի, 2009 թ.:

նրանցից ոչ մեկը մինչ օրս երկուստեք ընդունելի տարբերակ չի առաջարկել: Ինչպես Հայաստանը, այնպես էլ Ադրբեջանը կարծում են, որ հակամարտությունը խոչընդոտում է իրենց տնտեսական զարգացումը, քանի որ զինված ուժերի արդիականացման վրա ծախսվող գումարը կարելի է ծախսել այդ երկրների տնտեսություններն ավելի մրցունակ դարձնելու համար:

«Արևելյան գործընկերության ծրագրի յուրաքանչյուր մասնակից երկրի և ԵՄ միջև երկկողմ համագործակցության շրջանակներում բազում կարևոր ոլորտներ կընդգրկվեն: Հարավային Կովկասում տարածաշրջանային համագործակցության սերտացումը կարող է մեծապես նպաստել ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի՝ հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված աշխատանքների հաջողությանը: Եվրամիությունն աջակցում է դարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքներին», - հայտնել է Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության ղեկավար, դեսպան Ռաուլ դե Լուզենբերգերը<sup>1</sup>:

Այդուհանդերձ, քանի դեռ Ադրբեջանի միջոցով էներգետիկ արդյունաբերության շրջանակն ընդլայնելու շահերի գերակայությունը խոչընդոտում է ԵՄ Եվրոպական չափանիշների վրա հիմնված քաղաքականության իրականացումը, և Եվրամիությունը «հաջող զարգացման բարենպաստ մոդել» համարող Ադրբեջանը շարունակում է անտեսել իր արտաքին քաղաքականության համար Եվրասիանտեգրման առաջնային նշանակությունը, թերևս անհնար է ԵՄ և Ադրբեջանի համագործակցությունից մեծ ակնկալիքներ ունենալ: Քանի դեռ համագործակցության հիմնական ոլորտներն են մնում էներգետիկ անվտանգությունը, ներդրումները, գիտությունը և կրթությունը, վիզաների տրամադրման ընթացակարգերի պարզեցումը և տնտեսական զարգացման վերաբերյալ փորձի փոխանակումը, Եվրամիությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության նման հրատապ լուծում պահանջող տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրների կարգավորմանը թերևս ձեռնամուխ չի լինի:

Այսպիսով, քանի դեռ Եվրամիությունը ձգտում է խաղաղություն և կայունություն հաստատել իր հարևան երկրներում, Արևելյան գործընկերության շրջանակներում Հայաստանի կարևորագույն ակնկալիքները ԵՄ պարտավորությունները կատարելու պատրաստակամության և պատրաստականության հետ պետք է կապված լինեն:

Ի վերջո, հարկ է նշել, որ Արևելյան գործընկերությունն իր մասնակիցներին Եվրոպային մերձենալու հնարավորություն է տալիս: Սա ենթադրում է ոչ թե ԵՄ ինտեգրում, այլ՝ տնտեսական և քաղաքական զարգացում: Այդուհանդերձ, գործընկերության արդյունավետությունը հիմնականում մասնակից երկրներից է կախված: Առաջիկա տարիների ընթացքում Հայաստանը և Արևելյան գործընկե-

<sup>1</sup> “Raul de Luzenberger: “Eastern Partnership can help development of cooperation in South Caucasus” (Ռաուլ դե Լուզենբերգեր. «Արևելյան գործընկերությունը կարող է նպաստել Հարավային Կովկասում համագործակցության հաստատմանը»), Եվրոպական երկխոսություն, 2009 թ.:

րության ծրագրի մնացած հինգ մասնակիցները պետք է ապացուցեն տարածաշրջանում իրականացվող ԵՄ ծրագրերի արդյունավետությանը նպաստելու իրենց պատրաստակամությունը:

## **Եզրակացություն**

Վերլուծաբաններից շատերը քննադատում են Եվրոպական համագործակցության շրջանակներում նախկին ԽՍՀՄ երկրներն ընդգրկելու ձգտումը՝ այն համարելով Ռուսաստանի և այդ երկրների միջև տնտեսական, առևտրային, քաղաքական, և ռազմական կապերը խզելու միջոցով Ռուսաստանը մեկուսացնելու, ինչպես նաև այդ երկրներն ավելի խոշոր եվրաստլանտյան կառույցներում՝ սկզբից Եվրամիությունում, իսկ հետագայում՝ Հյուսիսատլանտյան դաշինքում ընդգրկելու փորձ:

Այդուհանդերձ, քանի դեռ երկկողմ ծրագրեր չեն իրականացվել, Արևելյան գործընկերությունը Ռուսաստանի համար էական վտանգ չի ներկայացնում: Ներկայումս նախաձեռնությունը մեծ հույսեր չի ներշնչում, քանի որ արևելյան հարևան երկրների տարածաշրջանային համագործակցությունը խաթարում են այդ երկրների միջև առկա բարդ քաղաքական հարաբերությունները, տարածքային հակամարտությունները, որոշ դեպքերում նույնիսկ՝ բնական խոչընդոտները: Արևելյան գործընկերության մասնակիցների, հատկապես՝ հարավկովկասյան երկրների առջև ծառայած առանցքային խնդիրներից է անվտանգության ապահովումը: Արևելյան գործընկերությունը կարող է խթանել տարածաշրջանում կայունության և անվտանգության ապահովումը, ինչը, սակայն, կարող է երկար ժամանակ պահանջել:

Բացի այդ, հարկ է նշել, որ Արևելյան գործընկերությունից մասնակից պետությունների ակնկալիքները տարբեր են: Արդյունքում Եվրամիությունն ավելի է դժվարանում իր արևելյան հարևանների նկատմամբ մեկ միասնական մոտեցում դրսևորել: Այսպես, Եվրամիության հետ համեմատաբար սերտ կապեր և մեծ ձգտումներ ունեցող Ուկրաինայի և Մոլդովայի նկատմամբ ցուցաբերվող մոտեցումը նույնությամբ դրսևորվել չի կարող ԵՄ-ից տնտեսական օգնություն և հակամարտության կարգավորման ոլորտում աջակցություն ակնկալող հարավկովկասյան երկրների նկատմամբ: Նույնիսկ հարավկովկասյան առանձին երկրների նկատմամբ ԵՄ մոտեցումները որոշակիորեն տարբերվում են միմյանցից, քանի դեռ, օրինակ՝ Վրաստանը եվրաինտեգրումն իր արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկն է համարում, Հայաստանը հիմնականում ֆինանսական օգնություն և վիզաների տրամադրման ընթացակարգերի պարզեցում է ակնկալում, իսկ Ադրբեյջանը Եվրամիությունն իր հետագա զարգացման համար բարենպաստ մոդել է համարում: Ուստի Եվրամիությունը պետք է յուրաքանչյուր երկրի նկատմամբ անհատական մոտեցում դրսևորի և ավելի նպատակային ու գործուն ծրագրեր իրականացնի: Բացի այդ, որոշ փորձագետների կարծիքով, տարածաշրջանում տնտեսական բարգավաճման ապահովումը կարող է նպաստել ստեղծումը հակա-



մարտությունների կարգավորմանը: Արևելյան գործընկերության թիրախ երկրների հետ սերտ համագործակցության հաստատման դեպքում կարող է բարձրանալ Եվրամիության դերը, ինչը պետք է օգտագործվի նման հակամարտությունները կարգավորելու համար:

Եվրամիության ավելի ակտիվ դերակատարումը և Արևելյան գործընկերության կայացումը կնպաստեն հարևան Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում ժողովրդավարական կառավարման հաստատմանը, ինչն իր հերթին կնպաստի տարածաշրջանային հակամարտությունների արագ կարգավորմանը: Արդյունքում կշահի ոչ միայն տարածաշրջանը, այլև՝ Եվրամիությունը, որը կայուն ժողովրդավարական համակարգ ունեցող բարգավաճ հարևաններ ձեռք բերելու և հետագայում իր սահմաններն ընդլայնելու հնարավորություն կստանա:

## **Օգտագործված գրականության ցանկ**

1. Eastern Partnership Official Website of the Ministry of Foreign Affairs of the Republic of Poland, <http://www.msz.gov.pl/Eastern,Partnership,19898.html>, 2009,
2. The Eastern Partnership– something new or window-dressing- Sussex European Institute Working Paper, No 109, January, 2009,
3. Eastern Partnership Civil Society Forum-European Partnership for Democracy, <http://www.epd.eu/homepage/eastern-partnership-civil-society-forum>, February 2010.
4. The EU’s Eastern Partnership—a Misunderstood Offer of Cooperation. DGAP Standpunkt, N° 7. September 2009,
5. “Без визы в Европу: в обмен на что?” Hayastan Armenian Forum <http://forum.hayastan.com/index.php?s=120d1ab1d7304447f08c999b4e934712&showtopic=41132&mode=threaded&pid=899448> (date of access: Nov. 28, 2009),
6. “Three questions to Armenian Foreign Minister on the Eastern Partnership”, Swedish Government Offices
7. [http://www.se2009.eu/en/meetings\\_news/2009/12/8/three\\_questions\\_to\\_armenian\\_foreign\\_minister\\_on\\_the\\_eastern\\_partnership](http://www.se2009.eu/en/meetings_news/2009/12/8/three_questions_to_armenian_foreign_minister_on_the_eastern_partnership) (date of access: December 08, 2009),
8. “Raul de Luzenberger: Eastern Partnership can help development of cooperation in South Caucasus” European Dialogue, <http://eurodialogue.org/Eastern-Partnership-can-help-development-of-cooperation-in-South-Caucasus> (date of access: July 2010):

# Եվրահնտեգրացիա. նպատա՞կ, թե՞ միջոց

## Արաւ ԱՆՏԻՆՅԱՆ

«Պիոններ» շաբաթաթերթի խմբագիր

Յայաստան

Բավական բարդ տարածաշրջանում գտնվող նորանկախ Հայաստանին բնորոշ են բազմաթիվ ներքին և արտաքին չլուծված հիմնախնդիրներ: Եվ թերևս ամենակարևորն ու վիճահարույցն արտաքին քաղաքական ուղղության հստակեցումն է, որով էլ պայմանավորված է մեր երկրի հետագա առաջընթացն ու բարեկեցությունը: Հայաստանը զրո քաղաքական, տնտեսական կամ անվտանգության կառույցներում պետք է գտնվի, ինչ արժեքներ պետք է որդեգրի. հարցեր, որոնց պատասխանները որքան բարդ, այնքան էլ անհրաժեշտ են:

Գաղտնիք չէ, որ մենք հաղորդակցության լուրջ խնդիրներ ունենք, փոքր տարածք, սակավ բնակչություն, օգտակար հանածոներով էլ առանձնապես չենք փայլում, իսկ էներգակիրներ ընդհանրապես չունենք, ուստի մեկուսի գործել և զարգանալ՝ չիներվոլ խոշոր ռազմաքաղաքական ու տնտեսական համակարգերում, պարզապես անհնար է: Մեր դեպքում, անշուշտ, պարտադիր պայման է նաև ժողովրդավարական երկիր լինելը: Կարող է հարց առաջանալ՝ արդյոք երկիրը չի՞ կարող բարեկեցիկ ու զարգացած լինել, եթե ժողովրդավարական չէ: Իհարկե կարող է: Աշխարհում այդպիսի բազում օրինակներ կան, հատկապես՝ էներգետիկ ռեսուրսներով հարուստ երկրները, որտեղ անարդյունավետ կառավարման սխալները մասամբ փոխհատուցվում են նավթադոլարներով: Իսկ եթե երկիրն այդպիսի ռեսուրսներ չունի՞ ու նաև ժողովրդավարական չէ: Ներկայումս աշխարհի մի քանի կղզիացած պետությունների օրինակներն ակնհայտորեն վկայում են մեկուսի զարգանալու փորձերի անարդյունավետությունը. քայքայված տնտեսություն, ցածր կենսամակարդակ, բռնազավթված իշխանություն, մարդկանց իրավունքների սահմանափակումներ: Եվ քանի որ այս բնորոշումներից և ոչ մեկը մեր երկրի ռազմավարական վերջնանպատակներից չէ, ստիպված ենք գործընկերներ փնտրել:

Հայաստանն այսօր սերտ հարաբերությունների մեջ է Ռուսաստանի հետ, անդամակցում է ԱՊՀ-ին ու ՀԱՊԿ-ին: Բայց որքանով է այդ համագործակցությունն արդյունավետ: Ակնհայտ է, որ ԱՊՀ-ն՝ որպես քաղաքական ու տնտեսական տիրույթ, այդպես էլ չկայացավ, իսկ նրա ապագայի հետ հույսեր կապողների գլխին տարիներ առաջ սառը ջուր լցրեց նրա գլխավոր դերակատար երկրի այն ժամանակվա ղեկավարը՝ Վլադիմիր Պուտինը, երբ հստակ հայտարարեց, որ

ԱՊՀ-ն ստեղծվել է ընդամենը քաղաքակիրթ ապահարզանի համար: Թեպետ կառույցում ընդհանուր համակեցության կանոններ մշակելու փորձեր արվում են, բայց ժամանակը ցույց է տալիս, որ դրանք արդյունավետ չեն և ըստ էության՝ անհեռանկարային: Ասել, որ ԱՊՀ անդամ երկրներն ընդհանուր պատկերացում ունեն ԱՊՀ-ի՝ որպես քաղաքական տիրույթի մասին, պարզապես լուրջ չէ. չափազանց շատ են տարբերվում անդամ երկրների շահերը, էլ չասենք այն մասին, որ նրանց դավանած արժեքներն այնքան են հեռու իրարից, որ դրանք համակարգել ու միասնական արժեհամակարգ ձևավորել ուղղակի անհնար է: Այն կարծես որպես տնտեսական համակարգ էլ չի դիտարկվում: Միայն մի քանի անդամ երկրների ջանքերով լուրջ ֆինանսատնտեսական ու մաքսային ընդհանուր շահեր ձևակերպելու և դրանց լուծումը գտնելու որոշ երկջուտ փորձեր են արվում:

Եթե ԽՍՀՄ-ը չփլուզվեր, կամ ԱՊՀ-ն կայանար որպես գործուն ու կենսունակ կառույց, մենք չէինք էլ մտածի ԵՄ անդամ դառնալու մասին, այլ պատմական ավանդույթի ուժով մեզ կտեսնեինք այդ համակարգերում: Սակայն խոսելով ՀԱՊԿ-ի մասին՝ չեն կարող չնշել, որ Հայաստանը ցամաքային սահման չունի ՀԱՊԿ ոչ մի անդամ երկրի հետ, ինչն էլ բավական դժվարացնում է նրանց հետ արդյունավետ համագործակցությունը: Բացի այդ, ՀԱՊԿ-ի հատկապես մուսուլմանական երկրները կողմ են Ղարաբաղի հարցի Ադրբեջանի օգտին լուծմանը: Ուստի հարց է առաջանում. եթե ենթադրենք, որ Ադրբեջանը և Հայաստանը պատերազմում են իրար հետ, ապա ինչ դիրքորոշում են ունենանու այդ ՀԱՊԿ անդամ երկրները: Կամ եթե ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան որոշի հարձակվել Հայաստանի վրա, ՀԱՊԿ անդամ երկրները պատերազմ կհայտարարեն ՆԱՏՕ-ին: Հետևաբար ակնհայտ է, որ Հայաստանի զարգացման և անվտանգության երաշխավորը չեն կարող Ռուսաստանը կամ հիշյալ կառույցները լինել: Այլապես անկատար կառույցների անդամության ներկայով, անորոշ ապագայով, այս բարդ տարածաշրջանում քաղաքակիրթ աշխարհից մեկուսացված ապրելով՝ խոսել ժողովրդավարական համակարգերից դուրս ժողովրդավարական երկիր կառուցելու մասին շատ ավելի անհավանական է, քան անգամ որևէ երկրում կոմունիզմ կառուցելու լենինյան տեսությունը: Չպետք է մոռանանք, որ ապրում ենք մի այնպիսի բարդ տարածաշրջանում, որ անգամ երկրնտրանքի հարց չի առաջանում մեզ համար, քանի որ չենք կարող հանդուրժել, որ քաղաքակիրթ աշխարհի դռները մեր երկրի առջև մեր իսկ սահմանների վրա փակվեն:

Մեր երկիրը վարվող արտաքին քաղաքականությամբ ակնհայտորեն կարևորում է Հայաստանի և եվրոպական ու եվրոատլանտյան կառույցների ինտեգրացիոն կապերի խորացումը: Դրա ցայտուն ապացույցն է Հայաստանի անդամակցությունը «Եվրամիություն՝ նոր հարևաններ» ծրագրին և ՆԱՏՕ-ի հետ «Անհատական գործընկերության» ծրագրի շրջանակներում համագործակցությունը ռազմաքաղաքական այդ հզոր կառույցի հետ: Ավելին, այսօր մեր երկիրն արդեն թևակոխել է եվրաինտեգրման որակապես նոր փուլ՝ դառնալով Արևելյան գործընկերության ասոցիացված անդամ: Ուստի նոր իրողությունը

նոր համարժեք քայլեր է պահանջելու, քանի որ մինչև օրս գտնվում էինք երկու համակարգերի ճամփաբաժանին, իսկ Եվրախնտեգրման ուղղությամբ ավելի վճռական քայլերի դեպքում պետք է ստիպված լինենք որոշում կայացանել, թե որ ճանապարհով առաջ գնալ. կամ զարգացում, առաջընթաց ու անվտանգության գործուն երաշխիքներ, կամ մեկուսացում ու հետընթաց: Ինչու՞ մեկուսացում: Մեր հյուսիսային հարևան Վրաստանը գործուն քայլերով ու հետևողականորեն ձգտում է Եվրոպական ընտանիքի լիիրավ անդամակցության: Նման անթաքույց մտադրություն ունի նաև մեր մյուս հարևանը՝ Ադրբեջանը: Երբ Վրաստանը դառնա ՆԱՏՕ-ի, այնուհետև նաև ԵՄ անդամ, ապա մենք արդեն ստիպված կլինենք մեր հյուսիսային սահմանը հատել բարդացված վիզային ռեժիմի պայմաններում: Այդ ռեժիմը կդժվարացնի մեր հաղորդակցությունը ոչ միայն քաղաքակիրթ աշխարհի, այլև մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի հետ, քանզի մենք նրա հետ սահման չունենք: Կարծում եմ՝ Հայաստանի վիճակը նախանձելի չի լինի, եթե հայտնվի հարավկովկասյան մեր երկու հարևանների հետ ռազմաքաղաքական ու տնտեսական տարբեր տիրույթներում: Դրան գումարած Թուրքիայի հետ փակ սահմանը, մյուս կողմից էլ՝ Իրանը, որն այժմ հակամարտության մեջ է քաղաքակիրթ աշխարհի ու ազդեցիկ միջազգային կառույցների հետ: Բավական է նշել, որ ավելի խիստ պատժամիջոցների ընդունումը, ըստ էության, Իրանին ցույց տրված երկրորդ դեղին քարտն էր, իսկ հաջորդը կարող են անգամ կետային հարվածները լինել նրա միջուկային օբյեկտներին: Վերջին հանգամանքն ավելի է դժվարացնում մեր իրավիճակը տարածաշրջանում, քանզի Իրանի հետ մենք բազմակողմանի սերտ հարաբերություններ ունենք: Իրանը նաև համարվում է Ռուսաստանի գործընկերը, և այդ հանգամանքը մեզ դարձրել է հարավ-հյուսիս երևակայական առանցքի պետություն: Եթե կրքերը Իրանի և Արևմուտքի միջև ավելի շիկանան, ապա ծագելու է մեր քաղաքական վեկտորի ընտրության հարցը՝ Իրան-Ռուսաստան, թե՛ Եվրոպա-ԱՄՆ: Պետք է նաև նկատի ունենալ, որ պատժամիջոցների հարցում Ռուսաստանը նույնպես համաձայնություն է տվել, և դա չի կարող մեր տարածաշրջանում նոր վերադասավորումների չհանգեցնել: Իրադարձությունները կարող են այնպիսի ընթացք ստանալ, որ մեզ համար ամենաճիշտ լուծում համարվող ակտիվ չեզոքությունն անգամ մեզ չփրկի, և ստիպված լինենք ներքաշվել այդ հակամարտության մեջ: Բազմակողմանիորեն վերլուծելով մեր երկրի ներքին ու արտաքին քաղաքականության վրա էական ազդեցություն ունեցող բոլոր գործոնները՝ հանգում եմ ցավալի եզրակացության. Իրանի ու Արևմուտքի հակամարտության մեջ առավելապես մենք ենք տուժելու:

Այսօր շատ է խոսվում նաև Շանհայի վեցնյակին Հայաստանի հնարավոր անդամակցության մասին՝ որպես այլընտրանքի արևմտյան ուղղությանը: Այս առումով դարձյալ չպետք է մոռանալ, որ այդ կազմակերպության անդամ ոչ մի երկրի հետ Հայաստանը ցամաքային սահման չունի: Ուստի այս կառույցի պետությունների հետ պետք է հարաբերվենք Իրանի տարածքով, որն այժմ այնտեղ ընդամենը դիտորդի կարգավիճակով է: Մինչդեռ այդ կարգավիճակի

համար ժամանակին դիմել է բարեփոխիչ նախագահ Մուհամմադ Խաթամին, իսկ Իրանի այդ կարգավիճակը զուգահիսպեց Ահմադինեջադի պաշտոնավարմանը, որին այնքան էլ գրկաբաց չեն պատրաստվում ընդունել որպես այդ կառույցի լիիրավ անդամի: Եթե Իրանը չանդամակցի Շահալի վեցնյակին, մենք այնտեղ անելիք չունենք, իսկ եթե անգամ անդամակցի, իմ խորին համոզմամբ, դարձյալ անելիք չունենք, քանզի շատ նեղ նպատակներ հետապնդող, բայց միաժամանակ հսկայական մասշտաբներ ունեցող այդ կառույցը չի կարող արդյունավետ գործել: ՇՕՍ-ի անդամ երկրները մոտ 30 մլն քառ. կմ տարածք են ընդգրկում, որտեղ մեկուկես միլիարդ մարդ է ապրում: Եթե անգամ նրանք շահերի ընդհանրության ու նպատակների իրականացման հարցում այս կամ այն կերպ լեզու գտնեն իրար հետ, միևնույն է, ոչ մի պարագայում այնտեղ դրական հեռանկար չի բացվի մեր երկրի համար:

Բացառելով անդամակցության բոլոր այլընտրանքային տարբերակները՝ հանգում եմ հետևյալին. այս պարագայում ճիշտ ընտրությունը մեկն է՝ Եվրոպայի Միություն: Որպեսզի բարեկեցիկ ապրես և քեզ անվտանգ զգաս, նախ պետք է ժողովրդավար լինես, իսկ այդպիսին լինելու հնարավորություն ԵՄ-ն տալիս է: Մենք ցեղասպանություն ենք տեսել, և մեզ համար չի կարող անվտանգության հարցը դոմինանտ չլինել: ԵՄ-ն տարիների ընթացքում ապացուցել է, որ արդյունավետ համակարգ է, բացի այդ, ԵՄ-ի ընդլայնումն առաջընթաց է ոչ միայն տնտեսության զարգացման, այլև համամարդկային արժեքների տարածման առումով: Այս կառույցի կենսունակությունը ևս մեկ անգամ ապացուցվեց ֆինանսատնտեսական ճգնաժամի ամենաթեժ պահին, երբ ցույց տվեց համախմբվելու և առաջացած խնդիրները հեշտությամբ լուծելու իր բացառիկ կարողությունը: Չպետք է մոռանալ նաև, որ ԵՄ-ի զարգացումը համալիր բնույթ ունի. տնտեսություն, սոցիալական երաշխիքներ, ժողովրդավարություն, բարեկեցիկ ապրելու կայուն հեռանկար, ի լրումն՝ իր բոլոր ձեռքբերումները հուսալի անվտանգության համակարգով պահպանելու անհրաժեշտության գիտակցում: Անցել են այն ժամանակները, երբ Եվրոպան բառ առա բառ, ստորակետ առ ստորակետ ժողովրդավարական օրենքներ էր ընդունում իր կյանքի բարելավման համար, իսկ վայրի ցեղերը զալիս ու վերջակետ էին դնում. ոչ միայն զարգացած երկրների, այլև անգամ քաղաքակրթությունների: Ուստի ժամանակակից Եվրոպան ի զորու է զենքի ուժով պահպանելու իր քաղաքակրթական ձեռքբերումները: Եվ եթե ԵՄ-ն անվտանգության սեփական համակարգ չունի, ապա այդ գործը բարեհաջող իրականացնում է Եվրոատլանտյան անվտանգության համակարգը՝ հանդիսանալով ԵՄ-ի անվտանգության երաշխավորը: Ուստի Հայաստանը պետք է դառնա ԵՄ անդամ, իսկ մեր անվտանգության երաշխավորը պետք է լինի ՆԱՏՕ-ն: Ակնհայտ է, որ այս պարագայում շահում ենք բոլոր կողմերից:

Որպեսզի Հայաստանը և մի շարք նախկին խորհրդային երկրներ ինտեգրվեն քաղաքակիրթ աշխարհին, պետք է նախ և առաջ ազատվեն Ռուսաստանի ազդեցությունից: Եվրոպացիներն առաջարկում են միայն զարգացման

ճանապարհներ, նպաստում ու աջակցում են, որ անդամակցելու ցանկություն ունեցող երկիրը հաջողությամբ հաղթահարի այդ ճանապարհը: Սակայն նրանք այս կամ այն երկրի համար Ռուսաստանի հետ առճակատման չեն գնում. պատմական պահի թելադրանքով նման առաքելություն ստանձնել են Միացյալ Նահանգները: Հարավային Կովկասում այժմ բախվում են աշխարհի հզորների շահերը: Ռուսաստանը չի հանդուրժում, որ ԵՄ-ն և ՆԱՏՕ-ն դանդաղ, բայց հաստատուն քայլերով մոտենում են իր սահմաններին և թափանցում ավանդաբար իր ազդեցության ոլորտում գտնվող երկրներ: Պարզից էլ պարզ է, որ Ռուսաստանը ո՛չ մոտիկ, ո՛չ էլ հեռավոր ապագայում չի կարող մտնել Եվրամիություն, և խնդիրը ոչ այնքան այն է, որ նրա տարածքի մեծ մասը գտնվում է Ասիայում, որքան այն, որ ԵՄ-ն չի կարող իր տարածքը մի քանի անգամ գերազանցող Ռուսաստանը ներառել իր կազմի մեջ. Եվրոպան «այդ չափի պատահ չի կարող մարսել»: Բացի այդ, Եվրոպան ո՛չ այդքան արևելք գնալու ցանկություն ունի, ոչ էլ դրա անհրաժեշտությունը կա: Նշանակում է՝ օբյեկտիվորեն Եվրոպայի սահմանը հասնում է Ռուսաստան ու կանգ առնում: Եվ հակամարտությունն այս կամ այն դեպքում ոչ միայն տարածայնությունների պատճառով է, այլև ազդեցության ոլորտների փոփոխման երկուստեք դրսևորվող միտումների: Ռուսները Հարավային Կովկասում դեռ լուրջ ազդեցություն ունեն և այնքան էլ հեշտ չեն հրաժարվելու այդ տարածաշրջանից: Նրանց լուրջ խաղաթղթերից մեկը Հարավային Կովկասում չլուծված հակամարտություններն են, որը նրանք միշտ օգտագործում են իրավիճակն ապակայունացնելու կամ հեղիեղուկ ստատուս քվոն պահպանելու համար:

Մեր սերնդին այսօր բախտ է վիճակվել և՛ հզոր պետականության կերտման ծրագիր մշակել, և՛ մտցնել այն մեր երկրի քաղաքական ու հասարակական կյանքի օրակարգ, և՛ կյանքի կոչել: Վստահ եմ, որ պատվով կկատարենք մեր առաքելությունը, իսկ ավագ սերունդն էլ ամեն կերպ կաջակցի մեզ այդ գործում:

Ոչ ոք չի իդեալականացնում Եվրոպան, ո՛վ է ասում, թե այնտեղ խնդիրներ չկան, անշուշտ կան և քիչ չեն, բայց այսօր նա հնարավոր տարբերակներից լավագույնն է: Այլ հարց է՝ մենք երբևէ ԵՄ անդամ կդառնանք, թե՞ ոչ: Ամեն դեպքում ցանակացած քայլ դեպի ԵՄ առաջընթացի նոր հնարավորություն է Հայաստանի համար: ԵՄ-ին անդամակցությունը մենք դիտում ենք որպես հեռահար նպատակ, և դրան հասնելու ճանապարհն ուղղակի եվրախնտեզրման ավելի սերտացումն է: Եթե անգամ հանգամանքների բերումով չանդամակցենք ԵՄ-ին, հոգ չէ, քանի որ այդ ճանապարհը հետևողականորեն անցնելն արդեն իսկ չափազանց դրական է մեր երկրի համար: Ինչ ապագա էլ ունենա ԵՄ-ն, մենք կլինենք հզոր, բարեկեցիկ ու անվտանգ երկիր և, որ պակաս կարևոր չէ, բավական ճկուն՝ աշխարհաքաղաքական ցանկացած վերադասավորումներին համարժեք արձագանքելու համար:

# Գյուղ կանգնի, գերան կկտորի...

## ՏՈՒԿ ՏՈՒԿՅԱԼ

*ԵՊՏՅ տնտեսական կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի ուսանող*

*Յայաստան*

Այն, որ Հայաստանի և Թուրքիայի միջև ոչ բարիդրացիական հարաբերությունները նոր չեն այդպիսին դարձել, ինքնին պարզ է, սակայն դրանք արդեն հասցրել են դառնալ սկզբունքային և դուրս գալ զուտ տնտեսական և քաղաքական գաղափարախոսությունից: Այդ հակամարտությունը դարձել է ազգային, միմյանց սկսել ենք նայել ինչպես դարավոր թշնամու, որի հետ ցանկացած հարաբերություն վնասում է մեր անվտանգությունը և մշակույթը, շատ հաճախ էլ՝ ուղղակի սկզբունքորեն անթույլատրելի է: Այս ամենը ժամանակի ընթացքում վերածվում է խիստ հակակրանքի, սկսում ենք մեր հարևանների յուրաքանչյուր քայլի մեջ ծուղակ տեսնել, եթե անգամ այդ քայլերն անմիջականորեն մեզ չեն էլ առնչվում, հակամարտության կարգավորման գործընթացի ձգձգման հետ այս երևույթներն էլ ավելի են խորանում ու արմատավորվում, քանի որ համաձայնության եզրերի բացակայությունը մարդկանց ստիպում է ամրապնդել իրենց ենթադրությունները, նրանք օր օրի ավելի են չարանում միմյանց հանդեպ: Այս ամենը մարդկանց ավելի փակ է դարձնում և դրդում, որ զգացմունքները իշխեն բանականությանը: Մեր անցյալը մեր ուսուցիչն է, սակայն այն մեզ չի պարտադրում, այլ ուղղորդում է, մեր ներկան վաղը դառնալու է անցյալ, իսկ ապագան հաջորդելու է դրան, ուստի կարևոր է ապագան այսօր կառուցել, որպեսզի մեր վաղվա ներկան այսօրվա ապագան լինի: Թշնամանքը ոչ մի կողմին պատիվ չի բերում, այն անհրաժեշտ է վերացնել և ձևավորել նոր միջավայր նոր հարաբերությունների համար:

Այսպիսի հարաբերությունների պարագայում շատ դժվար է հստակ ասել, թե որ մոտեցումն է ավելի կիրառելի. ազգերի մերձեցումը, որը կհանգեցնի կոնֆլիկտի կարգավորման, թե՛ կոնֆլիկտի կարգավորումը, որը կհանգեցնի ազգերի մերձեցման:

Կոնֆլիկտի կարգավորումն ինքնին բարդ և ժամանակատար երևույթ է, երբ յուրաքանչյուր կողմ փորձում է առավելագույն օգուտ ունենալ, այդ իսկ պատճառով երկխոսությունը հաճախ ընդհատվում է, իսկ կոնֆլիկտը՝ խորանում:

Հարկ է հիշել, որ պետությունների ղեկավարների կտրուկ քաղաքականությունը՝ ուղղված կոնֆլիկտի լուծմանը, և շուտափույթ միջոցների ձեռնարկումը ոչ միայն

չեն վերացնի ժողովուրդների դարավոր հակակրանքը, այլև կարող են խորացնել դա: Խորացնել այն իմաստով, որ քանի դեռ թշնամանքի և վախի մթնոլորտը ճնշող է, իսկ դիվանագիտությունը բարդ է և վատ մատուցված հասարակությանը, մարդկային երևակայությունը վերելք է ապրում, ընդ որում՝ միայն բացասական հետևանքների ուղղությամբ:

Յուրաքանչյուր մարդու այս կամ այն չափով բնորոշ է կասկածամտությունը, իսկ երբ դրան գումարվում է տեղեկատվության և կրթության պակասը, որը լուրջ խնդիր է և Հայաստանում, և Թուրքիայում, և Ադրբեջանում, ապա կասկածամտությունը դառնում է վախ, ինչն էլ արգելակում է շփումը: Այն մարդը, որը կասկածանքով և վախով է նայում դիմացինին, պատրաստ չէ համագործակցության: Ազգաբնակչության մի մասն այսօր էլ տեղյակ չէ, թե հենց Հայաստանն ինչ քաղաքականություն է վարում իր հարևանների հետ, մասնավորապես՝ Թուրքիայի և Ադրբեջանի, տեղյակ չէ, թե կոնֆլիկտի կարգավորման ճանապարհին ինչ մարտավարություն է ընտրել, ինչ զիջումների է պատրաստ և ինչ է ակնկալում, սակայն բոլորն էլ գիտեն, որ դրանք իրենց թշնամիներն են, և պետության ցանկացած քայլ կարող է մեկնաբանվել որպես ազգային դավաճանություն և բողոքի մեծ ալիք բարձրացնել: Եվ բնակչության այս հատվածի տեսակարար կշիռն ինչքան բարձր է, այնքան ավելի վտանգավոր են պետության որոշումները: Ու եթե պետական մակարդակով հաջողվի կոնֆլիկտին խաղաղ լուծում տալ, ապա դա նախադրյալներ չի ստեղծի ազգերի միջև շփումներ հաստատելու համար, ընդհակառակը՝ կառաջացնի պաշտպանական ռեֆլեքս (իրավիճակ, երբ մարդիկ իրենց վտանգված կզգան, քանի որ պետությունների միջև կհաստատվեն դիվանագիտական հարաբերություններ, և դա, ըստ նրանց, Հայաստանի տարածքն ավելի դյուրաթափանց կդարձնի թուրքերի ու ադրբեջանցիների համար), ինչն էլ ավելի կբարդացնի գործընթացը:

Իհարկե, կգտնվի հասարակության մի զանգված, որը հնարավորության դեպքում ակտիվ համագործակցություն կսկսի հարևան պետությունների հետ, և դրանով իսկ անջրպետ կստեղծվի այդ երկու զանգվածների հարաբերություններում, կառաջանան բարիկաղներ, նոր հակամարտություն կսկսվի պետության ներսում, քանի որ հակաթուրքական հակումներ ունեցող բնակչությունը կառաջնորդվի «թշնամուս ընկերն իմ թշնամին է սկզբունքով»: Սրա հետևանքը կլինի այն, որ կսկսվի քաղաքական լուրջ պայքար, իշխանությունը կզիջի իր դիրքերը, և կծառանա միջև իսկ իշխանափոխության պահանջը: Ուստի կարելի է հետևություն անել, որ պետությունները կարող են վճռական քայլերի դիմել ժողովուրդների փոխադարձ վերաբերմունքը փոխելուց հետո միայն, որն ինքնին տևական և դժվարին գործընթաց է:

Նախ և առաջ անհրաժեշտ է ծանոթացնել հասարակությանը վարվող քաղաքականությանը, կրթել նրան, գիտելիքներ հաղորդել կոնֆլիկտի վերաբերյալ, հասկացնել դրա լուծման անհրաժեշտությունը և ներկայացնել դրա դրական ու բացասական կողմերը: Այս պարագայում հնարավոր կդառնա փորձի փոխանա-



կում ապահովել ժողովուրդների միջև, գիտական և կրթական համագործակցություն, ինչն էլ կհանգեցնի փոխադարձ վստահության ձևավորմանը: Սակայն պետական մակարդակով հովանավորության բացակայության պայմաններում շատ դժվար է կազմակերպել և իրականացնել նման ծրագրեր, իսկ քանի դեռ կառավարությունները չեն համագործակցում, նման հովանավորություն ակնկալելն անիմաստ է:

Կոնֆլիկտի կարգավորումը, սակայն, հնարավոր է, եթե համագործակցեն պետությունը և հասարակությունը: Կոնֆլիկտի կարգավորումը պետք է սկսել և սկսել անհապաղ, սակայն դանդաղ և վստահ քայլերով: Նախ և առաջ յուրաքանչյուր ազգ պիտի գիտակցի դրա անհրաժեշտությունը, ինչը հնարավոր է միայն պետական կրթական համակարգի վերանայման և փոփոխման շնորհիվ, որը, սակայն, ինքնին բավարար չէ. կարևոր է հասարակական կազմակերպությունների դերը, որոնք մեծ ներուժ և շփման հնարավորություններ ունեն: Հարևան երկրների պետությունները պետք է խրախուսեն հասարակական կազմակերպությունների կապերը, իսկ վերջիններս էլ իրենց հերթին պետք է ձգտեն ընդլայնել իրենց շրջանակները և հասարակության հնարավորինս մեծ զանգված ընդգրկել շփման մեջ: Այս շրջանում հասարակությունն արդեն պատրաստ կլինի ընդունել պետական քաղաքականությունը և կխրախուսի սահմանների բացումը, որն էլ իր հերթին կնպաստի հակամարտության խաղաղ կարգավորմանը:

# Հայաստանի Հանրապետությունը՝ որպես մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանման երաշխավոր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գնահատումները

## ԿՈՐՅՈՒ ԱՐԵՎԵԱՏՏԱՆ

*Իրավաբանության մագիստրոս  
Յայաստան*

2001 թ. հունվարի 25-ին ստորագրելով և 2002 թ. ապրիլի 26-ին վավերացնելով 1950 թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ կոնվենցիա)՝ Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ Հայաստան) նույնպես պարտավորություն ստանձնեց միջոցներ ձեռնարկել՝ հնարավորինս նվազեցնելու իր տարածքում մարդու իրավունքների և ազատությունների ոտնահարման դեպքերն ու հավանականությունը: Ընդունվելուց հետո պահանջվեց երեք տարի, որպեսզի կոնվենցիան կիրառվեր այն ստորագրած հիմնադիր պետություններում, այսինքն՝ կոնվենցիան՝ որպես միջազգային պայմանագիր, ուժի մեջ մտավ 1953 թ. սեպտեմբերի 3-ին: Կոնվենցիայի ընդունմանը հաջորդեց նաև դրա անբաժան մասը կազմող արձանագրությունների՝ լրացուցիչ իրավունքներ և ազատություններ երաշխավորող փաստաթղթերի ընդունումը. կոնվենցիան և լրացուցիչ արձանագրությունները դիտարկվում են նույն համատեքստում:

Որպես միջազգային իրավական փաստաթուղթ՝ կոնվենցիան իր ուրույն տեղն ունի Հայաստանի իրավական ակտերի աստիճանակարգում այնքանով, որքանով պարտադրում է Հայաստանին՝ որպես անդամ պետության, հարգել մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները՝ նպատակ ունենալով առավելագույնս պահպանել և պաշտպանել դրանք: Անդամակցելով կոնվենցիային՝ Հայաստանն իր իրավական դաշտում «ավելացրեց» ևս մեկ իրավական պաշտպանական մեխանիզմ իր իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր մարդու համար՝ տեսնելով և գնահատելով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների արդեն իսկ ունեցած փորձառությունն այդ բնագավառում: Խոսքն առավելապես վերաբերում է կոնվենցիային համապատասխան 1950 թ. սեպտեմբերի 18-ին ստեղծված Մարդու իրավունքների եվրոպական դատարանին (այսուհետ՝ դատարան), որը՝ որպես միջազգային դատարան, գտնվում է Ստրասբուրգում, ուստի առօրյա կյանքում այն անվանում են նաև «Ստրասբուրգի դատարան»: Այն դեպքերում, երբ Հայաստանը չի հարգում և չի պահպանում կոնվենցիայում և դրան կից արձանագրությունները

րում ամրագրված մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, դատարանը իրավագոր է միջամտելու և որոշումներ կայացնելու դրանց առնչությամբ ընդունված գործերի վերաբերյալ: Այդ որոշումները պարտադիր են Հայաստանի համար. նա պետք է քայլեր ձեռնարկի՝ վերացնելու այն նախադեպերն ու խտրական մոտեցումները, որոնք քննարկման սեղանին են դրվել դատարանում՝ որպես թերացում կամ անտեսում Հայաստանի կողմից տվյալ իրավունքներն ու ազատությունները հարգելու համատեքստում:

Կոնվենցիայի առաջին բաժնում ամրագրված են այն իրավունքներն ու հիմնարար ազատությունները, որոնք Հայաստանը՝ որպես անդամ պետություն, պետք է ապահովի իր տարածքում գտնվող յուրաքանչյուր անհատի համար: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հետևյալ իրավունքներին և ազատություններին. կյանքի իրավունք (հոդված 2), խոշտանգումների արգելում (հոդված 3), ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում (հոդված 4), ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք (հոդված 5), արդար դատաքննության իրավունք (հոդված 6), պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա (հոդված 7), անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք (հոդված 8), մտքի, խղճի և կրոնի ազատություն (հոդված 9), արտահայտվելու ազատություն (հոդված 10), հավաքների և միավորման ազատություն (հոդված 11), ամուսնության իրավունք (հոդված 12), իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք (հոդված 13), խտրականության արգելում (հոդված 14):

1952 թ. մարտի 20-ի թիվ 1 արձանագրությամբ երաշխավորվում են սեփականության պաշտպանության իրավունքը (հոդված 1), կրթության իրավունքը (հոդված 2), ազատ ընտրությունների իրավունքը (հոդված 3), իսկ 1984 թ. նոյեմբերի 22-ի թիվ 7 արձանագրությունում ամրագրված են օտարերկրացիների արտաքսմանը վերաբերող ընթացակարգային երաշխիքները (հոդված 1), քրեական գործերով գանգատարկման իրավունքը (հոդված 2), փոխհատուցումը սխալ դատապարտման դեպքում (հոդված 3), կրկին անգամ չդատվելու և չպատժվելու իրավունքը (հոդված 4), հավասարությունն ամուսինների միջև (հոդված 5) և այլն:

2007 թ. ի վեր դատարանը քննել է Հայաստանի դեմ ներկայացված 23 գանգատ կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների համապատասխան դրույթները խախտելու վերաբերյալ, որոնցից միայն մեկի դեպքում է արձանագրվել, որ խախտում չի եղել: Փաստորեն, չնայած 22 որոշմամբ հիմնավորվել և հաստատվել է կոնվենցիայով և կից արձանագրություններով երաշխավորված իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում Հայաստանի կողմից, սակայն Հայաստանն իր համար «հաղթանակ» է արձանագրել պետական իրավական համակարգի կատարելագործման և պարբերական արդիականացման ոլորտում: Հաղթանակ, որով բարձրացվում է նախևառաջ Հայաստանի միջազգային հեղինակությունը մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների համատեքստում, քանի որ դատարանի պարտադիր որոշումների կատարմամբ Հայաստանը հաստատում է մարդու իրավունքները և ազատությունները երաշխա-

վորելու և հարգելու, ինչպես նաև հետագայում նման խախտումներ չկրկնելու իր բարի կամքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դեպքի համար դատարանի պարզաբանումները:

Այսպես, դատարանը 2007 թ. 3 գործ է քննել Հայաստանի դեմ, 2008 թ.՝ 6 գործ, 2009 թ.՝ 10 գործ և 2010 թ. հունիսի 15-ի դրությամբ՝ 4 գործ: Հայաստանի դեմ դատարանի քննած 22 գործերով վճռվել է, որ կոնվենցիայի 3-րդ հոդվածը խախտվել է հինգ անգամ<sup>1</sup>, 5-րդ հոդվածը՝ մեկ անգամ<sup>2</sup>, 6-րդ հոդվածը՝ տասներեք անգամ<sup>3</sup>, 10-րդ հոդվածը՝ մեկ անգամ<sup>4</sup> և 11-րդ հոդվածը՝ վեց անգամ<sup>5</sup>:

Ինչ վերաբերում է Հայաստանի կողմից կոնվենցիային կից արձանագրությունների դրույթների խախտմանը, ապա մինչ 2010 թ. հունիս ամիսը դատարանն արձանագրել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկու<sup>6</sup> և 3-րդ հոդվածի մեկ խախտում<sup>7</sup>, ինչպես նաև թիվ 7 արձանագրության միայն 2-րդ հոդվածի յոթ խախտում<sup>8</sup>:

Դատարանի գնահատումներով՝ Հայաստանը կոնվենցիայի 3-րդ հոդվածը հիմնականում խախտել է անձի կալանքի հետ կապված վատ պայմանների տեսանկյունից. անձնական օգտագործման համար նախատեսված համապատաս-

---

1 «Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 31237/03 գործով 02.12.2008 թ. վճիռ, «Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 41698/04 գործով 02.12.2008 թ. վճիռ, «Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 2239/05 գործով 02.12.2008 թ. վճիռ, «Կարապետյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 22387/05 գործով 27.10.2009 թ. վճիռ, «Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 34334/04 գործով 15.06.2010 թ. վճիռ:

2 «Ասատրյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 24173/06 գործով 09.02.2010 թ. վճիռ:

3 «Հարությունյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 36549/03 գործով 28.06.2007 թ. վճիռ, «Գալստյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 26986/03 գործով 15.11.2007 թ. վճիռ, «Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 11724/04 և 1335/04 գործերով 06.12.2007 թ. վճիռ, «Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 31237/03 գործով 02.12.2008 թ. վճիռ, «Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 41698/04 գործով 02.12.2008 թ. վճիռ, «Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 2239/05 գործով 02.12.2008 թ. վճիռ, «Պայքար և հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի» թիվ 21638/03 գործով 20.12.2007 թ. վճիռ, «Աշոտյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 33268/03 գործով 17.07.2008 թ. վճիռ, «Կարապետյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 22387/05 գործով 27.10.2009 թ. վճիռ, «Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 45081/04 գործով 27.10.2009 թ. վճիռ, «Գասպարյանն (2) ընդդեմ Հայաստանի» թիվ 22571/05 գործով 16.06.2009 թ. վճիռ, «Իսախանյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 31761/04 գործով 01.12.2009 թ. վճիռ, «Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 25083/05 գործով 16.03.2010 թ. վճիռ:

4 «Մելքոնյան» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 32283/04 գործով 17.06.2008 թ. վճիռ:

5 «Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 6562/03 գործով 11.01.2007 թ. վճիռ, «Գալստյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 26986/03 գործով 15.11.2007 թ. վճիռ, «Աշոտյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 33268/03 գործով 17.07.2008 թ. վճիռ, «Ամիրյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 31553/03 գործով 13.01.2009 թ. վճիռ, «Սափեյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 35738/03 գործով 13.01.2009 թ. վճիռ, «Գասպարյանն (1) ընդդեմ Հայաստանի» թիվ 35944/03 գործով 13.01.2009 թ. վճիռ:

6 «Իսախանյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 31761/04 գործով 01.12.2009թ. վճիռ, «Մինասյանը և Ստեղծյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 27651/05 գործով 23.06.2009 թ. վճիռ:

7 «Սարուխանյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 38978/03 գործով 27.05.2008 թ. վճիռ:

8 «Գալստյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 26986/03 գործով 15.11.2007 թ. վճիռ, «Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 31237/03 գործով 02.12.2008 թ. վճիռ, «Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 41698/04 գործով 02.12.2008 թ. վճիռ, «Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 2239/5 գործով 02.12.2008 թ. վճիռ, «Աշոտյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 33268/03 գործով 17.07.2008 թ. վճիռ, «Կարապետյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 22387/05 գործով 27.10.2009 թ. վճիռ, «Գասպարյանն (2) ընդդեմ Հայաստանի» թիվ 22571/05 գործով 16.06.2009 թ. վճիռ:

խան մակերեսով տարածքի բացակայությունը, խցում մահճակալի կամ անկողնա-  
յին պարագաների բացակայությունը կամ պակասը, տրամադրված սպիտակեղե-  
նի հակասանիտարական վիճակը, խցի փոքր փակ պատուհանը, որը խոչընդոտել  
է թարմ օդի և բնական ցերեկային լույսի ներթափանցումը խուց, մակաբույծնե-  
րով և այլ միջատներով լի խուցը, զուգարանից օգտվելը սահմանված ժամերին և  
դրա հակասանիտարական վիճակը, խմելու ջրի կամ սննդի տրամադրումը օրը  
մեկ կամ երկու անգամ կամ դրանց ոչ պիտանի լինելը և կամ տրամադրումը միայն  
վճարունակ լինելու դեպքում<sup>1</sup>, համապատասխան բժշկական օգնություն չցուցա-  
բերելը կալանավայրերում, ինչպես նաև վերաքննության կարգով գործի քննույթ-  
յան ընթացքում անձին մետաղյա ճաղովանդակում պահելը<sup>2</sup> դիտվել են որպես  
անմարդկային և նվաստացնող վերաբերմունք պետության կողմից իր իրավազո-  
րության ներքո գտնվող անձանց նկատմամբ:

Հայաստանի կողմից կոնվենցիայի 6-րդ հոդվածով անձի համար երաշխավոր-  
ված արդար դատաքննության իրավունքի իրականացման շրջանակներում դա-  
տարանը եկել է հետևյալ եզրահանգումների: Անկախ այն հանգամանքից, թե ինչ  
ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները  
անձի քրեական վարույթի արդյունքի վրա, նման ապացույցի օգտագործումն ամ-  
բողջ դատավարությունը դարձրել է անարդար<sup>3</sup>, խախտվել է քննարկվող հոդվածը,  
երբ բացակայել է արդար և անաչառ դատարանի կողմից անձի դիմումի հրապա-  
րակային քննության իրավունքը<sup>4</sup>, պատշաճ ժամանակ և հնարավորություն չի ըն-  
ձեռվել անձին իր պաշտպանությունը նախապատրաստելու համար<sup>5</sup>, չի հարգվել  
դատավարության մասնակիցների հավասարության սկզբունքը<sup>6</sup>, վճռաբեկ դատա-  
րանն անձին զրկել է դատարանի մատչելիության իրավունքից<sup>7</sup>, գործի որոշակի  
հանգամանքներում անձի մեղավորությունը կամ անմեղությունը որոշվել է առանց  
այդ անձի և վկաների կողմից անձամբ տված ցուցմունքների ուղղակի գնահատ-  
ման<sup>8</sup>, անձի օգտին կայացված վճիռն ի կատար ածելու համար անհրաժեշտ մի-

1 «Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 31237/03 գործով 02.12.200 8 թ. վճիռ, «Թադևոսյանն  
ընդդեմ Հայաստանի» թիվ 41698/04 գործով 02.12.2008 թ. վճիռ, «Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի»  
թիվ 2239/05 գործով 02.12.2008 թ. վճիռ, «Կարապետյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 22387/05 գործով  
27.10.2009 թ. վճիռ:

2 «Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 34334/04 գործով 15.06.2010 թ. վճիռ:

3 «Հարությունյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 36549/03 գործով 28.06.2007 թ. վճիռ:

4 «Գալստյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 26986/03 գործով 15.11.2007 թ. վճիռ:

5 «Գալստյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 26986/03 գործով 15.11.2007 թ. վճիռ, «Կիրակոսյանն ընդդեմ  
Հայաստանի» թիվ 31237/03 գործով 02.12.2008 թ. վճիռ, «Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի» թիվ  
41698/04 գործով 02.12.2008թ. վճիռ, «Մխիթարյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 2239/05 գործով  
02.12.2008 թ. վճիռ, «Աշոտյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 33268/03 գործով 17.07.2008 թ. վճիռ,  
«Կարապետյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 22387/05 գործով 27.10.2009 թ. վճիռ, «Գասպարյանն (2)  
ընդդեմ Հայաստանի» թիվ 22571/05 գործով 16.06.2009 թ. վճիռ:

6 «Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 11724/04 և 1335/4 գործերով 06.12.2007 թ.  
վճիռ:

7 «Պաթար և հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի» թիվ 21638/03 գործով 20.12.2007 թ. վճիռ:

8 «Ստեփանյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 45081/04 գործով 27.10.200 9 թ. վճիռ:

ջոցներ չեն ձեռնարկվել<sup>1</sup>, անձի կողմից լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելը և քննության առնելը մերժվել է վճռաբեկ դատարանի կողմից<sup>2</sup>:

Դատարանը Հայաստանի կողմից կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում է դիտել այն, որ միջամտությունները դիմող ընկերության տեղեկատվություն և գաղափարներ տարածելու ազատությանը, մասնավորապես՝ հեռարձակման արտոնագիր տրամադրելու յոթ մերժումները չեն բավարարել քննարկվող հոդվածով սահմանված օրինականության պահանջը, և արտոնագրման այն ընթացակարգը, որով արտոնագրող մարմինը չի պատճառաբանում իր որոշումները, խոսքի ազատության հիմնարար իրավունքին պետական մարմնի կողմից կամայական միջամտություններից բավարար պաշտպանություն չի ապահովում:

Հավաքների և միավորման ազատությունը, որը երաշխավորվում է կոնվենցիայի 11-րդ հոդվածով, դատարանի գնահատումներով՝ Հայաստանի կողմից խախտվել է, և միջամտությունը անձի խաղաղ հավաքներին մասնակցելու իրավունքին չի դիտվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» այն դեպքերում, երբ դա կատարվել է առանց օրենքով սահմանված կարգի<sup>3</sup>, ինչպես նաև, երբ անձը պատժվել է սոսկ հանրահավաքին ներկա գտնվելու և ակտիվություն ցուցաբերելու, ոչ թե դրա ընթացքում որևէ հակաօրինական, բռնի կամ անպարկեշտ գործողություն կատարելու համար<sup>4</sup>:

Հայաստանին մնում է միայն ցանկություն և հետևողականություն ցուցաբերել վերոնշյալ խախտումները չկրկնելու և իր իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար իրավական բարեկեցիկ և պաշտպանված միջավայր ապահովելու համար՝ հարգելով և խրախուսելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանումը, քանի որ դատարանն իր որոշումների հետագա կատարման համար պատասխանատու չէ: Դրանց կատարման պատասխանատվությունը ստանձնում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, որի խնդիրն է վերահսկել անդամ պետություններում որոշումների կատարումը և երաշխավորել փոխհատուցման վճարումը՝ համաձայն դատարանի որոշման:

1 «Խնայատրյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 31761/04 գործով 01.12.2009 թ. վճիռ:

2 «Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 25083/05 գործով 16.03.2010 թ. վճիռ:

3 «Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 6562/03 գործով 11.01.2007 թ. վճիռ, «Ամիրյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 31553/03 գործով 13.01.2009 թ. վճիռ, «Սափեյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 35738/03 գործով 13.01.2009 թ. վճիռ:

4 «Գալստյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 26986/03 գործով 15.11.2007 թ. վճիռ, «Աշուղյանն ընդդեմ Հայաստանի» թիվ 33268/03 գործով 17.07.2008թ. վճիռ, «Գասպարյանն (I) ընդդեմ Հայաստանի» թիվ 35944/03 գործով 13.01.2009 թ. վճիռ:

# «Սովորել նշանակում է իմանալ և գործել» «Եվրաֆորում» երիտասարդական ցանցի ծրագրերի շրջանակներում մեկնարկել է միջմշակութային ուսումնական գործընթացը

## ՈՒՐՈՒՆԱ ՄԱՐԿՈՎՍԿԱ-ՄԱՆԻՍԱ

«Եվրաֆորում պոլսկա» միջմշակութային երկխոսության ասոցիացիա  
Լեհաստան

«Ներդրոտոսի համոզմամբ, մարդն ինքն իրեն և իր մշակույթը ճանաչելու համար պետք է ճանաչի նաև այլ մշակույթներ, քանի որ դրանք մի հայելի են, որ արտացոլում են մեր անձը, արժանիքներն ու թերությունները»<sup>1</sup>:

Ներկայիս աշխարհի մշակութային հարստության, բազմազանության և բազմազգության արդյունքում առաջացող հիմնախնդիրները լուծելու համար մենք պարզապես ստիպված ենք որոշակի միջոցներ ձեռնարկել: Առաջին՝ հաշվի առնելով նշված խնդիրների առկայությունը՝ երիտասարդները պետք է ձգտեն մասնակցել տարբեր մշակույթներ ճանաչելու հնարավորություն տվող արդիական ծրագրերին: Այդ իսկ պատճառով, առաջնորդվելով Հերոդոտոսի խոսքերով, երիտասարդների միջազգային համագործակցություն հաստատելու համար մենք մի շարք ծրագրեր ենք ձեռնարկել, որոնք միջմշակութային երկխոսության վրա են խարսխված: 2006 թ. օգոստոսի 21-30-ը Վրաստանի գեղատեսիլ սարերի գրկում իրականացվել են առաջին ծրագրերը «Եվրաֆորում-Կովկաս 2006» միջազգային խորհրդաժողովի շրջանակներում: Խորհրդաժողովին մասնակցել են Եվրամիության (Իսպանիա, Ֆրանսիա և Լեհաստան) և Հարավային Կովկասի (Հայաստան, Ադրբեջան և Վրաստան) երեքական երկրներում գործող երիտասարդական կազմակերպությունների ակտիվ ներկայացուցիչներ, որոնք հասարակական կազմակերպություններում և համալսարանական միավորումներում աշխատանքի մեծ փորձ ունեն (Լանտի համալսարան և «Լա Պեշ» ասոցիացիա (Ֆրանսիա), «Եվրոպացի ուսանողների ֆորում» (AEGEE) (Թբիլիսի, Վրաստան), «Հայաստան 2020» (Հայաստան), «Եվրոպացի ուսանողների ֆորում» (Բաքու, Ադրբեջան), «Սոլիդարնի» հիմնադրամ (Վարշավա, Լեհաստան), «Cooperacion et solidaria Accion» և «UAM» (Մադրիդ, Իսպանիա):

«Եվրաֆորում-Կովկաս» խորհրդաժողովն առաջին ֆորումն էր, որի շրջանակներում Կովկասի և Եվրամիության երեքական երկրները ներկայացնող երի-

<sup>1</sup> P. Ugwałowa «Հարցազրույց Ռ. Կապուշինսկու հետ», Z Herodotem w walizce, Dziennik Bałtycki, Bałtycki 14.11.2003 թ.:

տասարդները հանդիպելու և համագործակցելու հնարավորություն են ունեցել: Փաստորեն, այս ժողովը քաղաքացիական հասարակության վերաբերյալ մտքեր, կարծիքներ և փորձ փոխանակելու, ինչպես նաև տարբեր ոլորտներում տեղական և համաշխարհային հիմնախնդիրները (օրինակ՝ էկոլոգիա, զբոսաշրջություն, քաղաքացիական հասարակություն, արտասահմանյան ուսումնական ծրագրեր, զանգվածային լրատվություն, փոքրամասնությունների և միգրանտների խնդիրներ) քննարկելու եզակի հնարավորություն էր: Հարկ է նշել, որ այդ հիմնախնդիրները Ասիայի և Եվրոպայի բազամշակութային համայնքներում ապրող երիտասարդներին են առնչվում: Այսպիսով, խորհրդաժողովի շնորհիվ երիտասարդները Կովկասի և Եվրամիության երկրների երիտասարդական կազմակերպություններին հետագա համագործակցության նոր համատեղ ծրագրեր են մշակել:

Ֆրանսիայում, Իսպանիայում, Լեհաստանում և Հայաստանում հետագայում անցկացվելիք այլ ֆորումների և ծրագրերի նման, այս ֆորումն անցկացվել է «Youth»<sup>1</sup> և «Youth in Action» եվրոպական ծրագրերի ֆինանսական աջակցությամբ. երիտասարդների համար միայն մասնակցության վճար է սահմանվել՝ նրանց ճանապարհածախսը հոգալու համար: Ծրագիրն ինն ամսվա ընթացքում մշակել են վերոնշյալ վեց երկրները ներկայացնող համակարգողները: Դա հսկայական ջանք պահանջող աշխատանք էր ոչ միայն մասնակիցների երկրների հեռավորության և լեզվական տարբերությունների, այլև Եվրամիության՝ բազում փաստաթղթեր ներկայացնելու պահանջի տեսանկյունից: Ինչպես պարզվեց, մշակութային բազմազանությունը, բոլոր մասնակիցների ուժեղ հետաքրքրվածության հետ մեկտեղ նպաստել է ծրագրի հաջողությանը ինչպես դրա մշակման, այնպես էլ հետագա համագործակցության փուլերում:

Հուլիսին՝ բոլոր մասնակիցների համար նախատեսված սեմինարների անցկացումից չորս շաբաթ առաջ, Վրաստանում տեղի ունեցավ ծրագրի համակարգողների հանդիպումը: Հանդիպման վայրը որոշելիս հաշվի են առնվել Եվրամիության կանոնները, որոնց համաձայն՝ հանդիպումները տեղի են ունենում այն երկրում, որտեղ անցկացվում են սեմինարները: Հինգ օր տևած այդ նախապատրաստական այցը ծրագրի կարևորագույն բաղադրիչներից է: Այդ փուլում համակարգողների հիմնական նպատակն էր սահմանել սեմինարների վերջնական ընթացակարգերը, օրինակ՝ պարտականությունների բաշխում, ընդհանուր նախապատրաստական աշխատանքների ժամանակացույցի կազմում և վերլուծություն:

1 «Youth» ծրագիրը նախատեսված է 15-25 տարեկան երիտասարդ մասնակիցների և համակարգողների համար և իրականացվում է ոչ ֆորմալ ու հեռակա ուսուցման տեսքով: Ծրագիրը բաղկացած է հետևյալ 5 գործողություններից. Գործողություն 1. Երիտասարդությունը Եվրոպայի համար. երիտասարդների միջազգային փոխանակման ծրագրեր, Գործողություն 2. Կամավորական աշխատանք. Եվրոպայում կամավորական աշխատանքի նպատակով երիտասարդների ուղևորությունն արտասահման, Գործողություն 3. Երիտասարդական ծրագրեր. տեղական մակարդակով երիտասարդների կողմից իրականացվող ծրագրեր, Գործողություն 4. Համատեղ ծրագրեր. «Socrates», «Leonardo da Vinci» և «Youth» ծրագրերը միավորող համատեղ նախաձեռնություն, Գործողություն 5. Աջակցության ծրագրի մնացած բաղադրիչների իրականացմանը: «Youth» ծրագիր, Մշակույթի և կրթության հանձնաժողով, ձեռնարկ, «Users Guide», 2005թ. հունվարի 1-ի տարբերակ, վեբկայքը՝ [http://ec.europa.eu/youth/program/guide05\\_en.pdf](http://ec.europa.eu/youth/program/guide05_en.pdf) and: [www.youth.org.pl](http://www.youth.org.pl):



Ծրագրի առանցքային բաղադրիչների շարքում հարկ է նաև առանձնացնել եվրոպական և գործընկեր երկրների հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանումը: Այդ նպատակի հաջող իրականացման հիմքում ընկած է հավասարություն հասկացությունը և երիտասարդների գիտելիքների հարստացման ու հմտությունների զարգացման համար անհրաժեշտ բազում ծրագրերի ժողովրդականացումը: Բացի այդ, «Youth» ծրագիրն ունի նաև հետևյալ հեռահար նպատակները.

- երիտասարդներին ծանոթացնել եվրոպական մշակութային ժառանգությանը, բազմազանությանը և այլ ընդհանուր արժեքներին,
- հաղթահարել տարբեր ազգերի մշակույթին և մտածելակերպին բնորոշ նախապաշարմունքները, կարծրատիպերը և արգելքները,
- պայքարել խտրականության դրսևորումների դեմ, նպաստել հանդուրժողականության հաստատմանը և քաղաքացիական հասարակության ձևավորմանը,

- Եվրամիության լավագույն փորձի օրինակների միջոցով բարձրացնել տեղի երիտասարդության գործունեության նշանակությունը և արդյունավետությունը: «Եվրաֆորում-Կովկաս 2006» խորհրդաժողովն ազդարարեց երիտասարդների՝ վերոնշյալ սկզբունքների վրա հիմնված միջազգային համագործակցության մեկնարկը: Այսպիսով, համատեղ ծրագրերը կիրականացվեն ոչ ֆորմալ կրթության շրջանակներում անցկացվելիք գանազան ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով: Նշված ծրագրերի նպատակն է նպաստել խորհրդաժողովի մասնակիցների՝ ԵՄ ինտեգրմանը և նրանց խրախուսել նույնացնել մասնակից երկրների երիտասարդների համար նպաստավոր գործունեության նոր ոլորտներ և համատեղ ջանքերով բարձրացնել Եվրամիության և Կովկասի երկրների երիտասարդների քաղաքական ակտիվությունը և մարդու իրավունքների նկատմամբ հետաքրքրությունը:

«Եվրաֆորում-Կովկաս 2006» ծրագիրը նախաձեռնել է ֆրանսիական Նանտի համալսարանի ուսանողների կողմից հիմնված «Լա Պեշ» ասոցիացիան (վեբ-կայքը՝ [www.lapech.fr](http://www.lapech.fr)): ֆրանսիացի գործընկերները Վրաստանի «Եվրոպացի ուսանողների ֆորում» ասոցիացիայի ներկայացուցիչների հետ միասին կյանքի են կոչել միջազգային սեմինարներ անցկացնելու իրենց գաղափարը: «Արևելք-Արևմուտք համագործակցության հարթակ Եվրաֆորումի» (Euroforum East-West Platform) շրջանակներում ութ երկրների համագործակցության հիմքում ընկած համատեղ ծրագրերի մեկնակետային գաղափարները ներկայացվում են հետևյալ մեջբերումներում.

*«Սույն ծրագիրը նախաձեռնելու գաղափարը երկու տարի առաջ է ծագել: Վրացի և հայ երիտասարդների հետ համագործակցության ընթացքում գիտակցեցինք Կովկասի և Եվրամիության երեքական երկրների երիտասարդության*

1 «Youth» ծրագիր, վեբկայքը՝ [http://ec.europa.eu/youth/program/guide05\\_en.pdf](http://ec.europa.eu/youth/program/guide05_en.pdf):

ներկայացուցիչների ավելի մեծ միջազգային թիմի հետ հանդիպելու և համատեղ ծրագրեր ձեռնարկելու անհրաժեշտությունը»:

Միրիամ Գուևար, «Եվրաֆորում-Կովկաս 2006»  
ծրագրի համակարգող, Ֆրանսիա

Իմ կարծիքով, ծրագիրը շատ օգտակար է, քանի որ համախմբում է տարբեր էթնիկական և ազգային խմբեր ներկայացնող մարդկանց: Համոզված եմ, որ այս ծրագրի օգնությամբ երիտասարդներն ավելի լավ կհասկանան եվրոպացի երիտասարդներին միավորող և աշխարհի այլ երկրների երիտասարդների հետ կապ հաստատելու հնարավորություն ընձեռող համակարգը»:

Թորբեն Յուրգե, Թբիլիսիում Եվրոպական հանձնաժողովի  
պատվիրակության ղեկավար, դեսպան, Վրաստան

Մասնակիցների համաձայն՝ ծրագրի կարևորագույն արժանիքն այն է, որ դրա օգնությամբ յուրաքանչյուրը կարողանում է ավելի լավ ճանաչել ինքն իրեն և հասկանալ այլ մարդկանց շրջապատող իրականությունը: Ծրագիրը նպաստում է նաև հանդուրժողականության հաստատմանը և բազմակարծության նկատմամբ հարգանքի ամրապնդմանը, ինչպես նաև պատմական, քաղաքական և մշակութային բազմազան տարբերություններ ունեցող երկրների հասարակական կյանքին քաղաքացիների ակտիվ մասնակցությամբ: Բացի այդ, Նշված ծրագիրը միջոցներ է առաջարկում ԵՄ ինտեգրումը խթանելու, հասարակական կապերն ամրապնդելու և օրենքի նկատմամբ հարգալից վերաբերմունք ձևավորելու համար: Մեծ թիվ կազմող երիտասարդների մտերիմ փոխհարաբերությունները հնարավորություն են տալիս նրանց հասկանալու մտածելակերպի տարբերությունները և խթանելու նոր մտածելակերպ՝ հիմնված պատասխանատվության կատեգորիաների և ինքնաճանաչման վրա:

«Տարածաշրջանի հարևան երկրների միջև առկա թշնամանքի հիմքում ընկած պատճառների քննարկումը և այդ երկրների ընդհանրությունների վերհանումը սույն ծրագրի հավասար կարևոր բաղադրիչներն են»:

Տիկա Ծերծվարձե, Թբիլիսիում «Եվրոպացի ուսանողների  
ֆորում» (AEGEE) ասոցիացիայի նախագահ, 2006 թ.

Այսպիսով, ֆորումի դերը գերազանցել է բոլոր ակնկալիքները, քանի որ այն հանդիպելու, կարծրատիպերը հաղթահարելու և միջազգային կարևորություններ կայացնող հարցեր քննարկելու հնարավորություն է տվել երիտասարդներին:

«Եվրաֆորումի» շրջանակներում կայացած հանդիպումների նման միջոցառումները նպաստում են երիտասարդների շրջանում տարածված նախապաշարմունքների վերացմանը, և իմ կարծիքով, նաև հակամարտությունների

*կարգավորմանը: Ես Հայաստանից եմ, և աղոթքեզանցի երիտասարդների հետ հաղորդակցվելու շնորհիվ հասկացել եմ, որ նրանք մեր երկրում տարածված կարծրատիպերին չեն համապատասխանում: Այս ֆորումի հիմնական նպատակը միանշանակ խաղաղության խթանումն է»:*

Մարիաննա Պողոսյան, Հայաստանը ներկայացնող մասնակից

## **Ծրագրի ձեռքբերումները**

«Եվրաֆորումի» շրջանակներում իրականացրած առաջին ծրագիրը մեկնարկել է Վրաստան կատարված այցով: «Թբիլիսիում և Կազբեկի ճանապարհին այցելեցինք այնպիսի վայրեր, որոնք ոչ միայն Վրաստանի, այլև քրիստոնյա ամբողջ աշխարհի մշակութային ժառանգության կարևոր արժեքներ են: Այդ վայրերն ինձ վրա շատ մեծ տպավորություն են թողել»<sup>1</sup>: Ծրագրի նման բաղադրիչները հնարավորություն են տալիս ավելի լավ հասկանալու տվյալ երկրի, ժողովրդի և աշխարհամասի պատմությունը, տարածաշրջանի և առանձին երկրների փոխկախվածությունը, ինչպես նաև վերհանելու համագործակցության և միջմշակութային երկխոսության կարիքները:

Առաջին ֆորումի հանդիպումները մեծ մասամբ Բակուրիանի քաղաքում են տեղի ունեցել: Հանդիպումների ընթացքում ընտրվել է հինգ միջազգային խումբ՝ մասնակից երկրներում տիրող իրավիճակը պարզելու, համեմատելու և հետագա համագործակցության ծրագրերը մշակելու համար:

Երիտասարդները տարբեր հարցեր են քննարկել և ներկայացրել իրենց երկրներում արդեն իրականացվող ծրագրերը: Քննարկումների և սեմինարների ժամանակ երիտասարդները հիմնականում անդրադարձել են քաղաքացիական հասարակությունում երիտասարդների ունեցած դերին, հասարակական կյանքին նրանց մասնակցությանը և այդ մասնակցության աստիճանին, հասարակական կազմակերպությունների աշխատանքին, դրանց ֆինանսավորմանը, համալսարանական միավորումներին, ուսխորհուրդներին, ինչպես նաև ԵՄ գործունեությանը, շրջակա միջավայրի հիմնախնդիրներին, տնտեսությանը, փոքրամասնություններին, հասարակական կյանքին երիտասարդների մասնակցությանը, հանրային քննարկումներին և ընտրություններին, երրորդ սեկտորի հետ համագործակցությանը, կառավարությանը, միջազգային հաստատություններին և կազմակերպություններին:

Ազգերի հավասարության սկզբունքով կազմված յուրաքանչյուր աշխատանքային խումբ (յուրաքանչյուր խմբում ընդգրկվել է 12 անձ, այսինքն՝ յուրաքանչյուր մասնակից երկրից երկուական անձ) տարբեր տեսանկյուններից է ներկայացրել քննարկված խնդիրները և ծրագրերը: Մի քանի օր շարունակ մասնակիցները նկարագրել են առանձին երկրներում տիրող իրավիճակը, ինչին հաջորդել են երկարատև քննարկումները: Այնուհետև կյանքի կոչվեց հետագա համագործակցության գաղափարը: Ֆորումի բացումից անմիջապես հետո ներկայացվել է հաջորդ տա-

<sup>1</sup> Հայաստանը ներկայացնող մասնակից Մարիաննա Պողոսյան:

րիների ընթացքում համագործակցության շրջանակներում իրականացվելիք հինգ ծրագիր:

Բոլոր մասնակիցները համակարծիք են, որ նման հանդիպումները երիտասարդներին ոչ միայն հետաքրքիր ծրագրերին մասնակցելու, այլև ԵՄ ինտեգրվելու համար միջնշակության հսկայական ներուժ ձևավորելու հնարավորություն են տալիս:

Նման հանդիպումները համախմբում են տարբեր երկրներ և մշակույթներ ներկայացնող երիտասարդներին և նրանց հնարավորություն են տալիս իրենց ժողովրդի և երկրի «դեսպանը» դառնալու: Ավելին, այդ երիտասարդները հանդես են գալիս նաև որպես իրենց երկրների պատվիրակներ, քանի որ յուրաքանչյուրը հայելու նման արտացոլում է իր ազգի և միջավայրի առանձնահատկությունները:

Այսպիսով, ոչ ֆորմալ միջնշակության ուսումնական գործընթացին մասնակցող երիտասարդները միջնորդներ են միջազգային երկխոսության շրջանակներում, որը Եվրոպայի, Ասիայի և աշխարհի այլ մասերի բազմամշակութային ապրելակերպի հիմքն է համարվում<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Փոփոխված և լեհերեն թարգմանված հոդվածը լույս է տեսել հետևյալ գիտական ամսագրում՝ «Oświata i Wychowanie», Վարշավա, Լեհաստան, 2006 թ.:

# Հասարակությունների մերձեցում ընդդեմ կոնֆլիկտի կարգավորման. կայուն զարգացում և համագործակցություն

## Ռուս ԱԵԼԻՔՍԱ

*Քաղաքական գիտությունների թեկնածու*

*ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի դասախոս*

*Հայաստան*

Դարեր շարունակ համայն մարդկության համար առաջնային խնդիր են եղել կոնֆլիկտների և կոնֆլիկտազեն տարրերի ազդեցությամբ առաջացած ներազգային և միջազգային շփումները քաղաքական և հասարակական շրջանակներում: XIX դարի գերմանացի ռազմական տեսաբան և փիլիսոփա Կառլ ֆոն Կլաուզևիցի խոսքերով՝ «կոնֆլիկտը և դրա հետևանքը՝ պատերազմը, ի սկզբանե առկա են մարդու բնության մեջ, և գոյություն կունենան այնքան ժամանակ, քանի դեռ գոյատևում է մարդ արարածը»: Այս համատեքստում տարածաշրջանային կոնֆլիկտները, հատկապես՝ հարավկովկասյանը, շատ վառ և ակնառու ընդգծում են այն փաստը, որ մարդկությունն ի վիճակի է պայքարելու կոնֆլիկտների դեմ, ինչը դարձել է բնականոն կյանքի բաղկացուցիչ մասը: Մեծ ճիգեր են գործադրվում դրանք հաղթահարելու համար:

Սակայն մինչ օրս խնդրահարույց են մնում աշխարհի ամենաթեժ կետերից մեկի՝ Հարավկովկասյան տարածաշրջանի չլուծված կոնֆլիկտները, հիմնականում հայ-ադրբեջանական հակամարտությունը՝ ղարաբաղյան հիմնահարցը, հայ-թուրքական խնդիրը, վրաց-ռուսական հակամարտությունը և դրա հիմքում ընկած վրաց-աբխազական, վրաց-օսեթական հիմնախնդիրները: Իհարկե, սեղանին դրված են բազմաթիվ և տարաբնույթ կոնֆլիկտներ, որոնք անլուծելի են թվում, բայց միաժամանակ, ինչպես ցույց են տալիս պատմական փորձը և աշխարհաքաղաքական նորագույն զարգացումները, գործելու լուրջ խթան են: Ուստի, որպես հիպերարդիական, սոցիոցենտրիկ և անդրազգային մոտեցում, կարելի է առաջ քաշել «հասարակությունների մերձեցում ընդդեմ կոնֆլիկտի կարգավորման» գաղափարը, որը ենթադրում է բացառապես նոր ենթատեքստ հարաբերությունների լավացման և կոնֆլիկտների մեղմեցման համար: Դա նշանակում է, որ պետք է վարել այնպիսի քաղաքականություն, որը ելնի ընդհանուր շահերից և ուղղված լինի լուսավոր ապագային:

Այդպիսի քաղաքական քայլերից մեկը, որը կգործի թե՛ ի շահ Հարավկովկասյան պետությունների, թե՛ Եվրամիության, և թե՛ Ռուսաստանի, Հարավկովկասյան

պլատֆորմի ձևավորումն է: Դա փոքր-ինչ տարբերվում է այն գաղափարից, որը վերջերս՝ ռուս-վրացական պատերազմից հետո, ներկայացրեց թուրքական կողմը: Դրա բուն նպատակը տնտեսական համագործակցության ընդհանուր պլատֆորմի ստեղծումն է: Առաջին հայացքից այդ գաղափարն անիրատեսական և պարզապես անտրամաբանական է թվում, բայց մյուս կողմից՝ մի՞թե Թուրքիան, Հայաստանը, Վրաստանը, Ռուսաստանը, Ադրբեջանը նման տարածաշրջանային կազմակերպության անդամ չեն համարվում, ինչպեսին է Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը: Հետևաբար, ԵՄ-ի ներգրավմամբ նման կազմակերպության ստեղծումը լուրջ ազդակ կհաղորդի մոտ ժամանակաշրջանում այն նաև քաղաքական պլատֆորմի վերածելու համար՝ չմոռանալով տարածաշրջանի չլուծված կոնֆլիկտները:

Այդ գաղափարի իրականացման հնարավորությունները կարելի է համարել շատ իրատեսական, եթե միաժամանակ հաշվի առնենք պատմական իրողությունը՝ XX դարի առաջին կեսին Անդրկովկասյան Կոնֆեդերատիվ Հանրապետության գոյատևման գործոնը: Չէ որ այն ժամանակ այդ կառույցում նույնպես գոյություն ունեին անլուծելի միջազգային կոնֆլիկտներ, որոնք չխանգարեցին մերձենալու և միավորվելու մեկ ընդհանուր հովանու ներքո: Մյուս կողմից՝ պետք է նաև հաշվի առնել, որ ներկայումս աշխարհում գոյություն ունեն շատ երկրներ, որոնք, ունենալով լուրջ տարածքային խնդիրներ, հակամարտելով միմյանց դեմ, ներկայումս համագործակցում են տարբեր ոլորտներում, հիմնականում՝ տնտեսական: Այդպիսի վառ օրինակներից է ռուս-ճապոնական հակամարտությունը՝ կապված Սախալինի և Կուրիլյան կղզիների հետ, որոնք Խորհրդային Միությանն են անցել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Իհարկե, այսօր հնարավորությունները շատ ավելի մեծ են, և ընտրության իրավունքը՝ շատ ավելի լայն: Հետևաբար, ստեղծելով համակարգված պլատֆորմ՝ տարածաշրջանային երկրները, ԵՄ-ի հետ համատեղ, հետամուտ կլինեն նոր աշխարհակարգի կերտման նպատակով նորանոր տնտեսական և քաղաքական հնարավորությունների ձեռքբերմանը: Բայց այդպիսի ֆուտուրիստական ծրագիրը կյանքի կոչելը, իհարկե, պահանջում է մեծ նախաձեռնողական և կոնսենսուսային մոտեցում, որը առաջին հերթին պետք է սկսել՝ տարածաշրջանում ազգերի միջև կոնֆլիկտների մեղմեցման և միասնական միկրոմակարդակի քաղաքականություն վարելով: Դա հնարավոր է նախևառաջ հասարակությունների միջև ընդհանուր եզրեր գտնելու և հիմնավորելու միջոցով, որին կարելի է հասնել լոկ միջազգային և միջտնտեսական գործոնների զարգացման շնորհիվ: Այդ տեսանկյունից, որպես կարևոր խթանիչ միջոց, կարելի է դիտարկել փոխշահավետ աշխարհատնտեսական տարածաշրջանային քաղաքականության զարգացման նպատակով ներդրումային ծրագրերի լայնածավալ աշխատանքների իրագործումը և հարավկովկասյան երկրների հասարակությունների միջև այլ շահագրգիռ տնտեսական մոդելներ կյանքի կոչելը:

Այդ առումով պետք է իրատեսականորեն և հանգամանալից վերաբերվել նման մոտեցմանը և ոչ միայն հավատալ, այլև պրագմատիկ կերպով աշխատել և վերլուծել: Այդ դեպքում կստեղծվեն համապատասխան ծրագրեր, և կվարվի համապատասխան քաղաքականություն կարճաժամկետ և երկրաժամկետ ապագայում տարածաշրջանում զարգացման և համագործակցության և ընդդեմ կոնֆլիկտների գաղափարի իրագործման ուղղությամբ:

# Վիզաների տրամադրման ազատականացում, ազատ տեղաշարժի իրավունք. ԵՄ ինտեգրման նախապայման, թե՞ հետևանք

## ԱՆՆ ՂԱԶԱՐՅԱՆ

Հայաստան

Գաղտնիք չէ, որ մեր օրերում շատերը ցանկանում են մեկնել օտար երկրներ լավ աշխատանք, որակյալ կրթություն և կայուն ապագա կառուցելու ակնկալիքով:

Կարծում եմ, որ մենք պետք է նախ և առաջ կայուն և հստակ հիմքերի վրա տեսնենք Եվրաինտեգրումն ինքնին որպես երևույթ՝ իր ողջ փոփոխություններով և բարեփոխումներով, և քննարկենք այն, թե այն ինչ ազդեցություն ունի բնակչության ազատ տեղաշարժի վրա: Շատ կարևոր է քննարկել նաև, թե Եվրաինտեգրման գործընթացում ինչ փոփոխություններ են մեզ սպասում մեր իսկ երկրում, ինչ ազդեցություն ունի այն:

## Ինչո՞ւ է վերջին տարիներին շատացել երիտասարդ կադրերի և ընդհանրապես դեպի դուրս ձգտող երիտասարդների թիվը

Զգալիորեն շատացել է այն անհատների թիվը, ովքեր ցանկանում են օրինական կերպով մեկնել Եվրոպա, աշխատանք ունենալ, վաստակել և միաժամանակ ծառայել մեր երկրին: Դա իրականացնելու համար մենք ազատ տեղաշարժման իրավունքի կարիք ունենք, որը և ինտեգրման հիմք է: Ուղղակի ազատ տեղաշարժի իրավունքի ապահովումն ինքնին չի կարող Եվրաինտեգրման հիմք լինել, քանզի դրա համար նախևառաջ անհրաժեշտ են փոփոխություններ օրենսդրական դաշտում, որոնք կընդգծեն կայուն ազգային դիրքորոշումները՝ բնակչության հետագա ազատ տեղաշարժի իրավունքների բարելավման ու կատարելագործման հնարավորություն տալով:

Յուրաքանչյուր զարգացող երկիր տարբեր դաշտերում վերանայումների և բարեփոխումների կարիք ունի: Մեզ համար այսօր կարևոր խնդիր է ազգային գիտակցությունը, քանի որ հենց դա է, որ կարող է ապահովել բացասական կամ դրական միտումներ որևէ ինտեգրման ժամանակ: Կարևոր է, որ ճիշտ հիմքերի վրա զարգացնենք արժեքային համակարգը, որը էապես ազդում է մարդու տեղաշարժի որոշման վրա:



Խոսելով ազգային գիտակցության մասին՝ հարկ է նշել այն բոլոր անհրաժեշտ բարեփոխումները, որոնք պետք է ապահովի պետությունը : Հայաստանը պետք է իրատես լինի և պահպանի խաղի կանոնները, մինչդեռ արտերկրում չի պակասում անօրինական բնակվողների քանակը:

Այսպիսով, ազգային գիտակցությունն անհրաժեշտ է, որ հայը արժևորի իր ունեցածը և զարգացնելով մրցունակ ներուժ՝ առաջին հերթին ծառայեցնի իր պետության շահերին: Պետք է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունում գտնվող դեսպանատներից բոլորը չեն, որ մեղմ չափանիշներով են քննում դիմող անձանց ելքի իրավունքը, քանի որ եթե անօրինական միգրանտների թիվը չի աճել, ապա չի էլ նվազել: Նույն փաստի ապացույցն է դրամական հոսքերի աճը, որը պայմանավորված է օտար երկրներում գտնվող ազգականների ուղարկած գումարներով:

Առանձնացնենք մի շարք բարելավման ենթակա գործոններ, որոնք կարող են ազատ տեղաշարժի ապահովման հիմք լինել:

- Հայաստանից և դեպի Հայաստան միգրացիայի վերահսկողության ապահովումը, սահմանների կառավարման կատարելագործումը և համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:

- Հայաստանի քաղաքակիրթ ինտեգրումը միջազգային աշխատաշուկային, աշխատանքային միգրանտների իրավունքների և օրինական շահերի պետական պաշտպանությունը:

- Հայաստանից անկանոն միգրացիայի կանխումը և օգնությունը արտասահմանում գտնվող հայ անկանոն միգրանտներին կամավոր վերադարձի և վերաինտեգրման հարցում:

- Սփյուռքի համայնքների հետ հարաբերությունների հաստատումը և զարգացումը, հայրենադարձությունը խրախուսող միջոցառումների մշակումը և իրականացումը:

- Հայաստանում միգրացիայի հետ կապված իրավիճակի մոնիթորինգի և վերլուծության համար անհրաժեշտ տվյալների բազայի ստեղծումը:

Մինչև վիզաների տրամադրման ազատականացումը պետությունը պետք է ինտենսիվ աշխատանքներ տանի մի շարք ուղղություններով: Ամենից առաջ այն պետք է լինի կամայականություններից ու երկակի ստանդարտներից զերծ, ինչը ենթադրում է.

- Նախ և առաջ քաղաքացիների բոլոր իրավունքների իրացման և դրանց սահմանափակումների հետ կապված հարաբերությունների կարգավորում օրենքով սահմանված կարգով:

- Անհրաժեշտ է, որ բացառվեն այն սահմանափակումները, որոնք օրենքով սահմանված չեն:

- Պետք է վերացվեն քաղաքացիների օրինական տեղաշարժերի համար նախատեսված արհեստական խոչընդոտները:

- Պետական ինստիտուտների պասիվ-իներցիոն գործելակերպը պետք է փոխվի, երբ ոչ թե ինստիտուտներն են ջանքեր գործադրում քաղաքացուն ապա-

ցուցելու նրա ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման իրավասությունը, այլ քաղաքացին է ստիպված լինում ամեն գնով ապացուցելու իր ազատ տեղաշարժի իրավունքը:

- Ստեղծել պետական ինստիտուտների այնպիսի համակարգ, որում ոչ միայն սահմանափակումներ ու պատժամիջոցներ են կիրառում, այլ ամենից առաջ հանդես են գալիս որպես քաղաքացիների իրավունքների իրացման երաշխավորներ:

- Պետական ինստիտուտները պետք է նախ և առաջ նախաձեռնողական լինեն:

- Պետք է կարողանանք բարձր մակարդակի վրա դիտարկել քաղաքացու իրավունքներն ու շահերը և առաջնային չդասել միայն ինստիտուցիոնալ շահը:

- Անընդհատ պետք է նորացվի և կատարելագործվի պետական գործելաոճը, օտարերկրյա պետություններում արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում պետության և նրա ինստիտուտների կողմից իր քաղաքացիների շահերի և իրավունքների պաշտպանության պատրաստակամությունը: Եվ սա էլ է Եվրախնտեզրման կարևորագույն բաղադրիչներից մեկը:

Բոլոր բարեփոխումները ենթադրում են << քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանություն, տեղեկատվություն և օժանդակություն ստանալու հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ձևավորում: Իսկ ճանապարհները հայտնի են՝ համապատասխան օրենսդրական դաշտի մշակում, համակարգված քաղաքականության հիմքերի ապահովում, կոորդինացված աշխատանքի գործուն մեխանիզմ:

Ի լրումն՝ պետական քաղաքականությունը պետք է ուղղորդվի իր քաղաքացիներին համապատասխան կրթություն տալով, իրազեկություն ապահովելով: Այն պետք է ներառի բոլոր պետական և ոչ պետական կառույցների ակտիվ գործունեությունը, որոնք մասնակցություն ունեն բնակչության ազատ տեղաշարժի հետ կապված հարցերում, և միաժամանակ ակտիվ աշխատելով պետական մարմինների հետ՝ պետք է հայտնաբերել այն բոլոր բացերը և խնդիրները, որոնք այսօր առկա են, սակայն դեռ ենթարկված չեն մանրակրկիտ ուսումնասիրության:

Վիզաների տրամադրման դյուրացումը նախ և առաջ պետք է պայմանավորված լինի մեր երկրի կայունությամբ, քաղաքացիական վստահությամբ և հետո միայն Եվրախնտեզրման նախապայման լինի: Սակայն միաժամանակ պետք է նշել, որ երբեմն առաջին հերթին հաշվի է առնվում ոչ թե անհրաժեշտությունը, այլ՝ նախապայմանը:

Մենք պետք է կարողանանք ճիշտ դրույթներ մշակել բնակչության ազատ տեղաշարժերի հետ կապված որոշումներում՝ չվնասելով ազգային անվտանգությունը: Բացի այդ, պետությունը պետք է հոգ տանի իր երիտասարդ կադրերի աշխատատեղերի ապահովման և զարգացման մասին, ինչպես նաև մի շարք ենթակառուցվածքային բարեփոխումներ ձեռնարկի: Այս ամենից հետո միայն հնարավոր կլինի քիչ թե շատ օրբեկտիվ գնահատական տալ, չափելի դարձնել ազատ տեղաշարժվե-

լու իրավունքից օգտվող անձանց նպատակները կապված Եվրախնտեզրման նախապայմանների հետ:

# Արևելյան գործընկերություն

## ՊՐԱՔՏԻԱ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

ԵՊՏՀ տնտեսական կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի ուսանողուհի

Հայաստան

Համաշխարհային տնտեսությունն այսօր տնտեսական ինտեգրման այնպիսի մակարդակում է, երբ որևէ երկրի կամ տարածաշրջանի տնտեսական զարգացումն այլևս անհնար է առանց մյուս երկրների և տարածաշրջանների զարգացման: Այս առումով շատ կարևոր է զարգացած և զարգացող երկրների համագործակցությունը ինչպես տնտեսական ոլորտում, այնպես էլ հասարակության կյանքի տարբեր ոլորտներում, քանի որ առևտրային տրանսակցիան անխուսափելիորեն շոշափում է երկրների ներքին տնտեսությունը, արտադրությունը, ժողովրդավարությունը, բնապահպանությունը, սոցիալական հարաբերությունները, իրավական համակարգը, քաղաքականությունը և այլն: Ինտեգրման գործընթացներից առավել արդիականը եվրաինտեգրումն է: Այն արտաքին քաղաքական գերակայություն ունի ինչպես մեր հանրապետության, այնպես էլ մեր տարածաշրջանի և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների համար: Այս գործընթացում կարևոր նշանակություն ունի «Արևելյան գործընկերությունը»:

2009 թ. մայիսի 7-ին Պրահայում տեղի ունեցավ «Արևելյան գործընկերության» առաջին խորհրդաժողովը: «Արևելյան գործընկերությունը» ԵՄ-ի արտաքին հարաբերությունների համակարգի մեջ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ինտեգրմանն ուղղված նախաձեռնությունն է: Գործընկերության հիմնական նպատակներից են անդամ երկրների միջև ազատ առևտրային գոտու ստեղծումը, վիզային համակարգի աստիճանական թուլացումը և հետազայում դրա վերացումը, անհանդուրժողականության և խտրականության դեմ պայքարի, էներգետիկ անվտանգության խնդիրների լուծման հարցում համագործակցության հաստատումը և այլն:

Այս նպատակների իրականացման համար անդամ երկրների կառավարությունները և ԵՄ-ն մշակել են բազմաթիվ ծրագրեր և նախագծեր: Սակայն եվրոպական մեծ ընտանիքի անդամ դառնալու համար անհրաժեշտ է ոչ միայն արտադրատնտեսական զարգացում և կենսամակարդակի բարձրացում, այլև վերոհիշյալ երկրների բնակչության շրջանում «եվրաինտեգրում» հասկացության ճիշտ ընկալում: Գլոբալացման հակառակորդները եվրաինտեգրումը ներկայացնում են որպես ազգերի միաձուլում, ազգային արժեքների անտեսում, ուժացում: Սակայն տեղի է

ունենում ճիշտ հակառակ երևույթը: Համագործակցության ընթացքում հնարավորություն է ստեղծվում միջազգային մակարդակով ավելի լայնորեն ներկայացնելու յուրաքանչյուր ազգի կրթական, գիտական և մշակութային դիմանկարը:

Ազատ առևտրային գոտու ստեղծումը նոր միասնական շուկաներ կբացի համագործակցող երկրների ձեռնարկությունների առջև, ինչն ինքնին նշանակում է շուկայական մրցակցության առավել բարձր մակարդակ: Դա կխթանի այս երկրներում արդեն գոյություն ունեցող և նոր ստեղծվող արտադրության ճյուղերը, կբարելավվի արտադրանքի և մատուցվող ծառայությունների որակը, կապահովվի զբաղվածության բարձր մակարդակ, որն էլ իր հերթին կբերի կենսամակարդակի զգալի բարձրացում: Այս առումով կարևոր է նաև վիզային համակարգի ազատականացումը: Սրան անդրադառնալով՝ չենք կարող չնշել այն խնդիրները, որոնք առկա են հարավկովկասյան տարածաշրջանում: Եվրախնտեգրման շնորհիվ քաղաքական հիմնախնդիրները ոչ ռազմական մեթոդներով լուծելու հնարավորություն է ստեղծվում: Դա առավել քան կարևոր է մեր երկրի համար, որը բավական բարդ քաղաքական հարաբերությունների մեջ է հարևան երկրների հետ: Փորձ է արվում բանակցային լուծումներ տալու այն խնդիրներին, որոնք առկա են մեր տարածաշրջանում, ինչին ձեռք է մեկնում ԵՄ-ն:

Ամփոփելով կարելի է ասել, որ գոյություն ունի փոխադարձ կապ եվրախնտեգրման և առանձին երկրների զարգացման միջև, այսինքն՝ եվրախնտեգրումն ուղղված է երկրների զարգացմանը, և փոխադարձաբար երկրների զարգացումն ուղղված է եվրախնտեգրմանը:

# Ի՞նչ է պետք խաղաղություն հաստատելու համար

## ԿՈՆՏԱՆՏԻՆ ՏԵՐ-ՆԱԿԱՆՅԱԼ

*Սոցիալական մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետի ուսանող  
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան  
Յայաստան*

Ի՞նչ է պետք խաղաղություն հաստատելու համար: Դարեր շարունակ բոլոր ժողովուրդներն ու պետություններն արժարժել են այս հարցը: Ամբողջ աշխարհում խաղաղություն հաստատելու համար նույնիսկ պատերազմներ են մղվել: Նման փորձերի շարքում առանձնանում է Առաջին համաշխարհային պատերազմը, որը կոչված էր վերածվելու «բոլոր պատերազմները կանխող պատերազմի»: Այդուհանդերձ, ակնհայտ է, որ մի շարք հանգամանքների բերումով մեր հիանալի մոլորակի վրա կայուն խաղաղություն հաստատելու բոլոր փորձերը ձախողվել են: Այժմ կքննարկենք այս պարբերությունը կարդալուց հետո ընթերցողի մոտ առաջացող երեք հարցերը: Ինչու՞ է «Եվրաֆորում» ծրագիրն առնչվում այս խնդրին: Ինչպե՞ս է «Եվրաֆորում» ծրագիրն առնչվում այս խնդրին: Ինչպե՞ս է «Եվրաֆորում» ծրագիրը լուծելու այս խնդիրը: Ստորև ներկայացնում են նշված հարցերի պատասխանների իմ տեսլականը:

Ինչու՞ մեզ չի հաջողվում խաղաղություն հաստատել: Իմ կարծիքով, պատճառն այն է, որ երբեմն ազդեցիկ անհատները կամ հաստատությունները պարզապես չեն գիտակցում, որ խաղաղության հաստատման համար անհրաժեշտ միջոցների իրենց տեսլականն այլոց համար կարող է բացարձակապես անընդունելի լինել: Այլ կերպ ասած՝ շատ անհավանական է, որ մեկ առանձին երկիր կամ երկրների խումբ կարողանա բոլորի համար ընդունելի կատարյալ լուծում գտնել: Իսկ ինչն է պատճառը: Կարծում եմ, մեր անհաջողության պատճառը տարբեր մշակույթների, սովորույթների և մտածելակերպերի առկայությունն է: Ի վերջո, նույնիսկ երկվորյակները նույն կերպ չեն մտածում, ուստի և ամբողջ ժողովուրդների նույն մտածելակերպի մասին խոսք անգամ չի կարող գնալ:

Ներկայումս աշխարհի բնակչությունը մոտ 7 միլիարդի է հասնում, և ծայրահեղ լավատեսական կլիներ այն ենթադրությունը, որ հնարավոր է բոլորի համար ընդունելի լուծում գտնել: Այդուհանդերձ, համոզված եմ, որ կարելի է մեծամասնությանը հարմար գաղափար առաջարկել: Այսօր արդեն պարզ է դառնում, որ գլոբալացումը համախմբում է անհատներին և ամբողջ ժողովուրդներին՝ հնարավորություն տալով նրանց միասին լուծելու հրատապ խնդիրները:

Ընթերցողներից շատերին վերոշարադրյալ մտքերը թերևս հոռետեսական են թվում: Լավատեսությունս արտահայտելու համար կցանկանայի նշել, որ ես հավա-

տում եմ խաղաղության հաստատման հնարավորությանը, ուստի ստորև ներկայացնում եմ իմ տեսլականը:

Ինչպէս կարելի է խաղաղություն հաստատել: Ինչպէս արդեն նշել եմ, գրեթե անհնար է գտնել երկու անհատ, որոնք բոլոր հարցերի շուրջ նույն դիրքորոշումն ունենան: Թեև մարդիկ, որպես կանոն, գանազան խնդիրների և իրավիճակների վերաբերյալ տարբեր տեսակետներ ունեն, այդուհանդերձ, նրանք կարող են համաձայնության գալ և մեկ ընդհանուր գաղափարի շուրջ համախմբվել: Որպես անհատներ մենք այնքան տարբեր ենք և միաժամանակ՝ այնքան նման:

Երբ խոսքը մարդկանց անհատական բնութագրի մասին է, նրանցից շատերին թերևս անհնար է «անթերի» կամ «թերի» ածականներով բնորոշել: Նույնը կարելի է ասել նաև հասարակության մասին, քանի որ բոլոր մարդիկ իրենց հասարակության ազդեցությունն են կրում: Այսպիսով, արդյո՞ք գոյություն ունեն «թերի» հասարակություններ կամ մշակույթներ: Կարծում եմ՝ ոչ: Անշուշտ, այլ մշակույթները ճանաչելու փորձեր անելիս մարդիկ երբեմն հիմնախնդիրների են բախվում, ինչը շատ բնական է, սակայն դա ամենևին չի նշանակում, որ այդ մշակույթը թերի է:

Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ երբեմն մարդիկ իրենց սեփական և այլ ժողովուրդների՝ այդքան տարբեր թվացող մշակույթների միջև շատ նմանություններ են գտնում: Արդյո՞ք փոխըմբռնում հաստատելու առավել հեշտ միջոցն այլ ժողովուրդների մշակույթները սեփական մշակույթին հարմարացնելն է: Իհարկե, ոչ: Անձամբ ես խաղաղության հաստատման հիմնական նախապայման եմ համարում ոչ թե արմատական փոփոխություններ անելու փորձերը, այլ՝ փոխըմբռնումը և ընդհանուր արժեհամակարգի ձևավորումը: Մենք արդեն ստեղծել ենք անհրաժեշտ պայմանները, և սա ավելի քան բավարար է միմյանց հասկանալու համար:

Հարց է ծագում՝ ինչպէս կարող է «Եվրաֆորում» ծրագիրը նպաստել խաղաղության հաստատմանը: Խնդրո առարկա ծրագրի շրջանակն ինքնին ընդգրկում է բոլոր վերոնշյալ տարրերը: Առաջին, ծրագիրը համախմբում է տարբեր տարածաշրջաններ, երկրներ և մշակույթներ ներկայացնող տարբեր կրոնական հայացքներ ունեցող մարդկանց: Այնուամենայնիվ, բոլոր տարբերություններից անկախ՝ համագործակցությունը շարունակվում է, և նոր գաղափարների պակաս մինչ օրս չի նկատվել:

Ծրագրի դրական և կառուցողական մոտեցումներից մեկն այն է, որ բոլոր մասնակիցներն իրենց երկրների երիտասարդությունն են ներկայացնում: Նրանք ոչ քաղաքական գործիչներ են, ո՛չ էլ՝ հայտնի դեմքեր: Նրանք պարզապես երիտասարդներ են, ովքեր ցանկանում են բարելավել մեր կյանքը: Նրանք գիտակցում են, որ այլ մարդկանց հասկանալու համար պետք է նոր գաղափարներ ընդունելու պատրաստակամություն ցուցաբերել: Երիտասարդներից ոմանք հավատում են, որ իրենց ջանքերը և փորձը կարող են նպաստել մարդկության կյանքի բարելավմանը:

Ես շատ եմ գնահատում «Եվրաֆորում» ծրագիրը, մասնավորապես՝ քննարկվող հարցերի և նպատակներն իրականացնելու համար գործածվող միջոցների

բազմազանությունը: Բացի այդ, հաշվի առնելով ծրագրին մասնակցող երիտասարդների և կազմակերպությունների թիվը՝ «Եվրաֆորումը» կարելի է համագործակցության ցանցի ստեղծմանն ուղղված շատ ազատական և ազդեցիկ ծրագիր համարել: Ծրագրի մասնակիցների մեծ ընտանիքի անդամը դառնալուց անմիջապես հետո երիտասարդները ոչ միայն օգտակար և արժեքավոր փորձ, այլև նոր ընկերներ և գործընկերներ են ձեռք բերում:

«Եվրաֆորում» ծրագրի արժանիքներից մեկն այն է, որ ծրագրի շրջանակն ընդգրկում է գրեթե բոլոր թեմաներն ու հարցերը, ինչը երաշխավորում է ծրագրի արդիականությունը և արդյունավետությունը: Ավելին, «Եվրաֆորումը» կարելի է այնպիսի նոր, հետաքրքիր և օգտակար գաղափարների դարձնոցի հետ համեմատել, որոնք լիովին իրատեսական են և նպաստում են մեր նպատակի իրագործմանը:

Ինչպես կարելի է ամփոփել սույն ակնարկը: Կարծում եմ, որ «Եվրաֆորում» ծրագիրը, անշուշտ, մեր բոլոր խնդիրների համադարմանը չի կարող համարվել, մենք դեռևս շատ անելիքներ ունենք: «Եվրաֆորումը», առանձին վերցրած, բոլորի կյանքը բարելավել չի կարող, սակայն կարող է բարելավել իմ կյանքը և բազում հայ, վրացի, ադրբեջանցի, ֆրանսիացի, իսպանացի, լեհ և բելառուս այլ երիտասարդների կյանքը: Անձամբ ես այս ծրագիրը լավատեսության աղբյուր եմ համարում, որն ինձ հավատ է ներշնչում առ այն, որ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ հնարավոր է հաստատել, և ես նույնպես կարող եմ իմ փոքրիկ ներդրումն ունենալ այդ մեծ գործում:







## Contents

Foreword .....	133
'Strengthening' the Eyes of the Citizens.....	134
<i>PABLO VEYRAT</i>	
...Because I believe in democracy! Europe's role in the globalized world.....	137
<i>KATARZYNA RYBKA</i>	
EU Action and Progress in Armenia: Recent ENPI Initiatives.....	141
<i>AREG BAGDASARIAN</i>	
Eastern Partnership: Anything New About Conflict Resolution?.....	148
<i>ARPINE MARTIROSYAN</i>	
Path towards European Integration .....	152
<i>VAHAN HUNANYAN</i>	
How can EU integration and new tools of partnership with non-EU countries be used to respond to challenges of intolerance and discrimination? .....	158
<i>BARBORA MALIKOVA</i>	
Eastern Partnership: Challenges and Prospects .....	165
<i>LIANA AGHABEKYAN</i>	
Eastern Partnership: actions, Perceptions, Reactions.....	169
<i>GAYANE MANVELYAN</i>	
Consolation vs. Resolution of Conflicts for Sustainable Development and Partnership: Consociationalism, a tool for post-conflict management.....	174
<i>EVA BERTRAND</i>	
<i>CÉLINE TOUGERON</i>	
Situation of Muslims in Germany – Failing Multiculturalism? .....	180
<i>CORINNA KULENKAMP</i>	
Belarus VISA-vis European Union .....	191
<i>DAŠA ŠĽABČANKA</i>	
Eastern Partnership .....	195
<i>SOFIA MANUKYAN</i>	

European Integration: Objective or Instrument? .....	201
<i>ARAM ANTINYAN</i>	
Best Assets to Conflict Resolution.....	205
<i>TONIK TONIKYAN</i>	
European Court of Human Rights Assessment: Republic of Armenia as Champion of Human Rights and Fundamental Freedoms .....	208
<i>KORYUN AREVSHATYAN</i>	
Beginning of intercultural learning process within Euroforum projects.....	212
<i>URSZULA MARKOWSKA-MANISTA</i>	
Bringing societies together for conflict resolution: stable development and coop- eration .....	217
<i>ROMAN MELIKYAN</i>	
Visa Facilitation and Free Movement: Condition or Outcome of EU Integration? .....	219
<i>ANNA GHAZARYAN</i>	
Eastern Partnership .....	222
<i>PRAXIA NAZARETYAN</i>	
What is peace about? .....	224
<i>KONTANTIN TER-NAKALYAN</i>	

## Foreword

Throughout our lives we all are members of different groups or associations, ranging from families, neighborhoods, clubs and work-units to nations and states. In all such associations from the smallest to the largest, decisions are made which affect these associations as a whole. These decisions are about the goals to be pursued, the rules to be followed, and the distribution of responsibilities and benefits between the members. In this process the success follows those who can hear the voice and respect the opinions of each individual. This is called effective democracy and respect of human rights in quotidian life.

Democracy, in other words, entails the twin principles of popular control over collective decision-making and equality of rights in the exercise of this control by different tools: voting, sharing ideas and spreading visions. In this process the human beings and their ideas are considered to be the biggest assets for the sustainable future.

In an attempt to provide a platform for utilizing the mentioned values, International Center for Human Development (ICHHD) has brought together a team of young analysts and researchers with sound academic backgrounds to share their ideas and establish a lively discourse of polemics. ICHHD has initiated a new wave of actions towards developing a knowledge-based society through involving promising young people in the process. The first step is the publication of a series of articles called “East-West Crossroad”. The contributors of the book are young people from the countries of Euroforum East West Network, namely Armenia, Belarus, Germany, France, Poland and Spain, as well as young authors from Czech Republic and Sweden. The publication focuses on themes such as conflict management, human rights, European integration and European values. It reflects the personal opinions and perspectives of the authors only.

The publication has been carried out with the generous support of Friedrich-Ebert-Stiftung.

Tevan Poghosyan  
ICHHD Executive Director

# ‘Strengthening’ the Eyes of the Citizens

**PABLO VEYRAT**

*Freelance journalist*

*Spain*

Our democratic societies are fragile. We all know how democracy can easily be turned into a wrongful act of ballot box filling every few years in order to confirm those in power. The root of its fragility lies in the fact that there can never be a democracy without citizens who believe in it; there is no democracy without democrats.

No matter how we decide to build our democratic system, the basic belief at its very core is always the same: all men and women are equal in their rights, and no entity can violate those rights guaranteed by the Universal Declaration of Human Rights. Therefore, we create our states as tools to serve the citizens by enforcing their rights and helping them to meet their needs and fulfil their aspirations without harming each other.

However, we also know that life is complicated, and inequalities exist. People depend on each other, and we all need to negotiate our daily existence with other individuals or powers we come across daily. Most of us depend on someone else paying for our work. Some of us have been very successful in such negotiations or particularly fortunate in our social environment. They have become influential both in our lives and in the very government we have established to protect our rights. We also know power can corrupt. And our governments made of human beings are equally prone to corruption.

Moreover, our relationship with such powers is normally one-sided. We deal with our bosses individually, we deal with State officials individually and when addressing influential people we mostly represent ourselves. Therefore, we are vulnerable. No matter what rights we may enjoy, justice can only be administered by the State; and the State is made of people who have to be persuaded to act. Once we are alone in front of a power, its temptation to abuse our rights may be too great.

Powers only fear even greater powers than themselves. And the greatest powers in our societies are their members, the people. Governments fear the masses; big corporations fear their customers and should fear the State; criminals fear the State and the people. It is then that free press perceived as the eyes, ears and voice of the people becomes important.

Free press helps us overcome the fear of solitude we feel in front of power. The press representing the citizens listens to the people, tracks the steps taken by the State

and questions every power within the society. It makes those in power accountable for their actions. It treats the powerful and the common citizen equally by exposing both to public judgement.

By reading a newspaper every day, each citizen learns how his/her society works, who does what, how and, probably, why. The constant knowledge of our surroundings leads to questioning the legitimacy of our realities and to supporting our opinions on solid grounds. This daily personal conversation about our relationship with the power ends up as the core of the civic education every citizen will ever receive. It consists in the constant examination of how the main principles of our systems are applied in real life rather than in blind ideological indoctrination. That is how free press - independent, honest, trustworthy and daring - plays an essential role in strengthening our democracies, since a free vote can only be cast in case we know in which circumstances and for whom we are really voting.

There is nothing any power (a government, a corporation or any other possible power) fears more than citizens sharing their thoughts at a bar, at home, at work, at a park or at dinner. This makes the press a prime target for those powers that have something to hide from the citizenry.

There are many ways of perverting the functioning of the press. Leaving aside extreme methods such as threatening or harming journalists, subtler ways are used to reduce the power of journalism. Economic control, laws compromising confidentiality of the sources or draconian libel laws are normally used to violate the right of all citizens to know what is going on in their societies. All such ways have even a more dangerous goal: to make the media socially irrelevant.

A newspaper or a TV channel unable to investigate public officials or private corporations and staffed by journalists who fear to ask the *wrong* question to the *wrong* person or to write the *wrong* word before the *wrong* name, becomes not only utterly boring but rather mostly useless and simply a manipulation tool for any power in control. Individual courage has a limit, and the same loneliness in front of the power we mentioned above can very easily be felt by individual journalists. The only thing the media may use in its defence is its capacity of involving citizens in the stories they report.

The question how to empower the citizenry in our societies and develop our media into a relevant tool for social control of the power is one of the challenges we face today. Since I have been asked to write this article as a *young* individual, I have to point out education as the main tool in our hands. In practical terms, I see two basic tasks we can carry out at our schools and universities.

1. Civic education: explaining to children the functioning of the State and the aim of justice courts, political parties and state institutions will stir up their interest in their State's activities. Every citizen needs to have a basic understanding of how his/her country works, as well as of his/her rights, duties and tools preventing abuse.

Citizen's education does not only entail knowledge but rather a sense of how the structures work. If the goal of every democratic society is to channel conflict through its institutions, developing argumentative skills becomes essential for future citizens. Helping children develop independent thinking and abilities of reasoning and reaching accord within themselves is not just teaching them to be free but rather instilling into them respect for the freedom of others. Such citizens will never tolerate any injustice in their country.

2. Introduction into journalism: publishing a newspaper or making a radio emission is fun. And it is the best way to make students appreciate the value of free speech. A press workshop at school or even at university may explain the young how to read newspapers, mistrust ambiguity and develop their own criteria. Reading news of their choice and discussing them in groups helps students understand the direct link between their lives and the news reported in the press. Finally, it gives students a sense of controlling the press and a desire to protect it and demand better quality from journalists.

Finally, the recent encouraging phenomenon may change the face of the media as we know them and help freedom of speech flourish wherever it is repressed. Thanks to the Internet and the fast spread of digital cameras, recorders and computers, *citizen journalism* is emerging. Wherever traditional media proves incapable of defending the people's right to be informed, amateur *journalists* are covering their surroundings with the sole purpose of informing the others about new developments. However, as vulnerable to threats from power as they are, the traditional media, due to their closeness to the people may become 'an eye opener' and lead our societies to value and protect the work of journalists.

All of us as legitimate owners of our countries and holders of the same basic rights as those in power are entitled to know about our national issues and express our opinions. Anyone who tries to violate such rights or prevent us from exercising them is interested in silence and therefore, has something to hide. Such powers have also a recurrent habit of abusing those under them and impoverish those countries where they live. Only an open society can protect its members from fear and abuse. To do so, it needs eyes to see, ears to listen and a voice to speak. And it needs them in good health.



## ...Because I believe in democracy! Europe's role in the globalized world

**KATARZYNA RYBKA**

*Association for Intercultural Dialogue "Euroforum Polska"*

*Poland*

The title of this essay coincides with one of the sentences on my profile on the website of the association called *Euroforum Polska*. It is my personal opinion that declaration of belief in the democratic rule is significant and obligatory for a kind of attitude. My belief reflects my outlook on life and explains my behavior. "Democracy" is a key notion, a key concept. I cannot imagine my future and that of my country and the continent without democracy.

I do not want to think and talk in a fashionable manner. I will not say that sometime, sooner or later, we will "eat each other" after we have consumed everything else possible. I do not think that the problem lies in the absence of any bright prospects for Europe but rather in the choice it faces - either to slide into chaos lacking effective decision making strategies or to set up the regime of authoritarianism neglecting the problems of the poor and the minorities. I just do not believe in radicalism and fatalism. I believe in things which are so much different.

